

5396

5397

9(47.925)

1-30

ARMENIAN LIBRARY
401 SHAWMUT AVE.

1216

JAN 18 1948

Mr. J. H. ...

113

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
ՆԱՀԱՆՋ ԲԻՒՐՈՑԸ



Գրեց

ԵՂԻՇԷ ՎԱՐԳԱՆԵԱՆ



ՊՈՍԹՈՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱԶԳ»Ի


1920



93103-UR

2006

1078-2002



Վերջերս Ամերիկեան քերթեր «Նահանջ Բիւրոց» անունով մկրտեցին Վասպուրականի Ե. պատմական մեծ նշանակութիւն ունեցող նահանջը՝ որ իր եղերերգախառն ու դիւցազնական դրուագներով իրարամբ արժանի է «Նահանջ Բիւրոց» յորջորջումին :

Ես որպէս վանեցի մը, հիւնգերորդ անգամ ըլլալով ընտանիքիս հետ նահանջած եմ, կրելով այն բոլոր տառապանքները՝ որոցմով տանջուեցաւ, հիւծուեցաւ Վասպուրականցիին, ներկայիս օրագրութիւններէս օգտուելով ուզեցի գրի առնել վանէն — Պաղտատ երկարող եւ Վասպուրականցիներու մտէն իսկ չանցնող այս երկարապատում ցանապարհորդութիւնը : Ընթերցող հոս պիտի գտնէ այդ ժողովրդեան մի մասը կազմող ընտանիքիս պատմութիւնը՝ որ պատմութիւնն է բոլոր այդ շրջանին գաղթողներուն :

Դէպքեր՝ որոց համարեայ բոլորին ականատես ու մասնակից եղած եմ, պատկերացուած են այնպէս, ինչպէս որ եղած են, առանց իրողութենէն մագաչափ իսկ շեղելու :

Գրութեանս պատմական մասը ունի իր որաջ քերութիւնները : Նախ որ ճանիկի սոսկալի խումապին ատեն կորսնցուցի 1917 թուի ամբողջ օրագրութիւններս՝ դէպքերու թուականներով ու փաստաթղթերով : Բ. — Սալմաստի մէջ Ահոեւանի կրփուններէն վերջ, երբ եղբայրս մահացու կերպով վի-

բաւորուած էր, ի վիճակի չէի մօտիկնալու Ջին-
ուորական Մարմնի, որու ձեռքն էին բնականաբար
պատմական կարեւոր փաստաթղթեր, օրինակ. տան-
կական ծրագիր մեզ կոտորելու մասին, Թիւրք
զինուորական հրամանատարութեւնէն ստացուած նա-
մակներ եւն: Գ. — 50-60,000 Հայ եւ Ասորի այդ բազ-
քեան — որու նահանջի նախապահը երեք օրուայ
տեւոզութեամբ երկայնք մը կ'ունենար — բնականա-
բար մէկ մասի օրերը նիւթ ըրած եմ ինձ, որով
դէպքերու նկարագրութիւնը աւելի մանրամասն ե-
ղած է այն տեղեր՝ ուր ես ականատես եւ գործա-
կից եմ եղած, իսկ մնացեալներ վստահելի ականա-
տեսներէ եմ ֆաղած:

Յուսով եմ որ յարգելի ընթերցողներ տուած
բացատրութեամբս բաւարարուած, աչք պիտի գո-
ցեն եղած թերութեանց:

Յուսով եմ նոյնպէս, որ մեր սա փոքրիկ աշ-
խատութեամբ որոշ չափով դիւրութիւն մը տուած
կ'ըլլանք վասպուրականի ապագայ անաչառ պատ-
մագրին, որ հոս պիտի գտնէ դէպքեր ու դէմքեր
իրենց հշգրիտ գոյներով եւ որոնք կարգ մը մար-
դոց եւ հրապարակագիրներու կողմէ դիտումնաւոր
կերպով խեղաթիւրուած են:

3 Յուլիս 1919 Պաղտատ

Ե. ՎԱՐԴԱՆԵԱՆ





Վ Ա Ս Պ Ո Ւ Ր Ա Վ Ա Ն Ի

Ն Ա Հ Ա Ն Ջ Բ Ի Ի Ր Ո Ց Ը

ՄԵԾ ԴԷՊՔԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

1917 թուականը եթէ նշանաւոր եղաւ աշխարհի պատմութեան մէջ Մեծն Ռուսիոյ մեծ յեղափոխութեամբ, եթէ այդ թուականով Ռուսիան պարծենալու է իր անակնկալ յեղափոխութեան յաղթանակով, Վասպուրականցիներն ալ պարծենալու են իրենց սկսած նոր դարաշրջանով, որովհետեւ այդ հսկայ յեղափոխութիւն առիթ տուաւ յեղափոխական Վասպուրականին՝ անգամ մ'եւս իր ճակատագիրի տնօրինութիւնը իր ձեռք առնել, անգամ մ'եւս ցուցադրելու ամբողջ աշխարհին թէ՛ չնայած իր դարաւոր ստրկութեան՝ Վասպուրականցին կը պահէ տակաւին իր պատենական ժառանգութիւնն եւ զոգ ազատութեան ոգին, ինքնակառավարութեան գիտակցութիւնը: Նա կենդանի ապացոյց տուաւ, որ ինք թէեւ ստրկութեան դատապարտուած է եղեր, այնու ամենայնիւ նա գիտէ ինքզինք եւ իր մայրենի հողը պաշտպանել, յաղթել կամ մեռնիլ:

Ազատաշունչ կամքն եկաւ սաւառնելու կիսա-կործան Վասպուրականի վրայ, քար ու քանդ եզոզ աւերակներուն նոր շունչ, նոր հոգի, նոր կորով

տալով : Ու Վասպուրական դարանի մտած առիւծի մը նման կազմ ու պատրաստ , անհամբեր ու ակընդէտ կ'ըստասէր յարմար առիթի մը իր ազատութիւթիւնը վերստանալու համար : Եւ ահա առիթը չուշացաւ :

Ռուսական յեղափոխութիւն իր անդրանիկ յաղթութիւններէն զինովցած՝ կ'իյնար ծայրայեղութեանց մէջ : Նա կը տառապէր պոլշէվիզմի անդուծ ալիքներէն խեղդամահ : Ահա այդ մեծ ահ ու սարսափ ազդող Ռուսիան հետզհետէ կը տկարանար : Յան ու ցրիւ կը լինէին իր յաղթական փաղանքները , կը պարպուէին իր ռազմաճակատները , ոտքի կ'ելնէին իր երէկի արհամարհած թշնամիները՝ որոց շարքին եւ Թիւրքիա , ու իրենց ջարդուած սուրերը երէկի իրենց տիրոջը սրտին կ'երկարէին , հոնկէ խլել ցանկալով այն , զոր պատերազմի նախօրեակին զբաւելու ցնորքն ունեցած էին : Բայց ահա բախար , այդ փոփոխամիտ շար բախար ու ժաթափ կ'ընէր Հիւսիսային Արջը , հնարաւորութիւն տալով մեռած մարդուն՝ իր ցնորքներու իրականացումով հրճուելու :

Վասպուրականի ժողովուրդ , Պոլշէվիկեան հոսանքն իսկ տակաւին չսկսած , Ռուսական յեղափոխութենէն քաջալերուած՝ Ապրիլ ամսին Կովկասի Հայոց Բարեգործ . Ընկերութեան Գրասենեակի մէջ խորհրդակցական ժողով մը դումարեց՝ իր ընելիքի մասին խորհելու : Չարիզմը տասալուած էր , յեղափոխական կառավարութիւն ազդերու ինքնորոշման կողմնակից ըլլալ կը թուէր , ի՞նչու ուրեմն Վասպուրականցին չունենար կազմակերպուած մարմին մը , որ առ այժմ զբաղուէր իր ներքին կազմակերպութեամբ՝ մինչեւ պատեհ առիթը : Չէ՞ որ յե-

զափոխութենէն կարող էին անակնկալ նորութիւններ ծնիլ, որոց դիմադրաւելու համար կանխապատրաստուած լինելը կարող էր մեծ օգուտներ ունենալ: Ու սկզբնական խորհրդակցական ժողովէն ութ օր յետոյ, նոյն գրասենեակին մէջ, արդէն կազմուած էր մարմին մը՝ որ անուան զանազան փոփոխութիւններէ վերջ, վերջապէս Շրջանային Վարչաւթիւն անունը կրելով՝ Վասպուրականի վազանցուկ կառավարութեան սաղմն լինելու կոչուած էր: Ահա այդ Շրջանային Վարչութեան անդամներու անունները. Կոստի Համբարձումեան, Գրիգոր Օհանջանեան (Բարեգործականի Վանի Լիազօր), Բժիշկ Տէր Թովմասեան, Սամուէլ Մեսրոպեան, Արմենակ Մաքսապեան, Սեդրակ Հիւս Փանոսեան, Բարունակ Կապոցիկեան: Ասոնցմէ զատ Աւետիս Թէրզիւպաշեան՝ որ այդ շրջանին Վանի Քաղաքապետին էր եւ Դանիէլ Վարդապետ՝ որպէս հոգեւորական ներկայացուցիչ, առանց քուէարկութեան՝ միաձայնութեամբ ընդունուեցան անդամ այս Վարչութեան:

Եռուզեոր սկսած էր, ինքնավարութեան սաղմը կազմուած. ընտրուած մարմին գործի անցաւ: Կազմուեցան դատական, (դատեր մինչ այդ քաղաքապետին կը տեսնէր, յատուկ դատական մարմին չլինելուն պատճառաւ), պարենաւորման, կրթական յանձնախումբեր, զրադուելու համար ազգային սա ներքին բնոյթ ունեցող անհրաժեշտ խնդիրներով, որոնք ցարկ անկազմակերպ եւ անկանոն վիճակ մը ունէին: Դէպքերը սակայն դահավիթօրէն յաջորդեցին իրարու. Շրջանային Վարչութեան վիճակուած էր աւելի մեծ գործով զրադուելու:


Պուշկիլիքական քայքայիչ հոսանքէն զերծ չմնաց եւ Վասպուրականը՝ ուր գտնուած Ռուսական բա-

նակները սկսեցին քաշուիլ Կովկաս, Արձէշէն մինչև Ռատան երկարող ճակատը թողնելով 800-1000 անձէ բաղկացեալ Հայկական Յ. Գնդին եւ տեղական ժողովրդեան պահպանութեան. մի գիծ, զոր իրենք՝ Ռուսներ՝ 10,000-նոց բանակով մը հազիւ կը պաշտպանէին: Բացի այս, կը հեռանար նաեւ քաղաքային իշխանութիւնը: Պէտք էր որ ուրիշ մը փոխարինէր շահը: Եւ ահա Երջանային Վարչութիւնը ընդունեց եւ այդ գործը: Նա այլեւս երկրի քաղաքային եւ զինուորական իշխանութիւն կը դառնար:

Երջանային Վարչութիւն իր ստանձնած գործերու ծանրութիւն նկատելով, անհրաժեշտ տեսաւ իր անդամներու թիւը աւելացնել եւ այնպիսի եղանակաւ մը, որ ժողովրդեան ամէն հոսանքներու վստահութիւնն ալ վայելէ: Այդ պատճառաւ պաշտօնական գրութեամբ մը կը դիմէր Վանի մէջ գոյութիւն ունեցող քաղաքական կազմակերպութեանց, խնդրելով Դաշնակցութենէն եւ Ռամկավարութենէն երկուական եւ Հնչակեաններէն մէկ ներկայացուցիչ: Կուսակցութիւններ պատասխանելով Երջանային Վարչութեան կոչին, ուղարկեցին իրենց ներկայացուցիչները. Դաշնակցութենէն՝ Հմայեակ Մանուկեան, Տիգրան Պաղտասարեան, Ռամկավարներէն՝ Մկրտիչ Աճէմեան, Եղիշէ Վարդանեան, Հնչակեաններէն՝ Աիրաք Սէրհատեան:

Մեծ գործը սկսած էր. երկրի բախտը ժողովուրդին էր յանձնուած. անոր կը մնար իր քաղաքական հասունութեան աստիճանով իր երկիրը կառավարել, ինքզինք պաշտպանել Ռատանի եւ Առնիսի խրամներէն անդին, եւ ի հարկին վիժեցնել թշնամիին ծրագիրները:

Հայկական Յ. Գնդին օժանդակելու համար, ու-



ըոչուեցաւ կազմել միլիցիական զորքեր, որոնց կազմութիւնը եւ ղեկավարութիւնը յանձնուեցաւ Վեյմարէն Շաղոեանին եւ Տիգրան Պաղտասարեանին, որոնք սկսեցին արձանագրել կամաւոր եւ ոտճիկաւոր միլիցիաներ՝ որոնց թիւը սակայն շատ ցանցատ էր: Երջանային Վարչութիւն՝ որ երկրի օրէնսդիր բարձրագոյն մարմինն էր եւ որու իրաւասութիւնն էր բոլոր այս կարգի խնդիրներով զրազուիլ, մի սխալ գործեց, սխալ մը՝ որու արժէք վերջէն հասկանալի եղաւ:

Ռամկավարութիւն՝ իր ներկայացուցիչներու միջոցաւ՝ ապագայի բարդութիւններ եւ մեր անկազմակերպ վիճակ նկատի առնելով, առաջարկ կը բերէր Երջանային Վարչութեան, Սեպտեմբեր ամսին, պարտադիր զինուորագրութեան հարցը: Բայց հակառակ խնդրի կարեւորութեան ու տրուած բացատրութեանց, առաջարկը մերժուեցաւ. այս մասին Դաշնակցութեան ներկայացուցիչ Հմայեակ Մանուկեան՝ իր ոգեւորուած ճառին մէջ կ'ըսէր. «Դաշնակցութիւն՝ որ քսան տարուան յեղափոխական անցեալունի, Դաշնակցութիւն՝ որու հետ է ամբողջ ժողովուրդը, այնքան դիրք եւ այնքան հմայք ունի, որ բաւական է որ ան դիմէ ժողովրդեան, ու դուք պիտի տեսնէք շուտով այնքան միլիցիա արձանագրող ուղիներ պիտի լինին, որ մենք ի վիճակի չպիտի ըլլանք բոլորին կարիքը հոգալու»: Եւ որովհետեւ բացարձակ մեծամասնութիւն իրենք էին, իրենց տեսակէտն ալ յաղթանակեց: Բայց երբեքուկէս ամսուայ փորձառութենէ մը յետոյ, Երջանային Վարչութիւն եւ ինք՝ Պ. Հմայեակը՝ համոզուեցան որ իրենք սըխալըր էին, թէ կամաւոր միլիցիաներ արձանագրելով անհնար էր լուարար թիւ ստանալ այս բաւա-

կան ընդարձակ զիծը պահպանելու համար, թէ միւս կողմէն դէպքեր ցոյց կուտային որ դուրսէն ունէ օժանդակութեան յոյս չկայ եւ երկրի պահպանութեան դարձը կը ծանրանայ միայն ու միայն տեղացիներու վզին :

Ինկտեմբերի կէսին ստիպուած եղան քուէարկել պարտադիր զինուորադրութեան օրէնքը, չմոռնալով միանգամայն կարգ մը հարցապնդումներու ի պատասխան՝ Հմայեակ Մանուկեանի եւ ապագայ Զինուորական կոմիսար Գրիգոր Պուլկարացիի բերանով յայտարարելու որ, «Դաշնակցութիւն տիքտատուրա է յայտարարած Կովկասի մէջ, ատոր սահմաններ կը տարածուին մինչեւ հոս, մենք կ'ընենք այնպէս՝ ինչպէս որ յարմար կը գտնենք, առանց կարեւորութիւն տալու ըսուած խօսքերուն» : Երջանային Վարչութեան մէջ գտնուած միւս կուսակցութեանց ներկայացուցիչներ բնականաբար վրդովուած այս անտեղի յայտարարութենէն՝ կը ձգէին ու դուրս կ'ելնէին ժողովասրահէն, ու Դաշնակցութիւն կը դառնար միահեծան տէրը երկրին :

Այնուհետեւ՝ մասնաւորաբար Ռամկավարութեան կողմէ՝ Վանի նահանգային կոմիսար Կոստի Համբարձումեանի եւ Դաշնակցութեան ամենակարեւոր անդամներէն Գրիգոր Պուլկարացիի միջեւ տեղի ունեցած պաշտօնական բանակցութիւններով անհրնար եղաւ համաձայնութեան եզր մը գտնել . վերջինս մինչ իսկ տեսակցութեան մը միջոցին կ'ըսէր . «Մեր կուսակցութիւն ձեզ հետ պաշտօնապէս տեսնուիլ չ'ուզեր, ես եկած եմ հոս անհատապէս» : Որով միւս կուսակցութիւններ բացարձակապէս ձեռնպահ կը մնային, պատասխանատուութիւնը թողնելով Դաշնակցութեան վրայ : Այսու ամենայնիւ իւրաքանչիւր

կուսակցական՝ իր կուսակցութեան ստիպման տակ, պարտաւոր էր իր հայրենիքի հանգէպ իրեն բաժին ինկած քաղաքացիական պարտականութիւնը կատարել: Կուսակցութիւններ պաշտօնական յարաբերութիւններ խզելէ ետք՝ երդուեցան ամենափոքր խոչընդոտ մ'անգամ չյարուցանել եւ ընդ հակառակն ամէն կերպ օժանդակել իրարու:

Միատարր շրջանային վարչութիւն արդէն գործի վրայ էր:

Պարտադիր զինուորագրութիւն յայտարարուած էր. 18-36 տարեկաններ զինուոր էին: Ժողովուրդը արտասովոր եռանդի մէջ էր, ամբողջ Վասպուրական մի ընտանիքի նման կը շարժէր: Յունուար 1-էն ըսկըսեալ կատարեալ զինուորական դրութիւն կը տիրէր, բոլոր դպրոցներ փակ էին, եւ ուսուցիչներ հաւաքուած պատուշիկ Յովհաննէսեանի միջոցաւ կը կրթուէին եւ սպայութեան կը պատրաստուէին: Փակ էր եւ դատարանը ու բոլոր մտաւորականներ հասարակ ժողովրդեան հետ զրազուած էին միայն ու միայն զինուորական գործերով: Բնակիչներ՝ ոչ միայն զինուորական տարիք ունեցողներ՝ այլ եւ 30-50 տարեկաններ, խումբեր կազմած արձանագրուելու կը փութային: Զօրանոցներ լեցուած էին: Հոն Ե. գնդէն ուղարկուած մարզիչներ արիւն քրտինք մտած կը վարժէին այս նորակոչները ու հապճեպ կ'ուղարկէին Ոստանի եւ Առնիսի ձիւնածածկ խրամներ:

Դժբախտարար Առնիսի եւ Սաւանլուի Ռուսական լքուած պահեստներէն — որոնք կազմուած էին զինուորական ամէն կարգի մթերքներով — հնար չեղաւ պէտք եղած չափով օգտուելու, փոխադրական մի-

Ջոցներու անբաւարարութեան եւ եղանակի խստութեան պատճառաւ:

Այնպէս որ զինուորներ մեծ մաս մը առանց տաք շորերու եւ ոտնամաններու ստիպուած էր իր դեղձկական հագուստով եւ միակ շապիկով մը մեկնիլ խրամներ, Ոստանի եւ Առնիսի բարձունքներու վերայ, լուռ ու անտրտունջ:



ԵՐԿՈՒՆՔԻ ՕՐԵՐ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՈՒՄԸ

1918 թուի Յուն. 6ն էր. ձիւնի հաստ շերտ մը ծածկած էր Վասպուրականի սարն ու քարը, բայց չնայած այդ ձիւնին՝ առաւօտէն սկսեալ մեծ իրարանցում մը կար քաղաքի մէջ: Այգեստանի այրուած տաճարներու զանգակներ, մանաւանդ Յայնկոյս Զորաց այրուած տաճարի զանգակը, իրենց երկարաշունչ ծանր ու խորհրդաւոր ղողանջներով եկեղեցի կը հրաւիրէին ջերմեռանդ ժողովուրդը:

Մննդեան առաւօտն էր, քրիստոնէական եկեղեցւոյ ամենամեծ օրերէն մին. ու ժողովուրդը իր դարաւոր երկիւղածութեամբ իր անխախտ հաւատքի սրբութեան ապաւինած կը դիմէր եկեղեցի:

* * *

Եկեղեցիի առջեւէն ոգեւորուած ուրախ քրքիւղով մը կը թաւալի փոքրիկ գետակ մը, արծաթափայլ ալիքները փրփուրներով ճերմկած:

Եկեղեցւոյ դրան առաջ՝ գետափին՝ շարքով կանգնած են երկու վաշտ (400) հայկական առաջին պաշտօնական զինուորներ՝ իրենց համազգեստով, հրացանները ձեռքերնին կազմ ու պատրաստ: Բո-

լորն ալ նորահաս երիտասարդներ են, առոյգ ու բարձրահասակ, բուրբին ալ թաւ յօնքերու տակէն կը փալփլին սեւուլիկ աչքեր, աչքեր՝ ժպիտներով անուշցած: Զինուորներ են անոնք, անկախ վասպուրականի անդրանիկ զինուորներ...: Կը նային անոնք կամուրջի երկու կողքեր փողփողող հայկական դրօշներուն— ազատութեան, անկախութեան այդ սրբազան նշաններուն — ու կը հրճուին: Ուրախ ու երջանիկ...:

Կը լսուի մեղմ երաժշտութեան ձայնը: Ահա եկեղեցական թափօրը որ դուրս կ'ելնէ եկեղեցիէն՝ ու յամբաքայլ կը յառաջանայ դէպի կամուրջ: Երգեցիկ խումբի ետեւէն կուգար ժամարար քահանան՝ զգեստաւորոնւած ամենագեղեցիկ եկեղեցական շորերով, երկիւղածութեամբ բռնած արծաթեայ ազաւնի մը: Անոր կը հետեւին երկու ուրիշ քահանաներ, ապա հայ բանակի սպաներ, բարձաստիճան պաշտօնէութիւն եւ ժողովուրդ զլիսարկներ ձեռքերնին՝ լուռ ու երկիւղած...:

Թափօրը եկեղեցւոյ արտաքին դռնէն դուրս ելնելուն պէս լսելի եղաւ «Պատո՛ւի ա՛ռ» հրահանգը, ու երկու վաշտ զինուորներ մի անձի նման բարեւի կը կենային: Որքա՛ն քաղցր, որքա՛ն խորհրդաւոր էր Հայ հրամանատարի բերնէն Հայ լեզուով, Հայ զինուորներուն ուղղած հրահանգը. որքա՛ն երջանիկ, որքա՛ն հպարտ էին բարեւի կանգնող զինուորները...: Փա՛ռք քեզ Աստուա՛ծ, փա՛ռք քեզ Աստուած, կը կրկնէր ժողովուրդը միարեւան՝ յուզմունքէն դողդղալով:

Թափօրը ծանր գնացքով մը յառաջացաւ ոգեւորութենէն երիտասարդացած ծերուկ կամրջակին վրայ, եւ զոյգ դրօշներու մէջ տեղ կանդ առաւ:

Երաժշտական խումբը սկսաւ երգել «Առաքելոյ աղանոյ» շարականը, մինչ ժողովուրդը իրար կոխտելով կը խոնուէր զետափին վրայ: Ու երբ խումբը ողբերգութեամբ կ'երգէր, ահա արծաթեայ աղանիկ ոսկեզօծ կտուցէն միւռոնի առաջին կաթիլ վար կը կաթէր զետին մէջ, որի հետ միաժամանակ լսելի եղաւ հրամանատարի «կրակ» հրահանգին յաջորդող 400 Հայ զինուորներու հրացաններու թնդիւնը: Համազարկին յաջորդեց թնդանօթներու որոտ, որոց ումբերը հեռո՛ւ Վարազայ Սարի կատարներէն աւելի բարձր կը պայթէին, Վասպուրականի սարին ու ձորին, Վարազայ լեռան քղաքններուն վրայ փռուած նուիրական սրբավայրերուն՝ Ս. Գրբիզորի վանքին, Վերին Վարազի տաճարի աւերակներուն, Թոզիկ ճգնաւորի այրին, Հոխիսիմեանց կոյսերու եւ Գրիզոր Լուսաւորչի մատուռներուն, Խաչ Պատուհանին, Աստղեան Բերդին, Ապարանջան, Կաթնաղբիւր ու Քրիստոսի աղբիւրներուն աւետելով Հայկական նորածագ ազատութի՛ւնը...:

Ազատ Վասպուրականի առաջին ազատ ու հանդիսաւոր ջրօրհնէքն էր այս: Ամբողջ Վասպուրական իր ասուններով ու անասուններով լսեց այդ բերկրալից աւետիսը, տարիներու ստրկութեան արցունքը սրբեց իր աչքերէն, խոր շունչ մը առաւ: Ու շրթները միաբերան արձագանգեցին՝ ազատութի՛ւն... Երջանիկ էր Վասպուրականը, ազատ էր Վասպուրականը, զինովցած էր Վասպուրականը... Փոխն ի փոխ իրարու յաջորդող «Առաքելոց աղանոյ» շարականի երեք տուններուն կը յաջորդէին երեք միւռոնի կաթիլներ, երեք հրացաններու եւ երեք թնդանօթներու համազարկներ: Իսկ զետափին հաւաքուած ժողովուրդը՝ չդիմանալով խանդավա-

ուութեան այդ գերազոյն պահերուն մէջ, հագուստով ինքզինք ջուր կը նետէր գրկախառնուելու արիքներուն հետ, խլելու անոր կրծքին ինկած նըշանտուքի սրբազան իւզն, անոր փափուկ ու զով փրփուրներով զովացնելու իր այրած ճակատը:

Յուզուած քահանան իր սրբազան պարտականութիւնը կատարելէ վերջ՝ դողդոջուն ձայնով մը կ'ըսէր.

— Սիրելի՛ ժողովուրդ, ազատ Վասպուրականի ազատ ու քաջարի զինուորներու համազարկին տակ կատարեցինք մեր սրբազան արարողութիւնը: Այնքան յուզուած եմ որ բառեր կը պակսին խօսելու համար. ինձ կը մնայ միայն Սիմէոն Ծերունիի նման կրկնել «Արդ արձակեա՛լ զծառայս քո»ն. ես տեսայ ազատութիւնը, եթէ մեռնիմ ալ հողս չէ, վստահ եմ թէ մեր քաջերու արիւնով փրկուած է Հայաստան, թող յաւէտ ապրի ազատ Հայաստան՝ իր քաջարի բանակով:

Բոլոր ներկաներ եւ զինուորներ միաբերան դուռացին. «Կեցցէ՛ ազատ Հայաստան, կեցցէ՛ Հայ բանակ»: Նորէն հրացանի համազարկներ, նորէն թընդանօթի որոտներ:

Հանդէսը վերջացած էր, զինուորներ շարքով դիմեցին դէպի դօրանոց, ուժեղ ու ոգեւորուած ձայնով երգելով «մեր հայրենիք» քայլերդը: Իսկ ժողովուրդը երջանկացած կը ցրուէր:

Ու չարածճի դետակը կը շարունակէր իր դնացքը նազանի օրօրումներով, այս անգամ աւելի ուրախ ու աւելի բարձրաձայն քրքջալով: Իր նշանտուքի արարողութիւնն էր որ կատարուեցաւ, նա նշանուած էր Վասպուրականի ազատութեան հետ՝ միւռոնի սրբազան կաթիլներով:

Արեգական ոսկեզօծ շողերուն տակ կը փալիւր-
լէին Վասպուրականի սպիտակ լեռներն ու դաշտե-
րը, սեւ կէտ մ'անդամ չէր երեւեր, Ազատութեան
տօնն էր որ կը կատարուէր. Վասպուրականի ազա-
տութեան եւ Յայնկոյս Զորի վտակի նշանաւորի տօ-
նըն էր, բոլորը ուրախ էին, երջանիկ ու սպիտա-
կազարդուած . . . :



ԱՌԱՋԻՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Ե. ԳՆԴԻՆ ՄԵԿՆՈՒՄԸ

Մինչ Վասպուրականի ժողովուրդ այս կերպ ոգևորութեան եւ տենդագին գործունէութեան մէջ էր, ահա Յուն. 18ին Ռուսներու մնացած վերջին բեկորներ— փոստ-հեռագրական պաշտօնեաներ, թնդանօթածիղներ, խումբ մը Վանեցի զինուորներու ուղեկցութեամբ Պարսկաստանի ճամբով կը մեկնէին Կովկաս: Ալ Հայերու ձեռք կը մնային միայն երբեմնի Ռուսական այս ճակատի զինուորական եւ վարչական գործերը:

Շրջանային վարչութիւն գործի վրայ է. իր նիստերու մէջ երկար բարակ խորհելէ ետք՝ կ'որոշէ վերջ դնել յանձնախումբերու միջոցաւ յառաջ տանելու գրութեան եւ նախարարական խորհուրդի նման մի խորհուրդ ստեղծել՝ կոմիսարներ անուանով, իւրաքանչիւր ճիւղէն պատասխանատու լիազօր ճանաչելով մէկուն: Ասոնց անուններ Յուն. 24ին պատերուն փակցուած յայտարարութեան մէջ կը կարգար ժողովուրդ:

ՉԱԻԷՆ ԿՈՐԿՈՏԵԱՆ՝ Պարեմաւորման Կովիսար
ԱՐՄԵՆԱԿ ՄԱՔՍԱՊԵՏԵԱՆ՝ Երկրագծկն. Կովիսար
ՀՄԱՅԵԱԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ՝ Ներքին Գործոց Կովիսար
ԳՐԻԳՈՐ ՊՈՒԼԿԱՐԱՅԻ՝ Զինուորական Կովիսար
ԲԺ. ՏԷՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ՝ Առողջապահկն. Կովիսար

ՀԱՅՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ՝ Խնամատարկն Կոմ.
ՍՍՐԳԻՍ ԶԱՎՐԻԷՎ՝ Փոստ-հեռագրական Կոմիսար
ՍՍՄՈՒԷԼ ՄԵՍՐՈՊԵԱՆ՝ Ելեմտական Կոմիսար

Իսկ Կոստի Համբարձումեան՝ Ընդհանուր Կոմիսար եւ Նախագահ Կոմիսարներու Խորհուրդին: Յայտարարութիւնը՝ որ կը կրէր Կ. Համբարձումեան ստորագրութիւն՝ կոչ կ'ընէր ժողովրդեան աշակցիլ իրեն եւ Կոմիսարներուն սկսած գործը յառաջ տանելու համար:

Ժողովուրդ սակայն չէր հետաքրքրուէր թէ ո՞վ ի՞նչ տիտղոս է ստացած. անոր նշքն ու միտքը այլ տեղ էր— Հայկական Ե. հրացանաձիգ զնդին վրայ— որու մասին ժամանակէ մը ի վեր կը խօսուէր թէ մեկնելու է: Ինչո՞ւ, ի՞նչ էր պատճառը, արդեօք չէի՞ն ուզեր մնալ ու կուռիլ, ի՞րենք ալ պոլշէվիկներուն ախտէն վարակուած տուներնին մեկնիլ կ'ուզէին, թէ պէտք եղածին չափ տեղ եւ ընդունելութիւն չգտնելուն պատճառաւ տեղական վարիչ մարմնէն գժգոհ կը քաշուէին: Ոչ ոք գիտէ, միայն այսօր սարգ էր որ հակառակ Ե. զնդի սպանելու ցանկութեան՝ որ խնդրած էին զինուորական գործի կազմակերպութեան՝ եթէ ոչ բոլորովին իրենց յանձնուիլը՝ գոնէ իրենց որոշ տեղ տրուիլը, բայց մերժուած էին: Սակայն ահա Յուն.ՉՅին բերնէ բերան խօսուած այդ լուրը կ'իրականանար, եւ Ե. զնդի 300 զինուորներ իրենց զէնքերով կը հեռանային՝ մեծ ցաւ պատճառելով Վասպուրականի ժողովրդեան, որոնք մեկնելու պատճառին անտեղեակ՝ շարունակ իրաիրու կը հարցնէին. ի՞նչու մեկնեցան, ի՞նչ էր պատճառը:



1078-2002

Յաջորդ առաւօտ կայծակի արագութեամբ լուր կը հասնէր թէ մեկնող 300 զինուորներ քաղաքէն 5-6 ժամ հեռու կէօլու ըսուած գիւղին մէջ կ'ենթարկուին յարձակման իրենց ընկերներու կողմէ, որու ընթացքին կ'սպաննուին 5 եւ կը վիրաւորուին 7 զինուորներ: Հայերու կողմէ սարքուած եղբայրասպան այս յարձակումը եթէ նոյն իսկ արդարացուցիչ պատճառ ունենար՝ արժանացաւ ժողովրդեան արհամարհանքին. բոլորը զգուանքով կը պատմէին այս խիստ տղեղ ձեռնարկի մասին:

Ժողովրդեան տրամադրութիւն կամաց կամաց կը փոխուէր, կատարուած դէպքը հասարակ բան մը չէր, մանաւանդ որ մի քանի օր վերջ անծանօթ անձերու կողմէ մահափորձ կը կատարուէր նոյն գնդի ուրիշ սպաններու վրայ եւ կը վիրաւորուէր յարգանքի արժանի բժիշկ մը: Ժողովուրդ ի տես ներքին այս խիստ վտանգաւոր խլրատումներուն՝ կը սոսկար. ինչի՞ արդիւնք էին անոնք, վարազոյրի ետեւ ի՞նչ կը կատարուէր, ոչ ոք գիտէր:

Վասպուրականի կեանքը հետզհետէ շնորհիւ իր տենդագին գործունէութեան՝ իսկական պատերազմիկ պետութեան մը երեւոյթ կ'առնէր:

Յայնկոյսներու եկեղեցիի քով Ակոբա Քար կոչուած քարաժայռի կողերուն ձիւնը կը քրքրուէր նորավարժ Հայ զինուորներու գնդակներէն, որոնք գունդ առ գունդ կուզային հոն նշանառութիւն սովորելու: Հասկա քաղաքին արեւելեան կողմ Ուրբաք Առուի (պղտիկ գետակ մը) դաշտը, օ՛հ հոն ձիւնի հետք անգամ չէր մնացած կրթուող զինուորներու եռանդուն քայլերու տակ, երբ քիչ անդին կէս կանգունէ աւելի ձիւնի հաստ շերտ մը կը ծածկէր սարըն ու քար:

ՔՐԴԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ԹՂԹԱԴՐԱՄ

Մինչ Հայեր այսպէս զիշեր ցորեկ անդադար կ'աշխատէին, անդին Զիլանի ձորի Քիւրդեր՝ Ռուսներու հետանալէն սրտապնդուած, սկսած էին շարժուիլ: Անոնք պատեհութենէն օգտուած՝ փոքրիկ աւազակախումբերով կ'երնէին Բերկրիի կիրճը եւ կ'սկսէին իրենց շահատակութեանց՝ սպաննելով, կողոպտելով Վանէն-Կովկաս անցուղարձ ընողները: Փետրուար Յին արդէն Վան կը հասնէին Կովկասէն եկող քանի մը Վանեցիներ, որոնք կիրճի մէջ՝ կամուրջի քովեր՝ Քիւրտերու յարձակման ենթարկուելով կողոպտուած էին, իրենց ընկերացող Վրացի սպայ մը սպանուած եւ իրենցմէ մէկն ալ երկու տեղէ վիրաւորուած էր:

Կովկասի հետ յարաբերութիւններ կամաց կամաց կը դժուարանային. փոստ գոյութիւն չունէր արդէն, մինչ ասդին բանակ կազմակերպելու համար դրամի անհրաժեշտ կարիք կար: Ահա այս դրամական եւ ուրիշ խնդիրներու համար Համբարձումեան ստիպուած էր Փետր. Տին ճամբայ ելնել զէպի Կովկաս: Նախքան Կովկաս մեկնիլ զօրծեր հարկադրեցին զինք Առնիս հանդիպիլ՝ ուր կը զբտնուէին զինուորական նաւեր՝ Գերմանացի եւ լեհ

սպաներու հրամանատարութեան տակ, նաեւ զինուորական միջերթներու ճոխ պահեստներ: Հազիւ թէ Համբարձումեան ոտք ցամաքի վրայ կը դնէ եւ ահա կը հասնի Կամուրջի եւ Ախլաթի Թլուրքերու կողմէն գրաւուելու լուրը: Ստացուած լուրը մի գոյժ էր. դրութիւն շատ վտանգաւոր կը դառնար: Յաջորդ առաւօտ Կամուրջի եւ Ախլաթի գրաւման լուրը ժողովրդեան համար դադտնիք մը չէր արդէն: Ի՞նչ եղան կամուրջ պաշտպանող Ալաշկերտի գծի Հայկական զնդեր, ի՞նչու լքած էին յայտնի չէր, միայն այսքանը պարզ ու հասկնալի էր որ Կամուրջի գրաւումով թշնամին անարդէլ յառաջանալու էր: Մեր դրութիւն վտանգաւոր կը դառնար, մանաւանդ որ Ձիւլանի-Չորի բազմաթիւ Քրդեր կանոնաւոր կապ կարող էին հաստեւել տաճկական բանակի հետ, եւ մի օր նոյն իսկ ամբողջ Վասպուրկաանը պաշարուած դրութեան ենթարկել: Այդ զիտէին մեծէն մինչեւ փոքր. այդ մտահոգութեամբ կը տանջուէին բոլորը: Այնուամենայնիւ Կոմիսարներու Խորհուրդը գտնէ արտաքուստ այնքան ալ կարեւորութիւն չէր տար Կամուրջի գրաւման, — Առնիսի մեր դիրքեր շատ ուժեղ են — յուսադրիչ խօսքերով քաջալերել կը ջանար ժողովուրդը:

Համբարձումեան սակայն, զգալով որ մեծ դէպքերու նախօրեակն է որ կ'սպրի Վասպուրկաանը, Կովկաս մեկնելու մտադրութենէն հրաժարելով Առնիսէն կրկին Վան վերադարձաւ: Եւ սակայն անհրաժեշտ էր գրամ ունենալ, կառավարութեան սրնտուկ բոլորովին սպարապ էր, ու ճարահատ, Կոմիսարներու Խորհուրդը կը յղանար մի այլ դադափար, տեղական գործածութեան համար հրասպարակ հանել փոխդրերու նման թղթադրամներ:

Անմիջապէս 120,000 Ռուսական ռուբլի արժէքով այդ օրինակ թղթադրամներ հրատարակ եկան՝ 100- 50- 25- 10 եւ 5 ռուբլի արժողութեամբ, սա յայտարարութեան հետ որ՝ Կովկասի հետ յարաբերութիւն խզուած լինելուն եւ մանր թղթադրամ չգտնուելուն պատճառաւ հրատարակ կը հանուին այս փոխդիր թղթադրամներ: Որոշ քով որ 1000 ռուբլի կը հաւաքուի կարող է կառավարութեան ներկայացնել եւ փոխարէն ստանալ 1000նոց մը, իսկ վեց ամիս վերջ, բոլորն պիտի հաւաքուին եւ փոխարինուին Ռուսական թղթադրամով: Փոխդիրներու գործածութիւն պարտադիր է, չյարգողներ կը ենթարկուին պատասխանատուութեան:

Փոխդիրի վրայի կնիքը Ռուսներէ մնացած եւ Ռուսերէնով Նահանգային Վարչութեան կնիքն է: Փետրուար ամսէն այս փոխդրերէն 120,000էն աւելին արդէն գործածութեան գրուած էին: Ռուսական թղթադրամը սկսեց մէջտեղէն վերցուիլ եւ աւելի արժէքով ծախուիլ, այնու ամենայնիւ ժողովուրդը ասոր ալ համակերպեցաւ:

Ժողովուրդ կրիտիքական վայրկեաններու մօտիկութիւն գուշակելով մէկ կողմէն կառավարութեան բոլոր ձեռնարկներուն հնար եղածին չափ կ'օժանդակէր որպէսզի կառավարութիւն բանէ մը չընկուի, միւս կողմէն Աստուծոյ էր ապաւինած: Չորս կողմէն դարձեալ մատաղի դրամ կը հաւաքէին, դարձեալ ժամ ու պատարագ, մաս ու մատաղ: Բայց երկինքի Աստուածն անգամ կարծես տրամադիր չէր այլեւս տկարի ողօթքն լսելու, կարծես իր յաւիտենական լուծեամբ՝ հասկցնել կ'ուզէր թէ — Չա'րկ որ ապրիս, իրաւունքը հզօրին է:

Օրինակը ահա իր իսկական մեծութեամբ, եւ միշտ
այնպէս ինչպէս փոխգիրը: Թուղթը հասարակ
գծաւոր մերմակ թուղթ էր, մանիշակագոյն
մեկանով գրուած ու խմորատիպ:

50 Ր.	Փ Ո Ւ Գ Ի Ր	50 Ր.
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ		
1918 ՓԵՏՐՈՒԱՐ 27		
50		
ԱՐԺԷՔԸ ՅԻՍՈՒՆ ՐՈՒՒԼԻ		
No. 1128		No. 128
ՎՃԱՐԵԼՈՒ Է	(ԿՆԻԲ)	ՆԱՀԱՆԳԱՅԻՆ
Վ. Ա. Ն. Ի		ԿՈՄԻՍԱՐԻԱԿ
ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԵՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝		
Նահնգ. Կոմսր.	Զին. Կոմսր.	Ելեւմտ. Կոմսր.
Կ. ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ	ԳՐԻԳՈՐ	Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Բոլոր թիւեր կը կրէին երեքի սեփական
ձեռագիր ստորագրութիւն

ՓՈՔՐԻԿ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

ԵՒ ՍՊԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍ

Ամբողջ բնակչութիւն երկտասարդ թէ ծերունի
զործի վրայ էր, անզործութիւն դաւաճանութեան
համազօր էր, ոգեւորութեան ալիքներ մեծերէն անց-
նելով թափանցած էին 10-12 տարեկան փոքրիկնե-
րու սրտերու մէջ փոթորկելով անոնց հոգիներ: Եւ
ահա Արտամեա զիւղ բնակող Շատախցի 50 փոք-
րիկներ՝ որոց հայրեր եւ մեծ եղբայրներ արդէն
զինուոր էին եւ խրամներու մէջ, մի մի փայտ ու-
սերնուն դրած, զինուորական շարքով եւ «Մեր հայ-
րենիք» երգելով ամբողջ ժողովրդեան ծափերու մէ-
ջէն զօրանոց կուգային պահանջելով որ իրենց ալ
զէնք տրուի, իրենք ալ կ'ուզեն կուռի դաշա մեկնիլ:
Շատախի առիւծներու արժանաւոր կորիւններն էին
անոնք, Հայ աննկուն նկարագրի կենդանի պատկեր-
ներն էին անոնք, զորոնք մի շարաթ զօրանոցի մէջ
զինուորի նման կերակրելէ վերջ ճամբու կը դնէին
ըսելով.

— Հայաստան չի մեռնիր քանի որ ձեզ նման
փոքրիկներ ունի:

Փետրուարի 1ին մարզուողներ՝ թուով 30 հոգի,
աւարտած էին սպայական ընթացքը եւ պաշտօնի
անցած էին բանակներու մէջ հարիւրապետի, յիս-
նապետի եւ զինուորական պահեստներու կառավար-
չի պաշտօններով: Մակայն սպաներու պակասը այն-

քան զգալի էր որ ստիպուած կը կազմակերպուէր Բ. սպայական ընթացքը 50 նոր սպացուններով: Անհրաժեշտ էր բանակ մի կերպ կազմակերպուած դըրութեան մէջ զնել, իսկ ասոր համար անհրաժեշտ էր ելեքարանացած գործունէութիւն: Ու արդարեւ ամբողջ Վասպուրական միասիրտ լծուած այդ գործին զիչեր թէ ցորեկ կ'աշխատէր անվերջ:

Մինչ Վասպուրական զուլումի օրերու մօտիկութիւն զգալով այս կերպ տենդազին գործունէութեան մէջ էր, անդին Ներքին Գործոց Կոմիսար Հրմայեակ Մանուկեան պատահաբար ձեռքն ինկած Կովկասեան թերթերէն կը տեղականաբ թէ Մարտ 25ին էրդրումի մէջ Բ. Հայկական համազումար մը սլափ կազմուի եւ ասոր համար սեղմ շրջանակի մը մէջ կ'ընտրէր 8 պատգամաւորներ համազումարին զրկելու — գէթ Ա. համազումարին պատկերը չի կրկնուելու համար: Եւ մինչ այդ պատգամաւորներ արդէն ճամբայ կ'ելնէին Փեհա. 21ին գէպի Կովկաս, միւս կողմէ Առնիսի հեռախօսը կ'իմացնէր որ իրենց պահակներ ենթարկուած են քրդական յարձակման մը եւ դրութիւն լուրջ է: Քիւրտեր աւազակութիւններով չրաւականանալով, սկսած էին այս անգամ մօտիկնալ մեր պահակներու շրջանին: Պարզ էր որ պատահական զէպքեր չէին ասոնք, քրդական մի սխառտագրիկ շարժում կար հաւանաբար տաճկական կազմակերպիչներու շնորհիւ: Բոլորն ալ կ'զգային թէ շուտով պայթելու է փոթորիկը, բոլորի ուշքն ու միտք օր առաջ կազմակերպուած բանակ ունենալու վրայ էր: Ասով մէկտեղ կառավարական շրջանակներու մէջ կը խօսուէր մի այլ լուրի մասին թէ Մալալի զանուած Ե. զնդի զինւորներ հրաման ստացած են Կովկաս մեկնելու. ար-

դէն Ալաշկերտի շրջան պարպուած է, հրահանգուած է Վան եւս պարպելու. Սալալի գտնուած Ն. գնդի զինուորներ անասարանօք կը կանչեն Վան գտնուած իրենց ընկերներ՝ որ միասին քաշուին:

Կարծես թէ լսուած լուրեր բաւական չէին, Առնիսէն Լեւոն Գասպարեան՝ տեղւոյն զօրքերու ընդհանուր հրամնատար՝ կը հաղորդէր մի ուրիշ լուր. — Երեք օրէ ի վեր 300 թիւրք զինուորներ ամրացածեն Ատիջկվազի մէջ: Ձիւանի Ձորի ազաներէն Քեամիլ Պէկ իմ ստացած տեղեկութեան համաձայն՝ եթէ մինչեւ այժմ չէ մեկնած՝ մօտ օրերս անսպաման միտք ունի մեկնիլ հոն՝ տաճկական բանակի հետ տեսնուելու համար: Կարեւոր է ուշադրութիւն դարձնել, դրութիւն լուրջ է եւ վտանգաւոր. մեր ոյժերը անբաւարար են, խնդրեմ ուղարկել ինձ հարկ եղած օգնական ոյժեր, մանաւանդ մի վարժ գնդացիբային խումբ:

Յաջորդ առաւօտ նման տեղեկութիւն մ'ալ կը հասնէր Բերկրիէն՝ յայտնելով թէ — Քիւրտեր արտասուլոր եռուզեռի մէջ են, կարծենք թէ որոշ ձեռնարկի մը կը պատրաստուին:

Մինչ չորս կողմէն զգուշացնող լուրեր կը հասնէին կեդրոնական կառավարութեան, եւ չորս կողմէն օգնական ոյժեր կը խնդրուէին, ասդին կառավարութիւն խիստ գաղտնապահօրէն ծածկելով եղածը, կ'աշխատէր ժողովրդեան տրամադրութիւն լաւ պահել եւ փետր. 23ին լուր կը տարածէր թէ Կամուրջ— Ալաշկերտի գիծը մերոնց կողմէ վերագրաւուած ու 300 թիւրք գերիներ բռնուած են: Ի՞նչ կը խորհէր կառավարութիւն, իր ոյժերո՞ւն կը վըստահէր թէ տարրեր ծրագրիւններ ունէր, յայտնի չէր. միայն այսքան պարզ էր որ, նա ամէն կերպ կ'աշխա-

տէր ժողովուրդ անտեղեակ պահել շրջանի անցուղարձեքէն, ջանալով միանգամայն հնար եղած չափով շրջաններու պահանջներուն բաւարարութիւն տալ: Փետ. 27ին սպայական անդրանիկ ընթացքը աւարտող երիտասարդ սպաներու հրամանատարութեան տակ Առնիս կ'ուղարկուէր վաշտ մը (200 հոգի) զինուոր եւ 50 հոգինոց դնդացիրային խումբ մը: Տակաւին ուղարկուած զինուորներ տեղերնին չհասած Փետր28ին Առնիսի հեռախօս կը յայտնէր թէ — Մերոնք Արճէչէն վեց վերստ դէպի Ատիլջէվազ ընդհարում ունեցած են թշնամիի հետ, սրոնք մերոնց ձեռք թողլով երեք սպաննուած երեք վիրաւոր եւ ձի մը ետ են նահանջած:

Շրջաններու զինուորական անմխիթար կացութեան կը զուգադիպէին նաեւ ներքին խնդիրներ: Պարենաւորման հարց հետզհետէ սուր կերպարանք կ'ստանար, հաց չկար, կամ դոնէ հրապարակի վըրայ չէր ճարուէր. հացի պաշարը կեդրոնացած էր կառավարութեան ձեռք, իսկ տնօրինութիւնը յանձնուած էր Պարենաւորման Կոմիսար Զաւէն Կորկոտեանին որ իր ոյժէն վեր գործի մը պատասխանատուութիւն ստանձնած լինելով շուարած էր: Անօթի ժողովուրդ ստիպուած եղաւ յարձակիլ յիշեալին վրայ որ պատուհանէն տանիք եւ անկէ այգին ցատկելով հազիւ կարողացած էր մի կերպ ազատիլ ժողովրդեան բարկութենէն:

Դուրսէն թշնամին, ներսէն սով, զինուորական տենդագին պատրաստութիւններ, եռ ու զեռ, իրարահնցում, արտասովոր երեւոյթ մը տուած էին Վասպուրականին:

Իրերու այս դրութեան մէջ տարօրինակ էր Ոստանի ճակատի դրութիւն. հոն տաճկական բանակի

սպաններ մերոնց հետ եղբայրակցական յարաբե-
րութիւններ կը մշակէին, ու երբեմն մեր եւ երբե-
մըն Թիւրքերու սպաններ փոխադարձաբար իրարու
խրամներ այցելութեան կ'երթային :

Սորամանկ Թիւրքեր իրենց պապենական ղէնք
եղող խարերայութիւններով կեղծ եղբայրակցական
ցոյցեր կազմակերպելով կ'ուզէին մէկ կողմէն մե-
րոնց զիւրքեր լրտեսել, միւս կողմէն մերոնք քնա-
ցած վիճակի մը մէջ պահել, սպառազայի իրենց ձեռ-
նարկներու մէջ զիւրաւ յաջողելու համար : Մինչ
այսպէս Հայ Տաճկական բարեկամութիւններ յառաջ
կը տարուէին Ոստանի մէջ, ասդին կառավարու-
թիւնն ալ բարեկամական յարրարերութեանց մէջ
Պօշապի եւ Զիլանի շրջանի Քիւրտերու հետ, խոս-
տանալով անոնց ամէն կերպ աջակցիլ եթէ խելօք
իրենց սեղերնին մնային : Բայց թէ Թիւրքեր եւ թէ
Քիւրտեր արտաքուստ իրենց բարեկամական յարա-
բերութիւններ պահելով մէկտեղ իրենց ծրագիրնե-
րէն չէին հրաժարեր, ու լոելեայն կը պատրաստ-
ուէին յարմար բոլորէի մը համար :

* * *

Մարտ ամիսն էր . Գարնանամուտի առաջին ա-
միսը : Վասպուրականի դաշտն ու սարը ձմեռուայ
թմրութենէն արթնցած, նորարողքով ծիլերու կա-
նանչազարդ վերարկուն հագած, գարնանարոյր զե-
փիւտի համբոյրներով զինովցած հրաւէր կը կար-
դային հողագործին զէպի դաշտ, զէպի ստեղծագոր-
ծող աշխատանք : Զիւնահալը սկսած էր, Վարազայ
սարը կուրծք ուռեցուցած կը զիտէր բիւրաւօր փոք-
րիկ վտակները՝ որոնք կարկաչելով վար կը սահե-
ին : Ծիծեռնակն ու արտոյտը իրենց անոյշ ճողո-
ղիւններով կը ճախրէին օդին մէջ : Գարնանամուտ . .

ամէն կողմէ հրաւէր կը կարգան աշխատող ձեռքերուն, առոյգ ու ժիր շինականներուն՝ որոնք սակայն լուռ են ու անհետաքրքրի: Անոնք մոռացած կեանքն ու քաղցրութիւններ, բնութիւնն ու իր ըսքանչելիքներ, տարուած են մի այլ մտքով: Սաղաղ ստեղծագործող աշխատանքին յաջորդած է աղմբ կայոյց եւ քանդող պատերազմը: Գիւղացին՝ երէկի անխոնջ գիւղացին, մէկգլխի դրած էր այնքա՛ն սիրած արօրը, իր ձեռք մահառիթ հրացանին է երկարած: Հոս խոփը անգործութենէն կը ժանդոտի, հոն գիւղացու ձեռքերուն մէջ սուրը կը փա՛յլի... կռիւ կայ, կռի՛ւ...: Մօտ է թշնամին: Կեանքի ու մահուան պայքարն է, կ'սկսի ազատութեան եւ ըստըրկութեան հարցը...: Ու զարնանամուտի այս հրապուրիչ օրերին՝ ամբողջ ժողովուրդ փոխան դաշտի՝ խրամներու ճամբան ձեռք կ'առնէր. հոն այդ ձիւնահալէն լեցուած փոսերուն մէջ վճուռելու էր իր ճակատագիրը, ու հոն կը փութար իր սիրելիներուն վերջին համբոյր տալն իսկ մոռացած:



ՈՍՏԱՆԻ ԵՒ ԱՌՆԻՍԻ ԿՌԻՒՆԵՐԸ

Ու բնութեան եռանդը տակաւ առ տակաւ կը մարէր, ժպիտը կը չքանար, տխուր էր նա... արհամարհուած, լքուած, մոռացուած անտէր ու յուսահատ :

Գարնանամուտ էր, բայց այս գարնանամուտը իր հետ կը բերէր վիշտ ու թախիծ, արիւն ու արցունք: Հովն ու գետակ, արտոյտն ու ծիծեռնակ, բոլորը, բոլորը կարծես զուլո՛ւմ, զուլո՛ւմ կ'եղերերգէին... Ու Վասպուրականի դաշտն ու սար, հովիտն ու անտառ սոսկուժով կ'արձագանգէին զուլո՛ւմ, զուլո՛ւմ... :

Ու մեծ զուլումի նախօրեակին ամբողջ Վասպուրականի ժողովուրդը երխասասարդ թէ ծերունի գործի լծուած կ'աշխատէին: Ես ալ որպէս քաղաքացի պարտաւոր էի իմ բաժինը ունենալ այս մեծ աշխատանքին մէջ: Չորրորդ անգամ լինելով ընտանիքով նահանջած էի դէպի Կովկաս, բայց դարձեալ հայրենիքի սէրը, անոր բնութեան արտակարգ շքեղութիւնը, մաքնիսի մը նման, ինձ եւս դէպի զինք քաշած էր ու ես ընտանիքով դարձեալ ներկայ էի հոն: Եղբայրս արդէն վաղուց զօրանոց մեկնած էր, ուր սպայական դասընթացքին հետեւելով աւարտած եւ այժմ մարդիչ սպային որպէս օգնական նոր սպաներ մարզելով էր զրազած: Իսկ ես Զինուորական Կոմիսարի կարգադրութեան համաձայն՝ մեկնած էի

քաղաքէն 45 վայրկեան հեռու Աւանց նաւահանգիստը եւ կը վարէի տեղւոյն գինուորական կայանի կառավարչի եւ սահակատապետութեան պաշտօններ : Աշխատանքը ծանր է ու մաշեցնող, բայց ո՞վ է ուշադրութիւն դարձնող, ո՞վ է հանդիստ, որ ես հանգըստութիւն փնտռեմ : Ու կ'աշխատէի լուռ ու անտրտունջ, տուն եւ ընտանիք մոռացած : Որքան ծանրը է աշխատանքս, այնու ամենայնիւ ձմեռուայ ցուրտին խրամներու մէջ անքուն հակող գինուորի շարձարանքին չի հաւասարիր, կը յանդիմանէի ինքզինքս յոգնութեանս րոպէներուն :

Հեռախօս ունենալու հանգամանքը առիթ կու տար ինձ իրազեկ լինելու օր օրին շրջաններու մէջ կատարուած դէպքերուն . կը լսէի կը հասկնայի ըստ ըստ որոյ մէկ մասին իսկ ժողովուրդ չէր կարող իրազեկ լինել . կը լսէի ու կը սոսկայի, ոչ մի մը խիթարական լուր, ոչ մի յուսադրիչ պարագայ :

Աճապարանօք տեղի ունեցած զօրակոչը գինուորական մարմին դրած էր մի այլ նեղ կացութեան մէջ : Բաւարար չափով պատրաստուած զօրանոցներ չկային, չորս տարուայ ընթացքին քարու քանդ եղած էին համարեայ բոլոր տուներ, ու հաւաքուած գինուորութիւն տեղաւորեցնելու յարմարութիւններ չկային : Բայց ահա Ձինուորական մարմնին օգնութեան կը հասնէր Ամերիկեան Կոմիտէն՝ Պր. Կրէյսի միջոցաւ, որ հաւաքած բոլոր ատաղձագործներ ըսկըսաւ մի քանի տասնեակ տուներ նորոգել եւ բրնակելի դարձնել գինուորներու համար : Միաժամանակ սկսեց բուրգի գործը, որով միջին հաշուով 500-1000 կանայք աշխատանքի վարձք կ'ստանային ու մի կերպ կ'ապրէին :

Մինչ Վասպուրական այս կերպ ելեքտրականա-

ցած գործունէութեան մէջ էր, ահա Մարտ 4ին կը հասնէր Էրզրումի անկման լուրը: Ի՞նչ է այս Աստուած իմ, ի՞նչ դժբախտութիւններ են ասոնք, մի՞թէ Հայութիւն բնաջնջման դատապարտուած է, կը կրկնէր ժողովուրդ իր յուսահատութիւն տարրեր բառերով արտայայտել չկարողանալով:

Կամուրջն ու Ալաշկերտ գրաւուած էին, ահա կ'իյնար Էրզրումը, այսպիսով Վան ինքնին պաշարուած էր արդէն: Ժողովուրդ իր կառավարութեան կարգադրութեան կ'սպասէր, որ սակայն զինք կը յուսադրէր եւ Էրզրումի անկման լուրը չէզոքացնելու կը ջանար իր տարածած մի այլ լուրով. «Անգլիացիներ Գաւրէժ եւ Սալուջ — Պուլաղ մտած են 6000 զօրքով»: Նման լուրեր թէեւ կառավարութիւն պաշտօնապէս չէր յայտարարեր բայց յամենայն դէպս իր շրջանակէն կ'ելնէին ու կը տարածուէին:

Էրզրումի անկումէն, Խնուսի եւ Ալաշկերտի նահանջէն վերջ Վան մնալ անտեղի էր արդէն, եւ ըստոյզ վտանգի ու անկարելի դարձած դիմադրութեան ի զուր զոհեր տալու անկողմնակից հայկական Ե. Գունդը, Մարտ 7ին հաւաքած էր բանակի վերջին մնացորդներ, ժողովրդեան արին արցունքի հեղեղներու մէջէն կ'անցնէր դէպի Կովկաս՝ Վանի կառավարութենէն յուսահատուած: Կը մնային մի քանի սպաներ եւ հարիւրի չափ զինուորներ, որոնք հայրենիքի սիրոյն թէ այլ պատճառներէ զբրդուած չզիտեմ երզուեցին մնալ եւ մինչեւ վերջին շունչ կուռիլ Վասպուրականցիներու կողքին:

Տպաւորութիւն ծանր էր ու ճնշող: Ժողովուրդ կառավարութենէն անկախ կը դիմէր դնդի հրամանատար Պալկովնիկ Պողոսեանին՝ խնդրելով որ այսպիսի ճգնաժամային բոլէներին չլքեն զիրենք: Պո-

դոսեան սիրով ընդունելով մէկտեղ իրեն ներկայացողները, դառնացած սրտով կը պատասխանէ. «Յանցանք մեր չէ, ձեր մեծերուն դիմեցէ՛ք, մենք ստիպուած ենք մեկնիլ»: Ի՛նչ կը նշանակէին Պօլկովնիկի այս խօսքերը, չգիտեմ, միայն այսքան պարզ էր որ նոքա կը հեռանային, ու Վասպուրական կը մնար մինակ, իր բախտին ձգուած: Այնուամենայնիւ յուսահատուելով ձեռքեր ծալլելով նըստիլը գրուեթիւն չէր փրկեր, պէտք էր գործի անցնիլ. ու Վասպուրականցիին իր ղեկավարներու կարգադրութեան հլու հնազանդ, յուսահատական պատրաստութեանց մէջ էր. 30,000ի մօտ ժողովուրդը մեքենայի մը նման կը դառնար քանի մը մարդոց ձեռք, մարդիկ՝ որոնք սակայն իրականութենէ աւելի պատրանքով էին տարուած:

Ե. Գունդը հազիւ Վանէն 6 ժամ հեռացած էր երբ Մարտի Տին հեռախօսը Ոստանի կոուլի սկսուելը կը յայտնէր: Ահազանգը այս անգամ պաշտօնապէս հնչած էր, ժողովուրդն ու զինուորականութիւն իրար անցան: Ոստան կը գտնուէր Գարեգին Հացագործեան իր Վանի սպայական կուրսը աւարտող երիտասարդներով, անմիջապէս Հայոց-Չորի Կղզի գիւղէն օդնութեան կը հասնէին Մուրատ իր ձիաւորներով, Սամուէլ, Ազատ իրենց վաշտերով. օդնութեան կը հասնէր նաեւ Վանէն, Անգղէն եւ Հայոց-Չորէն ամբողջ զինուած ազգաբնակչութիւն: Կոուլի նախօրեակն էր: Ամէն ջանք ի գործ դրուելու էր, որ թշնամին իր առաջին իսկ յարձակման զգար թէ ոյժ մը ունի իր դէմ եւ հրաժարէր գէթ առայժմ իր յառաջանալու մտադրութենէն: Անմիջապէս հեռագրուեցաւ նաեւ Առնիս որ նաւը օդնութեան հասնէր: Յաջորդ առաւօտ նաւը արդէն Աւանցէն ճամ-

բայ կ'ենէր դէպի Ոստան, իր հետ տանելով եւ Նահանգային Կոմիսար Կ. Համբարձումեան:

Մինչ ժողովուրդը ելեքտրականացած ու վախով համակուած լուրի կ'սպասէր, անդին Ոստանի մէջ մեր գինուորներ առանց շփոթուելու հերոսաբար կուրծք կուտային թշնամիի գրոհին, ուրախ երգելով՝ ծաղրելով անոր մոլեղնութիւնը: Ու ձիւնածածկ խրամներու մէջ, թշնամիի ահռելի գնդակներու տեղատարափին տակ հայրենիքի պաշտպանութեան վեհ պազափարով տողորուած գինուորներու ոգեւորութեանը պահուն կը հասնի իրենց շողենաւը, որ ծովէն կատարեալ վարպետութեամբ կը ոմրակոծէ թըշնամիի դիրքերը, ու մերոնք չկարողանալով ինքզինքնին գոպել, դուրս կը ցատկեն խրամներէն ու գնդակներու տեղատարափին տակ յարձակման կը դիմեն:

Թշնամին ընկճուած էր, իր յոյսերը առաջին պատեհութեամբ ի դերեւ կ'ենէին, իր անդրանիկ յարձակումը ձախողելէ զատ, հարկադրուած էր նաեւ քաշուիլ իր առաջաւոր դիրքերէն:

Մարտ 10ին յաղթութեան աւետիս կը շրջէր բերնէ բերան. ժողովուրդը աննկարագրելի ոգեւորութեան մէջ էր, բոլոր կը շնորհաւորեն զիրար, ուրախութենէն կը համբուրեն մէկզմէկ: Յաղթանակի ցնծութեան մէջ էր ամբողջ Վասպուրականը:

Երկու օրուայ այս կռիւներուն մենք ունեցած էինք երկու սպաննուած եւ երկու վիրաւոր: Այս անդրանիկ կռուի, անդրանիկ վիրաւորը Յիւնապետ Գէորգ Բարթոլոմէոսեանն էր, որ իր վիրաւոր վիճակով՝ Ոստանի հեռաձայնի գլուխ անցած կը խօսէր Վանի հետ, յայտնելով որ շփոթուելու կարիք չկայ, մերոնք իրենց դիրքերու վրայ են ապառաժի մը նման աննկուն:

Առաջին յաղթութիւն որքան որ ոգեւորեց բո-
պէսպէս, նոյնքան եւ մտահոգութիւն պատճառեց.
պարզ էր որ թշնամին ասով խրատուած, այս ան-
գամ պիտի յարձակուէր եւ անշուշտ աւելի ուժեղ
պատրաստութեամբ: Ի՞նչ ընելու է, ի՞նչ պիտի լի-
նի ժողովրդեան վիճակը յաղթուելու պարագային:
էրզրումի անկումէն վերջ ոգեւորուած թիւրքերու
հետ կատակ ընել չէր կարելի. կըզգային այդ՝ Վա-
նի միւս կողմակերպութիւններ, բայց ի վիճակի
չէին ազդելու տիֆտաղուրա յայտարարած Դաշնակ-
ցական կառավարութեան վրայ, որը անկասկած
նոյնպէս կըզգար բոսնիական պահանջը, բայց կը
յամառէր տակաւին: Չարեաց փոքրագոյնն էր դարձ-
եալ ազմկելը, առանց բանակի մէջ քայքայում յա-
ռաջ բերելու, թեւ ու թիկունք տալ եւ ամէն կերպ
աշխատիլ արամադրութիւններ բարձր պահել: Ու
այսպէս ապագայի նոր եւ խոշոր անակնկալներ
դիմապրաւելու պատրաստ՝ լարուած դրութիւնը
կը շարունակուէր:

Ճիշդ այս օրերուն չչուկ մ'եւս կը պտըտէր թէ,
Վանեցիներուն ծանօթ Արամ Մանուկեանէն եւ Անդ-
րանիկէն նամակներ եւ հեռագիրներ ստացուած են,
որոնցմով կը հրահանգուէր Վանը պարպել եւ քոչ-
ուիլ Բերկրի, ուրկէ աւելի հեշտ էր նահանջել: Բայց
այս կարգի լուրեր— որոնք անպայմանօրէն կառա-
վարական շրջանակներէն կ'ելնէին— անհնար էր ըս-
տուղել, զի կառավարութիւն նահանջելու խօսք իսկ
չէր ուզեր ընել, իբրեւ թէ Կոմիսարներու ժողով
զաղթելու եւ մնալու խնդրով բաւական երկար խոր-
հրդակցութենէ վերջ վճռեր է մնալ եւ ամէն գնով
պաշտպանուիլ, բայց թէ ի՞նչու՝ չգիտեմ: Ու ժո-
ղովուրդ անորոշութեան մէջ կը խարխափէր այս-

պէս, լսուած լուրերու ինչ աստիճանի ստոյգ լինելն իսկ գիտնալ չկարողանալով :

Մարտի 14ին Առնիսի հեռախօս կը հաղորդէր մի նոր լուր. «Քիւրտեր յարձակեցան Արճէշի մեր պահակներու վրայ, մենք ունեցանք մէկ սպաննուած, երկու վիրաւոր, Քիւրտերը անվնաս փախան» : Նորէն պատերազմի յայտարարութիւն : Պարզ էր Զիլանի-Չորի Քիւրտեր կանոնաւոր յարարերութեան մէջ էին Ատիլջէվազ զանուած տաճկական բանակի հետ, եւ լուրջ վտանգ կը սպառնային : Առերեւոյթ խաղաղութիւնը նորէն վրդովուեցաւ, ժողովուրդը նորէն յուզուեցաւ, նորէն իրարանցում, նորէն կասկած : Միայն զինուորներ էին որ անգիտակ անցած զարձածէին Ոստանի խրամներու մէջ կը հսկէին զիշեր թէ ցերեկ աննկուն կամքով մը : Ժողովրդեան արամադութիւն բարձրացնելու եւ Արճէշի լուրին հակազդելու համար, ահա նորէն հրապարակի վրայ է մի այլ լուր. «Պագուի եւ Երեւանի թիւրքեր յանձնուած են Հայերուն. հայկական իշխանութեան ձեռքն է այդ շրջաններ» : Բայց ժողովուրդ այնքան յոռետես էր այս կարգի լուրերու մասին որ արժան չէր դատեր լսելէ յետոյ խօսիլ իսկ այդ մասին : Ահռելի վտանգը բացորոշ էր արդէն, ամբողջի ուշքն ու միտքը վանով զրադուած էր :

Ոստանի եւ Արճէշի ազգանաչաններ կարծես բաւական չէին՝ ահա Մարտ 15ին կը հասնէր եւ Սաւալիի շրջանի Պարսիկ կառավարիչ Ամիր Թիւմանի ծանուցագիրը : Ահա հարազատ պատճէն այդ ծանուցագրին .

«Կոմիսարուքեան ներկայացուցիչ Տէր Միքայելեանին .—

«Պարսկական Պրիկագի կօզակներ հաղորդեցին

ինձ՝ իսկ ես կատարեցի: Այս պատճառաւ Պարսիկ օֆիցէրները ուղարկեցի Սաֆալու եւ որոնք մանրամասն բացատրեցին Նաչալնիկին եւ Կումիսարին պարսկական կառավարութեան հրահանգի մասին. նոյնպէս ստացել եմ Կալիստի կարգադրութիւն որից երեւում է՝ Պարսկական, Ռուսական, Անգլիական եւ Թիւրքական կառավարութիւնների մէջ, կարգադրութիւն կայ որ բոլոր զօրքեր հեռանան Պարսկաստանի սահմանագլխից՝ Պարսկաստանի չեզոքութեան համար:

«Այս հանգամանքների տակ, ես ընկնում եմ երկու կրքակի մէջ, այսինքն մէկ կողմից իմ տէրութիւնը պաշտօնապէս հաղորդել է իր չեզոքութիւնը, իսկ միւս կողմից իմ նահանգի սահմաններում գրտնուում են զինուորած ոյժեր. որ իրապէս հակասում են չեզոքութեան պայմաններին: Ձեզ եւ ձեզանից շատերին շատ լաւ յայտնի է որ ես ամէն ժամանակ աշխատել եմ, եւ աշխատում եմ, պահել ձեզ հետ մի միայն բարեկամական յարաբերութիւններ, լաւ գիտնալով որ դուք նոյնպէս պահպանում էք նոյնը: Դուք արդէն գիտէք որ ձեր զօրքերի մնալը եւ անդափոխութիւնը իմ նահանգի սահմաններում այսպիսի միջոցներուն անյարմար է, ինչպէս ձեզ նոյնպէս ինձ համար: Այս պատճառաւ ես կը խնդրէի ձեզ չը մերժէիք եւ բարեհանէիք ինձ մօտ գալ, մեր երկուսի համար հիւանդոտ հարցի շուրջը բանակցութիւններ վարելու, քանի որ իմ տէրութեան — Այսինքն Գահաժառանգի — կարգադրութեան եւ պատասխանատուութեան տակ կը գտնուիմ իմ կառավարութեան առջեւ: Ամենայն դէպս ձեր զօրքի այստեղ մնալը առիթ կուտայ կառավարութեանս հրամանները գործադրել՝ պարսկական կօզակների օֆիցէրներին միջոցաւ:»

ԱՄԻՐ ԹԻԻՄԱՆ

Ինչպէս կը տեսնուի ծանուցագրէն, Ամիր Թիւման եւս իրազեկ լինելով մօտ ապագային Վասսուրականի գլխին պայթելիք փոթորիկէն, ինքն ալ իր կողմէն եւ անպատճառ արտաքին թելադրանքէն մղուած, մէջտեղ կը նետուէր գործը փութացնելու եւ խռովութիւն յարուցանելու պատճառ գըտնել: Այս նպատակով կ'առաջարկէր պարսպէլ Սաւալուն, ուր կը գտնուէին գինուորական ամէն կարգի մթերքներ, եւ որոց տեղափոխութիւնը անհնար էր գրեթէ, փոխադրութեան միջոցներու չգոյութեան պատճառաւ: Կառավարութեան հասկնալի էր արդէն Ամիր Թիւմանի բուն նպատակը, եւ որովհետեւ այլ կերպ ալ չէր կարելի վերաբերուիլ, ահա իր ներկայացուցիչ Կ. Համբարձումեանի բերանով՝ նոյն իրիկուն Սաւալի գտնուած Վանի կոմիսարիատի ներկայացուցիչ Տէր Միքայէլեանին՝ որուն արդէն ուղղած էր Ամիր Թիւման իր ծանուցագիրը — կը յանձնարարէր պատասխանել այսպէս.

«Մենք ձեր հողին աչք չունինք, իսկ եթէ կ'ուզէք որ ձեր հողէն հեռանանք, մեզ դիւրութիւններ եւ փոխադրութեան միջոցներ տուէք՝ ու մենք կը հեռանանք մեծ ուրախութեամբ, իսկ եթէ այդ չէք ըներ եւ կը պահանջէք որ հեռանանք, մենք չենք լսեր ձեզ, ինչ որ կարող էք ըրէք: Միեւնոյն ատեն դուք՝ Ամիր Թիւման՝ չմոռնաք ձեր այսօրուայ խօսքերը, եթէ երեսուն տարի ալ անցնի, այս վրէժը ձեզմէ պիտի լուծուի»:

Կոմիսարիատ իր այս սպառնական պատասխանով արդէն պատերազմ յայտարարած կը լինէր Ամիր Թիւմանին դէմ, Վասսուրական կատարեալ պաշարման վիճակի մը ենթարկելով: Այսպէս չորս կողմէն յարձակելու պատրաստ թշնամիներով շրջա-

պատուած՝ Վասպուրականի 30,000 Հայութեան կը մնար իր սեփական ոյժին ապաւինիլ:

Մարտ 16ին կը լսուէր նաեւ Տրապիզոնի Թիւրքերու ձեռք անցնելու եւ Զիլանի Զորի Քիւրտերու կասկածելի շարժումներու լուրեր: Կը տիրէ յուսահատութիւն, բոլոր շուարքի մէջ են, գիտեն որ Թիւրքիան իր կորսնցուցած նահանգներ վերադրուելէ զատ անհնար է որ Վանն եւս չուզէ գրաւել, եւ մանաւանդ Ալլրիլեան ամօթապարտ պարտութեան վըրէժը լուծել: Բայց ինչ կարելի է ընել երբ կայ կառավարութիւն մը, որ կը հրահանգէր զիրքեր մեկնիլ եւ հսկել: Վասպուրականցին իրեն նախատինք կը համարէր կոռուէն փախչիլ. ամենաանյոյս վիճակին իսկ երբ կը հրամայուէր իրեն կոռուիլ նա պատրաստ էր մեռնիլ, այդ սորվեցուցած էր յեղափոխութիւնը, որու երեսնամեայ աշխատութեան արդիւնքն էին իրենք: Մահ կամ աղատութիւն, ահաներկայ բոպէներու միակ յարմար նշանարանը, ու ամբողջ ժողովուրդ հրացանը ձեռքին արթուն կանգնած էր խրամներու մէջ:

Ժողովրդեան այս ճգնաժամային բոպէներուն ահա Կովկասէն կը հասնէին Խուսեան Խաչիկ եւ Ճանօյեան Մեսրոպ հարիւր ձիաւորներով, որոնք Յունուարին Վանէն մեկնող Ռուսներուն ընկերացած էին թնդանօթներ վերադարձնելու համար: Անոնք ահա անվնաս կը վերադառնային, յայտնելով որ թնդանօթներ Երեւան մնացին, իսկ ատոր փոխարէն Գեներալ Պաղտասարովի հրամանատարութեամբ Իգտիր եկած են 2000 Վանիցի երիտասարդներ՝ որոնք մինչեւ այժմ տեղս հասած կը լինէին, եթէ ճամբաներու սոսկալի ձիւնը արգելք չը լինէր: Զիաւորներ եւ իրենց բերած լուր անհուն ոգեւորութիւն մը յառաջ

բերին ժողովրդեան մէջ. ալ վախ չունէին: Ամէն պարագայի երբ 2000 կտրիճներ կուզային իրենց օգնութեան, թշնամին՝ գոնէ բաւական երկար ժամանակի մը համար հնարաւորութիւն չպիտի ունենար վան դրաւելու: Ուրախայի էր մանաւանդ այն պարագան որ Գեներալ Պաղտասարբով իր հետ ունէր թնդանօթածիղներ՝ որոնցմէ բոլորովին զուրկ էր վասպուրականը: Թնդանօթ կար բայց գործածող չկար, ահա մեր մեծ դժբախտութիւններէն մին: Ու ժողովուրդը անակնկալ աւետիսէն հրճուանքի եւ ոգեւորութեան մէջ էր:

Մարտ 19ին Ռստանէն լուր հասաւ թէ կռիւ ըսկրած է: Տիրեց ընդհանուր իրարանցում, սպասուած յարձակումը ծայր կուտար. թշնամին այս անգամ կուզար երկու թնդանօթով, երեք զնդացիներով եւ աւելի մեծ բանակով մը: Անհաւատար պայքարը սկսած էր, չնայած մեր թնդանօթ չուննալու հանգամանքին մեր զինուորներ առանց չիտթելու, անսասան կը մնային թշնամի թնդանօթէն քանդուող իրամներու մէջ, եւ երեք անգամ ետ կը մըղէին թշնամիի երեք կատաղի յարձակումներ:

900 հետեւակ եւ 100 ձիաւորներ ընկերացած Հայոց-Չորի կամաւորապէս կռուի դաշտ մեկնող ժողովուրդ՝ Լեւոն Շաղօեանի եւ Տիրբան Փամհարեանի հրամանատարութեան տակ «Ազատն Աստուած» երգելով՝ կը պայքարէին բռնութեան դէմ, որ կուզար վասպուրական զգեստներու:

Ահա կը հասնէր եւ նաւը ու Համբարձումեան դարձեալ նաւին կ'ընկերանար դէպի Ռստան, մինչ ասդին քաղաքի ժողովուրդ եւ սպայական կուրախ սպաներ հապճեպով զէնքեր առած Ռստան կը վազէին: Յուզմունքն ու իրարանցում մեծ էր, թշնամին

Թնդանօթներով կուգար, այս կոիւը ճակատագրական լինելու էր. հոն կը վազէին բոլորը, դէպի Ռստա՛ն, դէպի գիրքե՛ր.....:

Բայց դժբախտաբար Վանի ծովը սոսկալի ալեկոծութեան մէջ էր, ու մեր նաւի բոլոր ջանքերի զուր կ'անցնէին ամիին մօտիկնալու եւ թշնամին ումբակոծելու. ծովը աւելի կը կատղէր, մինչ ասդին խեղճ ժողովուրդ յուսահատութենէն կը հալէր ու կը սպասէր.....:

Երեկոյեան լուր հասաւ որ վիրաւորուած է Լեւոն Շաղօեան, ունեցած ենք 2 սպաննուած եւ 10 վիրաւոր:

Ժողովրդեան տրամադրութիւն ընկճուած է. բոլորն ալ հրացաններն գրկած Ռստան կ'աճապարեն օգնելու իրենց քաջարի զինուորներուն, արգիլելու անգութ թշնամիի մուտքը: Հասկնալի էր արդէն որ թշնամին եթէ յաջողէր ներս խուժել, բոլորս միասին կորսուած էինք:

Ժողովրդեան ընկճուած տրամադրութիւն բարձրացնելու համար բերնէ բերան կը շրջէր մի այլ լուր. «Գեներալ Նազարբէկովի կողմէն զբաւուած է Քէօրրիւ Քէօյ, յոյս կայ շուտով էրզրում եւս վերագրաւել»: Բայց զրութիւնն այնքան լուրջ էր եւ այնքան վտանգաւոր, որ ո՞վ ահանջ կը կախէր այս կարգի լուրերուն, լուրեր՝ որոնք արդէն շատոնց կորսնցուցած էին իրենց նշանակութիւնը:

Ռստանի մէջ ամբողջ գիշերը կոիւ կը շարունակուէր նոյն կատաղութեամբ, մինչ ասդին ժողովուրդ սրտատրոփ կը սպասէր:

Մարտ 20ի առաւօտն էր, ահնկալուածի տեղ, ահա կը հասնէր մի ուրիշ աւելի տխուր լուր. «Արճէջ թշնամիի կողմէ զբաւուած է, գնդացիք մը եւ

քանի մը զինուորներ դերի ինկած են. թշնամին կը յառաջանայ դէպի Առնիս» : Զինուորական Մարմնէն սկսեալ մինչեւ ամենայն տիպի գիւղացին սոսկումով մը համակուեցաւ, երկու կողմէն թշնամին յարձակման կը դիմէր, որն կանխապատրաստուած ծրագիրի մը արդիւնքն էր անպայման :

Ոստան իր կողով համարեայ թէ մոռացութեան թողուեցաւ, ամբողջի միտքը կեդրոնացած էր Առնիսի վրայ, ուր գտնուած 500 հետեւակ եւ 100 ձիււորներ՝ հաւանաբար անբաւական էին յառաջացող թշնամիի եւ Զիւլանի Զորի քրդական հորդաներուն դիմադրաւելու : Հոն թշնամին առաջին իսկ յարձակման յաջողութիւն գտած էր, ու կը սպառնար իր գրաւումները յառաջ տանիլ : Առնիսի անկում կարող էր կրիտիկական դառնալ մեզ համար, մեր նահանջի գիծը կը վտանգուէր : Ահու գողի մէջ է ամբողջ ժողովուրդ, վերահաս զուլումի ուրուականէն սարսափահար սուգի մէջ է ան, ոչ ոք կ'ուզէ խօսիլ, ոչ ոք կ'ուզէ շրթունք շարժել, նահանջի ու կոտորածի ուրուականը կը շրջի... : Բայց ոչ ոք կ'ուզէ այդ անուններ իր բերան առնել : Ի՞նչ կ'ըսէ Զինուորական Մարմին, ի՞նչ կարգադրութեան, ի՞նչ խորհուրդի մէջ է, ոչ ոք գիտէ, ու մինչ Առնիսն ու Ոստան կը թնդային հրացաններու, զնդացիներու եւ թնդանօթներու խլացուցիչ ու դժոխային որոտներու տակ, հոս ժողովուրդ տխուր ու յուսահատ կը սպասէր... :

Մարտ Չըր ահաւոր եղաւ Վասպուրականի համար. Առնիսի դրութիւնը անյոյս էր, իսկ Ոստանինը անմխիթար : Թշնամին իր թնդանօթաձիգներով քանդած էր Ոստանի մեր դիրքերը, եւ մերոնք ըստօրումով էին թողնել իրենց առաջաւոր դիրքերը,

իսկ նաւը անկարող էր սեւէ օժանդակութիւն մը բերել սաստիկ ալեկոծութեան պատճառաւ: Ու մետասաներորդ ժամուն Ջինուորական Մարմին յուսահատ, դիմադրելու անզօր զգալով, կէսօրէ վերջ ժամ 5ին յայտարարութեամբ մը կը հրահանգէր որ ժողովուրդ անմիջապէս նահանջէ Կովկաս — Բերկրիի գիծով:

Վախի եւ սոսկումի տակ սահմուկած ժողովուրդ յուսահատութենէն ինքզինք կորսնցուց. անոր զաւակներ Ոստան եւ Առնիս կը գտնուէին, կային ընտանիքներ որ երախաներու ձեռք բռնող մարդ մը իսկ չունէին: Տիրեց քառասային ժխորը, ողբ աղաղակ ու փախս՛ւտ...: Ու ժողովուրդ լալով կը համբուրէր իր հայրենի օճախի շէմքը՝ ուր թողնելով իր ամբողջ հարստութիւն զաղթի ճամբան ձեռք կ'առնէր: Բայց այս անգամուան զաղթը արդէն անյոյս էր ու աղիտարեր...:

Ես որ նոյն օր պատահամբ քաղաք կը զբտնուէի, անմիջապէս տուն աճապարեցի, ու ընտանիքը եզրօրս առաջնորդութեամբ ճամբու դնելէ վերջ մեկնեցայ Աւանց՝ պահեստի մասին կարգադրութիւններ ընելու:



ՆԱՀԱՆՁԻ ՍԿՁԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Ա.

Երեկոյ է, գիշերուայ խաւարը իր տակ ծածկած է Բանդէն մինչեւ Կէօլու երկարող ճանապարհի եզերքներին փոռած Վասպուրականցիները՝ որոնք հազարաւոր տեղեր փոքրիկ, փոքրիկ կրակներ վառած, իրենց ցրտահար անդամները կը տաքացնեն: Մեղուներու բզկոցին նմանող այս ժխորի մէջէն կը լսուին բարձր ձայներ ալ. Կարօ՛... Աստղի՛կ... Միօ՛... կը կանչեն անվերջ. կորսուած դըժբախտներ են անոնք, ձայն կուտան զիրար գտնելու համար:

Հիւանդ եմ ես ու ուժասպառ, Բանդի փարախներէն միտոյն մէջ կծկուած, վերմակ զլխիս քաշած կ'աչխատիմ չունչովս տաքացնել ցրտահար մարմինս՝ որ չնայած փարախի դարչահոտ ջերմութեան կը դողա՛յ...:

Վանի Զինուորական Մարմին եւ Կոմիսարներէն մաս մը լաւ լաւ ձիերու վրայ նստած Բանդ հասան, իրենց ետին թողնելով տակաւին Ոստանի խորամներու մէջ թշնամու գնդակներուն կուրծք տըւող հերոս զինուորները, եւ Բանդէն մինչեւ Կէօլու երկարող ճանապարհին փոռած 30,000 ժողովուրդը, նպատակ ունենալով վայրկեան մը չուտ կըտրել անցնիլ նահանջի ճանապարհը:

Զին. Կոմիսար Գրիգոր Պուլկարացիի ընտանիք, Ներքին Գործոց Կոմիսար Հմայեակ Մանուկեան,

Պարենաւորման Կոմիսար Չաւէն Կորկոտեան, Առաջնորդ Եղնիկ Վարդապետ, Դանիէլ Վարդապետ արդէն վաղո՛ւց անցած էին: Չինուորական Մարմին եւ Կոմիսարներու մնացեալ մասն ալ ահա կը հասնէր Բանդ, Ժողովուրդէն առաջ փախչելու համար: Ու այդ պատճառաւ յարմար կը դատեն Բանդ քիչ մը հանդատանալ եւ հեռախօսով տեղեկութիւններ ստանալ Բերկրի — Կալէէն, այն ահաւոր կիրճէն որ նահանջի ճամբու ամենավտանդաւոր տեղն էր:

Հեռախօսի գլուխ կ'անցնի Չին. Կոմիսար Գրիգոր Պուլկարացին, որ իր ընտանեկան հոգսերով մտատանջուած՝ առաջին իւր հարցում իր կնոջ մասին կը լինի: Գրիգոր որպէս զոյգ մը կայտառ երախաներու հայր, կը տառապէր հայրական ջերմ սիրով, ու այդ բոպէին որ իր ականջներ տրամազրուած էին կարծես միայն իր աչքէն հեռացած իր սիրունիկ զաւակներու մասին լսել, Բերկրիէն իրեն հետ խօսողին խօսքերը՝ որ իր նման չփոթած մէկու մը շրթունքներէն դուրս կ'ելնէին, անհասկընալի կը մնային սակայն. յանկարծ ծայրաստիճան յուսահատուածի մը նման վար կը նետէ հեռախօսը. «Գիծը կտրուած է կ'ըսէ, կորսուեցան երախաներս, կորսուեցանք եւ մենք...» ու կըսկսի արտասուել...: Ներկաներ չկրնալով հեռախօսէն բան մը հասկնալ եւ մտածուած որոշում մը տալ, կը վճռեն հեծնել ձիեր եւ վերադառնալ ծանիկ, չի մոռնալով խուճապ մըն ալ ձգել Բանդ գանուող Ժողովրդեան մէջ՝ յայտարարելով որ «Բերկրիի կիրճը թշնամիէն գրաւուած է, ետ դարձէ՛ք»:

* * *

Լուսոյ աստղը դեռ նոր էր իր գլուխ Վարազայ Սարի ետեւէն հանած, աղօթարանը իր դռներ

կը բանար, Բանդը զարթնելու էր, դաշտեր Հերկոզ գիւղացիներու հարալօցներ լսուելու ժամն էր. բայց Բանդը անտարբեր էր կարծես այսօր, սովորական գեղջկական կեանքը խոյս տուած էր սուգ մը ձգելով իր ետին:

Ես գիշերուայ սոսկալի ջերմէն թուլացած՝ հանգիստ կը քնանայի, երբ յանկարծ թեւիս ուժեղ ցնցում մը զգացի. վեր ցատկեցի, ընկերս էր ան՝ որուն հետ պառկած էինք:

— Ի՞նչ կայ, ի՞նչ է եղեր հարցուցի անձկութեամբ՝ դեռ քնաթաթախ:

— Ի՞նչ պիտի ըլլայ, չե՞ս լսեր, պաշարուած ենք արդէն...

Վերջին բառը շանթահարեց զիս, բոպէապէս ձեռքս հրացանիս տարի, աչքերս լայն լայն բացի, ահնարկս սեւեռեցի ձիուս՝ որ ահանջները լարած՝ առջևի ոտքերով գետինը կը ծեծէր անհանգիստ շարժումներով: Յետոյ շուրջս նայեցայ, մինակ էինք:

— Ի՞նչ ընենք...

Շուարքէս նոր անդրադարձայ իր ըսածներուն.
— Պաշարուած ենք, ինչ ընենք...

Դրսի ազմուկը հետզհետէ կը մեծնար, հրացանի պայթումներու տակ գիւղը կը թնդար: Ուրեմն թշնամին խուժած է ժողովուրդի վրայ, սկսած է ահուելի ջարդը, հետեւաբար կարգը մեզի հասնելու է շուտով: Յիշեցի ընտանիքս, մայրս, եղբայրս, զորոնք կորսնցուցի դեռ մէկ օր առաջ՝ Աւանց մեկնելէս ի վեր: Մտածեցի որ անոնք այժմ երեւի արդէն զնդակներու զոհ պացած լինելու էին ու խելագարի մը նման ոտքի ելայ:

— Ի՞նչ պիտի ընենք, սիրելի՛ս, եթէ չչարժուինք մեզ տեղն ու տեղը սպաննելու են, դուրս նետուինք տեսնենք ի՞նչ է այս :

Մահը այլևս աներկրայ կը թուէր ինձ, ու հըրացաննիս պատրաստելով ձիերու սանձերէն բռնած մօտեցանք դրան: Փարախը՝ ուր մենք պառկած էինք՝ կը գտնուէր ընդարձակ բակի մը մէջ, այնպէս որ մինչեւ փողոցի դուռ հասնելու բաւական ճամբայ կը մնար: Ճրագ չկար, ոչ ալ կենդանութեան նշոյլ: Ի՞նչ էր եղած այդ տեղ դառնուած ժողովուրդեան բազմութիւն, ե՞րբ էին մեկնած, ի՞նչու մեզի լուր չէին տուած. կարելի չէր հասկնալ: Ու խաւարէն եւ սարսափեցնող ամայութենէն սահմըռկած, դրսի որոտներէն յուսահատ՝ կամաց, կամաց կը դիմենք դէպի դուռը ամէն բոպէին սպասելով թշնամու մահացու դնդակին: Վերջապէս դուրսն ենք, կարմիր գանգուած մը իր գլուխը կ'երեբցնէ գիւղի մէկ ծայրէն՝ անհամար կայծեր փռելով աջ ու ձախ, հրացաններու պայթումներ օդ կը թնդացնէին: Հապա դնդակներու սուլոցները... ապշած ենք... ի՞նչ է այս կոիւր այսքան մօտ եւ առանց ազմուկի՛...: Մեքենարար ձիերնիս կը հեծնենք ու գիւղին մէջ կը յառաջանանք: Քիչ մ'անդին ձայն մը կը կեցնէ մեզ, հեծկտանքի շեշտ մ'ունէր ան ու անունս կը կանչէր: Մտիկ ըրի եւ ճանչցայ, մօրս ձայնն էր: Ես ալ իր անունը տուի շփոթած: Բոպէ մը վերջը խեղճ մայրս ուրախութենէն ձիուս կուրծքը կը համբուէր: Ծուտով գտայ եւ ընտանիքի միւս անդամներ՝ որոնք զիտնալով որ ես եկած եմ Բանդ եւ հիւանդ եմ ու հաւանաբար տեղ մը պառկած ու քնացած, ընկած էին գիւղ՝ տուն տուն կը խուզարկէին ու զիս կը փնտռէին: Երբ լոյսերուն մօտ ե-

կանք, պարզուեցաւ ամբողջ հանելուկը — պահեստը կրակի տուած էին, որու մէջ գտնուած 175 սնտուկ պատրոնները կրակ առած կը պայթէին դժոխային աղմուկով մը: Յետոյ հետաքրքրուեցայ թէ ո՞ւր է ժողովուրդը, ի՞նչ է պատահած: Ու պատմեցին անոնք:

Բերկրիի կիրճը թշնամիի կողմէն գրաւուած է. մի ահաւոր ոռւմբ էր սա որ պայթած էր գաղթողներու գլխին: Հազարաւոր թշնամիներուն հերոսաբար կուրծ առուղ Վասպուրակահնցին, ներկայիս խուճապի մատնուած, կը սոսկար դեռ երկու օր առաջ իր արհամարհած թշնամիէն: Մեռնելէ՞ն կը վախնար ան, ապահովարար ոչ: Կոուելէ՞ն կը վախնար, դարձեալ ոչ. որովհետեւ կռիւր ոչ միայն վախ չ'ազդեր Վասպուրակահնցիին՝ այլ եւ հաճոյք մ'է մանաւանդ երբ այդ կռիւ Վասպուրականի հողին վրայ կը մղուի, այն հողին վրայ՝ որու անունով կ'երգուի նա որպէս մի սրբութիւն. Վասպուրակահնցիի վախը ոչ կոուէն էր եւ ոչ ալ մահէն...:

Առաւօտ է, Մարտ 23ի առաւօտը. ամպածրար արշալոյսը դեռ նոր բացուած էր: Արեւը դեռ չձագած Վասպուրականի տարաբախտ ժողովուրդ ոտքի վրայ էր:

— Բերկրիի կիրճը գրաւուած է.

Ճանիկի աղբիւրի քով բաձրացող փոքրիկ երկյարկանի տան մը առաջ խոնուեր է ժողովուրդը: Հոն դռնփակ նիստ ունէին Վասպուրականի ճակատագրին հետ խաղցող Ջին. Մարմին եւ Կոմիսարներու Խորհուրդը: Բոլորի աչքեր այդ ամբոցի երեւոյթ ունեցող մէկուսի տան վրայ յառած էին: Չարագուշակօրէն, դոց դրան ու պատուհաններուն կը նայէին, ուրկէ լսուելու էր ժողովրդի ճակատագրի անօրինու-

թիւնը: Վայրկեաններ ծանր էին ու ահաւոր: շփոթուած ժողովուրդ առանց բացառութեան կորսնցուցած էր իր սպաղարիւնութիւն, բերանարաց ու ակնապիշ կը սպասէր, վստահ ըլլալով որ իր առաջնորդներ ղեկավարներ ի վայել յատկութեամբ մը ի վիճակի պիտի ըլլային ժողովուրդը ազատել այս տարօրինակ դրութենէն, ցոյց պիտի տային միջոց մը, պիտի մշակէին ծրագիր մը՝ որ պիտի իրաւարէր իրենց եւ Վասպուրականի անունը: Վախ համարեայ թէ չկայ, կայ միայն շփոթ եւ տարօրինակ անորոշութիւն: Բոլորը իրարու կը հարցնեն.

— Ի՞նչ ընելու ենք:

Երկինքի արեգակն անդամ կարծես շուարեր էր, չկրնալով բացատրել այս անօրինակ յուզումի եւ իրարանցումի պատճառը:

Ու ժողովուրդ աչքերը ազատարար դրան վրայ դամած կը սպասէր անվերջ:

Հեծկլտուքով մը բացուեցաւ դուռը յանկարծ ու պարոն մը երեւցաւ դրան առաջ, իրարանցում մը՝ յետոյ նորէն ժխոր ու աղմուկ:

— Սո՛ւս, սո՛ւս, լսեցէք... կը պոռային չորս կողմէն: Արամազդեան պատգամն էր զոր պիտի ունկընդրէին:

— Զինուած ձիւտորներ շարքի, իսկ ժողովուրդ ձերմակ դրօշակ պարզած թող վերադառնան իրենց տեղեր եւ յանձնուին...:

Երկինք փուլ եկաւ, թէ՞ երկիր պատուեցաւ... երբ ուշքի եկայ՝ ամբողջ մարմնէս սարսուռ մը անցաւ: Աղմուկն ու իրարանցում նորէն կը սկսին, վերջին մնաք բարեաւի համբոյրներ, նորապսակներու հրաժեշտի վերջին խօսքեր, մանկիկներէն բաժանուող հայրերու հեծկլտուքներ, այնպիսի իրա-

կան դժուրք մը պատկերացուցած էին որ գրիչս կը սկարանայ նկարագրելու :

— Յառաջ, լսելի եղաւ խորոխա ձայն մը . ու վանի Ձինուորական Մարմին եւ Կոմիսարներ շըրջապատուած խումբ մը ձիաւորներով կը թռչէին գէպի Դարասկէկ կոչուած գիւղի բլրակներ՝ հարուածներով սաստելով իրենց հետեւողներուն , եւ ձիերու բարձրացուցած փոշիի մէջ թաղելով : 30,000ի հասնող ժողովուրդը, որ իզուր կարծած էր թէ լսելացի եւ անձնուէր զեկալարներ ունի : Հինգ բոպէ յետոյ ձիաւորներ արդէն կորսուած էին անորոշ ուղղութեամբ , իսկ ժողովուրդ յուսահատ , լքուած , ու անաէր մնացած էր իր բախտին , որոցմէ մաս մը առանց անդրադառնալու Ձինուորական մարմնի անխոհեմ յայտարարութեան , լքած իր սիրելիներ , կը բռնէր այն ուղղութիւն ուրիշ անցան երանելի ձիաւորներ . իսկ աւելի խոշոր մասը չուղելով բաժանուել իր սիրելիներէն՝ որոց գոյութեան համար էր որ այնքան ատեն Ոստանի եւ Առնիսի ձիւնածածկ իրամներու մէջ կուծք կուտար թշնամիի դնդակներուն , բռնեց Աիմ անապատի ճանապարհը՝ յանձնելով ինքզինք ճակատագրի տնօրինութեան : Դժբախտաբար շատ քիչեր եղան որ վճռեցին ընտանիքով միասին փախչիլ եւ եթէ հարկ ըլլայ մեռնել փախուստի ճանապարհին , մեռնիլ իրենց սիրելիներու հետ :

Չարագուշակ չէնքի պատի տակ կանգնողներէն մէկն ալ ես էի իմ ընտանիքիս հետ , որ հինգերորդ անգամն ըլլալով , եւ ամէն անգամին ալ ընտանիքով , կը մատնուէի նահանջի սարսափներուն : Բայց այս անգամ արդէն հիւանդ էի եւ ձի նստելու իսկ անկարող : Արդէն երկու ժամ առաջ կարգ մը անհրա-

ժեշտ հազուատեղէն եւ ուտելիք ձիերուն բեռցուցած կ'սպասէինք Ձին. Մարմնի կարգադրութեան: Բայց այդ կարգադրութիւն լսելէ վերջ ջիղերս աւելի թուլացան, ու ես զգացի որ այլեւս անկարող էի տեղէս շարժուել: Միտքս լիմ անապատ ապաստանելով էր գրազուած, ու հարցուցի եղբորս՝ — Մենք ի՞նչ ընելու ենք. եղբայրս որ տարին իսկ չէր վերջացուցած Թ'իւրքերու ճանկէն ազատուելու չ'ը ոգիսականին, կարծես չլսելով հարցումս աճապարանօք կը քակէր ձիու վրայ կապուած բեռները ու առանց վրան իսկ նայելու կը նետէր աջ ու ձախ, չմտաբերելով նոյն իսկ որ այդ կապոցներու մէջ կը գլտնուէին իր երկու տարուայ տառապանքի օրերու օրագրութիւնները՝ զորս կը պահէր մեծ գուրգուրանքով. իսկ խեղճ մայրս մահն ու վտանգ մոռացած, թախանձագին կը խնդրէր որ գոնէ նոր շորերն ու ու կօշիկներ հագուէինք:

— Ի՞նչ կ'ընես եղբայր, ըսի բարձրաձայն, չո՛ւտ բրէ, նաւը հիմայ կը քաշեն եւ մենք չենք կարող Անապատ անցնիլ:

Անապատ բառը սառեցաւ չրթունքիս, եղբորս դէմքը կարմրեցաւ, անօրինակ բարկութիւն մը եկաւ վրան ու աչքերը լայն, լայն բանալով սրտաց. — Անապատ, ամօ՛թ հազար ամօթ քեզ. Կոմիտասներն ու Ձին. Մարմինը խելագարուած ինչ ընելիքնին չեն գիտեր. քե՞զ ինչ եղաւ, Անապատ ապաստանելով անձնատուր լինել վատերուն եւ ոչխարի նման մեռնելէն աւելի լաւ չէ՞ փախչիլ եւ լեռներու ճանապարհներով անցնիլ Պարսկաստան, կամ նոյն իսկ մեռնիլ սարերու գլխին ընտանիքովդ միասին եւ զէնքը ձեռքիդ:

Ոսքը չվերջացուցած գրկեց ինձ ձիու վրայ դը-

րաւ, նոյնպէս եւ մայրն ու եղբոր կինը, իսկ ինք
մտրակ ձեռքին սկսաւ մեր ձիերը քշել. ու մենք
բարձրացանք Դարապէկի բլուրները:

Եղբորս որոշումը ու յանդիմանական խօսքերը
այնքան ազդեցին վրաս, որ ցաւը վայրկենապէս հե-
ռացաւ ինձմէ, ձիու վրայ նստած՝ զզացի որ կա-
տարելապէս առողջ եմ, նոյն իսկ ոտքով քայլելու
ցանկութիւն ունեցայ, զոր սակայն եղբայրս արդի-
ւեց:

Ճանիկէն Դարապէկ տանող բլրային ճանապար-
հը հինգ բոպէ վերջ ձիւնածածկ ու խիստ նեղ դը-
րեթէ անանցանելի կիրճի մը կը փոխուի, ուրկէ կեն-
դանի մը հազիւ կարող է անցնիլ: Խուճապն ու իրար-
անցումը այնքան սոսկալի էր որ իրարմէ քայլ մ'ա-
ռաջ անցնելու մրցակցութիւն մը կար. մի քանի
տասնեակ կենդանիներ իրենց վրայի բեռներով մի-
ասին կողն ի վար կը դէօրէին ու միւսները առանց
ուշադրութիւն դարձնելու աճասպարանքով կ'անցնէ-
ին շարունակ:

Եղբորս տարօրինակ ոգեւորութիւնը այնքան ազ-
դեց իմ վրայ որ, երբ Արճակ գաւառի ծանօթ գիւ-
ղացիներ ձիեր հեծած քառասմբակ կ'անցնէին քո-
վէս — մաղէ կամուրջ անցնելէն քիչ անդին — ներ-
քին յուզմունքէ մը մղուած կանգնեցուցի զիրենք,
համոզելով որ վերադառնան եւ բնտանիքնին բերեն:
Խօքերուս ի պատասխան լսեցի մի քանի տասնեակ
բերաններէ անլուր լուտանքներ՝ նետուած Զինուո-
րական Մարմնի եւ Կոմիսարներու հասցէին. ու ձի-
աւորներու խումբը անյայտացաւ աչքերէս:

Մէկ ժամ վերջ Արտապէզ գիւղի ձորակի մէջն
էինք, ուրկէ կ'անցնի փոքրիկ գետակ մը (Սեւ Գետ):
Նահանջող ժողովուրդ լեցուած է գետափ, որոց մէջ

կան եւ Ոստան եւ Առնիս մեկնող զինուորներու անտէր բնառանիքներ, որոնք բնազգարար դէպի այս կողմը շարժուող ժողովրդեան հետեւած են առանց գիտնալու թէ ո՞ւր կ'երթան: Ջուրը բաւական առատ է, այնպէս որ կին մը մինակ հազիւ թէ կարողանայ անցնիլ, իսկ թէ փոքրիկ ունի մնալու է զի անկարելի է փոխադրել. ու այս պատճառաւ դարձեալ ծայր կուտան ողբն ու կոծը: Ժողովուրդը քիչ էր գտնէ իմ հոն եղած ժամանակ, այնպէս որ կէս ժամուայ մէջ մի քանի ձիաւորներու ազնուութիւնը վերջ մը տուաւ այդ սրտաճմլիկ տեսարանին՝ փոխադրելով փոքրիկները, ու մեր կարաւան առաջ անցաւ: Մինչ մենք բարձրացած էինք Հազիլշատ գիւղի բլրակի գլուխ, տեսանք որ մի ուրիշ եւ աւելի մեծ խումբ կ'իջնէր դէպի գետ. անցա՞ն ատոնց մէջ գտնուած փոքրիկներ թէ ոչ, չգիտեմ:

* * *

Երեկոյ է, Վասպուրականի Մարտի երեկոներէն մին: ցուրտ ու սառեցնող հովը ստիպեց բոլոր ձի նստողները՝ որ վար իջնեն եւ քալելով տաքացնեն իրենց սառելու մօտ մարմիննին: Յուրտ է. յոգնած ենք, անօթի ենք... Բայց ո՞վ է ուշադրութիւն դարձնող. չէ որ նահա՞նջ է... պէտք է աշխատիլ քայլ մ'աւելի առաջ անցնիլ, վա՛յ ետ մնացողին: Ու կը քալենք անվերջ ...: կամաց, կամաց խաւարը այնքան կը թարձրանար որ այլեւս անկարելի էր ճանապարհը շարունակել: Ծարահատ ստիպուած եղանք գիշերելու որոշում տալ, այլապէս կարող էր պատահել որ ճամբանիս կորսնցնէինք, ինչ որ աղէտաբեր կարող էր լինել: Բայց այս սոկալի հովին, բաց դաշտի մէջ գիշերելը անհնար էր, անհրաժեշտ էր ապաստանարան մը գտնել, հարկ էր քիչ մը կը-

րակ ունենալ տաքնալու համար. սակայն ս^ուր ապաստանիլ. գիւղ կա^ոյ, թէ ոչ մարդ չի գիտեր, միայն հաւանական կը գտնեմ որ Մանտան անուռով գիւղը մօտերը լինելու է, բայց թէ ո^ւր, ո^ր ճանապարհը մեզ կ'առաջնորդէ այդ գիւղը...: Թոյլ վիճակս եւ խաւարը շփոթեցուցած են զիս այն աստիճան որ գիտցածս ալ մոռցած եմ: Վերջապէս չորացած հեղեղատի մը հանդիպեցանք, ուր կարելի էր հովին դէմ պատասպարուիլ: Ամէն մարդ իր կենդանին բռնած խմբուեցաւ հոն: Օ՛հ, որքա՛ն հանգրտաւէտ, որքա՛ն անուշ էր տառապանքի ճանապարհին հանդիպած այս հեղեղատը՝ որ կուգար թեթեւ մը պատասպարել մեր ցրտահար անդամները:

— Կրա՛կ, կրա՛կ վառենք քիչ մը կը լսուի չորս կողմէն:

— Ո՛չ, ո՛չ մեր տունը կը քանդէք, թշնամին կարող է պատահել որ այս կողմեր հասած լինի, կը նկատէ, եւ այն ատեն գործերնիս կը դըժուարանայ, կը սաստեն աւելի փորձառուներ:

Ու ժողովուրդ ոչխարի նման իրար վրայ խռնուած կը հանգչի չհամարձակելով քնանալ, չէ՞ որ նահանջ է, իսկ նահանջի ճանապարհին քնանա՛լ...:

Կէս զիշեր էր, ամէն մարդ աչքերը երկինք յառած լուրևայն կ'աղօթէր, սպասելով որ խաւարը անցնի, որպէսզի կարող ըլլան ճամբան շարունակել: Յանկարծ հեղեղատի վերին ծայրէն խոշոր բոց մը իր գունագեղ հասակը երկարեց օդին մէջ, իր թեթեւ ճարձատումներով ծիծաղելով իրար վրայ կուշ եկած փախտական թշուառներու վրայ: Բոլորը մեքենարար վեր ցատկեցին եւ զէպի հոն շտապեցին հայհոյելով այն անծանօթ անզգամին՝ որ յանդրեմա՛ծ էր լոյս վառել եւ թշնամիին ցոյց տալ ի-

րենց տեղը: Մի երկվայրկեանի մէջ կրակի շուրջ
այնքան բազմութիւն էր հաւաքուած որ կրակի ուր
ըլլալը կարելի չպիտի լինէր հասկնալ եթէ զլուս-
ներու վրայէն չերեւէին բոցերու օրօրումները: Տա-
րօրինա՛կ բան. կրակ վառողը մի ծերունի կին էր,
որ հոն դռնուած փայտի ճիւղեր ու կոտորուած սայ-
լի մը տախտակներ զիզած բաւական մեծ խարոյկ
մը շինած կը տաքանար: Հիմա ալ ոչ ոք կը համար-
ձակէր զայն մարել, բոլորը տաքնալ կ'ուզէին, կը
տաքանային ու կը հայհոյէին մինչեւ որ կրակը փո-
շխացաւ. . . .:

Կէս զիշերը կ'անցնէր խաւարը տեղի կուտար հե-
տըզհետէ ծաւարող լոյսին, այժմ արդէն ճանապարհ-
ըը շարունակել կարելի էր, ու մենք սկսեցինք քա-
լել: Երեկոյեան մայր մտնող արեգական վերջին ճա-
ռագայթներուն հետ մենք ալ Սարայ մտանք:

Բ.

Ամբողջ ընտանիքով անօթի ենք, բայց ստա-
մոքսի մասին մտածելէ առաջ զիշերուայ ապաստա-
րանի հոգսը կը տանջէր մեզ: Հիւանդ եմ, եւ եթէ
տաքուկ անկիւն մը չունենամ զբութիւնս կարող է
վատանալ: Երկար փնտռուքէ վերջ, վերջապէս ա-
խոռ մը ճարեցինք՝ ուր մենք եւ մեր ձիեր տեղա-
ւորուեցանք, յետոյ սկսեցինք մտածել ուստելիքի
մասին: Հաջ ճարել անկարելի լինելով ստիպուած
եղանք միտով բաւականանալ. նահանջի ճամբին ոչ-
խարէն աւելի առատ ի՞նչ կար. քարիւղի ժանդոտած
թիթեղի մը մէջ մի կերպ խաչելով կերանք: Երբ
քիչ մը հանգստացայ, չնայած տկարութեանս գեղա-
մէջ ելայ հետաքրքրուելու համար թէ ի՞նչ կար,
ի՞նչ կը խօսուէր: Առաջին լուրը որ լսեցի Արձակի

չըջանի (որմէ տասը ժամ հազիւ հեռու էինք) ժողովուրդեան ջարդի մասին էր: Քիչ մը հեռուն սկսած էր ուրեմն ժողովուրդին սպանդը, բայց ո՞վ էր մըտածողը, ո՞վ էր օգնութեան հասնողը:

Սարայի ամբողջ դաշտը խարոյկահանդէսի էր վերածուած: Չորս կողմէն կրակներ կը վառէին. ոմանք ջերմութեան ու ոմանք կերակուր եփելու համար: Դառնացած սրտով հալածական ժողովրդի թշուառ կացութեան վրայ ակնարկ մը նետելով ուղղուեցայ դէպի այն տուն՝ ուր կը գտնուէին մեր չնաչխարհիկ կոմիսարներ: Հոն վառուած վառարանի առաջ նստած էին անոնք ծալլապատիկ: Գըրիգորի արտասուքէն ուռած աչքեր, մարած ձայն ու տանջուած դէմք այնքան ազդեցին հոգիիս որ կարեկցեցայ ամէն բան մտնալով. նա հօր մը վըշտով համակուած, արգահատանքի արժանի մարդ մըն էր: Գործի վրայ էր միայն ու միայն Համբարձումեանը՝ որ զինուորներ ոգևորելու համար ճառ էր խօսած կէս ժամ առաջ: Բանակը կարդաւորելու եւ գոնէ ասկէ վերջ քիչ թէ շատ կանոնաւոր կերպով նահանջելու պատրաստութեան մէջ էին. ուշացած խելօքութիւն: Գրիգորի հետ քանի մը միխիթարական բառեր փոխանակելէ վերջ կը վերադառնամ ախոռը քնանալու: Բայց հետզհետէ իրարու յաջորդող լուրեր այնքան վհատեցուցիչ կը դառնային որ կարելի չէր քնանալ:

Արճակի գաւառի Արեւելահարաւ գտնուող Նօշար շրջանի Քիւտեր ոտքի եւ գործի վրայ էին, անոնք զանազան խումբերու բաժնուած չորս կողմէն սկսած էին անտէր ու սաքսափահար ժողովրդեան վրայ յարձակիլ կոտորելու, կողոպտելու: Անոնցմէ խումբ մը Արճակի դաշտի մէջ յարձակած էր ան-

տէր ժողովրդիան վրայ, ուրկէ Քրաչքով յազատ-
 ուողներ կը նկարագրէին այդ հրէշներու կատարած
 սպանդն ու կողոպուտը: Իսկ մի ուրիշ խումբ, Ա-
 զարէն, Պօղազքէսէն, Տաշվէրան, Սեւան, Լիմ եւ
 Զարանց գիւղերու ազգարնակչութիւն, երբ նահան-
 ջի լուր լսած են, կը հաւաքուին միասին ու կը
 սկսկին Պօղազքէսէնցի Աւագի ղեկավարութեամբ
 յառաջանալ դէպի Բերկրի՝ յուսալով հոն դռնել
 վանէն նահանջող ժողովուրդը. սակայն մինչ անոնք
 ժողովուրդ փնտռելու ետեւէ էին, կ'ենթարկուին
 այդ Նօշարցի Քիւրտերու յարձակման եւ սակայն,
 Կոմիսարներու Սորհուրդէն աւելի խելօք գիւղացի-
 ներ կազմակերպուած նահանջ մը կատարած լինել-
 նուն չնորհիւ, ետ կը մղեն թշնամին եւ առանց մար-
 դու կորուստի ետ կը վերադառնան՝ բռնելու Պարս-
 կաստանի դիժը ու Սարայի մէջ հանդիպեցան մեզ:

Երեկոյեան հետզհետէ Ոստանէն հասան, Մու-
 րատի, Ազատի, Գարեգինի եւ Սամուէլի վաշտեր,
 բաւական շատցնելով զինուորներու թիւը: Գնահա-
 տութեան արժանի են այս վաշտեր իրենց մատու-
 ցած ծառայութեամբ. մանաւանդ Ազատի զինուոր-
 ներ՝ որոնք Ոստանէն վերադարձին կը հաւաքեն ի-
 րենց ճամբի վրայ տեսած ժողովուրդը եւ կ'առաջ-
 նորդեն Սարայ, չմոռնալով մարդ ուղարկել մինչ
 իսկ մինչեւ Լիմ Անապատ. բայց զժրախտաբար
 ժողովուրդ արդէն կղզիի ներս քաշուած կը լինի:

Դառն մտածումներու եւ կատարուած իրողու-
 թեան մը սոսկումներու մէջ խորասուզուած կիսա-
 խուփ աչքերով վերջապէս լուսցուցինք:

Մարտ 24ի առաւօտն է. արշալոյսի սառեցնող
 հովը կը փչէ, ամբողջ ժողովուրդ ոտքի վրայ է,
 յառաջապահ ձիաւորներու խումբ մը եւ հեռեւակ

զինուորներ արդէն կէս ժամ առաջ մեկնած են դէպի Կօտոլ: Ժողովուրդ առանց ժամանակ տալու որ յառաջապահներէն լուր մը ստացուի ճանապարհի ապահովութեան մասին, արդէն սկսած է շարժուիլ: Ես ալ կը միանամ անոնց:

Գետինը ձիւնով ծածկուած է, օդը ցուրտ. բայց ով ուշադրութիւն կը դարձնէ. քիչ ատենէն մանելու ենք ձորը՝ ուր կ'ըսուէր թէ Գիւրտեր դարանի մտած մեզ կը սպասեն: Տասնի չափ ծանօթ ընկերներով հաւաքուած միասին կը քալենք. վրտանդի դռներու առաջն ենք, անակնկալի մը պարագային զոնէ քանի մը հրացանաւորներ միասին լինելու նպատակով ժողովրդեան առջեւէն յառաջացող զինուորներ՝ արհամարհած ցուրտն ու ձիւնը, ձորակի երկու կողմեր բարձրացող բարձրաբերձ ժայռերու եւ բլուրներու կատարներուն վրայ ելեր են: Երբեմն, երբեմն այս ու այն բլրի զլխին կամ ժայռի կատարին կ'երեւին մի քանի մարդիկ, որոնց վրայի զէնքեր արեւազական անդրանիկ ճառագայթներուն տակ պաղ փայլով մը իրենց դոյուլթիւն ցոյց կուտան հեռուէն անցնողին...:

— Մերոնք են մերո՞նք... կը լսուի ժողովուրդի մէջէն մխիթարանքի շեշտով մը. ու կը յառաջանանք այս անգամ աներկիւղ:

Դէմերնիս է բաւական բարձր բլրակներու շարք մը թանձր ձիւնի շերտով մը պատած, բարեբախտաբար սառած է, ու փախստականներու կարաւանը փոռած այդ բլրակներու կողերին ոչխարի հօտի մը նման կը յառաջանայ անհուն սպիտակին մէջ... սեւ են իրենց հագուստները, ախուր իրենց սրտերը, սեւ իրենց արցունքները, սեւ իրենց ճանապարհի վախճանը. ու կարաւան կը քալէր անո-

բուշութեան սեւ քօղին տակ ծածկուած ճանապարհէն վշտի բեռը շալկած . . . :

Կէսօրը կը մօտենար : Զիննածածկ բլուրներուն յաջորդած էր զարնան առաջին ծիլերով զարդարուած հովիտ մը : Արեւի ճառագայթներ ախորժելի տաքութիւն մը կը տարածեն չորս կողմ : Փախստական զրտահարի մը համար որքա՞ն անուշ էր այդ ջերմութիւնը : Վերջապէս առանց վտանդի, մեր անձնուէր զինուորներու հսկողութեան տակ հասանք Կօտոլ գիւղը, Պարսկահայաստանի յայտնի աւազակապետ Իսմայիլ Սմկոյի որջերէն մին : Գիւղի վերեւ, բարձր բլրակի մը գլխին կը բարձրանայ հնաձեւ ամրոցի նմանութիւն ունեցող իժի բնակրանը, որ բարձրէն գոռոզաբար կը նայի վար՝ գետին, եւ անոր ավերին լցուած փախստական կարաւանի վըրայ :

Սոնուած կը լեցունիք գիւղ : Անօթի ենք. ծանիկի սարսափազդու խուճապին կորսնցուցինք մեր ուտելիքի պաշար կրող էջը :

Զինուորներ գիւղի մէջ գտնուած մի քանի Գիւրտեր ձերբակալելով ստիպած էին որ հացահատիկներու պահեստներ ցոյց տան. ու ճարպիկ Գիւրտեր ցուցուցած էին քանի մը ցորենի ու զարիի հորեր որոց մեծ մասը Կօտոլարնակ Հայերուն կը պատկանէին, Հայեր՝ որոնք մեզմէ առաջ գաղթած էին Սալմաստ : Ես ալ բախտ ունեցայ զինուորներու գըրաւած զարիներէն ձիերու համար մաս ստանալ, եւ մենք բաժնեցինք ձիերու հետ այդ հազուադիւր կերակուրը, մեր մասը կրակի վրայ բովեցինք ու գրպաննիս լեցնելով սկսանք ուտել :

Հոս հրաման ելաւ նստելու : Համբարձումեան խորհելով որ մեր յանկարծակի Պարսկաստան խու-

ժելէն Պարսիկներ վախցած թերեւս փորձեն չը թողուլ եւ ստիպուած լինինք կռուելու — մի պարագայ՝ որ աղէտարեք հետեւանքներ կարող էր ունենալ լքուած ժողովուրդի մը համար: Երկու Քիւրտերու յանձնեց նամակ մը ուղղուած Մոյի դատաւորին (կառավարիչին այդ անուն կուտան Պարսիկներ) հետեւեալ բովանդակութեամբ.

«Մենք անցնելու ենք ձեր հողէն առանց ձեզ հետ թշնամական վերաբերում ունենալու. ուստի ձեր եւ մեր շահեր կը պահանջեն որ մեզ անարգել ճամբայ տաք Ձուլֆայով դէպի Կովկաս անցնելու»:

Սուբհանդակներ մեկնեցան, մինչ ժողովրդեան հոժ բազմութիւն գիշեր ցորեկ իրար ետեւէ իրար կոխոտելով կուզան ու կը լեցուին գիւղի շուրջը:

Երեկոյեան ժամը Տն էր. խորովուած դարին սպառած էր, մինչ մենք անօթի էինք: Եղբայրս ընկերներէս միոյն հետ դուրս ելաւ ուտելիք ճարելու, իսկ ես յոգնած ու տկար պառկեցայ քիչ մը հանգստանալու համար: Աչքերս հազիւ դոցած էի, երբ տաինքէն լսուող խուլ աղմուկ մը դըլխուս թափուող հողերուն հետ կ'արթնցնեն զիս. հրացան վերցուցած անմիջապէս դուրս վազեցի, կտուրը եյայ, ուր երկու գիւղացիներ տանիքը կը քանդէին: Մին տարիքը առած ծերունի մ'էր, իսկ միւսը երիտասարդ, երեւի հայր եւ որդի էին. առանց խօսելու հրացանիս կոթով հարուածներ տուի իրենց. ծերունին լացաւ:

— Անաստուա՛ծ, ըսաւ հեկեկալով, ախրը ցուրտէ մեռանք, չէ՞ որ մենք ալ խեղճ ենք. դու տան մէջ պառկեր, ես չէօլ, Աստուած կ'ընդունի՞...:

Գիւղացու յանդիմանութենէն սոսկացի, «Անաստուած ախրը ցուրտէ մեռանք» խօսքերը լախտի

Հարուածի մը նման իջան գլխիս, ու ես մտաբերելով հեղեղատի մէջ լուսացնելու գիշերը սոսկացի-
այո՛, իրաւունք ունէր խեղճ ծերուկը, ցուրտ էր եւ
չա՛տ ցուրտ: Այս անգամ ես ինքս ձեռքովս քանդեցի
փայտեր ու ծերունուն տուի, բայց ժողովուրդ որ
մէկ երկու տուն հազիւ թողուցած էր առանց քան-
դելու, տեսնելով որ տուն կը քանդուի խոնուեցաւ
եւ երկու բոստի վերջ տանիքի վրայ փայտի կտոր
մ'անդամ չկար. իսկ վար մերիներ եւ ձիեր հողի
ու փոշիի ասկ թաղուած էին: Այս բոստին հասաւ
եղբայրս ոչխար մը առջին, եւ տեսնելով եղած՝ ծի-
ծաղեց բարձրաճայն աւելցնելով:

— Գոնէ երկու կտոր փայտ ալ դու վերցնէիր
միտ եփելու համար...:

Բայց եղածը եղած էր արդէն: Անմիջապէս մոր-
թեցին ոչխարը, դէսից դէնից հաւաքեցինք աթար-
ներու կտորուանքներ եւ մեծ խարոյկ մը վառե-
ցինք: Մսի կտորներ շարեցինք աթարի կտորներու
վրայ եւ քիչ վերջ սկսանք լափել մեծ ախորժակով,
առանց նկատի առնելու աթարի տուած հոտն ու
աղի պակաս: Փորերնիս լեցուած էր. փա՛ռք Աստու-
ծոյ, ու պառկեցանք քնացանք:

Մարտ 25ի առաւօտն է. արեղական ճառա-
դայթներ անուշ ջերմութիւն մը կը սփռեն ամէն դի:
Երեկոյեան ցրտէն տանջուածներ այժմ փոռուած են
բլուրներու քղանցքներին կը ծխեն ու տարտերնին
իրարու կը պատմեն:

Համբարձումեանի կողմէն կարգադրուած է որ
ժողովուրդ այսօր չչարժուի. «երեկոյեան կըստա-
ուի Սոյի դատաւորի պատասխանին, մինչ այդ ետ
մ'նացող ժողովուրդն ալ կը հասնի, ու առաւօտ ար-
չալոյսին պիտի մեկնինք սակայն՝ եթէ պատասխան

ալ չստացանք» : Ամբողջ օր դէս ու դէն պտըտեցայ . մինչեւ ուշ գիշեր նոր եկող կարաւանի ծայրը չէր երեւեր :

* * *

Գիշեր է, խաւար ու խորհրդաւոր . ժողովուրդը երեկոյեան ցուրտը մտաբերելով այս ու այն կողմէն հաւաքած ճիւղերով ու աթարներով չորս կողմ կրակներ վառած կը տաքանայ : Քանդուած տան պատին վրայ նստած գիշերային բուր մը նման , կը նայիմ հսկայ բանակի մը պատրանք թողնող լոյսերու ու եռուզեռի վրայ , կը մտաբերեմ դեռ հինգ օր առաջ այս գծրախտ ժողովրդեան ապրած կեանքը : Ո՞ւր մնաց Ապրիլեան հերոսամարտի փառքը , ո՞ւր մնաց Ոստանի եւ Առնիսի առաջին յաղթութիւններու գինովութիւնը , ո՞ւր մնաց ծնունդի առաւօտեան Հայկական զնդերով խաչ ջուր ձգելու աննկարագրելի խանդավառութիւնը . ի՞նչու արդեօք երջանկութիւններ այսքան վաղանցուկ կը լինին : Ու աչքիս առջեւէն կարգաւ կուգան ու կ'անցնին անցեալի փառքը յիշեցնող բոլոր մեծ ու փոքր դէպքեր . . . եւ այդ բոլորէն վերջ կրկին փախտաւան , կրկին հալածուած , կրկին ջարդի ուրուականի տակ սահմուկած . . . :

Համբարձումեան մինչեւ ուշ գիշեր ի զուր Խոյն պատասխանի սպասած էր : Արշալոյսին ժողովուրդ սկսած էր շարժուիլ . . . : Կը մտնենք կիրճին աւելի ներսերը . ահա Կօտուի իսկական ձորը , որու երկու եզերքին բարձրացող բարձրկէկ ժայռեր բացած են կուրծքերնին գետակի մը , որ սեղմուած զգալով ինքզինք , զայրոյթի փրփուրը շրթներին , բարկութեան շանթեր ցրուելով աջ ու ձախ կը յառաջանայ դոռում գոչումով մը :

Գետափի եզերքին կ'երկարի ճանապարհը, որ առաջ խիստ եւ անանցանելի էր, մինչ այժմ լայն ու գեղեցիկ, շնորհիւ Ռուսիոյ ձեռքերուն՝ որոնք ներկայիս կտրուած են ու անզօր: Հետեւակ զինուորներ ժողովրդեան աջ ու ձախ կողմեր բլուրներու կրճքերէն, իսկ ձիաւորներ առջեւէն կը քալէին. ու այսպէս իր անձնուէր նոյնիսկ անօթի զինուորներու պաշտպանութեամբ կարաւանը կը շարժի յառաջ: Մայր մտնող արեւի ճառագայթներուն հետ կը հասնինք Մախին անմարդարնակ գիւղը, ուր զինուորներ կը աեղաւորուին, իսկ ժողովուրդ ամբողջ ձորի երկայնքին գետի փին վրայ կը նստի գիշերելու: Հինգ բոպէ վերջ ձորամէջ գտնուած հեռագրի թելերու բոլոր սիւները ժողովուրդի կողմէն կըսրուած ու խարոյկներու էին վերածուած: Հազիւ թէ նստած ենք, սաամոքսի դատարկութիւն դարձեալ զգալի կ'ըլլայ: Մի ուրիշ ոչխար եւս սովորական գրութեամբ՝ կիսակի ըրած կ'ուտենք ու կը քնանանք:

Կէս գիշեր կ'անցնէր, Մարտ 27ի առաւօտը կը լուսանար. ժողովուրդ վաղո՛ւց ճամբայ ելած էր արդէն: Աղմուկէն արթնցած մայրիկս սարսափազար ինձ ձայն կուտար ըսելով.

— Ելի՛ր, մարդ չմնաց, բոլորը մեկնած են, մենք ետ մնացած ենք. ետ մնալը լաւ չէ տղաս:

Վեր ելայ ու պահ մ'ետք մենք ալ խառնուած էինք ժողովրդեան ու կը քալէինք:

Արեւծագ է: Արեգական ճառագայթներ Կօտլի կիրճի բարձրիկ ժայռերուն ու բլուրներուն կատարներ ոսկեղօծելուն պէս, համարեայ ամբողջ ժողովուրդ կը սկսի աղօթել: Վերջի օրն էր, եթէ այսօր ալ անփորձ անցնէինք, արդէն Պարսկական հող կը

ւազներու հետ կը խաղաղային եւ կամ իրենց ձեռքի հացը կը կրծէին :

Վերջապէս կը մօտենանք գետին . կին մը երախան դրկած գետի ալիքներէն կը քշուի, մերթ ընդ մերթ գլուխ դուրս հանելով ջրէն քանի մը բառերու հետ .

— Եամա՛ն Աստըծու սիրուն, հասէ՛ք, երախա՛ս, երա . . . :

Վերջի վանկերը անլսելի դարձան ալիքներու ժխորին մէջ, որոնք զայրացած ծածկեցին իրենց թւերուն մէջ ու տարա՛ն . . . :

Բոլորս վազեցինք գետափի դանուող մի քանի տասնեակ ձիերու քով, եւ ամէն մէկս մէկ հատ բռնեցինք գետ անցնելու համար : Սանձէն բռնած հազիւ երկու քայլ առի սակայն, յանկարծ ձիս իր ամբողջ հասակով գետին ինկաւ՝ ու տեղն ու տեղը քարացաւ : Ապշած կը դիտէի անշնչացած կենդանին՝ որու գլխէն շատրուանի նման կը ցայտէր կարմիր արիւնը :

— Լաւ որ գնդակ քեզի չառաւ, չուա բռնէ ուրիշ մը եւ անցնինք, ձիուն հանդիպող գնդակը քեզ ալ կը հասնի . . .

Ըսաւ եղբայրս ու տեսնելով որ ես չուարքի մէջ Պժ իր ձին ինձ տուաւ իսկ էնք ուրիշ մը բռնեց : Հինգ բոպէ վերջ արդէն գետի միւս եզերքն էինք ու ձիեր թողնելով հոն սկսեցինք բարձրանալ բլուրներէն :

Յոգնած ենք, ու սաստիկ անօթի . այնքան դանդաղ կը շարժուինք այդ անտանելի բլուրներն ի վեր որ կարծես վերաջանալիք չունի :

— Գտա՛յ, գտա՛յ, լսելի եղաւ եղբօրս ուրախ բացադանչութիւնը :

Բոլորս մեքենարար ձայնի եկած կողմը նայեցանք, ու տեսանք որ եղբայրս քարի մը ասկ նըս-

տած երկու փոքրիկ ամաններէ բան մը կ'ուտէ :

«Ուտելի՛ք», կանչեցինք բոլորս ալ ոգեւորուած եւ վազեցինք հոն : Եղբայրս իր սովորական աչքբացութեամբ քարի մը տակ գտած էր փոքրիկ աման մը կարագէ իւղ եւ տոպրակ մը բովուած ալիւր : Ո՞վ գիտէ ո՞ր խեղճ դիւղացիին կը պատկանէին անոնք, որ անօթի չմեռնելու համար հետը լեռ բարձրացուցած էր եւ սակայն երեւի յոգնածութենէն եւ դընդակներու տեղատարաւէն շփոթուած ստիպուած է եղեր ձգել եւ հողին ազատել :

Մեզ համար երկնքէն իջած մանանան էր այդ, ամէն մարդ սկսաւ ձեռքը իւղին մէջ զարնել եւ ապա փոխինդին խառնելով ուտել : Բոլորս կ'աշխատինք պատառ մը աւելի ուտել . թերեւս երկրորդ անգամ քախտ չունենանք սնունդ գտնելու : Բայց ալիւրը — որ խաղաղ ժամանակ իսկ զգուշութեամբ պէտք է ուտել չխեղդուելու համար — այնքան դժուար կը կլլենք որ մէկ պատառէն վերջ քսան անգամ ստիպուած էինք հազալ եւ վզերնիս երկարել որ օրհնած մանանան ստամոքս իջնէր : Վերջապէս կշտացանք . քիչ մը ոյժ եկաւ վրանիս ու սկսեցինք բարձրանալ : Հազիւ քանի մը քայլ առեր էինք, երբ քարի մը տակէն լսուլ հեծկլտանք մը կեցուց մեզ . աչքերնիս հոն դարձուցինք . մանկահասակ գիւղացի կին մըն էր, կծկուած քարի մը խոռոչին մէջ . մօտեցանք իրեն .

— Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, ի սէր Աստուծոյ, անհաւատներու ձեռքը չիյնամ :

Ու նա մատով ցոյց տուաւ իւր ձախ ազդրը, ուրկէ արիւն կը հոսէր : Խեղճ կին վիրաւորուած էր . իսկ մենք տասը առոյգ երիտասարդներ անկարող էինք այդ դժբախտին օգնել . գնդակներու տեղատարաւիւն տակ մենք զմեզ հազիւ կարող էինք ազա-

տել, ո՞ւր մ'նաց վիրաւոր կիներ: Ու մեր միակ օգնութիւնը՝ մանանայէն — որմէ քչիկ մը տակաւին ձեռքերնուս մէջ բռնած ուտելով կը քալէինք, — անոր ալ մաս հանելնիս եղաւ. ու թէեւ խղճահար բայց յուսադրեցինք զինք թէ շուտով կը հասնին հիւանդապահներ եւ զինք կը վերցնեն. ու յառաջացանք: Քիչ մը վերը, ուրիշ քարի մը տակ, նստած էր մէկը կունակը քարին, աչքերը դոց.

— Ի՞նչ անուշ կը քնանայ. ըսաւ ընկերներէս մին, եւ մօտեցաւ արթնցնելու համար: Յուսախարութիւն... Հազիւ թէ մարդուն թեւը քաշեց կծիկի մը սկէս գլորուեցաւ ան, իր տեղ թողնելով լերդացած արեան փոքրիկ լճակ մը:

Բլուրի ծայրն ենք. մեր սպասածէն աւելի հոծ զինուորներու բազմութիւն մը կծկուած քարերու տակ դժոխային կրակով մը կը սատասխանէ իրենց զիմացի բլուրներէն հասնող գնդակներուն: Կը միանանք անոնց: Կռիւ էր, տաք կռիւ: Կօտոլի ձորի ամբողջ լեռնաչղթան կը դողար ահռելի որոտներու եւ կապարային անձրեւի տեղատարափին տակ: Վարը ձորակի մէջէն կարաւանը կ'անցնէր փութկոտ, որմէ գետն ու գնդակներ չէին մոռանար իրենց բաժին որսերը խլելու: Յանկարծ լսելի եղաւ կանացի սուր ճիչ մը.

— Չեմ երթար, չեմ երթար...

Ի ոլորս ալ վայրկենապէս աչքերնիս այն կողմ դարձուցինք, մեզմէ քիչ մը վեր նստած էր մեր ընկերներէն Վարդան Գօնտաքճեան (քէօմիւր) մի քանի ընկերներով: Ասոնց քով կ'ապաստանին երկու մանկահասակ զիւղացի կանայք նախշուն հազուատներով: Թշնամին կանանց շորերէն սղալոց գիրքեր որոչ կերպով հասկնալով կատարեալ վարպետութեամբ այնպիսի դժոխային կրակ մը բացած

էր անոնց դիրքին վրայ, որ շարժուելն իսկ անկարելի եղած էր: Տղաներ կը համոզէին կիները, որ պէտքի տեղերնին փոխեն. իսկ սարսափահար կանայք, որոնք կը մտածէին թէ միայն զինուած ազամարդկանց քով նստելով է որ պիտի ազատուէին մահէն՝ կը դժուարանային հեռանալ. եւ երբ տղաներէն մին բարկացած մէկդի հրած էր անոնցմէ մին՝ կինը աղաղակած էր. ահա այդ սուր ճիչն էր որ հասաւ մեր ականջին: Ստեղծուած անտեղի վէճը վերջացնելու համար, եզրայրս զնդակներ արհամարհած գնաց հոն եւ կանայք մեզ մօտ բերաւ: Մեր դիրքը լայն էր եւ աւելի շատ մարդ ծածկելու յարմարութիւններ ունէր:

Կռիւր կը շարունակուէր երկուստեք հաւատար կատաղութեամբ: Թալանի ու կոտորածի ախորժակ եւ ինքնապաշտպանութեան բնազդ դէմ դէմի էին: Ինքնապաշտպանութեան թափը յուսահատութեան վայրկենին մոլեղնութեան կը փոխուէր: Քիւրտեր չկրցին դիմանալ եւ ստիպուած եղան թողնել իրենց առաջաւոր դիրքեր եւ քաշուիլ աւելի ետ, առանց սակայն կռիւր դադրեցնելու. իսկ ժողովուրդ աճապարանօք դետ կը նետուէր միւս ափը անցնելու, առանց խեղդամահ եւ զնդակահար եղողներուն ու՛շադրութիւն դարձնելու ժամանակ ունենալու:

Կամաց՝ կամաց օրը երեկոյ եղաւ: Արեղակն անգամ ի տես այդ ճիւղային տեսարանին՝ գլխահակ գնաց լեռներու ետեւ ծածկուիլ: Խաւարը թանձրացաւ, մէկ քայլ անդին այլեւս ոչինչ կը նկատուէր, ու այդ խաւարի մէջ հրեղէն լեզուներու նման կը փայլատակէին հրացաններու բերաններէն ժայթքող բոցերը:

Որոտները հեռզհետէ կը նուազէին. վարէն ձորի մէջէն անցնող ժողովրդեան ազմուկը տա-

կաւ կը մեղմանար: Մորփէոսի տիրապետութեան շրջանը սկսած էր: Երեւի ժողովուրդը արդէն քառուեցաւ, կոխը այժմ դաղրած է, թէրեւս լուսարացին մի ուրիշ տեղ կրկնուելու պայմանաւ. ու մենք բլուրէն վար իջանք դէպի Սալմաստ, հոն բլրի ծայրին թողնելով սպաննուած մը, որ վերջապէս ազատուեցաւ տառապելէ, եւ վիրաւոր մանկամարդ կրն մը՝ որ թերեւս օգնութի՛ւն, օգնութի՛ւն կանչելով մինչեւ լուսարացին արիւնաքամ, ցրտահար, լքուած սառեր էր՝ իր սիրելիներու անուններու վերջին վանկերը շրթունքին:

Դժբախտութիւնը այն է որ ոչ ոք զիտցաւ Կօտողի ձորի կողմին մեր կորուստի քանակը, միայն ետ մնացողներ որ կուգային հատ՝ հատ, կը պատմէին որ մարդոց եւ կենդանիներու գիակներէն ճամբաներ անանցանելի դարձած են: Պակաս չէին նաեւ սխալմամբ Պոյի ճամբան բռնողներ, որոնք դացին եւ անհետ կորան: Միայն Համբարձումեանի Պոյի դատաւորին ուղարկած նամակին պատասխան իբր թէ Պոյէն գիմաւորութեան եկող պատգամաւորութիւնը՝ որ Կօտող կը հասնի մեր կողմէն վերջ, միայն 140 մարդկային գիակներ կը գտնէ հոն: Բայց այդ կտուի մեր կորուստը 4-500է պակաս ըլլալու չէր:

* * *

Գիշեր է: Շատախցի թովմաս Գալուստեանի առաջնորդութեամբ կը յառաջանանք դէպի Սալմաստ: Ճամբաներու քաջածանօթ է ան, իննսունական թուականներուն քանի՛, քանի՛ անգամ այսպիսի խաւար գիշերներին կտրած անցած է այս ճամբաներ՝ նորածիլ յեղափոխութեան ժամանակի հոգին կազմող Արմենական Կուսակցութեան համար Պարսկաստանէն դէնք փոխադրելու նպատակով: Բը-

լուրի ստորոտ հասանք, մօտ 60 հոգիով բաժնուած վեց տասնեակներու կը քալենք իրարմէ բաւական հեռու՝ անակնկալ վտանգ մը դիմադրաւելու կազմ ու պատրաստ: Ժողովրդեան ազմուկը կը լսուի բայց բաւական խորէն. չորս կողմերնիս լուռ է: Յանկարծ մուժի մէջ նշմարեցինք անորոշ սև կէտեր. մեր տասնեակը կանգ առաւ, երբեմն, երբեմն փոքրիկ լոյս մը կը նշմարուէր. պարզ էր որ մարդիկ էին ու կը ծխէին: Բայց ո՞վքեր էին, բարեկամ թէ թշնամի, մտածելու կարիք չկար, վայրկենապէս լուր տրուեցաւ բոլոր տասնեակներուն որ կանգ առնեն: Թովմասը մեր գծէն դուրս քանի մը քայլ յառաջ անցաւ, եւ գետին պառկելով ձայնեց հրամայողի մը շեշտով.

— Ո՞վ էք:

— Մենք ենք մենք, Լեւոնի խումբը.

Պատասխանեցին դիմացէն: Վիրաւոր Լեւոն Շաղօեանն էր որ խումբ մը ձիաւորներով բլրի տակ կը սպասէր որ ժողովուրդի կարաւանը անցնի: Կը մօտենանք, պառկած է ան կռնակի վրայ. վէրքը գետ շատ թարմ է ու կը նեղէ զինք. բարեւելէն վերջ կը հարցնէ.

— Մարդ չմնա՞ց, բոլորդ ալ եկա՞ք:

— Այո՛, պատասխանեցին մերիններ:

— Լաւ, անցէ՛ք, ես տակաւին քիչ մըն ալ կը սպասեմ, մեզի մի՛ սպասէք, մենք ձիաւոր ենք:

Ու մենք կը շարժուինք: Նեղ կօշիկներով ամբողջ օր այս սարէն այն սար, այս բլուրէն այն բլուր պտըտելով ոտքերս ամբողջապէս վիրաւորուած էին, ու իրիկուան այնքան անտանելի ցաւ մը զգացի որ՝ ոտքս գետին դնելու չէի կարող: Ընկերներէս մին նկատելով, վաղեց ձորը ուր կենդանիներ կային անտէր մնացած. քիչ վերջ վերադարձաւ իր

հետ բերելով երկու ձիեր՝ որոցմէ մէկը ինձ տուաւ :
Զիւռ վրայ նստած յառաջացանք . քիչ վերջ արդէն
եղտիքէնս հասած էինք :

Ժողովուրդ յոգնած ու դադրած , փոռած էր
գիւղի մէջ ու շրջականեր եւ առանց թշնամիի մօ-
տիկութեանը կարեւորութիւն տալու , չորս կողմ
կրակներ վառած կը տաքանար : Եղբօրս հետ միա-
տեղ աչքերնիս չորս բացած կը նայինք բոլորին . ա-
մէն մէկ խումբին , մէն մի կնոջ , որու քովէն որ
կանցնինք : Ընտանիքնիս կռուի տեղէն ճամբու դրինք
անտէր ու անմարդ , անցա՞ն արդեօք , դե՞տը ինկան ,
թէ զնդակի մը զոհ գացին չգիտենք : Հողեկան տան-
ջանքը յոգնածութիւն մոռցնել տուած էր մեզ , ու
գիւղի մէջ այս ու այն կողմ ընկած մինչեւ ուշ դի-
շեր՝ ի զուր փնտոնեցինք եւ անուռնին կանչեցինք .
ձայն տուող , տեղեկութիւն տուող չեղաւ : Ընկեր-
ներու ստիպումներէն եւ մասամբ ալ սաստիկ յոգ-
նածութենէն հարկադրուած մտանք մի գիւղական
թոնրատուն , ուր գտնուած ժողովուրդէն խնդրեցինք
որ թոնիրի կրակը նորոգեն . իսկ մենք ալ բոլոր-
ուեցանք թոնիրի շուրջ տաքանալու :

Թոնրատունը բաւական ընդարձակ , խոնաւ ,
տարիներու բեռան տակ կքած շէնք մըն էր . իր սեւ-
ցած պատեր եւ ածուխէն աւելի սեւ ձեղունը ապա-
ցոյց էին իր ծերութեան : Մէջտեղ կային երկու թո-
նիրներ , մէկը փոքր եւ համարեայ թէ քանդուած ,
իսկ միւս բաւական մեծկակ եւ նոր . այրուող խո-
նաւ խոտերէն ու փայտի կտորներէն բարձրացող
թանձր ու կծու ծուխը կը լեցնէր ամբողջ թոնրա-
տուն , այնպէս որ երկու մատնաչափ անդին ոչինչ
կարելի էր տեսնել :

Կռուէն նոր վերադարձած յոգնած ու անօթի , մի
բաժակ տաք ջուրի կարօտ , ծուխէն ու յոգնածու-

թենէն թուլացած, գրեթէ չնչասպառ, խոնաւ դետնի վրայ նոյն իսկ առանց վերարկուի, հրացանները գլխնուս տակ դրած բոլորս ալ պառկեցանք:

Առաւօտ է. Մարտ 28ի առաւօտը: Ժողովուրդը կէս գիշերէն առաջ սկսած է մեկնիլ. մենք այնքան խորունկ քունի մէջ ենք եղած որ, նոյն իսկ չենք իմացած թէ մեր քով քնացած Ժողովուրդը ե՞րբ է ճամբայ ելած: Վեր կ'ելնեմ, խոնաւ դետինը իր բարերար ազդեցութիւնը թողած է վրաս. ամբողջ մարմինս փայտացած է, բոլոր անդամներս կը ցաւին: Ընկերներս ալ միեւնոյն վիճակի մատնուած են, ու սկսեցինք այս անգամ իրարու վրայ ծիծաղիլ. յուսահատութեան դա՛ոն ծիծաղներ: Առաջին դործս կը լինի ձիս փնտռել. գողցա՛ծ ըլլալու են մտածեցի. ու վրդովուած վեր ցատկելով վազեցի դէպի ձիուս կապուած տեղ: Խեղճ կենդանին ընկած է իր քով դանուած հորի մէջ, միայն առջեւի ոտքերն ու գլուխը դուրս են մնացեր, բայց այնքան անյարմար դիրքով մը, որ ինչքան որ աշխատեր է, չէ կարողացած դուրս ելնել, ու այդպէս կը մնար աչքերը կիսախուփ: Ընկերներէս խնդրեցի որ օգնեն ինձ, փորեցինք հորի բերանը եւ թէեւ դժուարութեամբ բայց վերջապէս դուրս հանեցինք զայն: Մինչ ես ձին դրան քով բերած թամբը կը շտկէի՝ նստելու մը տաղբութեամբ, զիւղացի մը ուրախութենէն իսկադարուած:

— Ամա՛ն, իմ ձին. պոռալով ձիուն վզին փաթթուեցաւ, ու սկսաւ համբուրել զայն:

Գիւղացու յուզմունքը այնքան ազդեց ինձ, որ առանց ամենաթեթեւ հարցուփորձի իրեն յանձնեցի ձին: Դրութիւնս բաւական վատ է, քալել չեմ կարող, մինչ Ժողովուրդը իրար կոխտուելով կը բարձրանայ բաւական ուղղաձիգ ըլլակէ մը վեր. մե-

բայանք կորսուած են: Ես քալել չեմ կարող. հիմա չգիտեմ ի՞մ մասին մտածեմ թէ կորսուածներու մասին: Մինչ այսպէս շուարած վիճակով կրիայի քայլերով եղբորս թեւին կրթնած բլուրը կը բարձրանայի, հանդիպած ծանօթներէս մեր ընտանիքի մասին տեղեկութիւն հարցնելով, բարեկամներէս մին ուրախ՝ ուրախ վազելով քովս եկաւ եւ աւետեց որ մերոնք իրենց ձիերու հետ ողջ եւ առողջ կը գտնուէին Եզաիքէնտ գիւղը, հոն ուր մինչեւ կէս գիշեր փնտռած էի զիրենք ու չէի գտած: Մխիթարուած որ վերջապէս առողջ են, սկսեցինք մտահոգուիլ թէ ե՞րբ եւ ո՞ւր կարող ենք գտնել զիրենք այս ծովածաւալ բազմութեան մէջ: Քանի մը քայլ եւս եւ ահա կը հանդիպինք մի ուրիշ բարեկամի, որ.

— Ձեր մայր երկու բոստ առաջ անցաւ այս տեղէն, լալով հանդիպողին ձեր մասին կը հարցնէր, կ'ըսէ:

Այլ ուրախութեանս սահման չկար, թէ տնեցիներ կը գտնէի եւ թէ քալելէն կ'ազատէի:

— Դուն հոս նստիր ես կ'երթամ կը գտնեմ, ձին կը բերեմ յետոյ միասին կ'երթանք, ըսաւ եղբայրս ու ճամբայ ինկաւ:

Ես ստիպուեցայ մի կողմ քաշուիլ՝ ուրիշներու ոտքերուն տակ չիցնալու համար. հանեցի ծխատուփըս եւ սիկար մը պատրաստելով սկսեցի ծխել ու գիտել տառապանքի կարաւանը՝ որ կ'անցնէր տըխուր՝ տանջանքի դրոշմը ճակատին, անօթի բայց փութկո՛ւտ....:

Սպասողական գրութիւն երկար չտեւեց, գեռ երկրորդ սիկար չվերջացուցած, հասաւ եղբայրս: Անմիջապէս ձի նստելով մայրիկիս քով շտապեցինք: Զոյգ որդիներ կռուի ճակատին կորսնցնող եւ յան-

կարծ երկուքն ալ միասին ողջ գտնող մօր մը հոգեկան վիճակ, իր զգացած անհուն ուրախութիւն հասկնալի է: Գիրկընդխառնումէ վերջ կը փութանք ճանապարհնիս շարունակել, ալ մոռցած ամէն ինչ: Երջանիկ օր. Կօտուլի այդ արեան ձորէն ընտանիքով ազատուած էինք անվնաս. սկսանք անուշ խօսակցութեան մը: Ծերունի մայրս ուրախութենէն ոգեւորուած սկսաւ պատմել իր այն երկար պատմութիւնը՝ որ 24 ժամուան ընթացքին միայն դոյացած էր:

— Ձեզի ճամբայ դնելէս վերջ, աչքերուս արտասուքը ահա հիմա է որ կը չորցնեմ, ըսաւ տխուր ժպիտով մը. մէկ կողմէն ձիերը յառաջ կը մղէինք, միւս կողմէն կ'աղօթէի ձեր եւ ձեր ընկերներու ապահովութեան եւ զինուց յաջողութեան համար: Վերջապէս հասանք զետափ, ի զուր չարչարուեցանք ձիերը գետ մտցնել. կը խրտչէին. Աստուած պահէ, մէկ օրը հազար դարձնէ — Չահէլ տղայ մըն էր՝ եկաւ ձիուս սանձը բռնեց ջուրը մացուց. մէկ ձին որ ջուր մտաւ երկուքն ալ հետեւեցան անոր, տղան լեռ բարձրացաւ, իսկ մենք հաղիւ թէ քանի մը քայլ յառաջացած էինք, սուլելով անձնող զնդակներէն մին այնքան ականջիս մօտէն անցաւ, որ ետ կարծեցի թէ զարնուեցայ եւ վախէս ձիէս վար ինկայ: Բեռը քանդուեցաւ, մի կերպ կապեցի, բայց ինչքան աշխատեցայ անհնար եղաւ ձին հեծնել նորէն. անցորդներէն որուն որ խնդրեցի ճար չեղաւ, մէկը չօգնեց. ստիպուած ձիու սանձէն բռնած սկսեցի քալել: Հաղիւ թէ քանի մը քայլ յառաջացած էի ետեւէս հասաւ ձիաւոր մը, որու ձիու բերան սանձ չկայ եղեր, անմիջապէս ձիէն վար իջաւ, հանեց իմ ձիու սանձը, դրաւ իր ձիու բերան, եւ իմ արցունքներուս ու խնդրանքիս ի պատասխան մտրա-

կի երկու ուժեղ հարուած իջեցուց զլիսիս ու ձին քչեց անցաւ : Ձիաւորի այս ընթացքը եւ այն պարագան որ առանց սանձի ձին ալ չեմ կարող զսպել, այնքան խոցեցին՝ առանց այն ալ խոցուած հողիս, որ արտասուքը սկսեց այս անգամ հոսիլ աչքերէս : Մինչ ես այս անել կացութեան մէջ էի, մի դեր մարդ, կարճ մօրուքով (Մելքումեան) կատաղութեամբ յարձակեցաւ եւ հրացանը հարսիս ուսէն խլեց : Չկարողացայ համբերել, վազեցի եւ հրացանը բռնեցի եւ ըսկըսեցի լալ թէ, իմ ազաներին է, պատրոն չունի հետ, եթէ ձեզ պէտք է թող իմ տղաներս զան՝ եկէք իրենցմէ ստացէք : Այս խօսքիս վրայ այդ անասունւածը ինձ առաւ մտրակի տակ եւ այնքան զարկաւ քիթ ու բերանիս որ ուշք չմնաց վրաս : Իսկ իրենք առին հրացանը ու քալեցին(*) :

Հասանք Եզտիքէնտ, տեսայ Կոստին կուզար զինուորներու հետ . նայեցայ դուք անոնց մէջ չէիք . սիրտս լեցուեցաւ, ենթադրեցի որ դուք վնասուած կը լինիք, յառաջ անցայ Կոստիի ձիու սանձէն բռնեցի եւ ըսի. «Ո՞ւր են իմ որդիքս» : Նա ծիծաղելով պատասխանեց թէ «Նտեւէն կուզան» : Բերանս թուլացաւ : Ամբողջ դիչեր արթուն նստած աղօթած ու արտասուած եմ, ու այժմ փա՛ռք Աստուծոյ աղօթքըս ընդունուած է, դուք ողջ եւ առողջ հասաք ինձ» :

Այսպէս ոգեւորուած կը պատմէր մայրիկս, չմոռնալով յիշել պզտիկ միջադէպերն անգամ :

(*) Մելքումեան այդ ժամանակ զինուորներ կռուի կը դրկէր եւ կը խորհի թէ հրացան փախըստական զինուորի մը կը լինի, որ կռուէն ազատուելու համար այդ միջոցին դիմած է :

Գ.

Պարսկական սահմանը վաղուց արդէն մտած ենք. հիմա կարծես քիչ մը ազատ շունչ կ'առնենք: Չէ՞ որ հոս են Տիար-Տխուպի եւ Ջիւլամէրիկի Ասորիներ՝ իրենց Մարշիմանով. չէ՞ որ հոս Հայեր կան, հակառակ պարագային կ'օգտուինք Ասորական ոյժերէն եւ կը կազմակերպենք այնպիսի բանակ մը՝ որով Ջուլֆայի գիծ բանալու համար ի վիճակի կ'ըլլանք խորտակել մեզի արդելք հանդիսացող կանոնաւոր բանակներ ալ, եթէ պատահին սակայն: Այսպէս կը խորհի գրեթէ ամբողջ Ժողովուրդը. այսպէս կը խորհէի եւ ես ու միւրիւսներուս որ ազատուեցանք կը քալենք դէպի Աւետեաց Աշխարհը:

Սուրբ պարսկական գիւղին առաջն ենք: Վանէն դուրս ելնելէն ի վեր առաջին մարդարնակ գիւղն է որ կը հանդիպինք: Մեր զինուորներ շրջապատեցին գիւղը, յայտարարելով միեւնոյն ատեն տեղն ու տեղ գնդակահարել այն մարդը՝ որ յանդգնէր տեղացի Ժողովրդեան մազին դպչիլ. «Օտար աշխարհ է, մենք մի քանի օրուայ հիւր ենք հոս, սէտք չէ վշտացնել Պարսիկներ եւ թշնամանալ անոնց հետ». Համբարձումեանի հրամանն էր այդ:

Գիւղին Պարսիկներ որ նախապէս ահ ու դողի մէջ, ազ ու հաց էին մատուցած մեր բանակին, եւ տուններնին մտած իրենց վախէն դուրս ելնել իսկ չէին ուզեր, այժմ տանիքներ լեցուած՝ հետաքրքրութեամբ կը գիտեն այս Ժողովուրդը, որու ոչ միայն տղամարդիկ այլ եւ կանայք ու մանուկներ զինուած էին: Կարաւանը կ'անցնէր յաղթական դրնացքով մը Պարսիկներու մէջէն. ամէն մարդ մո-

ուսացած դժբախտութիւններ, այնպիսի դիրք մը առնել կը ջանար՝ որ Պարսիկներ իրաւամբ դողալին: Հոս կէս ժամ հանգստանալէ վերջ նորէն ոտքի ելանք ու ճամբանիս շարունակեցինք:

Առջեւնիս կը տարածուի Սալմաստի բարերեր դաշտը իր գեղեցիկ ու ծառաշատ գիւղերով: Ճանապարհի աջ ու ձախ գտնուած հացահատիկներու կանանչ արտերը այնպիսի դառն յիշողութիւններու արթնցուցած են մտքերուն մէջ որ՝ բոլորը համարեայ կուլան. «Հապա մեր արտե՛րը, հապա մեր ցանքե՛րը. Թի՛ւրքը պիտի վայելէ հա՛...»:

Մուղանջուղ մեծ գիւղին առաջն ենք. պարիսպներով չըջապատուած տարօրինակ երեւոյթով գիւղ մըն է: Պարսպի պատի տակ կանգնած եմ. ժողովուրդ խումբ՝ խումբ իրար կոխտեսելով ներս կը մտնէ, ու ճերմակ հացերու ահագին ծրար մը ձեռքերնին դուրս կ'ելնէ: Ի՞նչ է այս, ո՞ւրկէ առիք հարցուցի գիւղացիի մը, սր հացի կապոցը ձեռքին, քրտինքի մէջ շաղախուած եւ բերանը հացով լըլիմուած դուրս կ'ելնէր դռնէն: Նա քմծիծաղով մը պատասխանեց.

— Ներս հաց կը բաժանեն:

Անօթի էինք, այլեւս կարիք չկար մտածելու, հարկաւոր էր հաց ճարել. եղբօրս հետ առնէ մը ներս պիտի մտնէինք, երբ պատի միւս կողմէն Պարսիկ մը սարսափահար վազեց, մօտեցաւ ինձ, ու ձիուս ասպանդակը գրկած սկսաւ ոտքերս համբուրել խնդրելով միանգամայն սր օգնէի իրեն.

— Ձեր ժողովուրդը քչեց իմ գոմէշներս, կ'ազալեմ էֆէնտի, ետ դարձուցէք, տունս կը քանդուի. մեզք եմ ես...

Եղբայրս ներս գնաց հաց ստանալու. իսկ ես հետեւեցայ ազաջող Պարսիկին իր խնդիրքը կատար-

րելու: Պարսպի միւս կողմ ծերուկ զիւղացի մը, հրացան ձեռքին, կը քշէր վեց հատ մեծ ու փոքր գոմէշներ, չանսալով կ'նոջ մը արտասուքին՝ որ թախանձանօք կը խնդրէր խնայել իրեն: Թէեւ վըստահ չէի թէ պիտի կարողանամ զիւղացու ձեռքէն ետ առնել գոմէշները — զիւղացի մը որ հաւանաբար իր կորսնցուցած գոմէշներու փոխարէն նորեր գտնելով ուրախ էր ու կը քալէր. — այնուամենայնիւ փորձեցի.

— Է՛յ եղբայր, ո՞վ արածուեց քեզ այդ գոմէշներ տանելու, ետ դարձուր ատոնք:

Գիւղացին մէկ ահնարկով չափեց ինձ ոտքէս մինչեւ գլուխս ապա.

— Հրաման, ո՞րմէ հրաման առին ասոր հաւատակիցներ որ քշեցին իմ գոմէշներս, հրաման ի՞նչ ըսել է...

— Յամենայն դէպս Պարսկաստան օտար երկիր է, հրաման այս է որ ո՛վ որ թալան ընէ պիտի զնդակահարուի, հասկցա՞ր:

Միամիտ զիւղացին թալանին արզիլուած ըլլալը զիտնալով, ինձ օրէնքի դորձադրողներէն մին կարծեց եւ կամաց մը թողուց գոմէշները եւ հեռացաւ: Մինչ Պարսկուհին կենդանիներ ետ կը բերէր, Պարսիկը նորէն ոտքերուս ինկած, ուրախութեան արտասուքը աչքերին կը համբուրէր ու կ'օրհնէր զիս: Վերադարձայ նախկին տեղս. այս անգամ եղբայրս՝ ձեռնուռնայն վերադարձաւ.

— Ի՞նչ կայ, հացը վերջացա՞ւ:

— Ի՞նչ հաց բաժնել եղբայր, այս պարսպէններս զիւղ է զիւղ, ուր անօթի ժողովուրդը տունեթ լեցուած հացերն ու ալիւրները թալանի կուտայ: Այնքան սրտածժիկ էր տեսարանը որ ես չկարողացայ համբերել եւ զուրս ելայ, մեզ պէտք չէ ար-

ցունքոտ հացը. երթա՛նք, Հայ գիւղերը մօտ են, հոն հաց ճարել կարող ենք:

Պարզ էր որ հաց եւ ալիւր վերջանալէ յետոյ կողոպուտի կարգը ընտանի կենդանիներուն եւ տընային առարկաներուն հասնելու էր:

* * *

Պատմական վայրերէն է որ կ'անցնինք: Ճանապարհը կ'երկարի ընդարձակ դաշտի մը մէջէն, որու չորս կողմեր տարածուած են ցորենի արտեր: Հազիւ ժամուան մը տարածութեան վրայ կ'երեւի Տիլիման, իր աջ ու ձախ սփռուած գիւղերով: Հոս էր որ Անդրանիկ իր կտմաւորական գնդերով 1915ին ջարդեց գոռոզ Սալիլ Փաշայի բանակը, ազատագրելով Վասպուրականը՝ որ այդ օրերուն ճշմատամային թուղէներ կ'անցնէր:

Յողմած ենք մեք, յողմած են ձիեր. կանանչ առուսյտի մը հանդիպելով որոշեցինք քիչ մը շունչ առնել եւ ձիեր կերակրել: Գիւղեր մօտ էին, աճասրարելու կարիք չկար: Քիչ վերջ մենք մեզ համար ուտելիք ճարել կարող էինք թերեւս, իսկ կենդանիներու ուտելիք գտնելը դժուար էր:

Ժողովուրդի մեծ մաս արդէն բռնած է զանազան գիւղերու ճամբաներ: Անհրաժեշտ էր քիչ մը շուտ գիւղ մը հասնիլ գլուխ դնելու տեղ մը ճարելու համար, ու կ'իյնանք ճանապարհ:

Տիլիմանի հողաչէն պարիսպներուն առաջն ենք. երկփեղկանի դրան մը առաջ կանգնած են երկու Ասորիներ՝ իրենց գիւղական տարազներով, թաղիքէ սրածայր ու տարօրինակ գլխարկով, երկու կապ փամփշտակալ անկանոն կերպով կապուած մէջքերուն, սուխնաւոր հրացանը ձեռքերնին:

Դրան անմիջապէս ետեւ կ'երեւի փոքրիկ սենեակ մը, ուր 10-15 նոյնանման հագուած Ասորի զինուորներ, ոմանք պառկած, ոմանք նստած կը ծըխեն. իսկ ոմանք ալ Ասորերէն լեզուով կ'երգեն: Տիրիման պաշարման դրութեան մէջ է Ասորիներու կողմէ, որոնք այս շրջանի երկրի տէրն են: Առանց արտօնութեան եւ քննութեան Պարսիկի մը մուտքը արգիլուած է. իսկ ելքը բացարձակապէս արգիլուած է: Արգիլուած է նոյնպէս զաղթականութեան մուտք. միայն տղամարդիկ կարող են դալ գնումներու համար:

Քիչ մը ուտելիք գնելու համար կը մտնենք Տիրիման: Տեղացիներ ձեռքերնին ծալլած, դայլանը շրթներուն, պզգած են իրենց դռներու առաջ ստրուկի մը երեւոյթով. մինչ սրածայր գլխարկով, խաչտարզէա հագուստով՝ զինուոժ Ասորիներ ուրախ՝ ուրախ եւ իշխողի մը վայել գոռողութեամբ կը պտրտին քաղաքին մէջ: Շուկան կ'երթանք, որու կեդրոնէն կ'անցնի ապտտ փոքրիկ ջուր մը: Հազիւ թէ 50ի չափ փոքրիկ խանութներ կան, ուր կը ծախուին քիչմիչ, նուշ, ծխախոտ, ծխախոտի թուղթ, լուցկի եւ առ հասարակ այս կարգի մանր, մունր իրեղէններ եւ անհրաժեշտ ուտելիքներ, ճաշարան մը եւ երեք սրճարաններ: Պատերու տակ նստած կամ կանգնած մի քանի սափրիչներ ալ կան, որոնց խանութը՝ ամբողջապէս մէջքերնէն կախուած տարիներու ազտէն սեւացած կաշեայ տոպրակէ մը կը բաղկանայ: Ոմանք արգէն գետին պրպղել տուած են իրենց չափ ողորմելի յաճախորդներն եւ կը քերեն երեսները: Քաղաքը մեռած աշխարհի տպաւորութիւն կը թողու վրագ, ուր կը դրաս որ գսպուած դայրոյթ մը կայ բոլորի սրտի մէջ: Կ'անցնիմ հաց գնելու. ամէն մի քայլափոխի կը

Հանդիպինք ողորմելի մուրացիկներու. մենք ենք Հալածուած ու փախստական, մենք ենք օտարական, բայց այս մեռած քաղաքի բնակչութենէն մաս մը մեզմէ Հազար անգամ աւելի ողորմելի վիճակ մը ունի: Հացավաճառի խանութի առջևն ենք. առանց սակարկութեան կ'երկարեմ ուսսական 25 բուրլինոց մը. խանութպանը ծեր Պարսիկ մը, օգի մէջ ցցելով իր կարմիր մօրուքը, կը հարցնէ զողզղալով:

— Բուրլին ալ հա՞ց կուզէք:

— Այո՛, կը պատասխանեմ կարճ կերպով: Պարսիկը կշիռքի մէջ կը շարէ լաթերով փաթթուած մի քանի քարեր ու կը քաշէ նժարը երկիւղածութեամբ՝ աչքի տակէն նայելով ինձ: Չգիտեմ թէ ի՞նչ կը խորհէր խեղճ ծերունին, բայց այսքան պարզ էր որ հըրացանիս, ձիուս ու փամփռտակալներուս նետած զազտագողի ակնարկներէն ձեռքի զողզողալէն կ'երեւէր որ կը վախնար, եւ կ'ազօթէր որ սատանան բոպէ մը առաջ հեռանայ իր առջևէն եւ հանդիսաթողու գինք: Հացը ստանալուս պէս կը հեռանամ ծերունու յուղմունքէն հալածուած: Կ'անցնիմ որիչ խանութի մը առաջ. ծալլապատիկ նստած է քոսոս Պարսիկ մը՝ ազտոտ կողովներու մէջ լեցուցած ունի հաւկիթներ, պանիր, քիչմիչ եւ նուշ: Պանիրի գին հարցնելուս պէս, մարդը վերցուց պանիրի կըտորը եւ երկարեց ինձ: Տարիներու աղտեղութենէն սեւացած ու աղբով լեցուած իր երկար եղունգները, որոնք պանիրը բռնած ատեն մէջը խրուեցան, այնքան զոււեցուցին զիս, որ բոպէապէս հրաժարեցայ պանիր ուտելու մտադրութենէս: Չարեաց փոքրագոյնը հաւկիթ գնելն էր. վերցուցի 15 հաւկիթ եւ Ռուսական Քէրենսկիի 20 բուրլինոց մը երկարեցի: Մարդը յանկարծակիի եկաւ, չուղեց ձեռք երկարել, յե-

տոյ ակնարկով վերէն վար քննելով զիս, դժկամակութեամբ առաւ դրամը, ձեռքին մէջ մէյ մը այս, մէյ մը այն կողմ դարձուց, հառաչեց ու նետեց քիչ հեռուն զտնուած վայտեայ տուփի մը մէջ: Պարսիկին ներքին փոթորիկը չհասկնալ ձեւացնելով հարցուցի.

— Հապա մանրու՞քը:

Խեղճը սարսափահար վերցուց 20 բուպլինոցը եւ կերկեր ձայնով մը պատասխանեց.

— Այս դրամը հոս չ'անցնիր տէր իմ, եթէ կ'ուզէք ետ առէք...

— Ի՞նչ, բսի ես դիտմամբ ձայնիս մէջ զայլըոյթի շեշտ մը դնելով, Ռուսական դրամը չե՞ս առներ...

Խեղճի լեզուն կապուեցաւ, քանիցս բերան բացաւ պատասխանելու մտադրութեամբ, բայց դարձեալ չկարողացաւ. իր բախտէն ծեր Պարսիկ մը՝ որ նստած էր խանութին առջեւ ու մտախոհ իր դայլանը կը ծխէր, մէջ ընկաւ աւելցնելով.

— Աղա՛, նա շունչ շուն, Ռուսական տէրութեան նման մեծ տէրութեան մը դրամ ի՞նչպէս կարելի է չառնել... Խուրտան (մանրուք) տուր, շո՛ւտ բրէ՛: Էֆէնտին մի՛ նեղացներ:

Խե՛ղճ խանութպան իր բարի կամեցող դրացիին անսալով ձեռքը ծոց տարաւ, հանեց ազտոտ կապոց մը ու բացաւ. մէջը Ռուսական հին թղթադրամներ կային. մատնելով շարունակ կը դարձնէր զանոնք, կարծես բան մը կը փնտռէր ատոնց մէջ ու չէր գտներ: Երեւի շատ շնորհակալ պիտի ըլլար եթէ ես հաւկիթներու հետ իմ տուած 20 բուպլինոցն ալ առնէի եւ հեռանայի, զի հաւկիթ տալէ վերջ հարկադրուած էր նաեւ դրամ ալ տալ, մինչ իմ տուածս մէկ բուպլի արժէք ալ չէր ներկայացներ հոս: Չը կարողանալով համբերել եւ գթալով այս կատարե-

լապէս ստրկացած ժողովրդեան վրայ, հանեցի հին քսանհինգնոց մը, շիտթուած խանութպանին տուի՝ ետ առնելով Քէրէնսքիի ՉՅնոցը սպասելով մանրութին: Ողորմելի խանութպան չկարողանալով բացատրել այս օրինակ վարմունքիս պատճառը, որ երեւի իրեն համար անրնական կ'երեւէր, գոհունակութեամբ երկու անգամ «Ալլա՛հ, Ալլա՛հ» բացադանչեց ու ինձ վերադարձուց 18 հին բուբլի, աւելցրնելով որ հաւկիթին մէկը կէս բուբլի է,՝բայց 15ը 7 բուբլիի կարելի է տալ: Գրամ ստանալէս յետոյ երբ շարժուելու պատրաստուեցայ, խանութի առջև նստող եւ քիչ առաջ վէճին միջամտող ծեր Պարսիկը զիս կանչեց, ու խորհրդաւոր կերպով նայելով դէմքիս աւելցուց.

— Գիչ առաջ քեզի էֆէնտի ըսի, իրաւամբ էֆէնտի ես. դնա՛, Աստուած քեզ հետ է ուր որ ալ երթաս, այդ սրտիդ համար Աստուած պահէ քեզ. դնա՛ տղաս, բայց միշտ տկարի հանդէպ դուժ ունեցիր եւ չպիտի զղջաս:

Տխուր ու մտախոհ Տիլիմանի տիպար ստրկութեան ի տես, դուրս կ'ելնեմ այդ կենդանի մեռելներու քաղաքէն եղբօրս հետ, որ նուշ ու քիչմիշ ուտելով ու ծիծաղելով կ'ըսէ.

— Տիլիմանի նուշն ու քիչմիշը վերցուր մնացեալը քաղաքով միասին աւել գետ նետէ:

Երեկոյ կ'ըլլայ. աճապարելու է վայրկեան մը չուտ զիւզ մը հասնիլ: Զրու վրայ նստած ալ կարելի է հաց ուտել՝ կ'ըսէ մայրս, ի դուր չուշանանք: Բոլորս ալ համաձայնեցանք, եւ իւրաքանչիւր իր բաժին հաց ու հաւկիթ առնելով ձիեր հեծանք ու սկսեցինք յառաջանալ:

* * *

Երեկոյ է . կարաւանին մէկձայրը տակաւին Եզ-տիքէնտն է , մինչ միւս ծայրը արդէն հասած է Սալ-մաստի գիւղեր : Մենք բունեցինք Հաւթվան մեծ ու Հայարնակ գիւղի ճանապարհը . երեկոյեան մայրա-մուտէն վերջ , գիւղ հասանք՝ ուր փողոցներու մէջ կանգնելու տեղ իսկ չէ մնացած , այնքան որ բազ-մութիւն լեցուած է : Ի զուր դէս ու դէն ընկանք տուն մը ճարելու համար . ճարահատ բակի մը մէջ գիշերել ստիպուած էինք . այնուամենայնիւ մենք դարձեալ բախտաւոր էինք , գոնէ բակ մը գտանք հանդիստ սրտով գիշերելու համար :

Մարտ 29ի արշալոյսն է . ամբողջ ընտանիքով կը դիմենք եկեղեցին : Այսքան տառապելէ վերջ երբ այժմ հանդիստ շունչ կը քաշենք , Աստուծոյ տունը այցելել հրամայողական պահանջ մ'էր կրկին : Եկեղեցւոյ բակն եմ . իրար վրայ լեցուած են դաղթա-կաններ , իսկ եկեղեցին այնքա՛ն լեցուած է որ , անհրնար է ներս մտնելու մասին մտածել : Հուատաց-եալ ժողովուրդ առաջին իսկ պատեհութեամբ փու-թացած էր իր դաղթականի , իր տառապողի ար-ցունքներով թրջել տաճարը այն Աստուծոյն՝ որ հինգերորդ անգամն ըլլալով չզխտեմ իրենց ո՞ր մեղ-քի համար կը դատապարտէր թափառական կեան-քի մը : Քահանաներու տխուր երաժշտութիւն , ա-ղօթողներու հեծեծանքներն այնպիսի խորհրդաւո-րութիւն մը կը տարածեն չորս կողմ որ մարդս կը ստիպուի վայրկեան մ'առաջ փախչիլ այդ կախար-դիչ շրջանակէն . փախչիլ այն շրջանակէն ուր վիշ-տըն ու Աստուած իրար են խառնուած :

Եզրօրս հետ միասին , ժամկոչի նման ընկած ենք ամբողջ գիւղ , տունէ տուն կը հարցնենք թէ պարապ սենեակ մը չունի՞ն մեզ տալու : Մի քանի

տեղ միամտութիւն ունեցանք յայտնելու որ հետեր-
նիս ունինք նաեւ երեք ձիեր: Վերջապէս խելքի ե-
կանք, հասկցանք որ այժմ սուտ խօսելու ժամանակն
է, եթէ ձիու խօսք ընելու ըլլանք, ապահովարար
փողոց պիտի մնանք, ու որոշեցինք ձիու անուն չտալ
այլեւս: Ենթադրութիւննիս սխալ չէր. քիչ վերջ
վերնայարկ, մաքուր սենեակ մը գտանք Տիլիման
տանող ճանապարհէն վրայ: Տունը գաղտաղողի աչ-
քէ անցուցինք. մեզ տրուած սենեակէն զատ կար
նաեւ մեծ փարախ մը, որու մէջ կարելի էր 15 կեն-
դանիներ տեղաւորել. հոն միայն 5 կովեր ու եզ-
ներ կապուած էին: Ծնորհակալութիւն յայտնելով
տան տիրոջ որ բարի եղաւ մեզ սենեակ մը յատկա-
ցընել, ես նստեցի դրան վրայ որպէս զի տունը չը
կորսնցնենք, իսկ եզրայրս ուղարկեցի որ մերօնք
եւ վերմակ մը բերէ՝ միայն: Տան հոգսէն ազատ-
ուած էինք, կը մնար խորամանկ միջոցաւ մը ձիերն
ալ բերել. չուտով այդ ալ յաջողեցաւ: Երեկոյեան
եզրայրս բարկացկոտ ներս մտաւ, տան տէրերուն եր-
կայութեան յայտնելով որ ձիաւոր զինուորներ կա-
լասար մեկնեցան, մեր ձիեր մնացին հոն անտէր, եւ
եթէ չփոխադրենք անպայման կը դողնան. ես ալ
յանկարծակիի եկած, խնդրեցի տան տիրոջ որ մի
գիշերուայ համար արտօնէ մեր ձիերը իրեն ախոռ
կապել, մինչեւ առաւօտեան տեսնենք ի՞նչ պէտք է
ընել: Միամիտ գիւղացին մեր հնարած պատմու-
թեան հաւատալով.

— Բերէ՛ք, ըսաւ:

Հաթվանի մէջ ո՞ւր կարելի էր գտնել ասկէ ա-
ւելի յարմար տեղ:

Երեկոյեան, տան տէրերը հաւաքուեցան մեր
սենեակ ու մինչեւ ուշ գիշեր հեաաքքբբութեամբ
մտիկ ըրին մեր պատմութիւններուն:

Հացի տաղնապը սոսկալի է. դաղթականութեան բազմութիւնն առիթ տուաւ որ հացի գինը բարձրանայ: մէկ լաւաչ հաց կէս բուրլի էր. իսկ մէկ մարդու 4-5 լաւաչ հազիւ կը բաւէր: Այդ իսկ պատճառաւ ժողովուրդը սկսած էր Մուղանջուղ եւ ուրիշ պարսկական նոր ամայացած գիւղեր մեկնիլ եւ հացահատիկներու պահեստներ փնտոել: Մարդոց սնունդէն ոչ նուազ մտահոգիչ էր եւ կենդանիներու սնունդը. դաշտի կանանչը տակաւին բաւարար չէր, անհրաժեշտ էր դարձեալ չրջակայ պարսկական գիւղերէն յարդ բերել: Ու ժողովուրդը որ կ'ենթադրէր թէ չուտով մեկնելու է կովկաս, ամէն ջանք ի գործ կը դնէր հանդստեան օրերուն իր կենդանիներ լաւ կերակրել, որպէսզի քալելու օրերն ալ լաւ գործածէ:

Ես ու եղբայրս ալ ձիեր վերցուցած դացիներ Անտէվան ամայի պարսկական գիւղը՝ որն հազիւ կէս ժամ հեռու էր Հաւթվանէն: Բախտերնիս յաջող էր. ոչ միայն յարդ ալլ եւ խոտ կարողացանք ճարել, մեր ուրախութիւնը մեծ էր. տուն ունէինք, 10-15 օրուայ ձիերուն պաշար ալ եղաւ, կը մնար մեր պաշարի մասին մտածել:

Շնորհիւ գանուած հացահատիկներու պահեստներուն Մուղանջուղ անուն ծանօթ եղաւ ամբողջ Սալմաստ ապաւինած դաղթականներուն, որոնք արշալոյս բացուելուն պէս, կը լեցուէին հոն, և կը սկսէին իրենց խուզարկութեանց մինչեւ արեւ մայր մտնէր: Եղան եւ բազմաթիւ խելօքներ՝ որոնք ընտանիքով բնակեցան այդ գիւղի մէջ, հաւաքեցին բաւական հացահատիկ եւ իրենց սնունդը ապահովեցին: Մենք ալ հաց չունէինք, ճարելն ալ դժուար էր, ստիպուած ևս եւ եղբայրս քանի մը ընկերներով ձիեր նստած մեկնեցանք Մուղանջուղ բախ-

տերնիս փորձելու: Առաւօտէն սկսեալ մինչեւ իրիկուն ի դուր պրպտումներ կատարեցինք, ու յուսահատ պիտի վերադառնայինք, երբ աւերակ տան մը մէջէն լսելի եղաւ եղբօրս ձայնը:

— Եկէ՛ք, եկէ՛ք...:

Իր ձայնին մէջ ուրախ շեշտ մը կար: Բոլորս ալ կարծեցինք թէ խոշոր պահեստ մը գտած լինելու էր. ու վազեցինք, եւ իրաւ ալ գտած էր. երկու թոնիրներ որոնցմէ մին դարիով իսկ միւսը կորեկով լեցուն. թոնիրներ պարպած ժամանակ դուրս եկան նաեւ լամբեր, թէյի բաժակներ եւ խոշոր դեղին սամալար մը: Ընկերներով բաժնեցինք գտած գանձը ու տուն վերադարձանք յոգնած, երդուելով երկբորդ անգամ նման ձեռնարկ մը չփորձել:

* * *

Օրերը կ'անցնին միօրինակ ու մտահոգիչ. դադրեալ անտանելի՛ օրեր: Բոպէ առ բոպէ կըսպասուի կովկաս մեկնելու կարգադրութեան, բայց ոչ մի ձեռնարկ, սկսած Վանի Զինուորական կոմիսար կ. Համբարձումեանէն մինչեւ ամենայետին գիւղացին այնքան յոգնած ու տանջուած են որ բոլորն ալ հանդատեան պէտք ունին:

Ապրիլ 4ի կէս գիշերին Պարսիկներ ու Քիւրտեր միացած ուժեղ յարձակում՝ գործեցին Մուշանջուղ գիւղի վրայ, ուր ապաստանած հազարէն աւելի ժողովուրդ գիշերային յարձակումէն յանկարծակիի եկած, խուճապի մատնուելով փախած էր, յարձակողներու ձեռք թողնելով իր ունեցածը:

Առաւօտ է. Մուշանջուղ գտնուող ժողովուրդ լեցուած է մաս մը Հաւթվան, մաս մը Կալասար, Բալաջուկ եւ այլ գիւղեր՝ սարսափահար պատմելով եղած անցքը: Տարօրինակ երեւոյթ. Կոմիսարներ-

րու Խորհուրդ ու ժողովուրդ այնքան խոր թմրութեամբ մը համակուած են որ ոչ ոք ուղեց կարելութիւն տալ այդ դէպքին, ու այնքան անուշադիր էին որ միւս առաւօտ արդէն մոռացուած էր Մուղանջուղի գրաւումը:

Չնայելով որ ժողովրդեան մէջ բուռն ցանկութիւն կայ Կովկաս մեկնելու, բայց Ձինուորական Մարմին կարուկ միջոցներ ձեռք չէր առներ: Սալմաստի տեղական Կոմիտէի հետ ժողովներ կը գումարեն բայց ապարդիւն: Բարթիներու բաժնուած Սալմաստի կոմիտէն փոխանակ գործ տեսնելու գիրար քննադատելով է զրազուած, վերջը ի՞նչ է լինելու՝ յայտնի չէ:

Հաց չունինք, ստիպուած Հաւթվանցի ծանօթի մը հետ կը մեկնիմ Խոսրովա ասորական դիւզ հացահատիկ ճարելու մտադրութեամբ, բայց իզուր. ձեռնունայն ետ կը վերադառնամ: Ճանապարհին հանդիպեցայ Վանեցի խիստ ուրախ եւ կատակարան բարեկամներէս միոյն, որու դէմքը այնքան մոռայլ էր որ հազիւ սիրտ ըրի հետ խօսելու: Ու երբ.

— Ի՞նչ է լինելու այս ժողովրդեան վիճակ. ի՞նչ պիտի ուտէ, հարցուցի. նա տխուր մը հառաչեց ու ըսաւ.

— Իսրայէլացիներու մանանա հասցնող Աստուած երեւի մեզ ալ մանանա կը հասցնէ:

— Մանանա՛, մանանա՛ կրկնեցի ես ու անցայ: Բացակայութեանս եղբայրս Ամերիկացի միտիոնարներէն յաջողած էր քիչ մը ցորեն ձեռք բերել Հայ Բողոքական քարոզիչի մը միջոցաւ, ու առանց ժամանակ կորսնցնելու աարած էր ջրաղացք աղալու:

Կամաց՝ կամաց օրը կը մթնէր. եղբայրս շատ ուշ վերադարձաւ. ու երբ հազիւ ձիերը կապած սան-

դուզներէն կը բարձրանայինք, Տիլիմանի կողմէն լսուեցաւ ուժեղ հրացանածղութիւն մը: Բաւական կանկածեցանք եւ համարեայ թէ ժամուան մը չափ տանիքը կանգնած ունկնդրեցինք, բայց ինչ ըլլալը չկարողացանք իմանալ: Երեւի Ասորիներն էին, մը-տածեցինք մենք ու հանդարտ սրտով գացինք քը-նանալու:

Առաւօտ էր. Ապրիլ Տի առաւօտը: Երեկոյեան լսուած համազարկներու պատճառը հասկնալու հա-մար եղբորս հետ կ'աճապարենք եկեղեցւոյ բակը, որն որ լուրերու կեդրոնատեղին է. հոն կը հաւաք-ուին շրջակայ գիւղերէն եկողները, հոն կը հաւաք-ուին նոր լուր ստանալ փափաքողները. հոն գտնուած սենեակի մը մէջ կը հաւաքուի Հաւթիվանի Զինուո-րական Մարմինը, հոն կը գտնուի Զօրանոցը: Հա-զիւ քանի մը քայլ դռնէն հեռացանք, լսեցինք եկե-ղեցւոյ դանգին զօղանջները, զօղանջներ՝ որոնք սո-վորականէն բոլորովին տարբեր շունչ մ'ունէին:

— Ի՞նչ է այս. կը հարցնենք իրարու ես ու եղ-բայրս:

Ու քայլերնիս կ'արագացնենք. ահա՛ գիւղա-մէջն ենք, չորս կողմերնէս անցնողները բոլորն ալ շփոթած ու շնչասպառ կը վազեն դէպի եկեղեցին. ազմկող զանգակը այնպիսի շփոթութիւն մը յառաջ բերեր է որ, այր թէ կին կը վազեն եկեղեցւոյ բա-կը, ուր բոլորն ալ կը սպասեն ահաւոր լուրի մը. երեւոյթը գէթ այդ ցոյց կուտար:

Եկեղեցւոյ բակն ենք. ամբողջ խռովայոյզ ծո-վի մը նման կը շարժի: Քիչ անդին Հաւթիվանի Զին-ւորական Մարմինը այլայլած գէմքով կարգադրու-թիւններ կ'ընէ: Սարի Բէկի ձիաւորները շարքի կանգնած կ'ունկնդրեն Մելքումեանին, ապա ան-

միջապէս ձիեր նստած հապճեպով մը կը հեռանան .
 ո՞ր դեռ ոչ ոք դիտէ :

Ահա՛ Մեղքումեանը բարձրացաւ եկեղեցւոյ
 բակը զսնուած գերեզմանաքարերէն միոյն վրայ եւ
 խօսիլ կ'ուզէ . տիրեց կատարեալ լուռութիւն , ու ան
 սկսաւ խօսիլ .

— Վտանգը մեր դռներուն է մօտեցած , թշնա-
 մին գիշերս գրաւած է Տիլիման . . . Լուրը անսպասե-
 լի էր ու ահաւոր , սոսկումի բացազանչութիւններ
 լսելի եղան ամէն կողմէն , բայց խօսողը ձեռքի շար-
 ժումով մը լուռութիւն հրամայեց :

— Մեր եւ մեր մայրերու , քոյրերու կեանքի ու
 պատուի պահպանութեան համար անհրաժեշտ է չը-
 փոթուելէ առաջ անմիջապէս գործի անցնիլ , ամբողջ
 տղամարդիկ զինուած թէ անդէն , առանց վայր-
 կեան մը կորսնցնելու հոս թող հաւաքուին . իսկ մը-
 նացեալ ժողովուրդէն կը խնդրուի հեռանալ ասկէ
 ու չխանդարել մեզ :

Կարիք կա՞յ նկարագրելու խոռովուած հոգիներու
 գրութիւնը , որոնցմէ մանաւանդ կիները խեղճուկ
 ձայնով մը «Վա՛յ մեր տունը քանդուեցաւ , Աստ-
 ուա՛ծ , Աստուա՛ծ» բացազանչութիւններով հեռա-
 ցան : Միւս կողմէն տղամարդիկ առանց հրամանը
 կրկնել տալու հրացաններն վերցուցած եկեղեցիին
 բակը լեցուեցան :

Արեւը դեռ նոր էր իր քնաթոր աչքերը բացած
 ու զարնան առաւօտեան մեղմանոյ զեփիւռին հետ
 համբուրուելով ժպտիլ սկսած : Եղբորս հետ միա-
 սին տուն վաղեցինք ու հրացաններու հետ մայրիկի
 համբոյրներն ու օրհնութիւնները առած աճապարե-
 ցինք եկեղեցւոյ բակը : Տաս վայրկեանի մէջ եկե-
 ղեցւոյ բակին տեսարանը բոլորովին փոխուած ,
 զօրանոցի մը կատարեալ կերպարանքն առած էր :

Վերջապէս զինուորներ խուճբերու բաժնուած սկսան ճամբայ ելնել ընդհանուր ոգեւորութեան մէջ :

Եղբայրս՝ որու յանձնուեցաւ հարիւրեակի մը ղեկավարութիւն, ուղարկուեցաւ Տիլիմանի ջրաղացներու շրջան՝ քաղաքին արեւմտակողմը. իսկ ես ուրիշ հարիւրեակի մը հետ մեկնեցայ Հաւթվանի արեւմտեան կողմը՝ Տիլիմանի ճանապարհին վրայ գտնուած Պիթամուր կոչուած բլուրը :

Տիլիմանը՝ ինչպէս որ առաջ յիշեցինք, Ասորիներու կողմէ պաշարողական վիճակի մէջ էր : Այդ պաշարման դրութիւնը յանձնուած էր հարիւրեակի մը : Ապրիլ 7ի խաւար եւ անձրեւոտ գիշերը Պարսիկներ եւ Քիւրտեր միացած գիշերային յարձակումով մը կը գրաւեն քաղաքը, ուր գտնուած ասորական հարիւրեակը գիշերային յարձակումէն շփոթուած կը թողու քաղաքը ու կը փախչի առանց գնդակ մ'իսկ արձակելու ժամանակ ունենալու : Մուղանջուղ գիւղը գրաւելէ յետոյ, թշնամին տեսնելով որ մենք այնքան յողնած ու շփոթած ենք որ տեղերնէս շարժելու իսկ մտադիր չենք, համարձակութիւն կ'առնէ Տիլիմանի վրայ յարձակելու, եւ կը յաջողի շատ հեշտութեամբ գրաւել զայն : Տիլիմանի գրաւումը սակայն կարող էր շատ արիւտարեր դառնալ մեզ համար. որովհետեւ թշնամին այս անգամ յաջողած էր Սալմաստի Հայութիւնը բաժնել երկու մասի, որոնցմէ մաս մը կը դռնուէր Կալասար, Բայաջուկ եւ շրջակայ գիւղեր, Տիլիմանի արեւելեան կողմ. իսկ մաս մը Հաւթվան, Խոսրովա եւ իրենց շրջակայ գիւղեր, Տիլիմանի արեւմտեան կողմը : Այնպէս որ եթէ թշնամին քիչ մը ուժեղ ըլլար, կարող էր այս երկու մասի յարաբերութիւնները համարեայ թէ ամբողջապէս խզել, եւ ուժերու այս

Յլատուժովը դիւրութեամբ իրագործել իր հայա-
ջինջ ծրագիրները: Թէ գլխաւորաբար ի՞նչ միտք ու-
նէին Քիւրտերն ու Պարսիկները իրենց յանդուժն
ձեռնարկներով՝ յայտնի չէր. միայն սպազան եւ ան-
կէ յառաջացած բարդութիւնները նկատի ունենալով,
խոր թմրութեամբ համակուած անտրամադիր ժո-
ղովուրդը սկսած էր շարժուիլ: Մուղանջուզի դրաւ-
ման կարեւորութիւն չտուող ժողովուրդը նոր կը դ-
գար իր սխալը. բայց արդէն եղածը եղած էր, ու
հիմայ կը դտնուէր կատարուած իրողութեան մը առ-
ջեւը:

Մինչ Հաւթիւանը այսպէս իրար անցած իր ու-
ժերը կեդրոնացնել կ'աշխատէր, Բայաջուկ-Կալա-
սարի շրջանը — շնորհիւ իր ունեցած 400 պատրաստի
եւ զօրանոցի մէջ ապրող Վանեցի գինուորներուն՝
որոնք անմիջապէս դիմեցին Տիլիման, իրենց կող-
մէն պաշարելով զայն — աւելի խաղաղ էր. այնպէս որ
մինչեւ կէսօր հազիւ թէ հաւաքուեցան տեղացի ու
գաղթական մնացեալ գինուորները ու կռուի դըր-
կուեցան: Մէկ ժամ վերջը Տիլիմանը երեք կողմէն
կատարելապէս պաշարուած էր. բայց կը մնար մի-
այն հիւսիսային կողմը որ կը տանէր դէպի Մու-
ղանջուզ: Այդ գիծը թշնամու ձեռքն էր եւ բաւական
ուժեղ, որը դրաւելու եւ քաղաքը լրիւ կերպով պա-
շարելու համար ոչ միայն բաւական զօհեր պէտք էր
տալ, այլ այդ գիծը պաշարողները կ'իյնային երկու
կրակի մէջ. մի պարագայ որ շատ վտանգաւոր էր
եւ փորձելը աւելորդ: Զինուորներ իրենց գիրքե-
րու մէջ տեղաւորուելով եւ Հաւթիւան-Պոսրովա,
Բայաջուկ-Կալասար գիծը իրար կապելէ վերջ, հա-
սան եւ ասորական խումբերը, որոնք գացին Տիլի-
մանի արեւմտեան հիւսիսը եւ դիրքեր դրաւեցին:

Տիլիմանի դռները դոց էին. պարխապներու վրայ

գիրքեր բացուած ու պատրաստ, կոխը սկսած էր. Պարսիկները քաղաքի մէջ պարիսպներու ետեւ, իսկ մենք բաց դաշտի մէջ, բլուրներու գլխին ու առուններու մէջ: Երկու կողմէ կրակուող հրացաններու որոտը Վանի Ապրիլեան հերոսամարտի մանրանկարը կը յիշեցնէր. միայն այն տարբերութեամբ որ այս անգամ մենք էինք պաշարողները:

Մինչ զինուորներ գիրքերու մէջ կոխուլ էին ըզրաղած, գիւղերու մէջ ալ անգործ չէին միւսներ. կը հաւաքէին բոլոր զէնք ունեցող տղամարդիկ որպէսզի երեկոյեան կարելի լինէր փոխել կոռուողները որոնք յոգնած պիտի ըլլային անշուշտ. միւս կողմէ կը հաւաքէին ալիւր եւ ընտանի կենդանիներ զինուորներուն հաց եւ ուտելիք հասցնելու համար:

Պիթամուր-Հաւթվան գիւղի արեւելք Հաւթվան-Բայաջուկ ճանապարհի ճիշդ մէջ տեղն է, որու կըրծքին փորուած կան պատերազմական խրամներ Պաւլի Փաշայի կողմէ՝ Անդրանիկի հետ ունեցած կռուի օրերէն մնացած: Ահա՛ այդ խրամներու մէջ լեցուած կը սպասենք, առանց կրակ ընելու: Տեղերնիս բարձր է ու կ'իշխէ ամբողջ շրջակայ դաշտերու եւ Տիլիմանի քաղաքին վրայ:

Մեր գիրքերէն կրակ բանալ բոլորովին աւելորդ էր. որովհետեւ գնդակները պատերուն դաչելու էին անպատճառ: Քաղաք գրաւելու ձեռնարկ ընելու էին ջրադացներու մօտ եւ դռներու գիմաց գտնուած հարիւրեակներ. մեր գործ հսկել էր որ թշնամին քաղաքի այս կողմէն դուրս չելնէ եւ գծեր կտրելով ետեւէն չսպառնայ մեր կոռուողներուն: Երբեմն՝ երբեմն քաղաքէն նետուած գնդակ մը սուլելով կ'անցնի գլխներնուս վրայէն՝ որուն ի պատասխան, հատ մըն ալ մենք կը կրակէինք: Նշանակուած պահակներէն զատ, մնացեալ զինուորներ պառկած խրամներ-

րու մէջ, զինուորի վայել անմեղ զուարճախօսութեամբ, կատակներով ու ծիւղով են զբազուած:

Առաւօտեան իրարանցումէն յետոյ, բոլորս ալ առանց հաց ուտելու, առանց հետերնիս հաց վերցրնելու եկած էինք դիրքեր: Այժմ օրը կէսօր կը դառնայ. բոլորս ալ անօթի ենք եւ աջքերնիս տնկած Հաւթվանի ճանապարհին հացի կը սպասենք. բայց հաց բերող չկայ: Բոլորն ալ հացի մասին կը մտածեն. ոմանք ի սատիւ հացի ճառ կը խօսին, ոմանք հացի վրայ երգ շինած կ'երգեն: Յանկարծ նկատեցինք որ զինուորներէն մին քաշուած խրամի մէկ անկիւն, ծոցէն թաշկինակ մը հանեց եւ բացաւ: Ճերմակ լաւաշներ իրենց ձիւնափայլ տեսքով բոլորիս ալ ախորժակը դրդուեցին:

— Վա՛յ քեզ անզգամ, հաց ունի եւ կը փորձէ զաղտնի ուտել. ձերբակալեցէ՛ք այդ անզգամին եւ լաւաշներու հետ հաս բերէք — հրամայեց տասնապետը ծիծաղներու մէջ: Չորս ճարպիկ տղաներ վազեցին խեղճին վրայ, ձեռքն ու ոտքը կապեցին, ու հացի թաշկինակի՛ հետ բերին: Բոլորս լուռ ենք ու լուրջ. խեղճ տղան ապշած էր, չհասկնալով իր հետ այդ կերպ վարուելու պատճառը.

— Ո՛ւրիշ բերի՛ր այս հացը, հարցուց տասնապետ հազիւ խնդուքը զսպած:

— Տնէն, պատասխանեց շիտթուած տղան:

— Ո՞վ քեզ իրաւունք տուաւ հաց ուտելու... հարցուց տասնապետ աւելի զայրացած:

Խեղճ տղան այս տարօրինակ հարցումէն արդէն բոլորովին շիտթուած, պատասխանել իսկ չը կարողացաւ. իսկ խմբապետ աւելի բարկացած շարունակեց.

— Քեզ կ'ըսեմ, ո՞վ իրաւունք տուաւ քեզ հաց ուտելու, երբ մենք բոլորս անօթի ենք. դուն չը

գիտէիր որ հացը, մանաւանդ այս տեսակ բարակ լաւաշ հացը՝ սրբութիւն է որ միայն մէկին վերաբերիլ չի կարող. սա սրբութիւն է, սրբութիւն, հասկցա՞ր անդամ, ասով պէտք է հաղորդել ընտրին. բայց քանի որ դուն համարձակեցար մինակ ուտելու յանցանքը գործել, զրկուած ես այլեւս մաս ունենալու այս սրբութենէն . . . :

Յետոյ բացաւ թաշկինակը եւ հացը ներկաներուն բաժնեց : Կապուած տղան հասկնալով իր դիւխին խաղցուած խաղը, ճարահատ ինքն ալ սկսաւ խնդալ :

Կամաց՝ կամաց անօթութիւնը այնքան սկսեց ճնշել սակայն որ, յակամայից սկսեցինք լրջօրէն մտածել եւ մտադրեցինք մարդ ուղարկել Հաւթվան, երբ ահա կերակուրի կաթսան եկաւ եւ բլուրին տակը կանգնեց : Տասնեակ՝ տասնեակ վար իջանք ճաշելու : Կարգը մեզի եկաւ. խոշոր պղնձեայ աման մը կար՝ մինչեւ բերան լեցուած մսի ջրով, միս, յետոյ երկու խոշոր հաց, զոր բաժնեցինք եւ բոլորուեցանք ամանի շուրջը : Դրալ չկայ. վերցուցինք խոշոր շերեփը եւ սկսեցինք կարգաւ մէյ-մէկ շերեփի խմել : Ընկերներէն մին ջրի բաժակ մը ունէր քովը այն ալ հանեց, որով հերթը այս անգամ բաւական արագ կը դառնար : Ի՞նչքան անուշ, ի՞նչքան համեղ էր այդ ճաշը . . . :

Ստամոքնիս լեցուելէ վերջ նորէն բարձրացանք դիրքերը. նորէն նոյն ուրախ տրամադրութիւնը, զինուորի նոյն հաճոյալի սրախօսութիւնները մինչեւ կէս գիշեր՝ երբ Հաւթվանէն հասնող ուրիշ հարիւրեակ մը փոխարինեց մեզ : Մենք վերադարձանք հանդստանալու. յոգնած ու ցրտահար, բայց ուրախ եւ լաւ տրամադրութեամբ : Այս կոիւր կարծես կուռի բնոյթ չունէր, բոլորս ալ համոզուած էինք որ յաջողութիւնը մերն է :

* * *

Երկրորդ օրն է. դեռ կռիւը կը շարունակուի : Ծանր է այսպիսի դժոխային օրերու մէջ ընտանեկան հոգսը : Մտածէ անոնց հազուատի մասին, երբ աշխարհն ամբողջ մերկ է, մտածէ անոնց բնակարանի մասին, երբ աշխարհ ամբողջ փողոցներ կը լուսցնէ, մտածէ անոնց ուտելիքի մասին, երբ աշխարհ ամբողջ անօթի է . . . :

Հարիւրապետէն հրաման կը ստանամ մեկնելու Կալասար, Համբարձումեանի քով, 185 բուրլի ճերմակ դրամ փոխելու համար :

Երեկոյեան բաւական ուշ վերադարձայ, յուսացած դրամիս տեղ հաղիւ 25 բուրլի ձեռք ձգած : Ճանապարհին անձանօթ լինելով եւ մանաւանդ մըթութեան սրատճառաւ քանի մը տեղ ճահիճներու մէջ զլորեցայ՝ բոլորովին ցեխով պատուելով :

* * *

Առաւօտ է. Ապրիլ 11ի առաւօտը : քունէս ելլելուս պէս կ'աճապարեմ եկեղեցւոյ բակը : Եզրայրս գիշերը չէ եկած : Հազիւ քանի մը քայլ առած, առջեւ կը պարզուի ապշեցուցիչ տեսարան մը. ամբողջ ժողովուրդը կին թէ մարդ, մեծ թէ փոքր, շնչասպառ կը վազեն դէպի Տիլիման, հալածուածներու պէս :

— Ի՞նչ է այս. ի՞նչ կայ, կը հարցնեմ անոնցմէ միոյն .

— Ի՞նչ պիտի լինի, Տիլիմանը դրաւած են մերոնք . . .

Վազեցի եկեղեցւոյ բակի դօրանոցը. եզրայրս չէ վերադարձած. անորոջ կասկած մը կը տանջէ իս, դէպի Տիլիման կը վազեմ ալ. ճանապարհին ինձ

կը հանդիպի բարեկամներէս մին՝ պարկ մը կունսկին...

— Բարի լոյս, կ'ըսեմ, ի՞նչ կը տանիս.

— Սո՛ւս, խօսելու ժամանակ չէ, մանանան արդէն իջած է, աճապարէ օգտուիլ. Իսրայելացոց մանանայէն աւելի լաւ մանանայ է սա...:

Ու նա շարունակեց իր ճամբան:

Քաղաքի դրան առաջն եմ. մոխիրներու կոյտ մը միայն մնացած է, ուրկէ տակաւին ծուխը կը բարձրանայ: Կէս գիշերին մերոնք յաջողած են դուռը ալրել եւ քաղաքը խուժել. թշնամին խուճապի մատնուած հիւսիսային դռնէն փախած էր գիշերային մութէն օգտուելով, նոյնպէս իր հետ տանելով քաղաքի բնակչութենէն մաս մը: Ձինուորներ քաղաքը մտնելուն լուր ուղարկած էին եկեղեցոյ բակը՝ ուրկէ կայծակի արագութեամբ լուրը տարածուած էր ամբողջ գիւղը եւ իր չրջակայքը: Մէկ ժամ վերջ Սալմաստի բնակչութիւնը Տիլիման լեցուած էր. կողոպուտն ու կոտորածը սկսած էր: Կէսօրը անց է, ամբողջ քաղաքը չրջած եմ բայց դեռ եղբայրս չեմ կրցած գտնել: Ստիպուած եկայ եւ քաղաքի արեւմտեան դրանը մէջ նստեցայ, յուսալով որ եթէ ոչ զինք, գէթ իր հարիւրեակի զինուորներէն մէկը կը տեսնեմ ու տեղեկութիւն կը ստանամ:

Կէս ժամ վերջ տեսայ եղբայրս կուզար, ետին ձգած 200է աւելի Պարսիկ կանայք ու երախաներ:

— Ի՞նչ կ'ընես, անմիտ. եղաւ առաջին հարցումս: Եղբայրս ծիծաղեց.

— Ոչինչ, այս գերիները Հաւթիւմն պիտի տանիմ, Պ. Մեւքումեանը այսպէս կարգադրեց. ժողովուրդը կատարած է, ձեռք ինկածը կըստաննէ:

Միասին եկեղեցոյ բակը հասանք, ուր այս ան-

գամ Հայ մը իսկ չէր գտնուեր, ընդհակառակը ծայրէ ի ծայր լեցուած էր Պարսիկ գերիներով, որոնք տփզուեանձ ու սարսափահար ինկած էին իրարու վըրայ: Խեղճ ժողովուրդ, Դավրէժէն եկած Սարպաղներու եւ Քիւրտերու յիմարութեանց ենթարկուելով այնպիսի փորձանք մը բերաւ իր գլխին որ այժմ իր թշնամիներուն գուլթն իսկ կը շարժէր:

Վերադարձանք տուն. ժողովուրդը ոգեւորուած եւ ուրախ կը փոխադրէ ու կը փոխադրէ զանազան ուտելիքներ: Ձեռքեր ծալած նստիլը յիմարութիւն էր, առիթէն պէտք էր օգտուիլ, ու եղբորս հետ միասին հետերնիս առած երեք ձիեր կ'աճապարենք Տիլիման ուտելիք բերելու եւ առաջին իսկ տունը մտնելով, վեց պարկ այլուր բեռցած ձիերու վրայ կը վերադառնանք տուն: Մեր հացը ապահովուած էր, այս անգամ պէտք էր ձիերն մտածել. կրկին մեկնեցանք, եւ այս անգամին վեց պարկ դարի բերինք:

— Հապա անկողի՞ն, աւելցուց մայրս. գոնէ քանի մը հատ վերմակ բերէք, քանի որ հոս ենք կը գործածենք, մեկնելու օր դարձեալ կը ձգենք, ի՞նչ վնաս...:

Իրաւ որ գէշ խորհուրդ մը չէր, հազարաւոր վերմակներ հոն ոտքի կոխան կ'ըլլային, վրան նայող չկար: Անգամ մը եւս մեկնեցանք, եւ այս հեղ վեց վերմակ, երեք գորգ, երկու լաւ սամաւար, տոպրակ մը ձաւար, աման մը իւղ, մի քանի կերակուրի ամաններ առած ետ եկանք:

Տիլիմանի ուտելիքի հսկայ պաշարը արդէն վերջացած էր. ամէնէն խեղճ մարդն իսկ ամսուայ մը պաշար տարած էր իրեն համար: Մարդ չկար որ գոնէ տասը հատ գորգ բերած չլինէր: Ի՞նչու, ի՞նչ ընելու համար, չէ՞ որ վաղը թողնելով հեռանալու

էր, բայց ո՞վ կը խորհէր այդ ուղղութեամբ. անտէր եւ առատ ապրանք, փողոցներ մնայլու փոխարէն տունդ բեր, քեզ մնաց լաւ, մեկնեցար թող մնան . . . :

Տիլիման քաղաք գրաւելէ վերջ խնամքով հաւաքուեցան զերի ընկած Պարսիկները՝ թուով 9000: Ասոնցմէ մաս մը Սոյ եւ մաս մը Դաւրէժ գրկուեցան: Հայեր Պարսիկներուն ունէ չարիք հասցնելու մտադիր չէին. Տիլիմանի գէպքը կամքէ անկախ պատճառներով տեղի էր ունեցեր, այլ կերպ վերարերուիլ անհնար էր արդէն:

Ժողովուրդ առանց բացառութեան տարիներու փորձառութենէն օգտուելով, ալիւր ունենալուն պէս սկսած էր ճանապարհի հաց պատրաստել:

Ժողովուրդ արդէն բաւական հանգստացած էր. ճանապարհի համար հաց եւ նոյն իսկ փոխադրութեան միջոցներ ունէր, անհրաժեշտ էր առանց ժամանակ կորսնցնելու Կովկաս մեկնիլ:

Կոմիսարներու Սորհուրդ գործի վրայ էր. կարծես քնէն սթափած լինէր. Ապրիլ 16ին կարգ մը մարդիկ ժողովի հրաւիրեց Բայաջուկ գիւղի մէջ: Ժողովին ես ալ ներկայ էի: Չանազան գիւղերէ եւ շրջաններէ հաւաքուած էին իրրեւ թէ ժողովրդական ներկայացուցիչներ՝ որոշելու թէ ինչ պէտք էր ընել: Ժողովի հրաւէր Համբարձումեանի կողմէն էր, որը երեւի ժողովրդեան կողմէ, Կովկաս մեկնելու ցանկութեան արտայատուութենէն գրգուած գումարել տուած էր այս ժողովը՝ գալիք գժրախառութեանց պատասխանատուութիւնը ժողովրդեան վրին ձգելու մտադրութեամբ: Ժողովը երեք ժամ պարապ՝ պարապ վիճելէ վերջ ընտրեց Չինուորական Լիպգոր Մարմին մը հետեւեալներէ. Կ. Համ-

բարձումեան, Լեւոն Շաղօեան, Սամսոն եւ Մելքումեան, յանձնարարելով որ խուզարկատուները ուզարկէ Սոյի շրջան, եւ զինուորական ոյժ կազմակերպելով ժողովուրդը Կովկաս փոխադրեն: Բայց ժողովականներէն ոմանք, իրենց մանուածապատ առարկութիւններով, Կովկաս մեկնելուն դէմ էին:

— Կովկասի հետ կապ հաստատենք բայց ժողովուրդը հոս թող մնայ, կ'ըսէր Մելքումեանը:

— Մեր ներկայութիւն հոս Կովկասահայութեան ապահովութեան համար անհրաժեշտ է եւ օգտակար, կ'ըսէին ուրիշներ. եւ այսպէս անվերջ...:

Ժողովուրդը հետզհետէ կը սկսէր անհամբեր դառնալ, մանաւանդ որ ամէն օր անձանօթ ազրիւրէր զղիած չարագուշակ լուրեր կը շրջէին: Թիւրքեր Վասպուրական գրաւելէ յետոյ, բնականաբար սլիտի ուզէին եւ այս շրջանները գրաւել, քանի որ Կովկաս գրաւելու մտադրութիւն ունէին մանաւանդ: Ահա այս ենթադրութիւններ հաստատող լուր մըն էր որ Ապրիլ 18ին կը շրջէր՝ յուսահատութեան մատնելով բոլորին:

«Թիւրքեր 3000 զօրքով Կօտուլ հասած են եւ լուր ուզարկած են Սոյի կառավարչին որ, ընդդիմութիւն ցոյց չտրուի իրենց. այլսպէս իրենք ուժով ալ կարող են Սոյ մտնել եւ այդ պարագան վատ կը լինի Պարսիկներուն»:

Լուրը ինչպէս որ վերջին պատահած դէպքեր կը հաստատեն ճիշդ էր. եւ ստացուած էր մեր խուզարկու խումբերու կողմէ բռնուած Գիւրտէ մը:

Ապրիլ 21ին տարազիր Վասպուրականցիներու վէրքերը նորէն արխնոտած էին: Սոյի ճամբայով՝ մեր Պարսիկ զերիներ գրկելուն ի պատասխան հասաւ Վան գերի մնացած կանանց բազմութիւն մը,

(200 հոգի) հիւծուած եւ դրեթէ բոլորովին մերկ: Իրենց տանջուածի դէմքերէն կարելի էր հասկնալ կրած մեծ վիշտերնին: Հիւանդ, նուաղած, մարած ու խորը ինկած աչքերով հալածական ուրուականներու կարաւանն էր այն՝ որ կուգար Վասպուրականի մէջ մնացող 15,000 անմեղ Հայերու տառապանքը ցուցադրելու: Բոնարարութիւն, ծեծ, ողջ՝ ողջ այրել, ջուրի մէջ խաշել, փոքրիկները քարերուն զարնելով ջարդ ու փշուր ընել. ինչէ՛ր, ինչէ՛ր ըսես չէին ի զործ դրած վայրագ տիրողները իրենց ձեռքն ընկած սա դժբախտներուն վրայ: Ահա դրացիներէս մին՝ Սաթենիկ Բաջեան, որու աչքի առջեւ սպաննած են 12ամեայ իր Արամիկը եւ ամուսինը: Ինչքա՛ն փոխուած են, տարիներու դրացիներս անդամ առաջին ակնարկով չեմ ճանչնար, որքա՛ն խիստ էր տառապանքի կնիքը այդ դժբախտներու վրայ.....:

Ստիպումներուս ի պատասխան խեղճ կինը խոր հառաչ մը քաշեց ու այսպէս սկսաւ պատմել.

— Նահանջող ժողովուրդին հետեւեցանք մինչեւ Արճակի դաշտ, ուր Նոչարցի Քիւրտեր մեր ճամբան կտրելով՝ սպաննեցին բոլոր տղամարդիկ, կիներն ու, երախտներն անգամ. իսկ ողջ մնացողները քշեցին քաղաք՝ ուր այս ու այն կողմէն բերուած խումբ մը կանանց հետ, թիւով մօտ 250—300 հոգի, տան մը մէջ բանտարկեցին: Հոս ամէն դիշեր Թիւրք զինուորներ կուգային եւ գեղեցկադէմներ ընտրելով կը տանէին, մինչեւ լոյս չարչարկելէ վերջ, արշալոյսին նորէն կը վերադարձնէին նոյն առուն՝ ուր մինչեւ երեկոյեան զինուորներուն ճերմակեղէններ կարել կուտային: Դրսի աշխարհէն բոլորովին կըտրուած էինք, չգիտէինք թէ ի՞նչ կ'անցնէր կը դառ-

նար քաղաք եւ իր շրջակայք: Տաս օր վերջ մեր խումբը թիւրք ժանտարմաներու առաջնորդութեամբ ուղարկուեցաւ Կօտոլ՝ ուր Խոյի ճամբան ցոյց տալով ըսին. «Գացէ՛ք, ձեր Հայեր հոն են»: Խոյ մտնել աւելի մեծ պատուհաս մը եղաւ մեր զլխին...:

Ու նա պատմեց թէ ինչպէս հոն այդ թշուառները կ'ենթարկուին Սմկոյի Քիւրտերու եւ Պարսիկներու անլուր խոշտանդումներուն:

— Երբ Խոյէն դուրս ելանք, շարունակեց նա, արդէն զրկուած էինք նոյն իսկ ճերմակեղէններէ, ու բոլորովին մերկ: Ճանապարհին ով ինչ որ դտաւ իր անդամները մի կերպ ծածկելու համար վերցուց: Մեզմէ քանիներ այնքան ծիւրած էին որ Խոյի ջուրը անցնելու ատեն չկրնալով հոսանքին դիմանալ կուլ գացին անոր...: Երանի՛ անոնց. իսկ մենք ալ եկանք հոս եւ ահա կը տեսնէք թէ ի՞նչ վիճակով...:

Վանէն եկող դժբախտներուն կ'ընկերանային նաեւ Խոյի մէջ գտնուած Ասորիներու բեկորները՝ որոնց տղամարդիկ ու մանչերը կոտորած, զեղեցկուհիները առեւանդած էին Պարսիկներն եւ Քիւրտեր. իսկ պառաւները կապերն ու կոյրերը՝ որոնք միշտ եւ ամէն տեղ անպէտք բան մըն են՝ ուղարկուած էին Սալմաստ: Սա պատասխան էր մեր ուղարկած գերիներուն, ասով իրենք ըսել կ'ուզէին թէ մենք ալ գերիներուն չենք դպչիր, առանց սակայն խորհելու որ ճիշդ այն գերիները նկարագրելու էին իրենց ճիւղային արարքները:

Զինուորական Մարմինը գործի վրայ էր, իւրաքանչիւր զիւղի համար նշանակելով մի քանի մարդիկ որոնք սկսած էին ցուցակագրութիւն մը կազմել նպատակ ունենալով հասկնալ ժողովրդեան թիւը, ի մասնաւորի պէնք ունեցողներու թիւը:

Ապրիլ 23ի զեղածիծաղ արշալոյսը՝ յարութիւն առած Փրկչին յաղթանակը կ'աւետէ. կաճապարեմ եկեղեցի, ուր խճողուած բաղմութիւնը լալահատաչ կ'աղօթէ :

Ձատիկ է, տօնական օր. ուրախութեան օր : Ձատիկներու քաղցր յուշերն են որ այս հանդիսաւոր բողոքներուն կը վերջիչուին, կ'ալեկոծեն մեր սրտերը... : Տառապած ժողովրդեան անհուն ցաւին չկարողանալով դիմանալ դուրս կ'եննեմ : Ու ահա ուրիշ ցաւալի լուր մը կը հասնի. Վանէն հետերնիս բերած 170 ուղտեր՝ որոնք մեր զինուորական փոխադրութեանց միակ եւ վերջին միջոցներն էին, փախած էին : Տիրող շուարքէն եւ անխուժութիւնէն օգտուած Պարսիկ ուղտապաններ դիշերով առած փախած էին դէպի Խոյ : Թէեւ լուսարացին եղածը իմացուած եւ ձիաւորներ ուղարկած էին դանազան ուղղութեամբ հետապնդելու համար, սակայն պարզ էր որ այդ հետախուզումներ այլեւս օգուտ մը չպիտի ունենային. եւ մեր բանակը կը մընար առանց փոխադրական միջոցի : Զինուորական Մարմնի աչալուրջ զործունէութեան առաջին օրինակն էր այս... :

* * *

Օրերը կ'անցնին միօրինակ ու տրտում : Շուարքի մէջ ենք : Կովկաս մեկնելու խնդիրը կարծես մոռացութեան մասնուած է : Ասորիներ որոնց օժանդակութիւնը կ'ակնկալէինք Կովկաս անցնելու համար, կը հետեւին խորհրդաւոր քաղաքականութեան մը : Անոնք ոչ միայն չեն ուզեր Կովկաս անցնիլ, այլ ընդհակառակն գոհ էին որ Վասպուրականի ժողովրդեան նման հերոս ժողովուրդ մը կուզար իրենց զօրավիգ լինելու. Սալմաստէն հեռանալէն կը սոս-

կային: Տիլիմանի, Քէօհնէ-Շհէրի եւ Ուրմիոյ քաղաքներու եւ անոնց շրջակայ գիւղերու կողոպուտով հարստութեանց տիրացած, երկրային ամէն կարգի բարիքներով օժտուած գրախտէն հեռանալը՝ մահ էր իրենց համար: Հարկ էր Հայերը թմբած վիճակի մէջ պահել, «Պահանջուած/ատեն մեզ հետ մեր հարստութեանց պաշտպան կանգնելու համար»: Ահա ասորական խորամանկ մտայնութիւնը. ահա իսկական պատճառներէն մէկը Կովկաս անցնելու ձեռնարկին արգելքներուն, ահա աղբիւրը այն լուրերուն, որոնք ամէն օր զանազան ձեւերով եւ չափազանցութիւններով կը շրջէին ժողովրդեան մէջ թէ «Սոյի գիծը պատուել անկարելի է»:

Կովկաս անցնելու ցանկութիւնը մեր մէջ ալ այնքան զօրեղ է որ սկսած է մեզ տանջել արդէն: Թէեւ ընտանեկան լրիւ կազմով հոս ենք, ու Կովկաս մեկնելու ցանկութիւնը մաքնաւոր շահագրգռութեան մը հետ կապուած չէ, այնուամենայնիւ Կովկասի այդ հայաշատ կեդրոնի կարօտը եւ հոն գտնուելու ցանկութիւնը մեր ալ խռալը դարձած է:

Վազուց էր ինչ լուր կը շրջէր թէ Դաւրէժէն Ուրմիա եկած է Ատրպատեականի նահանգապետ Իճլայի Միւլը. ահա այդ մարդու հետ տեսնուելու նաեւ Ասորիներու պարագլուխներու հետ խորհրդակցելու մտադրութեամբ Մայիս Յին Համբարձումեան կը մեկնէր Ուրմիա:

Իրերու այս դրութեան մէջ դործի գլուխ էին Ռուսեր: Խոսքովայի մէջ գումարեցին ժողով մը մասնակցութեամբ Ռուսահայերու եւ կ'որոշէին ի դին ամէն զոհողութեան նոյն խկ բոլորովին առանձին Կովկաս մեկնել: Ռուսերու տուած որոշումը ահարեկեց բոլորին. որովհետեւ անոնք կարեւոր

ուժ մը կը ներկայացնէին հոս. եթէ իրօք անոնք բաժնուէին մեծ դժբախտութիւն մը կը լինէր :

Զինուորական Մարմին յաճախ հետախոյզ զօրքեր կ'ուղարկէր Խոյի շրջան, թշնամիի մասին տեղեկութիւններ բերելու համար: Մայիս Յին այդ շրջան մեկնող ձիաւորներու խումբ վերադարձաւ շիտթուած՝ ցան ուցրիւ, թշնամու ձեռք թողնելով երկու դերի, որոնցմէ մէկը նորէն յաջողած էր փախչիլ: Յայտնի էր որ թշնամին կամաց՝ կամաց կ'ուժեղանար այդ կողմ, եւ աւելի աշալրջութեամբ իր խուզարկու խումբերու շնորհիւ կը լրտեսէր մեր շարժումները:

* * *

Մայիս 4-ի առաւօտն է. մայիսեան զով առաւօտներէն մին: Ժողովուրդ սովորական օրերու նըման մի կերպ համակերպած իր դրութեան, առաւօտ կանուխ իր ընտանի կենդանիներ արածելու տարած է Մալմաստի կանանց դաշտեր: Մեր ձիերու կերակրելու հոգսը հետզհետէ սկսած էր տանջել մեզ. անհրաժեշտ էր հետեւիլ ուրիշներու օրինակին եւ ձիերը դաշտ տանիլ:

Օդի զովութիւնն ու սոսիճառութիւն վերջապէս ողետորեց մեզ. ու մէյ մէկ մանդաղ առնելով մենք ալ դաշտ կը շտապենք: Գեղջկական կեանք՝ ի՞նչ հըրապուրիչ տեսարան, ամբողջ դաշտը կը հրճուի մանուկներու ճիչերով ու հնձողներու երգերով:

Յանկարծ դիմացի կարմիր բլուրներէն լսելի եղան հրացանի որոտներ, որուն յաջորդեց բլուրին մօտիկ եղող բաղմութեան իրարանցումը: Ու դեղջկական հրապոյրով խայտացող կանանց դաշտը դարձաւ սոսկումի թտտերամայր մը: Ուրախ երգողներ այժմ ինչպարի շարժումներով, սարսափահարի

բացազանչութիւններով կը վազեն հեւ ի հեւ առանց իրարու հետ խօսելու: Խեղճ կենդանիներն անզամ շփոթուած, այնպիսի արագութեամբ կը վազէին որ, տէրերը այս անգամ կը դժուարանային հասնիլ:

— Ի՞նչ եղաւ, ի՞նչ կայ, կը հարցնենք մի քանիսին.

— Քիւրտե՛ր, Քիւրտե՛ր կ'ըսեն ու կ'ացնին առանց կանգ առնելու:

Ահա ձիաւոր մը որ սրարչաւ կը յառաջանայ, Ռուս զինուոր մ'է ան. ձեռքով նշան կ'ընենք որ կանգնի, բայց նա հասկնալով մեր մտադրութիւն առանց ձին կանդնեցնելու.

— Քիւ՛րտ, Քիւ՛րտ. կ'ըսէ շնչասպառ ու կ'անցնի:

Գաղնիք մը չէր այլեւս որ թշնամին եկած էր Սալմաստի զլուխը փշրելու, Սալմաստի ծուխը մարելու: Արհաւիրքը իր սոսկումներով նորէն թեւակոխած էր: Մենք դեռ զիւզը չհասած լսեցինք արդէն զանգակի արտասուվոր ու չարագուշակ զօղանջները, որոնք այս անգամ աւելի բարձր, աւելի հասցնեալ էին.....:

Հաւթվանը կը թնդար. ամբողջ բնակչութիւնը փողոցներ թափուած էր սարսափահար, իսկ զինուած տղամարդիկ շնչասպառ հրացաննին դրկած կը վազէին եկեղեցւոյ բակը: Ձիերը մայրիկին յանձնելով վեր բարձրացանք, կ'առնենք հրացաննիս ու վերջին բնաք բարեաւը ըսելով մայրիկին՝ որ արտասուքի մէջ խեղզուած՝ պինդ մը իր կրծքին կը սեղմէ մեր զլուխները՝ կը համբուրէ ճակատնիս. դուրս կը վազենք դէպի եկեղեցւոյ բակը, ուր Մելքումեանը եւ Յովհաննէսեանը Ռուս սպաներու հետ դործի վրայ են:

Թշնամին գիշերը աննկատելի կերպով յառաջացած ու դիրքեր դրաւած էր. մեզ կը մնար անմիջապէս յառաջանալ ու բաց դաշտի վրայ կուրծք տալ անոր խօլական յարձակման, այլապէս կորսուած էինք: Քառորդ ժամ յետոյ զինուորներ կազմ ու պատրաստ, կռուի դաշտը կը մեկնէին: Ես ու եղբայրս կը գտնուէինք Ահրեւանի ճակատին վրայ դըրկուած 200 հոգինոց վաշտին մէջ՝ որու վաշտապետը Համազասպ Յովհաննէսեան անունով Հայ սպայ մըն էր. զոյգ-զոյգ շարուած, մեր վաշտը հասաւ մինչեւ Ահրեւան գիւղը, ուր շղթայ կապած սկսեցինք յառաջանալ Թշնամու հրացանային կրակը արհամարհած: Ասդին անդին ձգուած առարկաներ ու գործիքներ պերճախօս ապացոյցներ էին կէս ժամ առաջ տեղի ունեցած սոսկալի խուճապին:

Հրացանային կրակը քանի կը յառաջանայինք այնքան կը սաստկանար: Յանկարծ լսելի եղաւ թընդանօթի մը պայթիւնի ձայն ու շառավինէլի զնդակը կադկանձելով անցաւ մեր շղթայի վրայէն ու հինգ քայլ ետ իյնալով պայթեցաւ: Թնդանօթի պայթիւնը յանկարծակիի բերաւ մեզ, եւ բոլորիս ալ վրայով վախի սարսուռ մը անցաւ. այնուամենայնիւ մեր շղթան տակաւին կը շարունակէր յառաջանալ: Ահա երկրորդ զնդակ մը որ նոյն կադկանձիւնով եկաւ եւ պայթեցաւ այս անգամ տասը քայլ շղթայէն առաջ:

Մինչ այս մինչ այն՝ մենք արդէն հասեր էինք բաւական յարմար տեղ մը. առջեւինս կ'երկարէր ջրի առուակ մը, այդ մեր խրամն էր. մէջը լեցուեցանք եւ հինգական քայլ իրարմէ հեռու հազիւ թէ տեղաւորուեցանք, երբ երկու թնդանօթներ միաժամանակ պայթեցին եւ անոնց յաջորդեցին ե-

րեք զնդացիրներու դժոխային կրակները: Կոիւք սկսած էր. այժմ զիրքերու մէջ ենք, թէ առջեւնիս եւ թէ ետեւնիս գտնուած ցորենի կանանչ արտերը իրենց կանանչութեամբ լաւ կը պատասպարեն մեզ, այնպէս որ թշնամին դժուար թէ այդ համաաարած կանանչութեան մէջ կարողանար մեր դիրքերի խակական տեղը ճշգրել: Թնդանօթի ոռւմբերը եւ զնդացիրներու անհամար զնդակերը կը թափուին աջ ու ձախ, առջեւ ու ետեւ:

Թշնամիի շլթան բռնած էր Շաքարեաղի (Կալասարի արեւելեան կողմը զիւղ մըն է) բարձրունքներէն մինչեւ Քօհնէչհէրի բարձունքները: Սալմաստի ամբողջ ազգաբնակչութիւնը թէ Հայ եւ թէ Ասորի սոքի վրայ էր, նոյնպէս սոքի էին Ռուս սպաներ: Ամբողջ ճակատի երկայնքին կոիւք սկսած էր նոյն կատաղութեամբ: Կէսօրին սկսեց գործել մեր թընդանօթը՝ որ դրուած էր Խոսրովայի առջեւ գտնուած բարձունքներու վրայ, թէեւ հատ հատ եւ խիստ խրնայողարար կը գործածուէր զնդակ չունենալնուս համար: Կէս օրը անցեր էր. թշնամիի խիտ շլթան կ'իջնէր բլուրներէն եւ կ'ուղղուէր դէպի ձախ թեւը՝ Խոսրովայի դիժը. յանկարծ մեր թնդանօթը սկսեց գործել այդ ուղղութեամբ եւ խիստ վարպետօրէն արձակուած երկու զնդակներ պայթեցան ուղիղ թշնամու շարքին մէջ՝ ցիրուցան ընելով զանոնք: Այս դէպքը այնքան ոգեւորեց մեզ որ 30թ չափ ընկերներով իրամներէն ելնելով «հուրրա՛» գոչեցինք ու վազեցինք թշնամիի թնդանօթներու եւ զնդակներու վրայ՝ որոնք մեզմէ 250-300 քայլ հաղիւ հեռու էին: Բայց մեր այս անխոհեմ քայլը աննպատակալարմար նկատելով ոչ միայն չհետեւեցին մեզի մեր վաշտի մնացած մասերը, այլ եւ սաստեցին մեզ եւ ստիպեցին վերադառնալ մեր նախկին դիրքերը:

Կոռուողները ոգևորելու համար յաճախ սուտ լուրեր կը պարտացնեն շրջանէ շրջան. « քրինակ, Ահրեւանցիներին լուր բերին թէ Բայաջուկի շրջան մերոնք թշնամիէն գերի վերցուցած են թնդանօթ մը, իսկ Բայաջուկ կ'ըսէին թէ Ահրեւան մերոնք երկու զընդացիր գերի բռնած են, եւ այսպէս փոխադարձաբար :

Կամաց կամաց խաւարը թանճրացաւ. հանդըստեան ժամն էր. խրամներու մէջ կծկուած անթարթ աչքերով կը հսկենք ականջնիս լարած՝ թէ մի գուցէ թշնամին գիշերային յարձակման կը դիմէ : Բացի այս աչալուրջ հսկողութենէն, իւրաքանչիւր տասնեակէն մէկ գինուոր խրամներէն քսան քայլ յառաջ խաւարի մէջ ուշադրութեամբ կը հսկէր եւ մէկ ժամ իւր պարտականութիւնը կատարելէ յետոյ գործը յաջորդին կը թողուր : Այսպէս կրկնակի աչալրջութեամբ լուսցաւ այդ խեղդող դիշերը. պատերազմի առաջին օրը անցուցած էինք առանց կորուստի :

Մայիսի հինգերորդ առաւօտն է, լոյսը կամաց կամաց կը բացուի. գեփիւռ մը շնչալով կ'անցնի խրամներու վրայէն համբուրելով յոգնած ու քնհատ գինուորներու ճակատներ : Բոլորս լուռ ենք ու սպասողական դրութեան մը մէջ. հետզհետէ ծագող լոյսի մէջէն որոշապէս կը տեսնուին արդէն թշնամիի գունդեր, որոնք Սուլալի բլուրներէն կ'իջնեն ու կ'ենեն : Թշնամին խորհելով թէ մենք յուսահատած գիշերային յարձակման պիտի դիմենք, միայն պահակներ թողնելով քաշուեր էր իր յառաջապահ դիրքերէն եւ ցերեկուան լոյսին միայն նորէն սիրտ կ'առնէր իր լքած դիրքերը վերադառնալու : Բոլոր նշաններէն յայտնի էր որ ճակատագրական կռիւ էր լինելու, որովհետեւ թշնամին իր նախկին դիրքերը

գրաւելիչ զատ երեք կողմով ալ, յամառօրէն կը յա-
 ռաջանար: Սկսեց կատաղի մրցում ձախ թեւը ու
 կեղբոնը ուր մենք կը գտնուէինք: Թշնամու ջան-
 քերը իզուր անցան. վեց անգամ փորձեցին յառաջա-
 նալ եւ վեց անգամին ալ մեր դժոխսային կրակէն ցիր
 ու ցան եղած ստիպուեցան ետ քաշուիլ: Յայտնի էր
 որ թշնամին աչքառու կորուստ կ'ունենար: Բաց
 դաշտ. հազիւ 250-300 քայլի վրայ յարձակիլ, խրամ-
 ներու մէջ ապաստանած, յուսահատի կատաղու-
 թեամբ ամրացած զինուորներու վրայ, բնականա-
 րար ուրիշ արդիւնք ալ չէր կրնար ունենալ: Ժամը
 4էն մինչեւ 10 կոխը կը շարունակուէր, աննկա-
 րազրելի թափով. 4 թնդանօթ եւ 16 զնդացիր կը
 գործածէր թշնամին ամբողջ ճակատին վրայ: Կէս
 դիչերէն սկսեալ մեր վաշտի երկու սպաներն ալ ան-
 յայտացեր էին. զինուորներ մնացած էին իրենց բախ-
 տին՝ որոնց ղեկավարութիւնը իրենց մէջ ճանչցուած
 նախկին հարիւրապետներն ու յիւնապետներն էին
 ստանձնած ինքնաբերաբար: Մայրախեղ մօլեզնու-
 թեան հասած կռուին փամփուշտ էր հարկաւոր որ
 դիմանար, ու բեռնակիր զինուորներ զնդակներու
 աննկարազրելի տեղատարափին տակ կը կրէին ու կը
 կրէին սակայն եւ այնպէս դարձեալ չէին կարող բա-
 ւարարել:

Ժամը 10-30ին մեր վաշտի աջ թեւը՝ որ կը զբա-
 նուէր Գիւլ Թէլիէ կոչուած բարձրութեան վրայ,
 փամփուշտներու րացարձակ չզոյութենէն եւ թշնա-
 մու ահռելի դրոհէն ընկճուած լքեց իր դիրքերը եւ
 յառաջացաւ դէպի ձախ թեւ ու կեղբոն. իրարանցու-
 մը մեծ էր, ի զուր ինդրանք, աղաչանք, պաղա-
 ասանք, նոյն իսկ մեր ընկերներու վրայ մեր կողմէ
 կրակ բանալը անօգուտ եղաւ լքուած զինուորները

կանեցնելու. փախուստը համաճարակի բնոյթ ստացաւ, ու ամբողջ Ահրեւանի ճակատի զինուորներ լքելով իրենց զիրքերը թշնամու ահռելի դնդակներու տարափին տակ բաց դաշտի մէջէն դիմեցին փախուստի: Օհ, ինչ քստմնելի տեսարան էր. կը փախչէին բոլոր՝ առանց իրենցմէ ինկած սպանուածներու եւ վիրաւորուածներու վրայ նայելու, առանց պաղատանքներնուն ահանջ կախելու: Երեք բոսպէ վերջ ամբողջ վաշտը արդէն լեցուած էր Ահրեւան դիւղի մէջ ուր սաստիկութեամբ կը պայթէին շառափնէլի դընդակները՝ ծուխի ու բոցի մէջ ծածկելով գիւղ: Թէ լուր ունէի՞ն Բայաջուկի եւ Սոսրովայի շրջանի մեր զինուորներ այս աղէտալի փախուստէն չգիտենք, միայն այսքան պարզ էր որ, կատաղի կոխը առաւօտունէ սկսեալ աննպաստ էր մեզ: Հարկադրուած լուր ուղարկած էինք Հաւթվան՝ Մելքումեանին, խնդրելով ճակատ շտապէ փամփուռչտի առատ պաշարով, որովհետեւ դրութիւնը խիստ լուրջ էր: Եւ ճիշդ այն ժամուն երբ ամբողջ զինուորները բացի Հայկ Վարդանեանէ, Հայկ Փոխչանեանէ եւ եղբայրք Վաղարշակ ու Արրահամ Մոկացեաններէ, որոնք զիւղէն քիչ ցած փոքրիկ պարտէզի մը մէջ պատերու ետին կանգնած կը կոուէին յուսահատօրէն, մնացեալ բոլոր զինուորները, որոնց մէջն էի եւ ես, լեցուած էին Ահրեւան՝ ուր մնալու ալ մտադրութիւն չունէին: Ահա վերջապէս հասաւ Մելքումեանը ու կատարուած իրողութեան առջեւ գտնուելով՝ առանց տատամսելու հանեց իր ատրճանակը եւ հրամայեց «հուրրա՛» կանչելով յարձակիլ ու գրաւել նախկին զիրքերը: Զինուորները սակայն չուարքի ու սարսափի մէջ էին. Մելքումեանը տեսնելով զինուորներու տատամսումն եւ թշնամիի քայլ առ քայլ յառաջանալը, ատրճանա-

կի երկու հարուածներով սպաննեց զինուորներէն մին
 եւ վիրաւորեց միւսը՝ հրամայելով որ իրեն հետեւին,
 ու ինք աւորճանակը կրակելով առաջ ինկաւ:
 Չինուորներ սթափած իրենց շուարքէն, հիւ-
 ցած իրենց առաջնորդի քաջութեան վրայ, բոլորը
 միասին, կատաղած առիւծի մը նման, «հուրա՛»
 գոչելով դուրս թափուեցան դիւղէն ու թնդանօթնե-
 րու եւ հրացաններու հազարաւոր զնդակներու սու-
 լոցին տակ յառաջ վազեցին: Թշնամին այս անգամ
 ընկրկեց եւ ստիպուած եղաւ քիչ մը ետ երթալ եւ
 դիրքեր բռնել, բայց Գիւլ թէփէն մնաց թշնամիին
 ձեռքը:



Վ Ի Ր Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Ա Ն Ր Ե Ի Ա Ն Ի Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ը

Եզրօրս տաքարիւն եւ անզգոյշ բնաւորութեան ծանօթ լինելով, այս կոիւններուն միշտ իր քովը կը նստէի՝ հարկ եղած զգուշութիւնները ձեռք առնելու համար. սակայն այս շիտթութիւնն ու փախուստը այնքան հապճեպ եղան որ, անզգալարար իրարմէ բաժնուեցանք. իսկ յարձակման միջոցին նա երբ նկատեց թէ Մելքումեան զինուորներ ետեւ ձգած «հուրրա՛» կանչելով յառաջ կ'երթար, ինքն ալ դըլ-խարկը օդին մէջ շարժելով յառաջ վազեց եւ առաջինը եղաւ մեր հին խրամները ցատկոզ: Ես եւ երկու ընկերներ չկարողանալով անմիջապէս խրամներ մըտնել, զնդացիրներու խաչածեւ կրակէն ստիպուած եղանք երեսի վրայ պառկելի բաց դաշտի մէջ: Հազիւ պառկած էինք երբ թնդանօթի զնդակ մը մեզմէ քիչ մը հեռու կանանչ արտի մէջ ընկաւ եւ պայթեցաւ, ծուխի ու հողի մէջ ծածկելով մեզ: Ստոյգ մահէն ազատած՝ վախէն դողդղացող անդամնիս դեռ չհանդարտած, սկսեց զնդացիրի դժոխային կրակը՝ այնպիսի վարպետ նշանառութեամբ մը որ՝ զնդակներու ընկած տեղերէն հողն ու փոշին երեսնուս կը նետուէր: Գնդացիքը լռելուն պէս փորձե-

ցինք տեղերնիս փոխել, եւ դեռ գլուխնիս վերցուցած չէինք, ահա նորէն եւ այս անգամ զոյգ մը թնդանօթի ուռմբեր եկան եւ ճիշդ նախկին զնդակի տեղը պայթեցան: Տէ՛ր Աստուած, ի՞նչ փորձանք էր ընկանք, կը կրկնենք իրարու, աշխատելով հնար եղածին չափ տափակնալ ու գետին մըրունել, սա գնդակներէն ազատուելու համար: Կուրը չորս կողմ կը շարունակուի նոյն կատաղութեամբ. մենք քառորդ ժամուան մը չափ տեղերնիս մնացինք անշարժ. թշնամին որ նախապէս մեզ նկատած էր, երեւի արդէն մեռած կարծելով ձեռք քաշեց մեզմէ:

— Կա՛րապետ, ձայն կուտամ քովի ընկերոջս, յարմար ժամանակ է, տեղերնիս փոխենք. մանաւանդ ես կ'ուզեմ եզրայրս դռնել:

— Ի՛հ դուն ալ, ի՞նչ վատ կասկածներ կ'անցնես մտքէդ. եղբօրդ բան մը չըլլար, բայց սա տեղերնիս փոխելուն ես ալ համաձայն եմ:

Ու մէկէն ոտքի ելնելով վազեցինք մեզմէ քսան քայլ ստաջ դռնուած փոքրիկ փոսի մը մէջ՝ ուր դրուած էր քսան եւ հինգ պատրոն կրակող արագահարուած հրացան մը: Հազիւ թէ տեղաւորուած էինք, այս անգամ հոս սկսեց այնպիսի դժոխային կրակ մը, որ արագահարուածը զործածել այլեւս անհնար լինելով, առաջին իսկ պատահութեամբ փոխադրեցինք մօտը դռնուած փոքրիկ պարտէզը, ուր գնացինք քիչ վերջ եւ մենք: Զինուորներէն մաս մը եւ Մելքումեան հոս են. մինչ մեծ մաս մը, աւելի ստաջ մեր նախկին խրամներու մէջն են: Ծնչուած ու շնչասպառ, պատի տակ նրստեցանք քիչ մը ազատ շունչ քաշելու համար: Սաստիկ ծարաւ եմ, ու առանց ուշադրութիւն դարձընելու որ ոտքէս մինչեւ գլուխ քրտինքի մէջ

կը գտնուիմ, խնդրեցի քովիս զինուորէն որ քիչ մը ջուր բերէ ինձ: Աման չկար, անմիջապէս վերցուց պատրոններու թիթեղեայ սպրապ տուփ մը եւ առուակէն ցերխախառն ջուր մը լեցնելով բերաւ, ու ես խմեցի ազահարար: Այդ միջոցին տեսայ որ Մեյքումեան շփոթուած, հանեց գրպանէն վիրակապ մը եւ Մոկացեան Վարդանին երկարեց. իսկ ան ալ հապճեպով քակեց զայն եւ սկսաւ զետին տարածուող վիրաւոր մը կապել: Անպատճառ լաւ կոուող տղաներէն մին լինելու է մտածեցի ես:

Եզրայրս ինչպէս վերեւ յիշեցի, ամենէն առաջինը եղաւ մեր լքած խրամները մտնող. հոն հասնող զինուորներէն մին թշնամիի անհատնուժ գընդակներէն կ'իյնայ. քիչ հեռու մի ուրիշ, կուրծքէն երեք գնդակ ընդունելով կը տապալի. եզրայրս ընկերներու հետ այս երկու վիրաւորներ կապելով այգի փոխադրելէ վերջ կրկին կը վերադառնայ խրամներ, ուր Գիւլթէփէի վրայ դրուած թըշնամիի գնդացիրն ու իր համարձակ գործող զինուորներ նորէն կուռի կը մղեն զինք, մինչեւ կուրծք խրամէն դուրս կրակ կ'ընէ գնդացիրի զինուորներու վրայ որոնք 250-300 քայլ հազիւ հեռու էին: Թշնամիի զինուորներէն մին կ'իյնայ. երկու զինուոր կը ծռին վիրաւորը վերցնելու, եզրայրս ոգևորուած իր յաջողութիւնէն կը շարունակէ կրակել. կ'իյնայ եւ մի ուրիշ, այս յաջողութիւններ ուրախութեան բացազանշութիւններ կը խլեն իր դողդըղացող շրթունքներէն: Ու մինչ նա կը կրակէր իր երրորդ փամփուշտը՝ համոզուած որ երրորդ մ'ես իյնալու է, ահա ճիշդ այդ բոպէին կ'սկսի գործել գնդացիրը, ու եզրայրս կը վիրաւորուի:

— Ընկերներ՝ զարնուեցայ, զիս հոս մի՛ ձը-
ղէք... Ու կ'ուշաթափուի:

Քանի մը ընկերներ դուրս կը ցատկեն խրամէն
ու կը հասնին վիրաւորին քով ու զայն կը փոխադ-
րեն սարտէզ: Թշնամին նկատելով որ դիակ մը կը
փոխադրեն, կրակի կը բռնէ փոխադրողները՝ որոնք
սակայն անվնաս այգին կը հասնին:

Հակառակ խնդրանքիս ընկերներս կը ջանային
պահել ինձմէ իրականութիւնը, ըսելով թէ վիրա-
ւորը անձանօթ մըն էր՝ Սալմաստի գիւղերէն: Բայց
սիրտս հանդարտ չէր, տխուր մտածումներ կը յա-
ջորդէին իրարու. ահա այդ անստուգութեան վերջ
մը տալու նպատակով ոտքի ելայ ու դէպի վիրա-
ւորը ուղղուեցայ. եղբայրս էր ան...: Աչքերը գոց
էին. ու տժգունած շրթունքները անունս կը կըրկ-
նէին: Փաթթուելով համբուրեցի, երկար արցունք-
ներովս լուարով իր գունատ դէմքը: Յանկարծ բա-
ցաւ աչքերը, երեսս նայեցաւ, ու նորէն գոցեց՝ խոր
հառաչ մը ձգելով: Յուսահատութիւնս մեծ էր.
վիրաւորներ փոխադրող կառքը դեռ չէր վերադար-
ձած, իսկ պատգարակով, որ շինուած էր իր զին-
ւորական վերաբիւռէն իր եւ իր ընկերոջ հրացանին
վրայ կապուած, չէր կարելի փոխադրել: Գնդա-
ցիրային կրակը սոսկալի էր. կառքը եկաւ բայց
անհնար էր դուրս ելլել: ստիպուած եզանք մենք
վիրաւորը իր այս ձեւի պատգարակով փոխադր-
րել գիւղամէջ՝ ու հոն կառքին մէջ ղետեղել: Եղ-
բորս կողքին ուրիշ վիրաւոր մըն ալ կար որ ճանա-
պարհին մայրի՛կ, մայրի՛կ... կանչելով մեռաւ...:

Կառքը դեռ գիւղը չհասած, երկինքը որ սեւ՝
սեւ ամպերով ծածկուած էր, տարօրինակ գոռում
գոչումով մը, փայլատակներով սկսեց անձրեւել՝

լուալով կառքէն կաթկթած վիրաւորներու կարմիր արիւնը, որ իր երկա՛ր հետքով կուզար Հաւթվա- նի ճանապարհը փակելու թիւրք բարբարոսներու առաջ...: Կամաց՝ կամաց կը հեռանայինք արդէն այն արեան դաշտէն ուր կռիւը կը շարունակուէր նոյն կատաղութեամբ:

Քանի կը մօտենանք զիւղին, ծունկերս այնքան կը կթոտին, կառքը պիտի անցնէր մեր դռնէն՝ ուր խեղճ մայրս կը սպասէր անշուշտ լուրեր ստանալու համար իր դուակներէն: Ի՞նչ պիտի ընէր արդեօք իր որդւոյ արիւնլուայ զիակին առջեւ: Ի՞նչ ըսէի, ի՞նչով մխիթարէի իր մայրական սիրտը: Ահա զիւղ կը մտնենք: Տիլիմանի ճամբով պատգարակներու վրայ դրած կը բերեն ուրիշ երկու վիրաւորներ. փողոցներ լեցուած են բոպէ առ բոպէ մեռնելու վտանգով սահմուկած ժողովրդեան խումբերով՝ որոնք վիրաւորներու այս կարաւանով յուսահատ՝ կ'ողբան ու կ'աղմկեն: Ահա՛ մայրս, իր հարսի եւ տնեցիներու հետ դրան առջեւ կանգնած են: Հակառակ պերմարդկային ճիգերուս չեմ կարող զսպել ինքզինքս ու կը փղձկիմ. տեսաւ նա ինձ կառքի կողքին թաշկինակը աչքիս. հասկցաւ, ու խելազարի շարժումներով սուր ճիչ մը արձակեց. բարձրացաւ վայնասուն...: Օ՛հ, ինչ օրեր էին...: Կառքին ուղեկցող ընկերներս դիմաւորեցին մայրս, աշխատեցին իրենց անկապ խօսքերով մխիթարել զինք, զղուշացնելով որ այդ կարգի զոռում դոչումով չմօտենայ վիրաւորին՝ որուն վէրքը թեթեւ է, եւ կարող է յուսահատուիլ: Ես օգուտ քաղելով այս առիթէն կառքը քշել տուի ու անցանք:

Եկեղեցւոյ բակն ենք. իրար վրայ խոնուած

բազմութիւն հիւանդանոցի մուտքը փակած է դրեթէ . ծանօթներ ու բարեկամներ ցաւակցական բացաւանչութիւններով կը նային կառքի վիրաւորներուն եւ սակայն անոնցմէ եւ ոչ մէկը կը համարձակի վիրաւորներու տէրերուն մօտիկնալ՝ ցաւի մեծութիւն նկատի ունենալով՝ ոչ ոք կ'ուզէ մօտիկնալ մխիթարական խօսքեր ըսելու, բոլորն ալ կը հասկնան որ նոյն իսկ այդ մխիթարական խօսքերը՝ աւելի կը խոցոտեն վիրաւորի պարագաներ : Ահա բերին պատգարակները ամբողջապէս կարմիր ներկուած, ու կառքի վիրաւորներէն մէկը եկեղեցին իսկ միւս երկուքը վիրաբուժարան տարին՝ վէրքերը կապելու : Երբ բժիշկ քանդեց վիրակապը եւ սկսեց նորը կապել, երեսս նայեցաւ, դէմքը տփուռնած ու ցած ձայնով մը կմկմալով .

— Հիւանդանոց մի՛ տանէք, տո՛ւն տարէք, վէրքը մահացու է, հազիւ թէ երեք ժամ ապրի . . . :

Գլուխս դարձաւ, աչքերս մթնեցին բժիշկի այս անդուժ խօսքերէն :

— Ո՛չ, հիւանդանոց պէտք է փոխադրել, ըսի :

— Սիրելի՛ս, յարեց բժիշկը, չ'արժէ, չ'արժէ իզուր տեղ անկողին դրաւել այս փոքրիկ հիւանդանոցէն՝ ուր դարմանուելու են բազմաթիւ վիրաւորներ . . . Մի վշտանար, սիրելի՛ս, բոլորս ալ երեւի շատ կարճ ժամանակէ մը յետոյ հետեւելու ենք ասոր որ նահատակի, հերոսի փառքին արժանացաւ :

Բժիշկի խօսքերը զնդակէ մը աւելի ծանր կուգային ինձ . եղբայրս տակաւին կը շնչէ, մինչ նա մեռելներու կարգին կը դասէ զայն . անլուր հայհոյանքներն անգամ դժուար թէ այնքան բարկացնէին զիս՝ քան «նահատակի, հերոսի փառքին արժանացաւ» բառերը ու նորէն բարկութեամբ աւելցուցի .

— Եթէ նոյնիսկ երկու բոպէէն ալ մեռնելու է՝
թող մեռնի հիւանդանոցին մէջ, մահճակալին վը-
րայ:

Բժիշկը յուզուած խօսքերէս ու ներկաներու լուռ
ու յանդիմանական ակնարներէն.

— Թող այնպէս ըլլայ, ըսաւ ու եզրայրս տարին
հիւանդանոցը:

Հիւանդանոց կոչուածը եկեղեցւոյ բակին մէջ մի
սենեակ էր. վարի յարկ ուր 12 փայտեայ մահճա-
կալներ դեռեղուած էին քով քովի եւ առանց անկող-
նի: Երեք տարի առաջ Ռուսաց կողաքներու միու-
թեան խիստ ճոխ հիւանդանոցին՝ որու ամբողջ սար-
քը հեռատես եւ պարտաճանաչ հայ պաշտօնեաներու
ընչաքաղցութեան շնորհիւ շողիացած էր, կը մնա-
յին միայն փայտեայ մահճակալները. ծառայելու
համար ոչ միայն քոյրեր՝ այլ նոյն իսկ թեթեւ ըս-
պասաւոր մը չկար: Ահա՛ այսպիսի հիւանդա-
նոցի մը մէջ կը խնամէին մայրեր՝ ժողովրդեան
կեանքը իրենց արեան դնով պահպանող իրենց ղին-
ւոր զաւակները: Ահա՛ այս հիւանդանոցն էր ուր
համարեայ թէ կոռուով փոխադրեցի եզրայրս, եւ որու
միակ առաւելութիւնը այն էր որ զեզարանի կողքին
էր, բժիշկի խնամքին մօտիկ. եւ բժիշկը իր սովոր-
ական ժամերին կ'այցելէր ու կը զարմանէր վիրա-
ւորները: Տնէն պէտք եղած անկողիններ բերելով,
անկողիններ՝ զորոնք եթէ Տիլիմանը ինկած չլինէր
չպիտի ունենայինք, պատրաստեցինք մի կերպ ան-
կողին եւ եզրայրս պառկեցուցինք: Բժիշկի նկատու-
ղութիւնները իրաւացի էին, դնդակը մտած էր եզ-
րօրս աջ կրծքին մէջ, կրծոսկրէն հազիւ կէս մատ-
նաչափ հեռու, անցած էր աջ թոքի մէջտեղէն իր հետ
զուրս տանելով անկից կտոր մը. ահա այս ծանր

պարագաները նկատի ունենալով էր որ բժիշկը յոյսը կտրած, երկու, երեք ժամէն մեռնելու է, կ'ըսէր վճռարար:

Ամբողջ ընտանիքով եղբորս սնարին քով կանգնած՝ դողահար կ'սպասենք ժամացոյցը ձեռքերնիս: Օ՛հ, ինչքան արագ-արագ կ'անցնին այդ վայրկեաններն որոնք ուրիշ պատեհութեամբ այնքան դանդաղ են ու ահաւոր: Ահա՛ ժամը անցաւ, դող մը կը ցնցէ մեզ, ուրեմն ըստ բժշկի ըսածին, մէկ կամ շատ շատ երկու ժամուան կեանք ունի. ու ցաւէն սահմուկած, կը նայինք իր դէմքին, շնչառութիւնը կը լինի խիստ ընդհատ միացած ջրադրդիւ շարժումներու. յայտնի է որ շնչառութենէն կը տառապի. բայց փա՛ռք Աստուծոյ, եղբայրս թէեւ տանջանքով, բայց վերջապէս դեռ կը շնչէ. յուսոյ աղօտ ճառագայթ մը ցոլաց մթապնած սրտերնուս խորքը: Բժիշկը յիմար է, խելքը բանի մը չի հասնիր, կը մտածենք մենք՝ աշխատելով մխիթարել զմեզ: Երեկոյեան ժամը 10ին բժիշկը արագ արագ քալուածքով լուռ ու տոգունած ներս մտաւ առանձին ակնարկ մը նետելով եղբորս անկողնին վրայ՝ որ սենեակի ամենավերին դուռը կը դռնուէր եւ որու շուրջ խոնուած էինք մենք: Կարծես նա չէր հաւատար իր աչքերուն. բայց իր շուարքը ծածկել ջանալով, կարգաւ այցելեց հիւանդները, ու հասաւ եղբորս. բոնեց զարկերակը ու առանց պատասխանելու իմ «յոյս կա՞յ» հարցումին անցաւ միւսներուն: Բժիշկի վերաբերմունքը սոսկալի էր, պարզ էր որ նա անյոյս էր, չնայած որ երեք ժամի փոխարէն 6 ժամ էր որ կ'սպրէր եղբայրս: Նորէն թախիծը պատեց մեզ, վիրաւորներու զառանցանքներ, ազիոզորմ աղաղակներ, այնպիսի ճնշող մթնո-

լորտ մըն էին ստեղծած՝ որ վիրաւոր սիրելիի մը սնարին քով կանգնողներ միայն կարող են զգալ :

Երկու օրէ ի վեր անքուն եմ, յողնած ու տառապած հոգեպէս ու Ֆիզիքսպէս, աչքերս ծանրացած են, բայց կը գոցուի թէ չէ եղբորս գիակը կը պատկերանայ առջեւս... Երեք ժամեր արգէն անցած էին, այժմ պէտք էր սպասել քսան եւ չորս ժամուան, այսպէս լսած էի, ու կիսակենդան եղբորս քով նըստած կը հաշուեմ ժամերը, որոնք անզգայարար ու արագ-արագ կը սահին... :

Հիւանդանոցի 12 մահճակալներն ալ արգէն բըռնուած են, նոր եկող զինուորներ ստիպուած տուներնին կը զրկեն, յուսահատութիւնը ծայր աստիճանի է հասած : Մայիս 5ը մի միայն Ահբեւանի գըծին վրայ մեզմէ խլեց 25 սպաննուած ու վիրաւորներ՝ որոնց մեծ մասն ալ անյոյս են. նկատելի էր մի աչքառու պարագայ. բոլոր նահատակներ ու վիրաւորներ Վանեցիներ եւ Կովկասահայեր էին, Սալմաստցիներէն ոչ մի կորուստ, մի գէպք որ պերճախօս ապացոյցն էր տեղացիներու կողմին հանդէպ բռնած իրենց զիրքին : Ամբողջ գիշեր մայրիկիս հետ երբեմն քնած երբեմն արթուն հսկեցի եղբորս սնարին վերեւ լո՛ւռ ու վշտահար... :

Մայիս 6ն էր, արհաւիրքի մղձաւանջով լուսացուցինք ամբողջ գիշերը՝ մէյ մը եղբորս մահը, մէյ մը թշնամիի մեր գիծը պատուել ու ներս խուժելու վախը հալումաչ բրած էին գիս : Ահա՛ բժիշկը նորէն կուգայ, վիրաւորներու վիրակապերը կը փոխէ, եղբորս կը մօտենայ. կը քննէ բազկերակը ու կ'անցնի առանց վէրքերին մտիկ տալու : Ի՞նչ է այս, ինչո՞ւ վէրքին վիրակապերը չի փոխեր, չլինե՞ թէ վերջնականապէս յոյս կտրած է եղբորմէս... Բժիշկին

հանդէպ այլ կերպ վերաբերմունք ցոյց տալու անգոր
եմ ու անհուն ցասումով մը լեցուած, այդ անդուժ
բժիշկին հանդէպ՝ բարկութենէս շրթունքներս կը
կրծեմ ու կը լռեմ . . . :

Յանկարծ բակի մէջ տիրեց մեծ իրարանցում մը :

— Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն, կը պօռայ
երիտասարդ զինուոր մը՝ ոտքէն մինչեւ գլուխ քըր-
տինքի մէջ շաղախուած . թշնամին փախած է, մեր
ձիաւորներ մինչեւ Սուլաւի բլուրներ դացին ոչ ոք
գտան, դաշտը լեցուած է տաճիկներու գիակներով :

Երա՞զ էր արդեօք . Թուրքեր փախա՞ծ, ի՞նչ էր
այս, ուրեմն մե՞նք ազա՞տ էինք այլեւս . ուրեմն
թնդանօթներ ու զնդացիքներ դադարած էին իրենց
գժոխային կարկուտով փճացնել Սալմաստի դաշտե-
րը : Կը տիրէ տարօրինակ իրարանցում՝ որ կամաց,
կամաց յուզիչ երեւոյթ մը կ'ստանայ : Բոլորը «աչ-
քըդ լո՛յս, աչքը լո՛յս» կ'ըսեն իրարու, ուրախու-
թեան արտասուքներ կը հոսին առատօրէն, շնչաս-
պառ եւ անվերջ իրարու կը կրկնեն զինուորին բե-
րած աւետիար, ու ժողովուրդ կը խճողուի շարու-
նակ եկեղեցւոյ բակը, ու կ'սպասէ տրուած լուրի
մանրամասնութիւններուն : Եկեղեցւոյ զանգակը
սկսեց ղօղանջել . մինչեւ այժմ լսուած ղօղանջներու
հապճեպ շեշտը չունէր ան, այլ քնդհակառակն շա՛տ
ծանր, հատիկ հատիկ ու խորհրդաւո՞ր . . . Ու այդ
դանդաղ բայց տպաւորիչ ղօղանջները կ'երթային
տարածուելու Ահրեւանի արիւնածածկ դաշտերու
մէջ տակաւին անթաղ մնացած նահատակներու վրայ .
դո՛հարանական աղօթքի հրաւիրող եւ յաղթութիւնը
աւետող զանգակի ղօղանջներն էին անոնք անո՞ւշ ու
խորհրդաւո՞ր . . . :

Միրոս կ'ուռի ուրախութենէս. վերջապէս ազատուած ենք, բայց այդ ազատութիւն չա՛տ սուղի նսանց շատերուն որոնցմէ մին ես եմ :

Հիւանդանոցի թեթեւ հիւանդներու երեսին յաղթական հերոսի շողշողուն ժպիտը կ'երեւի. «Այ ցաւ չեմ գգար, չէ՞ որ յաղթեցինք» կ'ըսէ ծունկէն վիրաւոր երիտասարդ մը : Գոնէ այս լուրը, այս յաղթութեան աւետիսը լսէր հասկնար եղբայրս : Գոնէ գիտնար թէ՛ ժողովուրդ որու համար ինքը ինկաւ, շնորհիւ իր նման անձնուէրներու, ազատ էր այլեւս :

Մայիս 5ին թշնամին գերմարդկային ճիգեր ի գործ դնելով՝ աշխատած էր մինչեւ վերջին շունչ պատուել Հայոց շղթան եւ իր մահացու գնդակներու տարափին տակ՝ փճացնել այդ մի բուռն յանդուգն ժողովուրդը, որ միշտ եւ ամէն տեղ չար փուշի մը նման կը ցցուէր իր ճանապարհին եւ արգելք կը դառնար իր ծրագիրներուն : Միջագետքէն ու Պարսկաստանէն յառաջացող Անգլիական բանակներուն ճամբան կտրել հարկ էր, քանի անոնք գեռաւելի չէին մօտիկցած. բայց ահա այս մի բուռն կեալուրներ խոչընդոտ կը հանդիսանային : Մայիս 5ին, ինչպէս վերջէն բռնուած մի քանի տասնեակ գերիներ միանման վկայեցին, այդ կատաղի գրոհի ժամանակ թշնամին իր 4000 նիզամիէ զօրքերէն կուտայ 400 սպաննուած, չհաշուած վիրաւորները :

Ու արշալոյսին երբ մերոնք կ'ակնկալէին սովորականի նման տաք կռիւ, ու ամէն զինուոր մեռնելու պատրաստ իր «Հայր Մեր»ի վերջին վանկերը կը շնչար ու թշնամու տեղատարափին կը սպասէր, զարմացած արտասովոր լութեան մը առջեւ կը դանկէր ինքզինք : Չորս կողմէն միաժամանակ համազարկներ կուտան ու պատասխանի կը սպասեն .

ուչ մի ձայն սակայն, տարօրինակ երեւոյթ: Չլինի՞ դաւադրութիւն մը կայ, վայրկենապէս կ'անցնի բոլորի մտքէն, ու սոսկումի շուարք մը կը պատէ բոլորին՝ որուն կը յաջորդեն երկրորդ ու երրորդ համազարկներ. դարձեալ նոյն արձագանդ, դարձեալ նոյն լուսթիւն...: Շուարքը կ'անհետի, զինուորներու վրայ ոպեւորութիւն մը կուգայ, եւ բոլորը մէկէն «Հուրրա՛» բացազանչելով կը յարձակին թըշնամու գիրքերուն վրայ, ուր թշնամու փոխարէն կը գտնեն դիակներ՝ ու դիակներ՝, արեան ճապաղիքներ, այրուած փամփուշտներու գէզեր, գլխարկներ ու ոտնամաններ՝ որոնք ընկած էին դէս ու դէն ցան ու ցրիւ: Տարակոյսից վեր էր որ թշնամին փախած էր: Այս անյուսալի յաջողութիւն արտասովոր ուրախութեամբ եւ ոպեւորութեամբ կը համակէ կրուողները, որոնք «Հուրրա՛» կանչելով կը հասնին մէկ կողմէն մինչեւ Սուլաի իսկ միւս կողմէն մինչեւ Խանասորի վրայ նայող բլուրներու բարձունքները. սակայն թշնամին փախած էր եւ չկա՛ր... Պարքչլուի բլուրներէն մինչեւ Քէօհնէ Շէհիբի բարձունքները թողնելով 400 կանոնաւոր զինուորներու դիակներ, որոնց մէջ տակաւին փայլուն էքօլէքները ուսերնին՝ հազարապետ մը եւ հարիւրապետ մը:

Գերիներ պարզեցին եւ մի առեղծուած: Մայիս ֆին նկատելի էր որ արչալոյսի հետ միասին գիմացի բլուրներէն (Սուլաի բլուրներ) կ'իջնէր թշնամու չլթան անվերջանալիօրէն: Խորամանկ թշնամին կը հաւաքէ Խոյի եւ իր շրջանին բնակչութիւնը ըսելով որ «մենք կ'երթանք եւ երկու ժամուան մէջ կը ջարդենք այդ կետավորները, հետեւեցէք մեզի անոնց անբաւ հարստութիւնը կողոպտելու համար»: Խոյի շրջանի սովէն տառապող Քիւրտ ու Պարսիկ բնակչու-

Թիւն տեսնելով 1000 կանոնաւոր զօրքեր, 4 թնդանօթ 16 զնդացիր կ'ոգեւորուի, եւ մեծէն մինչեւ փոքր զինուած կը հետեւին բանակին՝ չմոռնալով հետերնին առնել նաեւ կանայք որոնք նոյնպէս կը զինուին դանակներով, իրենց նմանները ջարդելու երդմամբ: Ահա այդ այրերէ ու կիներէ, պատանիներէ ու ծերունիներէ կազմուած խառնիճազանչ բազմութիւնն էր որ խորամանկ Թիւրքեր, անվերջանալի շարքերով բլուրներէն կ'իջեցնէին վար եւ ապա պտըացնելով բլրակի մը ետեւէն նորէն կը հանէին դիմացի բլուրները եւ վար կ'իջեցնէին կրկին: Երկու ժամէն աւելի տեւեց այս խորամանկ բայց սարսափեցնող զօրանցքը, որն իր միւս բոլոր ծրագիրներու հետ ահա այսօր իր չորս հարիւր դիակներու հետ յաւիտենականութեան գիրկը կ'երթար թողնելով սեւ էջ մը Թիւրք վայրագութեանց պատմութեան մէջ:

Թշնամին իր այս հապճեպ փախուստի միջոցին երեւի չէր կարողացած, այս ու այն քարի, այս ու այն ձորի մէջ քնացող Գիւրտերուն եւ Պարսիկներուն լուր տալ, որոնք ինչպէս ըսի եկած էին կողոպուտի համար...:

Այս կռիւներուն մեր կորուստներու թիւն է ըստ պաննուած եւ վիրաւոր միասին հաշուած 25 զինուոր:

Ահա անսպասելի յաղթութեամբ դինով Սալմաստի ամբողջ բնակչութիւն կը ցնծար. գիւղէ գիւղ զիրար շնորհաւորելու կ'երթային, եկեղեցիներու մէջ զոհարանական աղօթքներ կը կատարուէին, ուրախութիւնը մեծ էր: Գերեզմանի դռնէն վերա-

(1) Բոնուեցան խոշոր դանակներով գինուած հիւնգ կանայք որոնք վերի ըսածս հաստատեցին:

դարձողի մը ուրախութիւն...: Իսկ ե՞ս, թէ ուրախ էի եւ թէ մանաւանդ արտո՞ւմ...:

Անսպասելի ազատութենէն յետոյ ժողովուրդ, մանաւանդ Հաւթվանի զինուորական մարմին(2) ուչքի եկաւ, անհրաժեշտ էր ուչադրութիւն զարձընել հիւանդանոցի վրայ, ուր պառկած զինուորներ մինչեւ այն ատեն ոչ կանոնաւոր անկողին մը ունէին, ոչ հիւանդապահ մը եւ ոչ ուտելիք: Ասորինըր ունէին բաւական խոշոր եւ ամէն յարմարութիւններով օժտուած մի հիւանդանոց Թոսորվայի մէջ, բայց Հայեր գրեթէ չէին օգտուեր անկէ. ամբողջ Հայերու ուչադրութիւն, յոյսն ու ապաւէն Հաւթվանի այս փոքրիկ հիւանդանոցն էր, այն ալ այսպիսի ողորմելի դրութեան մէջ: Ահա այս հիւանդանոց մի քիչ կարգի բերելու եւ հիւանդանոցի կերպարանք տալու մտադրութեամբ Զին. Մարմնի կարգադրութեամբ, քահանաներ եւ քանի մը ճանչցուած մարդիկ, սկսեցին տուներէն անկողիններ հաւաքել. այնու ամենայնիւ երկու օր առաջ ոչ միայն հարստութենէ այլ նոյն իսկ կեանքէ ձեռք քաշած Սալմաստի բնիկներէն ոմանք եղան որ չուզեցին իրենց հերոս զինուորներու այս ամենատարրական պահանջին դոհացում տալ. եղան նոյն իսկ զզուելիներ՝ որոնք մի փոքրիկ բարձի կամ վերմակի համար առանց խղճահարուելու ստեցին տգեղ բացատրութիւններով. բայց բարեբախտաբար սկըս-

(2) Հաւթվանի շրջանի Զին. Մարմնի լիագորն էր Մելիումեան, եւ Կալասարի շրջանին՝ Լեւոն Շաղօեան իսկ այս երկու շրջանի Զինուորական Մարմիններ ենթարկուած էին բուն Զին. Մարմնին, որուն անդամ էին այս երկու լիագորներն ալ:

ուած դործը յառաջ տարուեցաւ, ու երկու օրէն յետոյ արդէն վիրաւորներ քիչ մը շնորհքով անկողին ունէին: Կը մնար ուտելիքի հարցը: Քահանաներ եւ Զին. Մարմնի կողմէ նշանակուած մարդիկ, եկեղեցւոյ բեմէն խօսեցան ժողովուրդին եւ յորդորեցին թէ հարկ է երախտապիտական զգացումնիս յայտնել մեր հերոս զինուորներուն, գոնէ անոնց այս տառապանքի վրայ անօթութեան տանջանք չաւելացընենք, գոնէ այդ արիւնաքամ քաջերը անսնունդ մեռնելու չդատապարտենք: Այնուհետեւ ամէն առաւօտ հաւկիթ, կաթ, մածուն, հաց, ժողովուրդը — ի մասնաւորի դաղթական ժողովուրդը — կը բերէր լիառատ: Կամաւոր հիւանդապահութիւն յանձն առին Վանի Քաղաքներու Միութեան պաշտօնեաներէն Տիկին Մանիա Ենդիրարեան եւ Օր. Հեղինէ Մեծրայեան: Վարձուեցան նաեւ երկու մարդիկ որպէս հիւանդանոցի ծառայող: Բժշկական դործը արդէն ինքնարեւարար ստանձնած էր Բժիշկ Վարդան Յովհաննէսեան, ու հիւանդանոց սկսեց մի քիչ լաւ վիճակ ստանալ:

* * *

Եղբայրս հակառակ բժշկի յոռետեսութեան այսօր կարծես քիչ մը դէպի լաւը կ'երթայ, եւ հանդրատութեան նշաններ զոյց կուտայ: Բժիշկը զարկերակը քննելէ վերջ, հրամայեց զործողութեանց սենեակը փոխադրել վիրակապեր փոխելու համար: Արեւական անդրանիկ ճառագայթներու նման յուսոյ շողեր զօրացին խաւար հողւոյս խորքը, խոր շունչ մը առի. եթէ բժիշկը կը յօժարէր վիրակապեր փոխելու եւ չէր մեղքնար իր վիրակապերուն, ուրեմն առողջանալու յոյս կար: Չորս հոգով անկողնի չորս

ծայրեր բռնած, անկողնով կը փոխադրենք զինք զոր-
 ծողութեան սենեակ, ուր բժիշկ վիրակապեր քակելէ
 վերջ հրամայեց նստեցնել. ի դուր անցան եղբորս
 «չեմ կարող» եւ մեր թախանձանքներ՝ պառկած
 մնալու, նա զայրացած ոտքը գետին զարկաւ եւ պըն-
 դեց իր խօսքին վրայ: Հազիւ թէ կէս մը նստեցուցած
 էինք վիրաւորը, երբ կոնակի վէրքէն սկսեց շատըր-
 ուանի նման հոսիլ արիւնը. խեղճ՝ եղբայրս մարեցաւ
 նորէն ու ես կարծեցի թէ մեռաւ արդէն: Բժիշկը
 շիտթուած, զղջալով իր պնդելուն վրայ, անմիջա-
 պէս պառկեցնել տուաւ, քանի մը կաթիլ սթափեցնող
 դեղ կաթեցուց բերան, եւ սկսաւ արագ, արագ զո-
 ցել ջանալ վէրքին բերանը: Վերջապէս կապեց, ու
 համարեայ թէ մեռած նորէն իր տեղը տարինք պառ-
 կեցուցինք: Բժիշկ այդ օր սովորականէն դուրս չորս
 անգամ եկաւ եղբայրս տեսնելու, կարծես իր յան-
 ցանքէն խղճահար, այցելութիւններով կ'ուզէր քա-
 լել իր մեղքը:

Օրը կը մթննար, անքնութիւն եւ հոգեկան տան-
 ջանքներ այնքան վատ ազդած են վրաս, այնքան
 քայքայուած, այնքան ծիրած եմ, որ տեսնողը կը
 կարծէ թէ արդէն հիւանդ եմ. անուժութենէս, բա-
 բեկամներուս ու մայրիկիս ստիպումներէն յաղթա-
 հարուած տուն կ'երթամ քնանալու: Քո՞ւն թէ տա-
 ուապանք, չգիտեմ, այսքան միայն պարզ էր որ,
 քնելով կազդուրուելու փոխարէն՝ գիշերը հազար
 անգամ սոսկալի երազներէ սարսափահար, վեր կը
 ցատկէի: Երբօրդ անգամն էր արդէն որ երազով կը
 հետեւէի եղբորս յուղարկաւորութեան, ալ չգիմա-
 ցայ. սոսկալի վախ մը համակեց էութիւնս, ցաւը
 սկսաւ կրծել սիրտս, քնել անկարելի էր. ու առանց
 սպասելու լուսնալուն, հազուելով վազեցի հիւան-

դանոց, ուր մշի՛կ, մշի՛կ կը քնանար եղբայրս... :
Ո՛հ, ի՛նչ հոգեկան ուրախութիւն մը ունեցայ, նա
չէր մեռած, նա կը շնչէր, նա թերեւս կ'երազէ՛ր... :

Ահրեւանի կոիւներէն եւ յաջողութիւններէն վերջ, Հայերէն աւելի ուրախացած էին Ասորիներ, որոնք երկրորդ անգամ ըլլալով, փորձով համոզուցան թէ՛ ինչքա՛ն մեծ բարիք մ'է եղեր իրենց համար Վասպուրահանցիներու Սալմաստ դալը: Անոնք դարձեալ իրենց նախկին խորամանկ քաղաքականութիւն ձեռք առին, երբ տեսան թէ այս կռուէն վերջ մանաւանդ Կովկաս անցնելու ցանկութիւն խիստ պօրեղացած է ժողովրդեան մէջ. որպէս զի համոզեն ժողովուրդը եւ պահեն իրենց կողքին, լուր մը տարածեցին թէ Ուրմիոյ վրայ յարձակող տաճկական բանակը չարաչար պարտուած է ու փախած, Ասորիներու ձեռք թողնելով բազմաթիւ զերիներ, մեծ քանակութեամբ ռազմանիւթ եւ թնդանօթներ: Լուրի ինչ աստիճան ստոյգ ըլլալը ոչ ոք զիտէր, բայց որպէս յաջողութեան լուր, բաւական ողբերգութեամբ կը խօսուէր անոր մասին: Սալմաստի տեղացի Հայեր՝ որոնք նոյնպէս դաղթելու անունէն կը խրաչէին, լեցուած եկեղեցւոյ բակ, շուկայի մէջ եւ այս ու այն տեղ՝ ուր ժողովուրդ կը հաւաքուէր, ողբերգութեամբ կը խօսէին այս մեծ յաղթանակի մասին, աշխատելով վարդապոյն գոյներով նկարագրել Ասորիներու այս յաղթանակը, որ այլեւս ապահով կը դարձնէր Ուրմիան: Վասպուրահանցիներ այս լուրեր կ'ունկնդրէին, կ'ողբերուէին, այնու ամենայնիւ Կովկաս անցնելու մտազրութենէն ալ չէին հրաժարիր: Կովկաս անցնելու երազողներէն մին ալ ես էի, եւ սակայն այժմ իմ ամբողջ հոգս սա էր թէ,

նահանջի մը պարագային եւ ինչպէ՞ս փոխադրելու էի եզրայրս . . . :

Վասպուրահանի Ձին. Մարմին եւ կոմիտարներ՝ որոնք կը նստէին Բայաջուկ եւ Կալասար գիւղերու մէջ, չէին կարող բնականաբար անտարբեր պանուիլ ժողովրդեան բուռն ցանկութեան հանդէպ, եւ ահա Մայիս Ծ-ին իրենց երկրորդ հրաւիրագրով կը գումարուէր մի երկրորդ խորհրդակցական ժողով առաջինին նման, որու նպատակն էր դարձեալ խորհիլ Կովկաս անցնելու մասին: Այնու ամենայնիւ այս ժողովն ալ առաջինի նման ցանկալի արդիւնք մը չունեցաւ. երկար բարակ, թեր ու դէմ վիճարանութիւններէ վերջ, յանգեցան այն եզրակացութեան թէ, մեր ժողովուրդ յետ այսու դժուար թէ կարողանար Սալմաստի մէջ ապրիլ. պարտուած թշնամին պարզ էր որ ձեռք չպիտի քաշէր մեզմէ եւ պիտի փորձէր այս անգամ աւելի ուժեղ բանակով մը յարձակիլ, եւ այն ատեն դործը պիտի դժուարանար. նահանջել անհրաժեշտ էր, բայց ե՞րբ եւ ո՞ր դժով. որոշում տալը կը մնար արդէն գոյութիւն ունեցող Ձին. Մարմնոյն, մանաւանդ որ Վանի նահանգային կոմիտար Կ. Համբարձումեանն ալ մեկնած էր Ուրմիա՝ որոչ առաքելութեամբ մը եւ ցարդ չէր վերադարձած: Ձիրար չհակասելու համար անհրաժեշտ էր նաեւ անոր վերադարձին սպասել:

Սալմաստի տեղական կոմիտէն Վասպուրահանցիներու Ձին. Մարմնի հետ համախորհուրդ, ձեռք զարկած էր Ուրմիա-Սալմաստ հեռախօսային գծի վերակազմութեան՝ որ ժամանակէ մը ի վեր ընդհատուած էր: Այդ նպատակաւ սկսեցին դրաւել ձիւեր գծի նորոգութեան մեկնողներու համար: Եռուղեռը սկսած էր, այնուամենայնիւ այդ ամբողջ եռու-

զեռի մէջ տարտամութիւնը եւ անվճռականութիւնը
ցցուն կերպով զգալի էին: Մինչ իրերու դրութիւն
այս վիճակի մէջն էր, բժիշկները յայտարարեցին թէ
բժանոր քիւֆիւսի եւ ֆօլէրայի դէպքեր պատահած
են. անհրաժեշտ էր կանխազգուշութիւն ձեռք առնել:
Հաւթվանի շրջանի Ձինուորական Մարմին, ուր գաղ-
թականութիւն աւելի խիտ էր, սկսաւ հաւաքել տը-
ղամարդիկ եւ դիւղերու մաքրութեամբ զբաղուիլ:
Մինչ եկեղեցւոյ բակը մաքրել կուտային, նոր նկա-
տեցին երեք շարաթէ ի վեր անտէր եւ Պարսիկ կար-
ծուող 17 տարու Վանեցի հիւանդ տղայ մը որ կը
տառապէր իր ցաւէն, եւ երեք շարաթուայ ընթաց-
քին պուտ մը ջուր տուող խկ չէր ունեցած: Վերցը-
նել առւին այդ խեղճը եւ հիւանդանոց փոխադրեցին.
Երկու շարաթ վերջ առողջ ու կայտառ ոտքի վրայ էր
արդէն:

* * *

Եզրօրս գլխու վերեւ նստած հետաքրքրութեամբ
կը դիտէի բակը մաքրելու գործողութիւն՝ երբ վի-
րաւորներէն միոյն անախորժ խոխոցը ուշադրու-
թիւնս դէպի զինք քաշեց: Հազիւ թէ ոտքի ելայ,
խեղճին մայրը, այդ միհատիկ զաւկին տէր դժբախ-
տը՝ սուր ճիշ մը արձակեց եւ ամբողջ մարմնով զե-
տին ինկաւ ու մնաց անշարժ: Ուշաթափուած էր,
հոգեվարքի մէջ էր իր մինուճարը. բժիշկն ու քոյ-
րեր վազեցին, մայրը ուշքի բերին. խկ 28 տարուայ
ջահիլ ջիւանը որ Վանեցի Նշան Աւագեան կը կոչ-
ուէր, կէս ժամուան տառապանքէ վերջ անչնչա-
ցաւ...: Խեղճ մայր, ծերութեան օրերին փախը-
տական, անտէր ու անտիրական կը մնար: Այս դէպ-
քը դէշ ազգեց միւս հիւանդներուն վրայ, որոնք բո-
լորն ալ սկսեցին գանգատիլ իրենց վէրքերէն:

Մայիս 10-ի արշալույսին, մինչ ժողովուրդը վըտանդէն հազիւ ազատած սկսած էր քիչ մը շունչ առնել, եկեղեցւոյ զանգակի հասցեւոյ զօղանջները դարձեալ վտանգ կը գուժէին: Ի՞նչ գեղեցիկ միջոց էր այս խորհրդաւոր զանգակահարութիւնը, որոտարբեր-տարբեր ձայներ, տարբեր-տարբեր նշանակութիւններ ունէին, եւ որքա՞ն լաւ ըմբռնած էր ժողովուրդ այդ ձայներու նշանակութիւնը: Կարիք չկար զանգակահարութիւնը երկրորդելու, ժողովուրդը այդ շարադուշակ ձայնէն հալածուած, շընչասպառ կը խոնուէր եկեղեցւոյ բակը. վիրաւոր գինուորներն անդամ յուսահատութեան մէջ ինկան. ի՞նչ լինելու էր իրենց դրութիւնը եթէ իրօք վտանգ մը պատահէր, եւ մանաւանդ եթէ նահանջելու հարկը լլար: Զանգակահարութեան նպատակը շուտով յայտնի եղաւ. թշնամին երեւցած էր Ծաքարեաղի շըրջաններ. հարկ էր զգուշ լինել եւ այդ դժի հսկողութիւնը աւելցնել, մանաւանդ որ այդ դժով յառաջացող թշնամին Սալամատը կոնակէն պաշարելով Ուրմիայի հետ հաղորդակցութիւնը պիտի խըզէր, եթէ նոյն իսկ ծովեզերքը ձեռք ձգելու յաջողէր:

Անմիջապէս հետախոյզ գինուորներ ուղարկուեցան այդ շըջանը, որոնք վերադարձան ըսելով որ 20ի չափ հեծելազօրքեր նշմարած էին շատ հէռուէն, որոնք Հայերը նկատելիուն պէս փախչած էին: Ժողովուրդը տակաւին զանգակի ճնշումէն չսթափած հասաւ մի ուրիշ լուր. Խոյէն Կալաւար եկած էր Վանի Բերկրիի կիրճէն գերի գացած Հայ կին մը՝ բերելով Թիւրք հրամանատարութենէն նամակ մը՝ որով հրամանատարը անբարտաւան լեզուով մը կ'ըսէր. «Եւսթէթի շըջանի Հայեր եւ Ասորիներ անձնատուր եղած են, եւ խնայուած է իրենց կեանքին»:

դուք ալ հետեւեցէք անոնց օրինակին, այլապէս պիտի կոտորենք ձեզ անխնայ»։ Հրամանատարի նամակը որքան որ խիստ լեզուով գրուած էր, նոյնքան եւ խիստ արհամարհանքի արժանացաւ ժողովրդեան կողմէ։ Անձնատուութիւնը մեզմէ այնքան հեռու էր, որքան Արեւելք Արեւմուտքէն։ Ժողովուրդ, մանաւանդ Վասպուրականցիներ, քանիցս հասկցած էր Թիւրքերու հոգերանութիւնը, նա զիտէր որ Թիւրքեր երբ ուժով չեն կարող, խարէութեան կը դիմեն։ «Մենք սակէ երեք տարի առաջ 1915ի Ապրիլին մեռնելու էինք, այսքան ալ որ ապրեցանք աւելորդ էր. մահուընէ վախ չունինք, թող զան երբ եւ ինչ թիւով որ կ'ուզեն, մենք պիտի մեռնինք բայց մեռցնելով պիտի մեռնինք, թող զիտնան որ Վասպուրականցին Հայ է, հաւ չէ»։ Ահա թէ ի՞նչպիսի խօսքերով կ'արտայայտուէր Վասպուրականցին, երբ Թիւրքերու կողմէն սպառնալիքի լուրեր կամ գրութիւններ կը հասնէին։ Ու արդէն ինքզինք մեռած յայտարարող ժողովուրդը, հըրացանը ուսին, աչքերը դիմացի բլուրներուն յառած իր անհանգիստ ու հոգեմաշ օրերը քաշ կուտար մի կերպ։ Ո՛վ զաղթական չէ եղած, ո՛վ ամիսներով շարունակ թնդանօթներու եւ գնդացիներու կրակի տակ թշնամիին կուրծք չէ տուած, ով որ չէ հասած յուսահատութեան այն գերագոյն աստիճանին որ ինքզինք մեռած յայտարարէ, չի կրնար հասկնալ թէ ի՞նչ արժէք ունին փոխն ի փոխ իրարու յաջորդող լաւ ու վատ լուրերը։

Ուրմիայէն հասաւ երիտասարդ Ասորի ձիաւոր զինուոր մը, որ իր պարթեւ հասակով, կոկիկ հագուստով, շնորհքով պատրոնկալներով եւ բարձր ու կարմիր ձիով կատարեալ ասպետի մը տպաւորու-

Թիւն կը թողուր: Ուրմիայէն պատգամաւոր ուղարկողներն անգամ կարծես դիտմամբ ընտրած լինէին այս շիֆ երեւոյթով պարտնը: Ահա թէ ի՛նչ կ'ըսէր ան.

— Ուրմիոյ շրջանի թրքական ոյժերը վերջնականապէս ջախջախուած են: Ասորիներ երկու օրէն Աղա Պետրոսի առաջնորդութեամբ մեծ բանակ մը ուղարկելու են, որպէս զի տեղւոյս ոյժերուն միացած քալեն Սոյի վրայ, Կովկասի հետ կապ հաստատելու համար:

Կովկաս յառած աչքերը կենդանութեան փայլիւր առին, աննկարագրելի խանդավառութեամբ մը համակուած էին բոլորը. որքա՛ն երջանիկ էին այն օր....:

Վիրաւորներն անգամ ողբերուած, տաք՝ տաք կը խօսէին իրարու հետ եւ իրենց վիրաւորուելու պատմութիւնները կը պատմէին իրարու դուրդուրանքի շեշտով մը, չմոռնալով ամենափոքր մանրամասնութիւններն անգամ:

Շնորհիւ հիւանդապահուհիներու խնամքներուն՝ վիրաւորներու տէրեր այս անգամ հիւանդանոցներ չէին մնար: Եղբայրս՝ որ արդէն բաւական լաւ կըզգար ինքզինք, իր ոտքով դացած էր բուժարան՝ ապշեցնելով օրեր առաջ իրմէ յոյսը կտրող բժիշկը:

* * *

Մայիս 11ի առաւօտն է. եղբօրս այցելելէ յետոյ եկեղեցւոյ բակը կ'իջնեմ, խոնուած ժողովըրդեան կը մօտենամ որոնք տաք տաք կը վիճին իրարու հետ. սակայն բոլորի արտայայտութենէն կ'երեւէր որ խօսակցութեան նիւթը նորէն չարագուշակ մի լուր լինելու էր: Ենթադրութիւնս ճիշդ էր: Սալմաստի

մէջ մնացած Ռուսներու մասին էր որ կը խօսէին : Ռուսական վիթխարի բանակը որ իր փառքի ճանապարհը ձգած պօլշեվիկական ախտով վարակուած ու կազմալուծուած ետ էր քաշուած , Ասորիներուն եւ Հայերուն , կամ աւելի ճիշդ՝ անտէր թողնելով իր ռազմամթերքները եւ պատերազմական իրեղէնները : Ասորիներ զործի գլուխ անցնելով ու ռոճիկի չլացումներով յաջողած էին 200ի չափ օֆիցէրներ ու թնդանօթածիղներ պահել իրենց մօտ . բացի այդ , ատոնցմէ ոմանք ալ Համատանէն միջնէն հոս հասած էին , ճանապարհները փակ էին դրած , Կովկաս անցնելը անհնար էր եղած , ստիպուած մտած էին Ասորական բանակի մէջ : Ահա այդ օֆիցէրներն էին որ երկարատեւ ընդհարումներէ ճանճրացած մտադրւած էին հեռանալ , այսինքն անցնիլ Կովկաս , համոզուելով որ Սալմաստի ժողովուրդը չ'ուզեր դադարելու մասին մտածել : Պարագան ծանրակշիռ էր , Ռուսներ որպէս օֆիցէրներ եւ կոխ դեկավարող եւ մանաւանդ որպէս թնդանօթածիղ այնքան հարկաւոր էին որ , անոնց կորուստը մեզ համար անսխալարինելի էր : Ու ժողովուրդը ահ ու դողի մատնուած , իրար հետ կը վիճէին մեղադրելով Հայերն ու Ասորիները որ չէին կարող պէտք եղած վերաբերմունք ցոյց տալ եւ սիրաշահիլ զանոնք որպէս զի հեռանալու մտադրութենէն հրաժարէին :

* * *

Այսօր վերջապէս բախտ ունեցայ բժշկի բերնէն յուսադրիչ խօսքեր լսել : Երբ եզրայրս նորէն քալեց եւ զնաց զործողութեան սենեակ անհուն ուրախութիւն պատճառելով իր ծերունի մօր եւ ինձ , ըր-

Ժիշկը վիրակապերը փոխելէ վերջ յանձնարարեց ամէն ժամին հինգ բոպէ բակը հանել եւ քալեցնել : Կարող էք երեւակայել մեր ուրախութիւն . նա որ երկու ժամ միայն ապրելու էր , ահա՛ այսօր իր ոտքով կը քալէր : Բոլորը զարմացած այս անսպասելի առողջութենէն շնորհաւորելու կուգան , ու մինչ նա իր կթոտ քայլերով կատարած առաջին հինգ վայրկեանի պտոյտէն վերջ պառկեցաւ , բժիշկը ձեռքի նըշանով մը կանչեց ինձ , իր աշխատասենեակը տարաւ եւ ուրախ ձեռքս սեղմելով յարեց .

— Ուղիղն ասած ես սեւ խաչ քաշած էի եղբորդ վրայ , երկու անգամ երկու չորսի նման նա մեռնելու էր , առաջին անգամն է որ ես այս տեսակ վիրաւորի մը առողջանալը կը տեսնեմ . աչքդ լոյս , եղբայրդ հիմայ կ'առողջանայ՝ եթէ խնամքը կատարեալ լինի :

Բժիշկի խօսքերէն ոգեւորուած . «Ձեր դերմարդկային ճիգի , ձեր հանճարի արդիւնքն է , Պր . Բժիշկ» , ըսի ես հնար եղածին չափով աշխատելով ուռուցիկ խօսքեր գործածել եւ շոյել բժիշկի փառասիրութիւնը , որպէս զի աւելի հոգատարութիւն ցուցնէր : Ուրախ , ապահով ու երջանիկ եղբորս առողջութեամբ դուրս ելայ հիւանդանոցէն :

Այդ իրիկուն երբ առւոյտ հնձած ու ձիու վրայ կապած դիւղ կը վերադառնայի , ճանապարհին զարմանքով հանդիպեցայ Ռուսներուն՝ որոնք Խոսրովան ձգած իրենց ամբողջ կահ կարասիներով միասին եկան եւ արդէն աւերակ դարձած Տիլիման քաղաքի դիմաց Բայաջուկ-Հաւթվան ճանապարհի եզերքին վրաններ պատրաստեցին ու նստեցան : Գիւղ կը մտնեմ , յուսահատութիւն կը տիրէ չորս կողմ , «Ռուսներ երեք օրէն մեկնելու են Կովկաս» կը խօսի ժողովուրդը շուարած , որ դեռ մինչեւ այսօր չէր

յուսար թէ Ռուսներ օր մը իրենց խօսքեր գործնա-
կանացնելու են: Ես ոչ նուազ ազդուեցայ: Եղբորս
վիճակ, հաւանական դաղթի պատկեր կը սարսափե-
ցընէին զիս: Ձին. Մարմնոյն գիմեցի՝ հար-
ցընելով նահանջի մը պարագային վիրաւոր զինուոր-
ներու դրութեան մասին: Անոնք սակայն հանդար-
տեցուցին զիս ըսելով որ «այդ տեսակ քայլի մը մի-
ջոցին, ապահով եղէք որ, առաջ վիրաւոր զինուոր-
ներու փոխադրութեան մասին կը խորհուի, յետոյ
ժողովրդեան»: Սրտապնդուած Ձին. Մարմնի յու-
սազրանքէն, եղբորս պացի՝ որ նոյնպէս կը մտա-
հոգուէր, եւ արուած խոստումը յայտնելով ըսի որ
արդէն փոխադրական միջոցներն ալ պատրաստ են:

Մինչ ժողովուրդ նահանջելու մասին կը մտա-
ծէր, ու մտահոգուած էր իր կտրելիք ճանապարհի
դժուարութիւններ հարթելու զործերով, ոմանք ի-
րարմէ ընտանի կենդանիներ կը գնէին, ուրիշներ
սայլեր, կառքեր նորոգել կուտային կամ նորեր կը
չինէին, յանկարծ լսելի եղաւ մունետիկի ձայն որ
կ'ազդարարէր ժողովրդեան թէ. «Հաց եփեցէ՛ք,
պատրաստեցէ՛ք Ուրմիայէն եկող բանակի համար,
որ այն երեկոյ հաւանաբար պիտի հասնէր»: Ամէն
անգամին որ Ուրմիայէն դալիք ոյժի խօսք կը լինէր,
ժողովուրդը կ'ուրախանար, բայց անոնց մեծ
մասը արդէն սկսած էր թերահաւատութեամբ
վերաբերուիլ այս կարգի լուրերու հանդէպ, որոնք
յաճախ կը լսուէին ու սուտ կ'ելլէին: Արշալոյսին
հաղորդուած այս լուրին երեկոյեան կողմ յաջոր-
դեց մի այլ լուր, իրրեւ թէ Ուրմիացիք եւս որոշած
էի նահանջել, եւ արդէն բնակչութիւն ճամբայ ելած
էր տեղս դալու համար:

* * *

Մայիս 14.— Լուրե՛ր, լուրե՛ր ու անվերջ լուրեր: Չնայած սաստիկ անձրեւին, ժողովուրդը դարձեալ խոնուած եկեղեցւոյ պատերու տակ, նորութիւններու մասին է որ կը խօսի: Ուր որ գնալու ըլլաւ, Սալմաստի ո՛ր դիւզ որ մտնես՝ միեւնոյն պատկեր, միեւնոյն հոգեբանութիւն, միեւնոյն նոր լուրերու՝ շարաններ կը գտնես:

Այս օրուայ լուրեր աւելի ոգեւորիչ են արդէն. «Ներսէս Եպիսկոպոս Դաւրէժէն Ուրմիա եկած է եւ 2000նոց Ասորական բանակի մը հետ Երեկոյեան տեղս պիտի հասնի»: Քիչ վերջ կը հերքուի այս լուր եւ կը խօսուէր մի ուրիշ, իբրեւ թէ, «5000նոց Ասորական բանակ մը գալու է, որու հետ են Համբարձումեան, Ասորպատականի նահանգապետ Իճլալի-Միւլք, եւ Դաւրէժէն եկող պատգամաւոր մը ձերմակ անունով»:

Երեկոյեան բանակ չերեցաւ ու անոր փոխարէն պատերին փակցուած տեսանք «Սալմաստի Տեղեկատու Բիւրօ» ստորագրութեամբ թուղթ մը որ կը բովանդակէր հետեւեալ լուրեր.

«Պագուն եւ Ռէվանդուզ գրաւուած են Անգլիացիներու կողմէն. Պարսիկ կառավարութիւնը հաշտութեան մասին ըրած մեր առաջարկները ընդունած է: Ատրպատականի յայտնի Քիւրտ աւագակապետ Իսմայիլ Սմիօն սպաննուած է, Ասորական բանակ մը Ուրմիայէն գալու է Սալմաստ: Կարաբաբախներ կը կողոպտեն Ուրմիոյ գծի վրայ ջարդուած ու փախուտի դիմող Տանկական բանակի բեկորները»:

Յետոյ կը հրահանդէր ցանքսեր չ'փճացնել եւ ձեռնարկել բանջարանոցներու մշակութեան:

Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

ԵՒ

ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Մայիս 15ի առաւօտն է : Մայիսեան զով զեփիւռը արշալոյսի հետ կուղայ համբուրուելու պատուհանիս առջեւ բարձրացող ուռենիի կանաչ տերեւներու հետ , որոնց հաճոյալի սըլսըլոցներ զիս քնէս արթնցուցին . կ'աճապարեմ հիւանդանոց , բոլորը քնած են տակաւին , արթուն է միայն եղբայրս՝ որ զիս տեսնելուն պէս կը ժպտի՝ . . . :

Այսօր կալասար հասաւ Համբարձուածեան Ատըրպատականի Պարսիկ նահանգապետ Իջլալի-Միւլքի եւ իր եօթը հետեւորդներու հետ : Խորամանկ Պարսիկ իր քաղցր լեզուով այնքան հմայած էր Համբարձուածեանը որ նա կատարելապէս վստահ անոր խօսքերուն , աջ ու ձախ իրեն հանդիպողներուն ոգեւորուած կը պատմէր թէ , «Պարսիկ կառավարութեան հետ հաշտուած ենք արդէն , որ խոստացած է Շարապիսանէէն ռազմամթերք ուղարկել , եւ իրենք մեզի միացած Թիւրքերը դուրս պիտի վանեն Պարսկաստանի սահմաններէն , եւայլն» : Իրողութիւն այն էր սակայն որ , Իջլալի-Միւլք եկած էր այս շրջաններ այցելելու եւ անցուղարձերին անձամբ իրազեկ լինելու , եւ որպէս զի Հայերու եւ Ասորիներու կողմէ արգելքի չհանդիպի , հաւանութիւն ցոյց կուտար Հայերու եւ Ասորիներու բոլոր առաջարկներուն . այսպէսով ոչինչ չչահելէ զատ թէ ղեկավար շրջան

եւ թէ ժողովուրդ յոյսերով օրօրուեցան, եւ այն ինչ որ շուտ պէտք էր ընել, ուշ եղա՛ւ, ժամանակ արուելով որ թշնամին պատրաստուի:

Մինչ ժողովուրդ եւ ղեկավար շրջան Իճլալի Միւլքի դալատեամբ յոյսերով կ'օրօրուէին, Մայիս 16ին նորէն չարագուշակ լուրեր սկսեցին շրջան ընել: «Թիւրքեր 4000 զօրքով եւ 4 թնդանօթներով եկած Սուլալի բարձունքներ բռնած են»: Ահա թէ ինչ կը խօսուէր, նշաններէն յայտնի էր որ շուտով մեծ յարձակման պիտի ձեռնարկուէր:

Նոյն դիշեր ահազանդէն շիոթուած բնակչութիւն երբ լեցուեցաւ եկեղեցւոյ բակը, յայտարարեցին որ թշնամին մօտ է եւ կարող է դիշերային յարձակման դիմել. մանաւանդ որ հետախոյզներ Սուլալի բարձունքներուն վրայ թշնամիի զինուորական շարժումներ նկատած են, հետեւաբար դիրքերու հսկողութիւնը այս դիշեր պէտք է սովորականէն աւելի աչալուրջ լինի: Կէս ժամ վերջ մի քանի հարիւրեակ մեկնած էին արդէն Ահրեւանի դիրքեր՝ հսկելու համար:

Արհաւիրքներով լեցուն դիշերուան յաջորդեց խաղաղ առաւօտ մը. թշնամիի կողմէ ոչ մի շարժում. այնուամենայնիւ ձեռք առնուեցան զինուորական կանոնաւոր կարգ ու սարքեր: Ամէն դիւղի մէջ արձանադրուեցան զինուորներ. տասնեակներու, յիսնեակներու, հարիւրեակներու եւ վաչտերու դասաւորումներ եղան, նշանակուեցան նաեւ տասնապետներ, յիսնապետներ, հարիւրապետներ եւ վաչտապետներ, որոնցմէ իւրաքանչիւրն իր իրաւասութեան սահմանի մէջ պատասխանատու էր իր զինուորներու մասին: Սկսեցին նաեւ զինուորները մարդել: Կարասարի մէջ զօրանոցային դրութեան ըս-

կիրգէն, այսինքն դաղթականութեան Սալմաստ հաս-
նելէն ի վեր կար. Հաւթվանն ալ ունեցաւ, որով
թշնամին այլեւս յանկարծակիի չէր կարող բերել:

Զինուորական կազմակերպութեան գործը յա-
ռաջ կը տարուի կանոնաւորութեամբ. ամէն առա-
ւօտ զինուորներ հաւաքուած եկեղեցւոյ բազմաբ-
զանքի կ'երթան:

Զին. Մարմին նկատի առնելով որ դաղթը առ
այժմ յետաձգուած է, զինուորական կարգ ու կա-
նոնի ձեռնարկելէ վերջ, քաղաքական մասի կազ-
մակերպութեան եւս ձեռնարկեց: Համարեայ թէ
անիշխանութիւն կը տիրէր. ով ինչ կարող էր ընել
կ'ընէր: Ահա այս դրութենէն ազատուելու եւ ժո-
ղովուրդ քիչ թէ շատ օրէնքի ազդեցութեան տակ
պահելու համար Մայիս 18ին հիմնեցին երկու կեդ-
րոնական դատարաններ, մէկը Բայաջուկի մէջ —
միանձեայ դատարան մը՝ որ յանձնուեցաւ Վանեցի
Արմենակ Մաքսապետեանին. իսկ միւսը Հաւթվանի
մէջ, որու շրջան թէ մեծ եւ թէ բազմամարդ լինե-
լուն պատճառաւ կազմուեցաւ հինգ անձէ բաղկաց-
եալ դատարան մը. երկու Վանեցի — Նաղարէթ
Չարուիսեան եւ Եղիշէ Վարդանեան, երկու Սալ-
մաստցի — Սարգիս Կոստանեան եւ Կարապետ Սար-
գիսեան, մէկ Ռուսահայ — Սիմոն Տէր Ղուկասեան:
Այդ շրջանի գիւղերուն մէջ ալ գիւղական դատա-
րաններ հիմնուեցան՝ ուր պիտի քննուէին առօրեայ
փոքր դատեր:

Հետզհետէ իրարու յաջորդող այս խաղաղ կեան-
քի յատուկ կարգադրութիւններ բնականաբար ժո-
ղովուրդը կը բերէին այն եզրակացութեան՝ թէ բա-
ւական ժամանակ տեղափոխութիւն չկար: Այդ պատ-
ճառաւ սկսեցին հոգ տանիլ ցանքերուն. ջրել, փը-

ճացումէ պաշտպանել. ձեռնարկեցին քանդուած ջր-
րաղացներու վերաշինութեան. եղան բանջարանոց-
ներ սրատրաստողներ ալ. մէկ խօսքով զիւղական
կեաքը՝ որ այս արտասովոր իրարանցմանց պատճա-
ռաւ կանգ էր առած՝ սկսեց եւ այս անգամ տենդոտ
արագութեամբ:

Կազմուած էր նոյնպէս ձիաւոր դաշտային մի-
լիցիաներու մի խումբ՝ Անդրէաս Տէրտէրեանի ղե-
կավարութեամբ, որու պաշտօնն էր շրջիլ դաշտեր
եւ խստիւ պատժել ու դատարանի յանձնել ամէն
անոնք՝ որոնք կը յանդգնէին ցանքերը փճացնել:
Կազմուեցաւ նոյնպէս միլիցիական խումբ մը՝ Ար-
տաւազդ Թումանեանի ղեկավարութեամբ, ներքին
անդորրութեան եւ կարգապահութեան հսկելու հա-
մար: Միլիցիաներ լինելու էին քառասուն տարեկա-
նը անցուցած մարդիկ, որովհետեւ անկէ վար ե-
ղողներ՝ մինչեւ 18 տարեկան՝ զինուոր էին արգէն:

Զինուորական Մարմին ահա պաշտօնական յայ-
տարարութեամբ մը Մայիս 19ին ժողովրդեան կ'ի-
մացնէր քաղաքային եւ զինուորական օրէնքներու
վերահաստատում, յայտնելով միաժամանակ որ —
ամէն անոնք, որոնք պիտի համարձակին չհնազան-
դիլ օրէնքներուն՝ պիտի ենթարկուին խիստ պա-
տիժներու:

* * *

Դատարաններ սկսած են գործել. ժողովուրդ որ
մինչ այդ իր մէջ եղած բազմաթիւ խնդիրներ լու-
ծելու հնարաւորութիւն չէր ունեցած, ուրախացած
դատարաններու վերակազմութեամբ սկսած է գունդ
առ գունդ դատարաններ դիմել: Որքա՞ն շատ եւ
բազմապիսի են այդ բողոքները, որոնք բոլորն ալ

թշուառութենէն, սրտնեղութեան եւ անիշխանութեան երեսէ յառաջացած են: Ու դաաարանները կը դործեն առաջնորդուելով խղճի եւ ժողովրդական բարբերուն համասլաասխանող օրէնքներով:

Հայեր այժմ կարծես դաղթի մտադրութենէն հրաժարած են. ժողովուրդ աւելի քնացնելու եւ աւելի հանդարտեցնելու համար, անծանօթ անկիւններէն նորէն սրտապնդող լուրեր ծնած՝ կը չքննենք ընդհանրապէս. — Ես-թախտ եւ Ջուլֆայ Հայերու ձեռքն են: Հետեւաբար այդ կը նշանակէր թէ կամաց՝ կամաց Սալմաստը ապահով մի անկիւն կը դառնար:

Խորամանկ Իճլալի-Միւլք հիպոստացուցած Համբարձումեանը՝ կառք նստած պտոյտի ելած է Սալմաստի դիւղեր, չմոռնալով իր աղբիւրներէն տարածել թէ ի նշան Պարսկա-Հայկական հաշտութեան Դավրէժէն բաւական առատ ուղմամթերք ուղարկուած է Ուրմիա:

Մինչ ժողովուրդ այսպէս սրտապնդիչ լուրերով կ'ոգեւորուէր, միւս կողմէ մտքէ չէր հաներ դաղթի հեռապատկերը: Մայիս 21ին Հաւթիւն կը հասնէր Դավրէժի թեմական դպրոցի տնօրէն Պ. Ճերմակ, որ իր յիմար ճառով կուզար ժողովուրդը աններելի անտարբերութեան մէջ ձգելու: Այսպէս ան փրփուր բերանին՝ եկեղեցւոյ բակի գերեզմանաքարերուն վրայ կանգնած կը յայտարարէր. «Աշխարհիս ամենալաւ անկիւնը Սալմաստն է, Կովկասի դրութիւն վատ է սովի պատճառաւ, արդէն Կովկասէն լուր է ստացուած որ դաղթականութիւն չեն ընդունիր իրենց մէջ, Դաշնակցութիւն իր վրայ վերցուցած է ժողովուրդին պահպանութեան հոգսը, եւ եթէ լինի մէկը որ դաղթի

անունը բերան առնէ, պիտի իյնայ արիւնլուայ : Գիտցէ՛ք պարոննե՛ր, որ Դաշնակցութիւն դիֆտա-տուրա է յայտարարած ամէն տեղ, պիտի գնդակա-հարուին թուր այն հակառակորդներ, որոնք ենթարկուիլ չեն ուզեր...» : Ճերմակի նման դատարկ գլխէ մը բղխած այս անտելի սպառնալիքը տեղի տուաւ խուլ գծգոհանքի մը : Այսպիսի ճգնաժամա-յին բողբոջներուն կուսակցական խնդիրներ ոչ մէկու մտքէն կ'անցնէին եւ այդ ուղղութեամբ գործողներն ալ իրենց երախայամտութիւնն էր որ կը ցուցնէին : Ճերմակի ամբարտաւան ճառը այն արդիւնք ունեցաւ որ, խեղճ դաղթականութիւն ստիպուած եղաւ մէկէն տաս բարձրացած գներով տեղացիներէն զնել կենսամթերքներ : Այլեւս ոչ մի սակագին կ'օգնէր այս դրութեան բարելաման : Տեղացիներ տաս բե-րանով կ'օրհնէին ճերմակը ու կ'անիծէին դաղթա-կանները՝ որոնք իրենց հանգստութիւն վրդովելէ վերջ, գաղթելով իրենց նման թափառական ընել կ'ուզէին եւ Սալմաստցիները :

Ժողովուրդը, մանաւանդ Սալմաստի ժողո-վուրդ, խոր թմրութեան մէջ ինկաւ : Այժմ ամէն մարդ տնտեսութիւն մը հաստատելու կ'աշխատի, համարեայ թէ մոռացութեան տրուեցան 10 օր առաջ գոռացող թնդանօթները : Կեանքը խաղաղ է ու ըստ երեւոյթին երջանիկ... :

Մայիս 22ին Խոյէն Պարսիկ սուրհանդակ մը ե-կաւ ուղարկուած թափրիզէն՝ հոն եկած պատգամա-ւորներէն՝ որոնք կ'առաջարկէին Հայ եւ Ասորի ժո-ղովուրդին պատգամաւորներ ուղարկել Օսմ. բա-նակ հաշտութիւն կնքելու համար. այս խորհրդակ-ցութեան հրաւիրուած էր Իճլայի-Միւլք :

Զինուորական մարմին թէև ուզեց հրաւէրին ընդառաջ գնալ, նոյն իսկ տեսակցութեան տեղն ալ որոշեց — Մուղանջուղ անմարդարնակ գիւղը՝ որ երկու բանակներու մէջտեղ կը գտնուէր — սահայն թուրքերու նենդամտութիւնը մտաբերելով ոչ ոք յանձն առաւ մեկնիլ պայմանաւորուած տեղը, ուր ժամանակին եկած էին Տաճկական պատգամաւորներ եւ մարդ չգտնելով վերադարձած էին, շմոռնալով Մայիս 24ին, Մուսթաֆա-Հաֆըզ ստորագրութեամբ Իջլալի-Միւլքին գրած նամակի մը մէջ սպառնալ Հայերուն կոտորածով՝ եթէ անձնատուր չըլլային...

* * *

Առաւօտ է, Մայիսեան զով ու զուարթ առաւօտներէն մին: Արեւածագին Սարմաստի բնակչութիւն դաշտը լեցուած է իր երկրագործական աշխատանքներով զրազուելու, իսկ տեղացի ժողովուրդ ցրուած դաշտեր կը հսկէ ցորեններուն ու աւուոյտներուն վերայ: Վա՛յ այն դաղթականին որ կը համարձակի տեղացիի մը աւուոյտին քովէն անցնիլ, չէ՞ որ Պ. ձերմակ յայտարարեց թէ գաղթ չկայ, ի՞նչ պիտի ուտեն իրենց կենդանիներ ձմեռուան երկար օրերին: Միամի՛տ ժողովուրդ: Կ'այցելեմ հիւանդանոց, հիւանդներ թէյ կը խմեն. բժիշկ թեթև տկարութեան մը պատճառաւ երեք օրէ ի վեր հիւանդանոց չէ այցելած: Վիրաւորներէն երկուքը շա՛տ վատ դրութեան մէջ են. ինչքա՛ն տխուր են անոնք, օր ըստ օրէ հիւանդանոցը նեղ կուգայ իրենց. դրսի եռուզեռն, աղմուկն ու իրարանցում, զինուորներու մարզանքն ու աշխոյժ զօրանցքներ, որոնք դրեթէ ամէն առաւօտ կը լինէին, տեսակ մը տխրութեամբ կը համակէին զիրենք:

Գիտակից համարուած շրջանի մէջ ժողովուրդի մասին կայ երկու կարծիք. ոմանք ձերմակի խօսքեր քամիի տեղ ընդունելով կը պնդէին թէ ժողովուրդը դադթեցնելու է Ուրմիա, իսկ զինուորութիւն պահելու է Սալմաստ. «Եթէ թշնամին ջարդելով Կովկասի զիծ բանալ հնար եղաւ, դժուար չէ Ուրմիայէն ժողովուրդ տեղս փոխադրել, մինչ անյաջողութեան պարագային ի՞նչ յինելու է այս ժողովրդեան դրութիւն, եթէ նա հարկադրուի թողնել իր ունեցած պարէն ու փախչիլ Ուրմիա, ուր հացի պակաս կայ արդէն», կ'ըսէին անոնք:

Մայիս 24 ին Կալասայէն Հաւթիւան եկան Լեւոն Շաղօեան եւ Սամուէլ Մեսրոպեան, որոնք հաւաքեցին կարգ մը գիտակից համարուող երիտասարդներ այս խնդրոյն շուրջ խորհրդակցելու համար: Այդ խորհրդակցական ժողովի մէջ թէ իրենք եւ թէ ներկաներու մեծ մաս ժողովուրդը Ուրմիա փոխադրելու կողմնակից էին: Նահանջի եւ խուճապի փորձառու Վասպուրականցիներ՝ չարագուշակ կը նկատէին այս դրութիւնը, չնայած ձերմակի նման մարդոց ժողովուրդը հանդարտեցնելու համար խօսած բոլոր քննանող յուսադրանքներուն, տաճկական ուժեղ յարձակման մը հաւանականութիւնը կը նշմարէին, եւ կ'ուզէին նախօրօք պատրաստուիլ: Սակայն հակառակ հոսանք՝ որ կը պնդէր թէ «Ժողովուրդ իր տեղէն շարժելը դաւաճանութեան համազօր է», յաղթող հանդիսացաւ, եւ ժողովուրդ մնաց իր տեղ անշարժ: Սակայն շուտով դէպքեր պիտի դային հաստատելու որ ձերմակի նման պարոններ չա՛տ հեռու էին ապագան նկատելու սրատեսութենէն:

ՃԵՐՄԱԿ ԾԱՂԿԻ ՏՕՆԸ

ԵՒ

ՅԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձինուորական մարմին տենդագլին գործունէութեան մէջ է, վերջնականապէս ծրագրած է կուլկասի հետ կապ հաստատել. եւ այդ նպատակին համար անհրաժեշտ էր ուժեղ զինուորական կազմակերպութեամբ մը յարձակիլ թշնամու վրայ, ջարդել եւ ճամբայ բանալ: Որոշուած էր պաշտպանողականէ յարձակողականի անցնիլ, մի անգամ ընդ միշտ ազատուել թշնամի յարձակումներու մղձաւանջէն: Մինչեւ կէս օր դատական գործերով զբաղուելէ յետոյ, զինուորական մարմնի կարգադրութեամբ պարտաւոր էի ընկերանալ Վաղարշակ Ծիրվանեանին եւ Վարդան Մոկացեանին եւ գիւղամէջ տուն տուն սլաքտելով՝ բանակի համար ժողովուրդէն ալիւր, ցորեն կամ դրամ հաւաքելու: Մի անտանելի զբաղում էր այս, ստիպուած էինք շատ անգամ խլել ժողովուրդի բերնէն եւ զինուորին տալ, բայց ախոս որ բանակ կերակրելու ուրիշ հնարաւորութիւն չկար, պիւտձէ չունէին, զօրքն ալ, զօրքի պաշարն ալ այդ ժողովուրդէն պէտք էր առնուել, որու գոյութեան համար պիտի մղուէր այս յարձակումը: Մինչ մէկ կողմէն զինուորներ մարդելու, դասաւորելու եւ պա-

չար պատրաստելու դործը յառաջ կը տարուէր փութկոտ, միւս կողմէն բժիշկներ նորէն Ձին. Մարմնի կարգադրութեամբ եւ Ռժ. Վարդան Յովհաննէսեանի ղեկավարութեամբ, զբաղուած էին հիւանդանոցի խնդիրով: Շատ պարզ էր որ այս յարձակում յաջողած կամ ձախողած պարագային՝ ունենալու էինք մեծ թիւով վիրաւորներ: Ահա այդ վիրաւորներ հարկ եղած կերպով խնամելու համար անհրաժեշտ էր ունենալ պիւտճէ, որու համար Մայիս 25ին նշանակուեցաւ ձերմակ ծաղիկի տօն:

Հաւթիւան՝ ուր կը գտնուէր հիւանդանոց՝ տօնական օրուան երեւոյթ ունէր, եկեղեցւոյ բակ եւ հրապարակներու վրայ կանանչ կամարներ կառուցուած էին ծաղիկներով զարդարուած, ուր ամպհովանիներու տակ, կնքուած տուփեր առջեւին՝ նըստած էին տիկիներ եւ պարոններ, ճերմակ ծաղիկներ բաժնելու: Ամէն ոք, ինքնաբերաբար կամ նստողներու կողմէն կանչուելով, իր կամաւոր նուէր գանձանակի մէջ նետելէ վերջ իր կուրծքը կը զարդարէր այդ ճերմակ ծաղիկներով: Ուրախութիւն եւ ոգեւորութիւն կար չորս կողմ. հիւանդանոցի եւ դեղարանի դռներն ալ կամարազարդուած էին: Որքա՛ն ուրախ էին այդ դժբախտներ՝ այդ ճերմակ ծաղիկներ ունենալնուն տատաճառաւ, որքա՛ն բախտաւոր կ'զգային ինքզինքնին, տեսնելով որ ժողովուրդ մեծ ոգեւորութեամբ կը մասնակցի վիրաւոր զինուորներուն խնամելու համար սարքուած այս ճերմակ ծաղիկի տօնին: Յատուկ յանձնախումբեր կնքուած տուփերով ստըտեցան ամբողջ Սալմաստի Հայկական եւ Ասորական դիւղեր: Երեկոյեան հանդէսը կը վերջանար կատարեալ յաջողութեամբ, գանձանակները լիքն էին, թէեւ 4,000 բուրլիէն աւելի խոշոր գու-

մար մը չէր ենթադրուեր, այնու ամենայնիւ այդ ալ բաւական էր, նկատի ունենալով ժողովուրդին մեծ մասի դադթական լինելու հանգամանքը:

Վասպուրականցիներ՝ որոնք այս յարձակումով աւելի շատ սղեւորուած էին, իրենց սիրայօժար օժանդակութիւնը կը բերէին այս դործին՝ թէ ճերմակ ծաղիկի տօնի առթիւ, թէ պաշար հաւաքելու եւ թէ գինուորներ տրամադրելու ատեն: Այս յարձակման տրամագրած էին 1,000 գինուոր միայն Կալասար—Բայաջուկ շրջանէն եւ նոյնքան ալ Հաւթվանէն եւ իր շրջաններէն, այնպէս որ յարձակման համար ենթադրուած 4,000 գինուորներու կէսէն աւելի Վասպուրականցիներ էին, որոնք չնայած իրենց մղած բազմաթիւ կռիւներուն, իրենց տուած բազմաթիւ զոհերուն, իրենց կրած անսպասելի գրկանքներուն, միշտ առաջաւոր դիրքերու վրայ էին, միշտ օրինակելի գինուոր, միշտ կռուող:

Սրախուսելու եւ գիրենք քաջալերելու համար Վանի Կոմիտարիատ Մայիս 27 ին սկսաւ շա՛տ աննշան քանակութեամբ դրամ բաժնել գինուորներուն՝ որոնք չորս ամիսէ ի վեր իրենց ոռճիկները չէին ըստացած: Այսպէս վաշտապետներուն կը տրուէր 100, հարիւրապետներուն 60, յիսնապետներուն 25, իսկ գինուորներուն 10-ական բուրլի:

Ասորիններն ալ Աղա Պետրոսի հրամանատարութեամբ Ուրմիայէն պիտի ուղարկէին 3,000 գինուոր՝ մեր բանակի թիւը պատկառելի դարձնելով: Հաւանական յաղթութենէն գինովցած՝ գինուորն ու ժողովուրդը անհամբեր վայրկեաններ կ'ապրէին՝ շարժուելու հրամանին սպասելով: Հետախոյզ խումբեր կ'ուղարկուէին շարունակ թշնամիի տեղն ու շարժումները ուսումնասիրելու համար: Մայիս 28 ին

Շաքարեազի շրջան մեկնող Ասորական հետախոյզները կը հանդիպին թշնամի հեծելազորքին, ընդհարումը անխուսափելի կը լինի, կ'սկսի ժամուան մը չափ բուռն հրացանաձգութիւն, որու ընթացքին թշնամին զնդացիրներ օգնութեան հասցնելով՝ կը հարկադրէ մերինները որ ետ քաշուին: Ամէն ինչ կարգին էր. կ'սպասուէր Ազա Պետրոսին՝ որ սակայն կուշանար:

Մայիս 28ը նշանակալից օր մը եղաւ եւ ինձ համար: Եղբայրս այնքան լաւացած էր որ ի վիճակի էր այլեւս առանց ուրիշի օգնութեան իր հազուատների հագնելու եւ վաւազանի մը օժանդակութեամբ քայլելու: Լսելով որ շուտով յարձակում պիտի սկըսէր, եւ հետեւաբար վիրաւորներու համար հիւանդանոց չպիտի բաւէր, խնդրած էի բժիշկէն որ արտօնէ տուն մեկնելու. բժիշկը՝ որ նոյն մտահոգութեամբ տարուած արդէն սկսած էր թեթեւցած վիրաւորներ տուն դրկել եւ աւելի ծանրերու համար տեղ պատրաստել, համամիտ զտնուեցաւ, ու երբ ես հիւանդանոց մտայ, անհուն հաճոյքով տեսայ որ եղբայրս հազուասոսներ հազած վերջի մնաք բարեաւիճեոքի սեղմումներ կը փոխանակէր մնացեալ վիրաւորներու հետ:

Եկեղեցւոյ բակէն դուրս ելանք. բեռնակիր մը անկողիներն առած կը հետեւի մեզ: Ճամբուն վրայ բնակիչներու անվերջ շարք մը մեզ կը շնորհաւորէր այդ անակնկալ ապաքինման համար: Երբ փողոցի դրան առջեւ հասանք՝ տեսանք մայրիկը որ գիրկ մը թարմ լաւաշներով մեզ կը դիմաւորէր: Ճիշտ դժբան շէմքին մէկ կողմը դրաւ հացը, ծոնցաւ համբուրեց դրան շէմքը, եւ իր ուրախութեան արցունքներով շէմքը թրջելէ վերջ, բարձրացաւ համբուրեց

եղբորս զունատ ճակատը, եւ ապա հացը աղքատներուն բաժնելով՝ «Փա՛ռք քեզ Աստուած, փա՛ռք քեզ Աստուած» բացազանչութիւններով ներս եկաւ:

Հայերէն նուազ ոգեւորուած չէին եւ Ռուսեր: Բոլոր սպաներ ջրուած Հայկական եւ Ասորական բանակներու մէջ՝ իրենց եռանդոս եւ օրինակելի ընթացքով կը խրախուսէին բոլորը: Թնդանօթներ արդէն ամբողջութեամբ իրենց ձեռքն էին: Անկարելի է ուրանալ Սալմաստի բոլոր կռիւներուն մէջ Ռուսերու աջակցութեանց խոշոր բաժինը:

Վերջապէս սպասուած բանակը եկաւ Մայիս 29 ին՝ Ուրմիայէն: 50 ձիաւորներով՝ խոշոր դրօշի մը հսարտ ծածանումին տակ հասաւ Ազա Պետրոսը, որ անմիջապէս ուղղուեցաւ Կալասար՝ Զին. Մարմնի հետ յարձակման վերջնական ծրագիրը մշակելու: Ժողովուրդի ոգեւորութեան չափ ու սահման չկար, Ուրմիոյ Ասորական բանակին դալով՝ յաղթութիւնը աներկբայ կը թուէր:

Ծրագիրը կազմուած էր. աջ թեւի ծայրագոյն մասի պատասխանատուութիւն իր վրայ կ'առնէր Ազա Պետրոսը, որ թշնամին այդ թեւէն ճնշելով, կամաց՝ կամաց կռնակի կողմը պիտի անցնէր. իսկ աջ ու ձախ թեւերու դէպի կեդրոն մասը եւ բուն ձախարը կը յանձնուէր Ղեւոն Ծագօեանի եւ Հ. Մելքումեանին, իսկ ծայրագոյն ձախը Ռուս Պոլշէվիկ Կանարադիինին՝ Ասորական զինուորներով: Այսպէս՝ սով աջ ու ձախ թեւերու ծայրագոյն մասեր կը մընային զուտ Ասորիներուն, մի սխալ, որուն Հայեր վերջէն անդրադարձան: Երբ կը հարցնեն Ազա Պետրոսին իր 3000-նոց բանակի մասին. «Սանթախան են, անկէ անցնելու են կռուի տեղ, հոս զալու պէտք կար», կը պատասխանէ ան: Հայեր հաւատարով խա-

րեբայ Ասորիի հաւաստիքներուն՝ շարժեցին իրենց զօրքերը եւ Մայիս 31ի առաւօտ արշալոյսին՝ ժողովրդեան մաղթանքներու մէջ բանակը դէպի ճահատ ուղղուեցաւ :

Կռիւը սկսուած էր : Հրացաններու, զնգացիրներու եւ թնդանօթներու որոտներէն երկինքն ու երկիրը կը դողային . թշնամին մեր սպասածէն աւելի մեծ պատրաստութեամբ դիմաւորեց մեզ . բայց անպայման յաղթելու կամքը այնքան զօրեղ էր զինուորներու մէջ որ, ո՛չ թնդանօթներուն, ո՛չ զնգացիրներուն եւ ոչ հազարաւոր հրացաններու տեղատարափ կարկուտներուն կարեւորութիւն կուտային, եւ եթէ նախապէս պատրաստուած պատերազմական ծրագրերին համաձայնուելու ստիպուած չլինէր զօրքը, կեդրոնական զունդեր (Սուլալի ուղղութեամբ) առաջին խկ յարձակումով թշնամու սիրտը կը պատռէին . բայց ծրագիրը այդ չէր պահանջեր, Աղա Պետրոսի կողմէն լուրի կ'սպասուէր :

Հազիւ թէ ճակատի վրայ թնդանօթները սկսեցին գոռալ, ժողովրդեան ներքին կեանքն ալ սկսեց եռալ : Հիւանդանոցի համար անկողիններ սկսեցին հաւաքել, միւս կողմէն հաց, մածուն, մածնաթան, մսացու կենդանիներ սկսեցին հաւաքել եւ ճակատ ուղարկել . ողբերութիւնը մեծ էր, բոպէ առ բոպէ ճակատէն լուրի կ'սպասուէր :

Երեկոյեան եկան անդրանիկ 4 վիրաւորներ, բարերախտարար չորսն ալ թեթեւ վիրաւորուած : Ժողովրդեան մէջ յամառ կերպով կը խօսուի դիշերային յարձակման մը մասին :

* * *

Յունիս 1ի առաւօտն է, թնդանօթներ վազո՛ւց արդէն սկսած են գործել, ժողովուրդ անորոշ մելա-

մաղձոտութեան մէջ է. երէկի ոգեւորութեան յա-
 ջորգած են յոռետեսութիւն եւ սոսկում. գիշերային
 յարձակումը տեղի չէ ունեցած, որ կը նշանակէր թէ
 թշնամին շափազանց ուժեղ էր: Այս ճնշուած դրու-
 թիւն կատարեալ յուսահատութեան փոխուեցաւ երբ
 հիւանդանոց բերին հարիւրապետ Վանի Ոգն զիւղա-
 ցի Ա.օն՝ զոյգ ստֆէն վիրաւոր, եւ լսուեցաւ թէ
 Պարքլլուի բլրակներու վրայ երէկի կռուին մէջ վի-
 րաւորուած է վաշտապետ Գարեգին Հացագործեան,
 սպաննուած են Պառանկոնոցի Պաշատուր Չարու-
 խիկեան, Արսէն եւ ուրիշներ՝ բոլորն ալ քաջ կըռ-
 ուող Վանեցի երիտասարդներ: Ժողովուրդ սզաւո-
 րի մը արտայայտութիւն առաւ:

Մինչ ճակատը այս գրութեան մէջ էր, Հաւթը-
 վանի մէջ նոր կազմակերպուած զինուորական ատ-
 եան կը դատէր Վանի Արեգ զիւղացիներէն Ղազար
 Պաշիկեան եւ Սեդրակ Վարդանեան, զոյգ մը դա-
 սալիք երիտասարդ զինուորներ, որոնք ժողովուրդի
 այս ճգնաժամային օրերուն վախցած իրենց կեան-
 քէն՝ դիրքերը լքելով Հաւթվան ապաստանելու ոճիրը
 դործած էին: Ուրիշներուն օրինակ լինելու համար
 երկուքն ալ հրացանազարկ եղան զինուորական ատ-
 եանի հրամանաւ: Սոսկումը մեծ էր. ոչ ոք կ'ուզէր
 բերան բանալ, ոչ ոք կ'ուզէր խօսիլ ու պատասխա-
 նել հրացանազարկ եղած երկու զինուորներու ըն-
 տանիքներուն, որոնք եկեղեցւոյ բակ նստած՝ սոս-
 կայի ազմուկով մը կուլային, հազուատնին կը պա-
 տըռաէին, ու գեանի հողը գլխնուն կը լեցնէին:

Համատարած մոռայութենէն ազդուած, տխուր
 ու գլխահակ տուն կը գառնայի եղբօրս քով՝ երբ ան-
 նըկարագրելի ճիշերով ամբողջ զիւղի ժողովուրդը
 թողած ամէն ինչ, միայն երախաներ զրկած սկսե-

ցին վազել դէպի Տելիման տանող ճանասպարհը : «Սմա՛ն եկա՛ն, եկա՛ն» դռնէնով կը վազեն շնչասպառ իրար կօխտտելով, ու տեսնողը, աղմուկ լսողը, առանց մտածելու, բոպէական սարսափէն բոնուած կը հետեւէր անոնց : Ի՞նչ է այս, ի՞նչ եղաւ, կը հարցընեմ փախչողներուն . «Թուրքե՛ր, Թուրքե՛ր ձախ թեւր պատուելով խուժած են, շուտով գիւղը կը մըլտենն, գիւղի վերին ծայրը մտան արդէն» կ'ըսեն ու լալով կը փախչին :

Դողը դրաւեց զիս, ծունկերս կը ծալուէին . եղբորս վիճակը կը յուսահատցնէր զիս, այլայլուած եւ շնչասպառ տուն վազեցի, տեսայ որ եղբայրս աճապարանօք պատրոնկալները կը կապէր, շուտով ես ալ կապեցի պատրոնկալներս ու ձիերը թամբելով փողոց ելանք : Եղբայրս ձիու վրայ նստեցուցի, խելքը կը դառնար սակայն չէր կարող ձի նըստիլ . անդին մայրս ու կինս իրենց յուսահատի արցունքներով ալ աւելի կը շուարեցնեն զիս, քալել չի կրնար, ձի նստիլ չի կրնար . յուսահատութենէս սիրտըս ուռեցաւ, չկարողացայ արցունքներս զսպել, «Հա՛յկ, դուրպան սի՛րտ առ, ուշդ վրադ բեր . թըշնամին գեռ շատ մօտիկ չէ, քիչ մը հեռանանք կը նստինք հանդէսն ու նորէն ձամբանիս կը շարունակենք» : Մինչ ես այսպէս բռնած կը յուսադրէի զինք որ իր հաւասարակշռութիւնը պահէ ու չիցնայ, յանկարծ նկատեցի զինուորներ, որոնք հեղեղի նման փախչող ժողովրդեան մէջ ինկած՝ ծեծելով ետ կը դարձնէին պոռպով՝ «Սուտ է՛, սուտ է՛, ետ դարձէք...» : Սուտ է՛ բառը ականջիս հասնելով խոր շունչ մը քաշեցի : «Օ՛հ, ձեր հէրն անիծած, ես լըմընցայ, առողջութիւնս մի ամսով ալ յետ դնաց...» Ըսաւ եղբայրս իմ օգնութեամբս ձիէն վար իջնելով :

Ձիեր ներս քաշելէ վերջ աճապարեցի եկեղեցւոյ բա-
կը: Աստու՛ած իմ, ի՛նչ սոսկալի էր հիւանդանոցի
դրութիւնը — բոլոր վիրաւորներ յուսահատութե-
նէն կուլային, ահաւրի փախուստի միջոցին մինակ
էին մնացած այս ողորմելիներ, նոյն իսկ հարիւրա-
պետ Աւօյի վէրքեր կապող բժ. Կարսեան, ստքի
վէրքերէն մին կապած եւ միւս դեռ կէս կապուած
երբ կը լսէ աղմուկը՝ թողնելով վիրաւորը այդ դը-
րութեան մէջ կը փախչի: «Ըսել է ուէ՛ փախուստի ա-
տեն մենք հոս մնալու ենք անտէր, ղէնքերնի՛ս, ղէն-
քերնի՛ս, ղէնքերնիս մեղի տուէք, գոնէ վերջին բո-
պէին մենք զմեզ կ'սպաննենք...» կ'ըսեն դառն շեշ-
տով մը: Կըզգամ որ անզօր եմ պատասխանելու ի-
րենց, կըզգամ սր վիրաւորներու յուզմունքը իրա-
ւացի է, ու գլխահակ առանց պատասխանելու զուրս
կ'եննեմ ու կ'ուղղուիմ ղէպի Շտապ, իմանալու այս
առեղծուածի պատճառը: Ահա թէ ո՞ր տեղէն ծա-
ղում առած էին այս աննկարագրելի իրարանցումն ու
փախուստը:

Հրացանագարկ եղած զինուորներու ընտանիքէն
կին մը զիւղէն գուրս կը տեսնէ սպանուածներու դի-
ակներ՝ զորս կը տանին թաղելու. կ'ուղէ ուղեկցիլ,
չեն թողուր, այս պատճառաւ վշտացած՝ սոսկալի
գոռում գոչումով մը, «Ամա՛ն թուրքեր ինչո՞ւ չէք
զար այս անաստուած Հայերը կոտորելու» կանչե-
լով ու մագեր փետտելով զիւզ մտած ժամանակ Ա-
սորի կիներու կը հանդիպի, որոնք այս կինջ «ամա՛ն
թուրքեր» բառերը միայն կը հասկնան եւ կ'ենթադ-
րեն թէ թուրքեր արդէն խուժած են զիւզ, սոսկալի
վայնասուն մը կը բարձրացնեն եւ երախանին շալա-
կած կը փախչին՝ հանդիպողին պատմելով թէ թուր-
քերը եկած են:

Ժողովուրդը որքան որ վերադարձաւ եւ զգաց որ ի դուր խուճապի էր մատնուած, այնու ամենայնիւ յուսալքում մ՞ ունեցաւ, ժպիտը չքացաւ շրթներէն, լաւատեսութիւն չողիացաւ, ու մեծէն մինչեւ փոքր երկու օր առաջ երազած յաղթանակներու փոխարէն, նահանջի, փախուստի հրամանին կ'սպասէին այլեւս :

Երեկոյեան հետզհետէ կը հասնին վատ լուրեր, ժողովրդի նախազգացումներ կէս մը կ'իրականանան գրեթէ : Աղա Պետրոս 3,000 մարդու տեղ 300-ով է եկած եւ դորժ չէ կարող տեսնել : «Այս օրուան կոիւներու մէջ ունեցած ենք 25 է աւելի սպանուած : Թըշնամին իր ունեցած ահուելի ուժէն զատ օգնութիւն ալ կ'ստանար : Աղրակի դժով մօտաւորապէս 4-500 Թրքական զօրքերու յառաջացումը նշմարուած է» :

Վայրենի եւ անկարգապահ Ասորիներու գիմաղըրական ոյժին անվստահ՝ պահեստի զինուորներէն հարիւրեակ մը ուղարկուեցաւ ձախ թեւ՝ Ասորիներուն օգնութեան. պէտք էր խիստ զգոյշ լինել, լուրերն ու ղէպքերը ահաւոր էին, ու նշանները խիստ չարազուշակ . . . :



ՆԱՀԱՆՁ ԴԷՊԻ ՈՒՐՄԻԱ

Յունիսի 2ն է, կոիւը կը շարունակուի նոյն կատաղութեամբ. ձախ թեւ՝ Քէօհնէ-Շէհէրի ուղղութեամբ, Հայ-Ասորական ձիաւորներու խումբ մը կը յաջողի գերի բռնել Աղբակի գծով թշնամիին եկած պարէնաւորման կարաւանէն մաս մը — 20 կենդանիներ, մեծ մասամբ կաթնտու կովեր, հացով եւ այլ ուտելիքներով բեռնաւորուած, կը վերցնեն նոյնպէս 1,800 ֆիւշիւք չափի հրացանի պատրոն եւ 9 թուրք զինուոր իրենց զէնքերով: Սա թէեւ շատ փոքրիկ յաջողութիւն մըն էր, այնու ամենայնիւ քիչ մը մխիթարական էր, ու երէկի յուսահատ ժողովրդեան մը-թաղնած սրտերու մէջ, կարծես մխիթարանքի ազօտ ճառագայթ մը ծագեցաւ: Բայց նոյն իսկ այս կարգի աննշան յաջողութիւններ, որոնք կայծակի արագութեամբ կը տարածուէին ընկած տրամադրութիւններ բարձրացնելու համար, չէին ազդեր որոշ չրջանակներու մէջ, ուր կատարեալ յուսահատութեան հետ միաժամանակ յանկերգի մը նման կը կրկնուէր սա խօսքերը. «Յարձակման առաջին եւ շատ շատ երկրորդ օր, երբ կարելի չըլլայ նշանակալից արդիւնք մը ձեռք բերել, այլեւս կոիւը կորսուած է, որովհետեւ անտարակոյս թշնամիին օգնական ոյժեր ստանալով պիտի զօրանայ եւ այն ատեն մենք ստիպուած պիտի լինինք պաշտպանողականի անցնիլ՝ ինչ որ ալ երկար տեւել չէ կարող»:

Մէկ կողմէն կռիւը նոյն կատաղութեամբ կը շարունակուի, դիւզերու մէջն ալ պարէնաւորման գործը կանոնաւոր կերպով յառաջ կը տարուի, ամէն առաւօտ ժողովուրդէն կը դրաւուին մտացու կենդանիներ եւ մասնաւոր յանձնախումբի մը կողմէ գնահատուելի վերջ, ստացադիր մը կը տրուէր կենդանիի տիրոջ վերջը արժէք վճարելու համար, իսկ կենդանին՝ հացի, մածունի եւ մածնաթանի հետ կ'ողորկէին դիրքեր՝ զինուորներուն: Գիւզերու մէջ կարգ ու կանոն իր տեղն էր, ժողովուրդի ամբողջ ուշադրութիւն կռուի վրայ սեւեռուած լինելուն՝ վէճեր, կռիւներ, դատեր վերջ դրած էին, միայն եկեղեցիներն էին որ, սովորականէն աւելի հոծ բազմութեամբ մը լեցուած կ'ըլլային:

Յունիս Յի արշալոյսն է. սովորականի նման դիրքեր ուտելիք ուղարկուած էր. կռիւը կը շարունակուի, սակայն ոչ նախկին թափով, ժողովուրդը բերանարաց լուրի կ'սպասէ, որ սակայն չկա՛յ. . . : Եզրայրս սկսած է արդէն անհամբեր դառնալ. «Այ այս կռիւէն յոյս չունիմ, անպայման պիտի նահանջենք, բայց վախնամ թէ նահանջը խուճապային լինի»: Ու ստիպեց զիս որ ձին թամբեմ՝ որպէս զի քիչ մը վարժութիւն ընէ ձիու վրայ: Եզրօրս յոռետեսութեամբ ես ալ համակուած էի, բայց իրեն չէի արտայայտուիր, ընդհակառակը կը յուսադրէի զինք: Կէս ժամուան ձիով պտոյտէ մ'ետք վերադարձանք, եզրայրս պառկեցաւ հանդստանալու, իսկ ես դիմեցի ժամի բակ լուրեր ստանալու համար:

Հոն գտնուողները բոլորն ալ սարսափով կը խօսէին ձախ թելի Ասորիներու պարտութեան մասին, որոնք Այանս դիւզի շրջաններ յարձակման դիմած

ժամանակ կ'ենթարկուին թշնամիի ուժեղ հակա-
յարձակման եւ պարտուած եա կը վերադառնան՝ եր-
կու փոքր զնդացիրներ ձգելով թշնամիի ձեռք: Ե-
րկուան յաղթութիւնը այսօրուան պարտութեան
առջեւ կը նսեմանար: Նահանջի ուրուականը հեարզ-
հետէ կը ծանրանար, Աղա Պետրոսի անշարժութիւն
եւ այն 3,000ի փոխարէն 300ով կուռի գալը արդէն
բաւական էին պարզելու որ դործերնիս լաւ վերջա-
ւորութիւն մը ունենալու չէր:

Եղած պարտութեան ազդեցութիւն չէզոքացնե-
լու եւ տրամադրութիւններ բարձրացնելու համար,
լուր մը տարածեցին թէ՛ Անդլիական բանակ Սուլ-
տաղ — Ուրմիայէն երկու օրուան ճանապարհ ան-
դին — հասած է: Բայց նման չինձու լուրեր արդէն
վաղո՛ւց կորսնցուցած էին իրենց նշանակութիւն,
ու յուսահատ ժողովուրդ հեղնանքի ժպտով մը մի-
այն ընդունեց այս լուրն ալ:

Գիշերները կ'անցնին արհաւիրալից, համարեայ
թէ ժողովուրդ չի քնանար. դիրքերէն յուսադրիչ
լուրերու կըսպասուի:

Յունիս Տի առաւօտը ահաւոր առաւօտ մը եղաւ
Սալմաստի բնակչութեան համար. նա իր սոսկումի
վայրկեաններով եկաւ իր տեղը բռնելու մեր տարա-
բախտ պատմութեան մէջ, ուր այնքան լեցուն են նը-
մանօրինակ զուլումի վայրկեաններ: Արեւածագէն
չատ առաջ թշնամին արդէն դործի վրայ էր: Չորս
թնդանօթ կը դործէր ձախ թեւ Քէօհնէ-Շէհէրի չըր-
ջան, չորս թնդանօթ կեդրոն՝ Սուլաւի չըջան, իսկ 12
թնդանօթ աջ թեւ, որոնցմէ 4ը աջ թեւի ծայրագոյն
մաս ծովեզերք Աղա Պետրոսի վրայ, իսկ 8ը Պար-
քըչլուի բլուրներու դիրքերուն վրայ, ուր համարեայ
թէ ամբողջապէս Վասպուրականցիներ կը գըտ-

նուէին: Կոիւր զարհուրելի էր այս տեղ, 8 թնդանօթ միասին եւ միաժամանակ ու միեւնոյն տեղ ունեւրեր կ'արձակէին մահ ու աւեր սիրուելով իրենց շուրջ: Երկու ժամուան մէջ 40է աւելի զոհեր տուին մերինները, որոնց մէջ աչքառու են էին վաշտապետ Մոկացի Համբարձում, յիսնապետ Վանեցի Վարդան Գօնտազճեան, (քէօմիւր) Վանի ապրիլեան կոիւններու նշանաւոր ոմբաճիգներէն. մահացու կերպով վիրաւորուած էր յիսնապետ Վանեցի Արտաշէս Կարապետեան (*), ահուելի թնդանօթաճողութեանց որոսներ, տուած բազմաթիւ զոհեր, այնքան վատ տպաւորութիւն մ'են թողած ժողովրդեան վրայ, որ ամբողջ Սալմաստի Հայ եւ Ասորի բնակչութիւն կատարեալ սուգի մէջ է. միայն զինուորներն են որ թէեւ յուսահատ, բայց աննկուն կամքով մը կը շարունակեն կուրծք տալ թշնամոյն:

Մինչ վիրաւոր վաշտապետ Գարեգին Հացադործեանին տեղը անցած էր իր հարիւրապետներէն Արամ Գրիգորեան, եւ նահատակուած Մոկացի Համբարձումին տեղն ալ Սպարկերտցի (*) Սամուէլ, կոիւր յառաջ մղելով սրանց շփոթուելու, անդին աջ թեւի ծայրագոյն մասի հրամանատար եւ պատահելիք դժբախտութեանց միակ եւ ակնյայտնի պատասխանատուն Աղա Պետրոս, սրանց նոյն իսկ կանխաւ լուր ուղարկելու միւս բանակներուն կը թողու

(*) Արտաշէս Կարապետեան փոխադրուեցաւ Ուրմիա ուր եւ մեռաւ:

(*) Սպարտակերտ Պիթիսի կուսակալութեան պատկանող գաւառ մըն է, վասպուրականի սահմանակից:

դիրքերը եւ կը քաշուի Խանթախտ, անկէ միայն լուր ուղարկելով թէ. «Ես արդէն նահանջած եմ»: Դրութիւնը վտանգաւոր էր. թշնամին նկատելով օր ցերեկսով նահանջող Ասորիները, քայլ առ քայլ կը յառաջանար սպառնալով մեր թիկունքին:

Մինչ աջ թեւը այս դրութեան մէջն էր, ձախը նոյնպէս մխիթարական երեւոյթ մը չէր ներկայացներ. հոս եւս թնդանօթային կոուրի անվարժ Ասորիներ, թնդանօթներու ումբերուն պայթումներէն սարսափահար կը ձգեն առաջաւոր դիրքերնին ու կը քաշուին: Փոքրիկ յապաղում մը եւս, եւ ահա թըշնամին երկու թեւերու ծայրագոյն կողմերէն սեղմելով պաշարման պիտի ենթարկէր ամբողջ Մալմաստը:

Մայրամուտ էր. սրպէս զի թշնամին չնկատէր ժողովուրդի նահանջը եւ իր յարձակումը չուժեղացնէր՝ զինուորներ ի դին ամէն զոհողութեան կը դիմադրէին: Բայց այլեւս անկարելի էր ուրիշ ճամբայ գտնել. ու մայր մտնող արեգական վերջին ճառագայթներու հետ, մայր կը մտնէր եւ դժբախտ ժողովրդեան արդէն խաւարած բխտը...: «Նախանջ դէպի Ուրմիա»: Ահա Զին. Մարմնի յայտարարութիւնը, ու սկսեց խուճապը...:

Այն ողբն ու կոծ, այն իրարանցում, այն աճապարանքն ու նզովքը, այն գոռում գոչումը որ յաջորդեցին այս յայտարարութեան այնքան սոսկայի էին, որ նկարագրութենէ վեր է. այդ բոպէներու դարհուրանքն միայն ականատես մը կրնայ զգալ:

Եկեղեցւոյ բակն էի յայտարարութեան ժամանակ, մինչեւ տուն դժուարութեամբ հասայ ժողովրդեան այն խոնումին մէջէն: Տունեցիք շուարքի մէջ են, ուրիշներու շարժուիլը տեսնելով շփոթուած

են. եղբայրս դարձեալ անցեալ անդամուայ նման
 դողդոջուն ձեռքերով, ծանր փամփշտակալներ իր
 վիրաւոր մէջքին կապելու գործով է զբաղուած :
 Անմիջապէս կը թամբեմ ձիերը ու դռնէն դուրս կ'ել-
 նենք : Ժամուան մը չափ արիւն քրտինք մտած հա-
 դիւ մի կերպ կը յաջողիմ ամէն մէկ իր ձիու վրայ
 նստեցնել : Քիչ վերջ կը խառնուինք փախչող ժո-
 դովրդեան, առանց գիտնալու թէ ո՞ւր կ'երթանք,
 ժողովուրդի բռնած ճանապարհը կը տանի՞ր դէպի
 Ուրմիա թէ ոչ :

Կամաց՝ կամաց խաւարը թանձրացաւ. թնդա-
 նօթներու եւ հրացաններու ձայները լռեցին, խաւա-
 րը մեզ թշնամիէն անտեսանելի դարձուց, ու մենք
 կը քայլենք շնչասպառ :

Ճանապարհը կ'անցնէր Տրիշկ գիւղէն, որու
 կեդրոնէն անցնող առուտկի ջուրը ճամբաներ լեց-
 ուած՝ տեսակ մը ճահիճ ձեւացուցած էր, ուր խըր-
 ուած կը մնային չարք մը սայլեր ու կառքեր, ար-
 գիլելով ժողովրդեան գնացքը : Ի՞նչ հայհոյանքներ,
 ի՞նչ նղովքներ ասես չեն տեղար սայլերու տէրե-
 րու գլխին : Վերջապէս ոմանք յաջողեցան սայլերնին
 աղատել, իսկ ոմանք յուսահատ թողին տեղն ու տեղ
 ու յատաջացան :

Գիշեր է. խաւար ու դարհուրելի գիշեր : Սալ-
 մատի ամբողջ բնակչութիւն՝ իւրաքանչիւրն իր
 գիւղէն սկսեալ երկար կարաւանով մը փոռած է
 դէպի Պանթախտ առաջնորդող ճանապարհի վրայ :
 Հոս այս լեռներու մէջէն երկարող ընդարձակ ճա-
 նապարհը միացման տեղն է այն բազմաթիւ կարա-
 ւաններուն : Ո՞ւր կ'երթան ասոնք. ո՞ւր կը փախչին,
 դէպի մահ թէ՞ դէպի ազատութիւն, անորոշ է դա,
 ու իրենց անստոյգ ապագայով մտահոգուած կը քա-

լեն անոնք խաւարի մէջ խարխափելով: Բոլորն ալ հաստատ զիտեն թէ ինչքան շատ ամփոփուին, պաշարման օգտակը այնքան կը սեղմուի, բոլորն ալ զիտէին որ կատարուեցաւ մի զարհուրելի աղէտ որու վախճանը նոյնքան դառն էր որքան ներկայի բոսփնէր. ու կը քալեն անվերջ...:

Մենք ալ ոչ նուազ յուսահատ խառնուած ամբողին կը քալենք, սիրտ չունենալով իրարու հետ իսկ խօսելու: Խանթախտ հասեր ենք արդէն, խաւարի մէջէն կը նկատուին ամայացած խրճիթներ: Սոսկալի ծարաւ ենք, դէս ու դէն կ'իյնամ ջուր փնտռելու: Երկար թափառումներէ ետք ձեռնունայն ետ կը դառնամ չկրնալով պուտ մը ջուր գտնել վիրաւոր եղբորս եւ ծարաւէն տառապող տնեցիներուն համար:

— Քալե'նք ալ, կ'ըսէ եղբայրս սրտնեղած: Ու ճամբայ կ'ելլենք նորէն:

Հսկայ կարաւանը յառաջ կը շարժո՛ւի...: Յոգնած են բոլորն ալ. հանգստանալ կ'ուզեն, ծարաւ են. բայց ոչ ջուր կայ եւ ոչ ալ հանգստանալու սիրտ. բոլորի ականջներու մէջ տակաւին կը գոռան թնդանօթներ: Փախչիլ ինչքան որ հնարաւոր է, եւ մեռնիլ եթէ փախչիլ այլեւս անկարելի դառնայ:

Յունիս ճի արշալոյսն է. առաւօտեան մեղմանոյց հովիկով զովացած, յոգնած կարաւանը կ'իջնէ կուլթչի ծառազարդ, գեղեցիկ բայց անմարդարնակ զիւրը: Ջո՛ւր, ջո՛ւր կը մրմնջեն յանկարծ չորս դիէն: Ու հակառակ յոգնածութեան, քրտինքին ու շնչասպառութեան՝ առուակի ափին կը փոռուին ու դլուխները ջրին մէջ երկարած կը խմեն անյագուրդ: Մենք ալ յոգնած ենք. իսկ եղբա՞րս՝ արձանացած է կարծես ձիուն վրայ, շարժուելու ոյժ չու-

նի իր մէջ: Վար կ'իջնենք. խեղճ ձիեր, այնքան յոգնած են ու անօթի...: Հազիւ թէ կէս ժամ հան-
 պըստացած էինք, երբ եղբայրս որ նստելուն պէս
 քնացած էր՝ սարսափահար ցատկեց տեղէն եւ առանց
 ուրիշ խօսքի:

— Ծուռ ձիեր բերէք, ճամբանիս շարունա-
 կենք. ըսաւ վճռական շեշտով մը:

Իր այս բռնորը այնքան հրամայողական էին
 որ, սկամայից շարժուեցայ, ձիերը մօտ բերի, եւ
 սկսեցինք քալել: Երազի՞, դրզուուած երեւակայու-
 թեա՞ն, թէ չարագուշակ կանխազգացութեան վե-
 րազրել եզրօրս այս տարօրինակ վարմունքը չգի-
 տեմ. միայն պարզ էր որ նստիլ վտանգաւոր կը հա-
 մարէր եւ չնայած իր վիրաւոր վիճակին, իր յոգնած
 դրութեան, փախչելու՝ թշնամիէն քայլ մը աւելի
 հեռանալու մտքով կը տանջուէր:

Կէս ժամ վերջ արդէն բաց դաշտի վրայ ենք.
 ձախ կողմերնիս կ'երեւի Ուրմիոյ կապուտակ լիճը.
 գլխացնիս կը տարածուին Ուրմիոյ բարբեր դաշ-
 տեր՝ իրենց կանաչադարզ գիւղերով: Ճանապարհ-
 նիս ուզիլ է ու փոշոտ, հետզհետէ այրող արևը ու-
 թանձր փոշին ողորմելի դրութեան մը մատնած են
 կտրուանը, որու մէկ ծայրը Ուրմիա հասած է, եւ
 միւս ծայրը դեռ Կութչիի լեռներէն աւելի անդին կը
 տարածուի: Արեղական մայր մտնող ճառագայթնե-
 րու հետ մենք ալ Սահաթլու գիւղը կը մտնենք:

Երեկոյ է. Հայերէ ու Ասորիներէ կազմուած
 խառնիճազանճ բազմութիւն մը լեցուած է Սահաթ-
 լու գիւղն ու իր շրջակայ ընդարձակ այգիներ: Մա-
 սերու ճիւղեր, փայտի կտորտանքներ, չար խուր-
 ներ, կէս ժամ վերջ կատարեալ հոգատարութեամբ
 մը հուռաքուած ու անհամար խարոյկներու էին վե-

բածուած : Հոս վիրաւոր մը պառկած ծանր կը աը-
 քայ իր շուրջ հաւաքուած սիրելիներու արցունքին
 տակ... հոն հիւանդ մը կը մաքառի մահուան դէմ...
 հոն խեղճ կին մը ծառերուն ետեւ կծկուած, վի-
 րաւոր օձի մը նման կը դալարուի ու կը տառապի
 երկունքով... պարսպ անկիւն մը անզամ չունե-
 նալով որ կարողանայ դոնէ ազատ տառապիլ, ազատ
 լոյս աշխարհ բերել ուրիշ էակ մը՝ այս սեւ տա-
 ռապանքի ճանապարհին տանջուելու ու տանջելու
 համար. քիչ յետոյ խաղողի որթի տակէն լսելի
 կ'ըլլայ նորածին դժբախտի «Եկա՛, եկա՛», լալա-
 դին ձայնը : Կուլայ ան, ու լալով կը յայտնէ իր
 գալուստը... :

Ահա պատի մը տակ այր ու կին մը, որոնք ե-
 ղունդներով կը ճանկոտեն արեւահար կարծրացած
 հողը, ու իրենց արցունքներով կը թրջեն այն սինդ-
 դետինը՝ անոր կրծքին մէջ հանգչեցնելու տարա-
 բախտ մանկիկ մը՝ առանց խունկի ու մոմի, առանց
 քահանայի մաղթանքին, հաղիւ թիղ մը հող ունե-
 նալով իր վրայ : Ու լուսնկան, Հայ տառապանքի
 այդ անխօս վկան՝ լուռ ու մունջ, անթարթ ու խու-
 զարկու աչքերով կը նայի չորս կողմը, կը դիտէ
 անցուղարձը, կը լսէ բոլոր հեծեծանքներն. կը լսէ
 եւ կը լռէ... :

Թուլացած քայլերով, յոգնած ու ջարդուած կը
 թափառինք բազմութեան մէջ՝ աշխատելով ապաս-
 տանարան մը դտնել զիշերուան համար : Եղբորս դրու
 թիւն արդէն վատ էր, դուրսը զիշերելով հարկաւ
 աւելի սխտի ծանրանար : Ու փողոցէ փողոց, այ-
 դիէ այդի թափառելէ ետք ընդարձակ խաղողի
 այգիի մը ճիւղ մէջ տեղ բարձրացող մենաւոր եւ
 թափուր խրճիթի մը առջեւ կանգ առինք : Այդեպա-

նի խրճիթն էր այն, դեռ ոչ ոք եկած էր հոն հան-
 դըստանալու: Նեղլիկ, ցած պատերով մի խրճիթ
 էր այն ուր հազիւ երկու հոգի կարող էին պառկել:
 մեր մտահոգութիւնը արդէն մէկի մասին էր, միւս-
 ներ դուրսն ալ կարող էին պառկել: Ձիերու վրա-
 յէն վերցնելով վերմակները խրճիթ կը տանինք,
 ու եզրայրս առանց նոյն իսկ պատրոնկախներն քա-
 կելու կը պառկի: Անհրաժեշտ էր սակայն եզրօրս
 քիչ մը սնունդ ճարել. ու թէ՛յնիկը առած կ'իյնամ
 ժողովրդեան մէջ. ի զուր ժամ մը թափառեցայ, ոչ
 ոք ուզեց լսել խնդիրքս, ոչ ոք ուզեց պուտ մը կաթ
 տալ. բոլորն ալ յողնած են, բոլորն ալ անօթի են,
 բոլորն ալ սնունդի պէտք ունին: Յուսահատ ու ձեռ-
 նունայն ետ վերադարձայ: Այս անգամ մայրս ոտ-
 քի ելաւ: Քառորդ ժամ վերջ ահա կը վերադառ-
 նար ան թէ՛յնիկը լեցուն կաթով, ուրախութեան ար-
 տաստէքը աչքին: Իմ աղաչանքէս ու դրամական
 խոստումներէս հազարապատիկ ազդեցիկ էր եղած
 տառապած մօր մը վիրաւոր զաւկին համար ար-
 ցունքոտ աչքերով «պուտ մը կաթ» կարճ խօսքը:
 ամանը կաթով լեցուցած էին եւ վճարումը մերժած՝
 «վիրաւորէն դրամ առնել մեղք է» բացատրութիւ-
 նով: Մայրիկս ու իր հարսն եւս մի կերպ կձկուե-
 ցան խրճիթի մէջ ու յողնածութենէն յաղթահար
 անմիջապէս քնացան. իսկ ես հրացան ձեռիս խըր-
 ճիթի դրան կանգնած կը հսկէի ձիերուն ու քնա-
 ցողներուն վրայ:

* * *

Կէս դիշեր էր. ե՞րբ եւ ի՞նչպէս չզիտեմ աչքերս
 դոցուած էին չկարողանալով դիմադրել յողնածու-
 թեան, եւ երկու օրէ ի վեր անքնութեան ճնշումնե-

րուն: Ու ես հրացանը կրծքիս, ձիերու մօտ խաղողի որթի մը տակ, կոնակս թումբին տուած կը քրնանայի: Յանկարծ մեղմ բայց խիստ տխուր «Տէր ողորմեա՛» յի լացի ելեէջները ականջիս հասան, սարսուռ մը անցաւ մարմնովս, անմիջապէս վեր ցատկեցի, շիեցի աչքերս եւ ուղղուեցայ ձայնի եկած կողմը: Խաղողի թումբերու առուին մէջ, երեսը դէպի աղօթարան ծունկի եկած՝ ձեռքերը իրար կցած մի կին էր այն, որ կուլար ու կ'աղօթէր...: Լուսնի լոյսի տակ, համատարած տառապանքի մէջ աղօթող այդ կինը մա՛յրս էր...: Չուզեցի խանդարել զինք. արցունքի կաթիլներ սկսեցին ակօսել դէմքս ի վարկուլայի ես. բայց ի՞նչու չգիտեմ, լացի որովհետեւ լալու ցանկութիւն ունեցայ...: Յուզմունքս անցաւ, արցունքներս ցամքեցան, աաոր յաջորդեց ծանր ու ճնշող տխրութիւն մը. մեքենարար հանեցի ծխատուփս եւ սկսեցի ծխել: Մինչ այդ մայրիկս ալ իր աղօթքը վերջացուցած, ոտքի ելաւ, ու ծխելու տեսնելով մօտեցաւ ինձ, ու դորովոտ ձայնով մը.

— Գնի՛ր տղա՛ս, ես արթուն եմ, եթէ կ'ուզես քնի՛ր:

— Չէ մամս, ես արդէն բաւական շատ քնեցի, իմ ալ քունս չի տանիր. լաւ կը լինի որ դուն փորձես քնել: Մինչ մենք մայր ու որդի անուշ՝ անուշ կը խօսակցէինք, ժխորը բարձրացաւ. ժողովուրդը ոտքի կ'ելլէր յառաջ շարժուելու...: Ետ մնալ չէր կարելի, արթնցուցինք միւսներ, ու ձիեր պատրաստելով միացանք կարաւանին:

* * *

«Թշնամին արդէն Կուրջի հասած եւ ետ մնացած ժողովուրդը գերի տարած է...», ահա առաջին լու-

ըր որ Յունիս 7ի արեգական ճառագայթներուն հետ կը տարածուէր ժողովրդեան մէջ նորէն խուճապ մը յառաջ բերելով: Կը վազեն բոլորը անօգնական, թըշնամու ձեռք ձգելով բաւական մեծ թիւով գերիներ, որոնց պահպանութեան համար զինուոր մը իսկ չէր մնացած: Ահա՛ գետը, որ իր օձապտոյտ զալարումներով կը թաւալի առջեւնիս, ու կը խափանէ ժողովուրդի ճամբան. կամուրջին վրայէն կ'անցնին իրար կոխտուելով: Հազիւ թէ մենք ալ մօտեցած էինք կամուրջին՝ երբ Ռուս զինուորներ սուրերնին մերկացուցած կտրեցին անցքը. ստիպուած եղանք ըսպասել մինչեւ որ վիթխարի Ռուսիոյ այս բեկորը իր կառքերովն ու ձիերովը անցնելէ ետք ճամբայ տայ մեզ:

Կէսօր է. ահա՛ ուրեմն մեր ազատութեան հանգըրուանը, ուր կը յուսանք քիչ մը շունչ առնել. բայց ո՛հ, Աստուած իմ, ի՞նչ պատուհաս է այս, հալածող թշնամիի ուսմբերու պայթումները տակաւին կը բզզան ականջներուս մէջ. կը փախչինք այդ գզուելի որոտներէն, եւ ահա՛ դէմերնիս ազատութեան հանգրուանէն կը լսուին նոյն ձայներ... ուրեմն թշնամին հոն ալ է, ուրեմն հոն ալ չենք կարող հանգստանալ: Թշնամին նեղ օղակով մը կը սեղմէր մեզ չորս կողմէն: Սալմաստի մէջ իմ նեղ օրերուս օգնութեան հասնող բողոքական քարոզիչ Պ. Կազազեանը նորէն օգնութեան հասաւ ինձ, ու իր բնական տան բակը առաջնորդեց, ուր իջանք հանգստանալու: Հոս արդէն տեղեկացանք թէ Ռեմբան երկաթ ատենէ ի վեր է որ շարունակ կուռի մէջ է Արեւելքէն ու Հարաւէն իր վրայ յարձակող թշնամիներուն հետ: Սակայն մեր բանակ այնքան զոհերէ եւ կոխներէ ետք համարեայ թէ կազմալուծուած, լքուած եւ իր

պատերազմական ընդունակութիւն կորսնցուցած մի
զանգուածի էր վերածուած . այդ զիտէին բոլորն ալ,
այնու ամենայնիւ ուրիշ ելք չկար եթէ ոչ դարձեալ
զէնքի դիմել, բանակը կազմակերպել ու աշխատիլ
եւ այս անգամ փորձել միանալ անգլիական բանա-
կին, որ Միանէ կը գտնուէր — մի տարածութիւն
ուրկէ անցնելու համար պէտք էր թէ թշնամու ճա-
կատներ ճեղքել եւ թէ ճանապարհին բազմաթիւ
Քիւրտերու եւ Կարափափախներու հետ կռուիլ: Մինչ
այս մինչ այն արդէն երեկոյ եղաւ ու մենք պառկե-
ցանք քնելու՝ բախտին ու պատահականութեանց
յանձնելով ինքզինքնիս:

Երեք օրէ ի վեր համարեայ բան մը կերած
չենք . կը մեկնիմ քաղաք քիչ մը ուտելիք գնելու նը-
պատահաւ: Թնդանօթները կը շարունակեն իրենց
որոտը սովորականի նման . ականջնիս վարժուեր է
այլեւս այդ ձայնին, մանաւանդ . որ այժմ կեանքէ
ձանձրացած՝ մահուան մտտին այնքան ալ չենք մը-
տածեր:

Քաղաք կը մտնեմ . ողորմելի տեսարան մը կը
պարզուի առջիս . շուկան ամբողջապէս փակ է, Պար-
սիկներ համարեայ թէ չեն երեւիր, գաղթականնե-
րու հոժ րազմութիւնն է որ քաղաքին կենդանութեան
նշոյլ կուտայ . հատ՝ հատ հազիւ կը տեսնուին քուր-
ջերով փաթթուած կլոր՝ սեւ գլխարկներով Պար-
սիկներ, ամբողջապէս կեղտի մէջ կորսուած, դար-
չահոտ ու զրուելի: Քաղաքը անտարբեր է, յուսա-
հատ ու սգաւոր: Ասորական տիրապետութիւն ըստ-
բուկի կնիք մը ձգած է այս երբեմնի շէն ու բազմա-
մարդ քաղաքին վրայ:

Ուրմեցի Հայ մը քանի մը ծուռ ու մուռ փողոց-
ներէ անցնելով՝ առաջնորդեց զիս մեծ դրան մը ա-

ուաջ՝ զոր հրելով բացաւ: Հագիւ մէկ քայլ լայնութիւն ունեցող երկար ու նեղ փողոց մըն էր այն, որու երկու պատերուն վրայ շարուած էին փոքրիկ՝ փոքրիկ տուներ, այնքա՛ն ողորմելի՝ որքան իրենց ներսի բնակիչները: Փողոցի ձախակողմեան պատի աակ ծալլապատիկ նստած են Պարսիկներ, իրենց շարժական խանութներու առաջ: Ասոնցմէ մին մորթուած դոմէշի մը առջեւ կանգնած՝ որ համարեայ թէ փողոցի անցքը փակած է, դանակով մը կը խաղայ մսին հետ, Պարսկերէնով գովելով անոր համն ու իւղերը: Ուրիշ մը ամանով մը մածուն շերեփով կը խառնէ ու կը կանչէ. միւսը խոշոր կաւէ աման մը մածնաթան առջեւը դրած՝ կտոր՝ մը սառոյց մէջ, մատներով կը դարձնէ սառոյցը՝ բարձր ձայնով գովեստ հիւսելով: Ահա եւ ճաշարանը. քոսոա Պարսիկ մը կրակարան մը առջին, թոքի եւ փայծախի կտորներ կը խորովէ ժանդոտ երկաթի մը վրայ շարած: Աստուած իմ, ի՛նչ ողորմելի վիճակ է այս. ի՞նչ զնելու եմ ես: Կը մօտենամ կնոջ մը՝ որ սեւ շարշափով մը ծածկուած է՝ միայն զոյգ աչքեր դուրս ձգելով, ամանի մը մէջ լեցուցած ուր կը վաճառէ:

—Հաւթան (Ռուսական կէս Փունտ) քանի՞ է, կը հարցնեմ:

Կինը հարցումիս պատասխանելու փոխարէն, ուրախութեամբ կ'սկսի իր գովասանական ճառը, թանձր ու քաղցրահամ ուրբին մասին. եւ ապա օրերով ջուր չտեսած աղտոտ մատը ուրբին մէջ խոթելով ինձ երկարեց առաջարկելով լզել համը նայելու համար... Բո՛ւ, զգուելի աշխարհ, ըսի ինքնիրենս ու յառաջացայ: Այսպէս յուսահատ ու ձեռնունայն ետ կը դառնայի, երբ Վանեցի ծանօթներէս

մին թաշկինակ մը պանիր ձեռքը՝ մօտեցաւ ըսելով.
«Պանիր չե՞ս ուզեր, շուտ հասի՛ր քանի չէ հատած»:
Ուրախացած որ վերջապէս պանիր դտնելու եմ, լը-
րարերի առաջնորդութեամբ կը վազեմ պանիրի
ծախուած տեղը: Լուերու ու ճանճերու աղտեղու-
թենէն սեւացած տոպրակ մը կը բանայ վաճառող
Պարսիկը՝ յաճախորդ մը դտնելու ուրախութեամբ:
Ճարահասա կը զնեմ ու դուրս կը փութամ զգուան-
քով:

Հացի կարօտը մեծ է. Սալամստի խուճապը այն-
քան ահաւոր եղաւ որ, շա՛տ քիչեր հնարաւորութիւն
ունեցան մի քանի օրուայ ուտելիք վերցնել հետեր-
նին. մնացեալ ամբողջ ժողովուրդը դրամը ձեռքին՝
ի դուր փողոցներն է ինկած հաց ճարելու համար.
Պարսիկներ իրենց վախէն դուռերնին անդամ չեն ու-
զեր բանալ:



Կ Ռ Ի Ի Ն Ե Ր

ՈՒՐՄԻՈՅ ԵՒ ԿՈՒՏՁԻԻ ՇՈՒՐՁ

Յունիս Գն էր. անվերջ գոռացող թնդանօթներ
և թշնամիի շորս կողմէն հեղհեղ օղակը սեղ-
մելու ճիգերը յայտնապէս ուրախացուցեր էին Ուր-
միոյ Պարսիկները՝ որոնք մօտալուստ ապագային գե-
րութենէ ազատուելու յոյսերով կ'օրօրուէին: Ար-
գէն խիստ մեծ վարպետութեամբ հաղորդակցու-
թեան մէջ էին թշնամիի բոլոր գունդերուն հետ, հա-
ղորդելով անոնց հարկ եղած տեղեկութիւնները եւ
ստանալով փոխադարձաբար հրահանգներ: Եւ սա-
կայն Հայերու եւ Ասորիներու ամենալուրջ հսկողու-
թիւնն իսկ անկարող եղաւ գոնէ անդամ մը բռնել
անոնց սուրհանդակները, այնքան վարպետորդի եւ
զգոյշ էին անոնք: Կուտչիի շրջանէն յառաջացող
թշնամին արդէն սկսած էր մտահոգութիւն պատճա-
ռել բոլորին. ու ահա կէսօրէն վերջ ժամը 3 ին ա-
տեններ յանկարծ սոսկալի ազմուկ մը կը բարձրա-
նայ. «Թշնամին Սալմաստի կողմէն խուժեց...» կը
կանչէին բոլորը եւ ձգած իրենց ունեցածները իրար
կոխտակելով փախչիլ կը սկսէին եւ այնպիսի խու-
ճապով մը՝ որ իրօք եթէ այդ բոլորէն թշնամիի հա-

բիւրեակ մը վրայ հասնելու լինէր՝ արդէն ամէն ինչ վերջացած էր: Պարսիկներ իրենց ուրախութեանէն խելագար, մէյ մը տուններնին կը մտնէին, մէյ մը տանիք կ'ելնէին ստուգելու թիւրքերուն գալու լուրը:

Ի՞նչ էր այդ. ո՞ր տեղէն ծագում էր առած այդ լուրը՝ յայտնի չէր: Բարերախտարար շուտով զինւորներ ուղարկուեցան Սալմաստի գծին վրայ ու լուրի անհիմն ըլլալը ստուգելով ետ եկան եւ ժողովուրդը հանդարտեցուցին:

Ժողովուրդը այս յաճախադէպ փախուստներէն այնքան ջղազրգոտած էր որ ամենառջինն լուրէն իսկ շիտթած խուճապի կը մատնուէր:

Այս խուճապէն օգտուելով տեղացի Պարսիկները կողոպտեր էին գաղթականներու լքուած գոյքերը:

* * *

Արեւելեան կողմը կատաղի կռիւ է. թշնամին միայն մի քանի ժամ հեռու է քաղաքէն. իր դիրքերը կը գտնուին Պապարլու, Սարտարլու եւ Տասպարլու գիւղերու բլրակներուն վրայ. իսկ մերոնք Արրահամ Խան անունով քաջի մը հրամանատարութեամբ վեր յիշուած գիւղերու մէջ: Թշնամին ուժեղ է, եւ մերոնք ստիպուած էին նահանջել:

Վան գտնուող Հայկ. Ե. Գունդի եւ Սարի Բէկի ձիաւորներ օգնութեան ուղարկուեցան Արրահամ Խանին, որոնք կռուի ամենատաք եւ յուսահատական ըսպէին հասնելով մեծ ոգեւորութիւն մը կը ստեղծեն Արրահամ Խանի զինուորներու մէջ, որոնց հետ միասին «Հուրրա՛» կանչելով ձախ թեւէն կը դիմեն յարձակման մը: Թշնամին այլայլած կը փախ-

չի, եւ մերոնք կը հետապնդեն զինք մինչեւ Հայտէ-
բապաա՝ երբեմնի Ռուսական ծովային մեծ կայանը :

Գրութիւնը չի՞ մը փրկուած էր. թշնամին քա-
ղաքէն բաւական հեռացած էր: Ժողովուրդ յամառ
կերպով կը խօսի զաղթելու մասին. սակայն հոս
զարձեալ կողոպուտով հարստացած Ասորիներ ի-
րենց զերի մէջն են. ոչ կանոնաւոր բանակ ունին
կուռելու եւ ոչ ալ նահանջել կ'ուզեն:

Երեկոյեան խուճապը դէշ ազդեց մեր վրայ:
Հապա՛ Պարսիկներու շարժո՞ւմը: Որպէս զի հաւա-
նարար յաճախ կրկնուելիք այս խուճապներու մի-
ջոցին մեր դիրքը ի վիճակի ըլլանք պահպանելու՝
յարմար դատեցինք քաղաքէն քաշուիլ դէպի Արե-
ւելք մեր նահանջի ճանապարհի վրայ: Մի քանի ըն-
տանիքներով ճամբայ ելանք. քաղաքէն երկու ժամ
հեռու Վազիրավա անունով Ասորական զիւղի մը մօտ,
առույտի արտի մը մէջ ուռնի ծառերու շուքին տակ
նստեցանք: Հոս օդն ալ, ջուրն ալ, խոտն ալ հիա-
նալի են: Մինչ մենք մեր բացօթեայ բայց սիրուն
տեղով միխթարուած ցաւերնիս կը պատմենք իրա-
րու, երկու Ասորի ձիաւորներ երեցան Պապարլուի
դժէն՝ որոնք օգի մէջ հրացան կը կրակէին՝ աւե-
տելով մեր յաղթութիւնը եւ թշնամիի փախուսար:

Յունիս 11ի առաւօտն է. արեւելեան դժի թըշ-
նամին կը նահանջէ, այդ տեղի մեր զինուորները
մեծ ոգեւորութեան մէջ են. մինչ հարաւարեւմըտ-
եան գրութիւնը բոլորովին այլ է, Կուտչիի կողմէն
թշնամին կը յառաջանայ շարունակ, գտնուելով ար-
դէն Վազիրավա զիւղի շրջաններ՝ ուր դիմադրաւե-
լու դացին Գարեգին Հացադորձեանի վաշտը Արամ
Գրիգորեանի ղեկավարութեամբ եւ Մուրատը իրեն-
ներով: Անարգել յառաջացող թշնամին Վազիրավա

զիւղը հասնելով կ'անցնի կամուրջը՝ որու քովեր հանգստանալու նստեր էին նոր հասնող այս երկու վաշտերը՝ եւ դժոխային կրակով մը յանկարծակիի կը բերէ զիրենք. բայց մերիները առանց շփոթուելու կը ցատկեն տեղերնէն եւ «հուրրա՛» կանչելով հակայարձակման կը դիմեն:

Բայց դաշտի վրայ, մեր զինուորներու այս անօրինակ յանդգնութենէն լեղապատառ՝ թշնամին խուճապի մատնուած կը փախչի. մերոնք կամուրջը կ'անցնին եւ թշնամին բաւական հետապընդելէ վերջ՝ յոգնածութենէ յաղթահար կը ստիպուին կանգ առնել:

Այժմ շնորհիւ կոռուղներու հերոսութեան՝ թըշնամին որ չորս կողմէն չափազանց մօտեցած էր՝ քիչ մը կը հեռանայ, ժամանակ տալով որ ժողովուրդը եւ իր ղեկավարները խորհին իրենց ընելիքներու մասին: Զինուորներու անձնագոհողութիւնը զրնահատելի է զլիսաւորարար այն տեսակէտներով որ անոնցմէ բացարձակ մեծամասնութիւնը կը կազմէին անոնք՝ որոնք այս տառապած ժողովրդեան մէջ ընտանիք մը, նոյնիսկ մօտիկ բարեկամ մը չունէին. բոլորն ալ ընտանեկան հոգսէ ազատ զինուած ջահիւներ՝ որոնց կը պարտին վերապրողները իրենց կեանք:

Թշնամին ամէն դիէ պարտուած էր: Հայ եւ Ասորական Զին. Մարմիններ այժմ ուշքի եկած, կ'ուզէին աւելի մեծ չարիքի մը առաջն առնել, եւ ահա Յունիս 12ին երկարատեւ նիստէ մը յետոյ, հետեւեալ յայտարարութիւնը կ'ուզէին Հայ եւ Ասորի զինուորներուն.—

«Զինուորական ղեկավարները համաձայնութեան են եկել գաղթը առ այժմ յետաձգելու: Սրա-

նով յայտարարում է որ բոլոր զինուածները անմիջապէս բողոքեն իրենց գրազմունքները եւ իսկոյն հաւաքուին ջարդելու քշնամին :

«Ժողովուրդի գաւակնե՛ր, այսօր վնասկան օր է. մենք պէտք է փրկենք մեր ազգի պատիւն ու կեանքը :

«Ով որ խուսափի գործից՝ պատնաւ կը դառնայ երկու ժողովրդների փնացման. հարկաւոր եղած ժամանակ օրը օրին կը յայտարարուի թէ ի՛նչ պէտք է կատարել :

«Թիւրք ազգաբնակչութեան դէմ ոեւէ քշնամուքիւն անողները կ'ենթարկուին ամենախիստ պատիժների :»

ՀԱՅ ԵՒ ԱՍՈՐԻ ԶԻՆ. ԽՈՐՀՈՒՐԴ

12 Յունիս, 1918 Ուրմիա

Յայտարարութենէն պարզ կ'երեւէր որ Հայ եւ Ասորի Զին. Մարմիններն ալ գրեթէ յուսահատուած էին : Յուսահատուած էին անոնք անընդհատ յառաջացող թշնամիէն, ժողովրդեան բարոյալքումէն : Զէնքի տակ դռնուած զինուորներէն զատ՝ ժողովրդեան մէջի զինուած մարդիկ, տարուած իրենց ընտանեկան հոգսերով, կը դժուարանային բանակի մէջ մտնել : Ասորիներ մանաւանդ Հայերու հասնելէն վերջ կարծես իրենց դարձը վերջացած կը համարէին. մինչ անդին ճակատներու վրայ մեր ոյժերը անբաւարար էին ու յոգնած :

Զին. Սորհուրդներ կը մտածէին թշնամին զիչ մը հեռացնել, որովհետեւ նահանջի մը պարագային՝ մօտիկ եղող թշնամին ի վիճակի պիտի ըլլար անմիջապէս հետապնդել ժողովուրդը եւ խուճապի

մատնելով փճացնել զայն : Ահա այս եւ նման պատ-
ճառներով անոնք յարմար դատած էին զազթը առ
այժմ յետաձգել :

Մինչ մէկ կողմէն զազթի յետաձգման յայտա-
բարութիւն պատերու կը փակցուէր՝ միւս կողմէն
կ'ընտրուէր զազթ կազմակերպող մարմին մը, որու
հոգս լինելու էր գլխաւորաբար զինուորական փո-
խադրութեանց միջոցներ կազմակերպել, պարէն
պատրաստել եւ ուրիշ գործեր կատարել :

Ժողովրդեան զրութիւն շատ անմխիթար էր .
հացի տաղնապ կար եւ այս աղէտը քիչ մը մեղմե-
լու համար Ուրմիոյ Ամերիկեան միսիոնար եւ մի-
եւնոյն ժամանակ փոխ հիւպատոս Տօքթ. Շետը
բացաւ իր քիչմիշներու բազմաթիւ պահեստներու
դռներ եւ սկսաւ ժողովրդեան անձղլուիս վեց Փունտ
քիչմիշ բաժնել : Բայց որպէս զի այս պարագայէն
կարելի լինի օգտուիլ՝ ժողովուրդ բաժնուեցաւ ըստ
չրջանի կամ դաւառի, որոնք քիչմիշ ստանելէ յետոյ
իրենց փոխադրական միջոցներու համեմատութեամբ
պարտաւոր էին 10-20-30 սնտուկ պատրոն փոխադ-
րելու հոգսը իրենց վրայ վերցնել զազթի ժամա-
նակ : Պատրոններ կը յանձնուէին այդ դաւառի կամ
չրջանի կողմէն քիչմիշ ստանալու համար ներկա-
յացող յանձնախումբին՝ որոնցմէ ստորագրութիւն
կ'առնուէր որպէս պատասխանատուներ փոխադրու-
թեան : Ահա թէ ինչ վիճակ ունէր փոխադրական մի-
ջոցներէ զուրկ զինուորութիւն : Այս պայմաններու
մէջ գերմարդկային ճիգեր ի գործ կը դրուէին, բա-
նակ վերակազմելու, թշնամին ջարդելու, եւ մօտ
20-30,000 ժողովուրդ զազթեցնելու համար :

Կուտչիի ուզգութեամբ թշնամին հետա-
պընդող մեր քաջարի զինուորները մեծ սղեւորու-

Թեան մէջ են : Յունիս 13 ին Կուտչիի մօտեր գերի վերցուցին Թնդանօթ մը, փամփուռչտներ, ըսպայ մը եւ չորս զինուորներ : Այս յաջողութիւնը այնքան զինովցուցած էր մասնաւորաբար Սալմաստի բնակիչներ, որ անոնք թուելով Անգլիական բանակին հասնելու խոշոր եւ բազմաթիւ զժուարուցիւններ՝ կ'առաջարկէին ամբողջ ոյժը կեդրոնացնել Սալմաստի դժի վրայ եւ աշխատիլ այդ կողմէն ճամբայ բանալ դէպի Կովկաս : Մի առաջարկ էր սա, որ ոչ մի արձագանդ գտաւ ժողովրդեան մէջ. որովհետեւ Սալմաստէն քաշուելով մանաւանդ այդ ծրագիրը իրականացնելը խիստ զժուարացած էր. Թշնամիի ձեռքըն էին Կուտչիի ամբողջ բլրային եւ Ուրմիոյ կողմէն եկող յարձակման մը դէմ համարեայ անառիկ դիրքեր : «Է՛հ, հիմա աշխատելու է նախ Սալմաստ զրաւել եւ ապա Սոյի գիծը բանալ. անկարելի է այդ, անկարելի է...» Ահա ընդհանուր մտայնութիւն : Սալմաստցիներու այս առաջարկը աւելի բուռն դայրոյթ յառաջ բերաւ զաղթականներու մէջ՝ որոնք չորս կողմէն կ'աղմկէին թէ անհրաժեշտ էր օր առաջ դուրս ելնել Ուրմիայէն :

Մինչ ժողովուրդ այս իրարանցման մէջ էր՝ ահա նոյն շրջանէն Կուտչիի կողմեր մեկնող զինուորներ լուր բերին թէ Սալմաստի կողմէն խո՛ւլ թընդանօթած զուլթեան ձայներ կը լսուին, ու կ'աւելցընէին. «հաւանաբար Կովկասէն մեզ օգնութեան եկած են» : Լուրը այնքան անհաւանական կը թուէր որ՝ ժողովուրդը զայրոյթով կ'ըսէր. «Կովկասէն եթէ մեզի օգնութեան պիտի գային, այն ատեն ինչո՞ւ չեկան, կարծէք թէ մեր այնքան արիւնահեղ կրօնիւներուն լուրը Կովկաս հասած չէ՞ր. անոնք զալու միտք չունին. ո՞վ զիտէ հիմա անոնք ինչ դրութեան

մէջ են» : Այս էր ժողովրդի տրամաբանութիւն . այս կարգի խօսքերով կը պատասխանէին անոնց՝ որոնք կը հարձակէին խօսիլ այս լուրի վրայ :

Բայց արդէն կամաց՝ կամաց Սարմատի կողմէն թնդանօթածղութեան ձայներ լսուելու լուրը կը հաստատուէր : Յունիս 20ին Ուրմիա հասաւ Անդրանիկի բանակէն զինուոր մը , որ յիսուն ուրիշ զինուորներով բանակէն անջատուելով թիւրքերու մէջ ինկած էր . ընկերները բոլորն ալ կոտորուած էին , իսկ ինք մինակ մի կերպ փախչելով լեռնային ճանապարհներով հասած էր Ուրմիա : Եւ նա բաւական տեղեկութիւններ տուաւ Կովկասի մասին , աւելցնելով որ բացի Երեւանէն ամբողջ Կովկաս թիւրքերու ձեռքն է , թէ Անդրանիկ իր բանակով եւ 300 ընտանիքով եկած է Ջուլֆայ եւ մտադիր է այս դը ծով դալ եւ Անդլիական բանակին միանալ : Այս անակնկալ լուրը շանթահարեց մեզ . ըսել է թէ եթէ մենք Սարմատի մէջ քիչ մը երկար դիմադրէինք , Անդրանիկի ժամանումով թշնամին երկու կրակի մէջ առած պիտի ըլլայինք . ու սկսեցինք անէծք կարգալ Ասորիներու Ադա Պետրոսի հասցէին , որ իրենց դժբախտութեան ալ պատճառ դարձաւ :

Անդրանիկի դալտտեան լուրի ճշդումէն վերջ , այս անգամ խորհրդածութեան նիւթ դարձաւ ուժեղ յարձակման մը դիմելու խնդիրը . «Թշնամին երկու կրակի մէջ առնելով Անդրանիկի գործը դիւրացնելու է» , կը խորհէին բոլոր : Գործի անցաւ Արմենակ Արբահամեանը եւ Յունիս 22ին իր խօսած ճառին մէջ ըսաւ . «Ով որ Անդրանիկը կը սիրէ , ով որ Դաշնակցութեան դրօշակը կը պաշտէ , թող զէնքի զիմէ . Զարդենք թշնամին , միանանք Անդրանիկին , անկէ վերջ կը մտածենք դադթելու մասին . վստահ եղէք

որ Անդրանիկի միանալէ վերջ ամէն ինչ կարելի կ'ըլլայ» : Արրահամեանի ճառը սակայն արձագանգ գտաւ միայն Սուրբ Երանցի վարժապետի վարժարանէն մէջ, որոնք թուով մօտ 1000 հոգի վանի Հայկական Ե. Գնդի սպաներէն Տիրուհի Ժամհարեանի հրամանատարութեամբ մեկնեցան Կուտչի՝ ուր իրենց լսածով թիւրքեր չկային. անոնք քաջուած էին Անդրանիկի դէմ, որ իբրեւ թէ մեծ կորուստներ պատճառեր էր թիւրքերուն՝ գերի առնելով 3 թնդանօթ եւ 4 դնդացիր :

Մինչ Արրահամեան իր հազար զինուորներով կը յառաջանար դէպի Կուտչիի բարձունքները, անդին վասպուրականի Զին. Մարմին եւ Համարաբժուական տարրեր գործով զբաղուած էին : Անոնք անկարելի եւ աննպատակ համարելով Սալմաստի գծի վրայ յարձակելու ծրագիրը՝ չմասնակցեցան, իսկ միւս կողմ մէն համբերութեան բաժակ լեցուած համարելով դացին Տօքթ. Շէտին՝ որու ձեռքն էր ամբողջ Ասորիներու զեկը եւ յայտնեցին վճռականապէս թէ իրենք մտադիր են նոյն իսկ բոլորովին առանձին իրենց ժողովուրդով ճամբայ ելնել դէպի Անգլիացիներ, եթէ Ասորիներ չուզեն ընկերանալ իրենց : Տօքթ. Շէտ որ միշտ «սպասենք եւ քիչ մը կանոնաւոր կազմակերպութեամբ նահանջենք» կ'ըսէր ու բան մը չէր ըներ, այս անգամ ալ կրցաւ համոզել որ զաղթը առ այժմ յետաձգեն, իսկ ինք կը խոստանար միջոցներ ձեռք առնել եւ 24 ժամուան մէջ ասորական ոյժ մը մէջտեղ բերել, համազործակցութեամբ զինուորական զործողութեանց ձեռնարկելու համար :

Արրահամ Սանը Կուտչիի վրայ քալած ժամանակ խումբ 'ը զինուորներ — թուով 50 հոգի — բլուր-

ներու ետեւէն կ'ուղարկէ Կուտչիի թիկունքը, իսկ հետեւակներ բաց դաշտի վրայ շղթայ կապած կը յառաջանան: Ոորամանկ թշնամին՝ որ թէ ձիաւորներու եւ թէ հետեւակներու յառաջխաղացութիւն վաղուց նկատած էր, կը լռէ մինչեւ որ հետեւակներ կը մօտեան Կուտչիի բլրակին. ու յանկարծ կը սկսի երկու թնդանօթ ձիաւորներու եւ երկու թընդանօթ հետեւակներու վրայ կրակել աշնպիսի արագութեամբ մը, որ մերօնք յանկարծակիի եկած շքիօթուած կը դիմեն փախուստի: Թշնամին տեսնելով մերօնք փախուստը՝ սրտապնդուած իր ձիաւորներովը կ'իջնայ դաշտը եւ կըսկսի մեր հետեւակները հետապնդել՝ որոնք գլուխին կորսնցուցած առանց դիմադրել փորձելու ցան ու ցրիւ կը փախչին. եթէ ինք Արրահամեանը՝ որ թեթեւ տկարութեան պատճառաւ զինուորներուն չէր ընկերացած, չհասնէր իր մի քանի ձիաւորներով՝ հաւանաբար մերօնքմէ բաւական թուով գերիներ իյնային:

Ահա՛ այսպիսով Անգրանիկին միանալու յոյսը ի դերեւ կ'նշնէր. առաջին փորձէն սարսափահար ոչ ոք կ'ուզէր երկրորդ անգամ փորձել: Ժողովրդեան լեզուն մանաւանդ չափազանց կծու էր այլեւս. «Մեզ կոտորել պիտի տան, կոտորել»: իսկ աւելի խելացիներ կ'ըսէին. «Ասկէ աղէկ ժամանակ չունինք նահանջելու. հաւանաբար թշնամին ի վիճակի չպիտի ըլլայ ետեւէն հետապնդել մեզ»: Ու կը խօսէին կը տրամաբանէին, կը վճռէին անվերջ. դործնական ոչ մի քայլ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԴԱՆԱԻՐ

Յունիս 23 եւ 24րորդ օրերը անցան տրտում ու անորոշ. ժողովուրդը երկզխմութեան մէջ է, բոլորի ուշքն ու միտքը օր առաջ շարժուելու մասին է. բայց շարժուելու հրամանը կ'ուշանայ...

Յունիս 25ը սահայն պատմական օր մը եղաւ մեզ համար: Առաւօտ էր, հազիւ ժամը ութը, յանկարծ լսելի եղան արտասովոր համազարկներու ճայներ: Դաշտի մէջ սփռուած ժողովուրդը ահ ու դողի մատնուեցաւ. բոլորը կարծեցին թէ արդէն թշնամին քաղաքը խուժած է: Յանկարծ չարածճի տասը տարեկան փոքրիկ մը «Տեսէ՛ք, տեսէ՛ք» բացազանչութիւնով մը մատը երկինքը բարձրացուց ցուցնելով օդանաւ մը՝ որ կը սաւառնէր Ուրմիոյ վրայ: Հանելուկը պարզ էր արդէն. անմիջապէս հրացաններ օդանաւին ուղղուած սկսեցին կրակել. մէյ մըն ալ տեսանք որ օդանաւը կամաց՝ կամաց իջաւ. ալ ուրախութեան սահման չկար. «ինկա՛ւ, ինկա՛ւ» աղաղակեցին բոլորը միաբերան. ու ձի ունեցողները ձիով, չունեցողներն ալ ոտքով սկսեցին վազել դէպի քաղաք, աչքով տեսնելու թշնամիի օդանաւը՝ որ կ'իյնար մեր դնդակներէն վիբաւոր: Ես ալ ոչ նուազ ոգևորուած ձիս նստած դիմեցի քաղաք: Դեռ

կէս ճանապարհին տեսանք երեք ձիաւորներ որոնք օղի մէջ հրացան կրակելով՝ «Աւետի՛ս, Անգլիացիք եկան, Աւետի՛ս Անգլիացիք եկան...» Կացադան- չութիւններով կը քչէին ձիերնին դաշտ զանուող ժողովրդին բարի լուր տանելու համար: Որքա՞ն քաղ- ցըր, որքա՞ն անսպասելի էր այդ հրեշտակային ա-ւետիսը. եւ որքա՞ն ուրախութեան արցունքներ քա- մեց այս տառապեալ ժողովրդեան աչքերէն. քանի՞ քանի՞ ոչխարներ, եզներ ու կովեր մատաղ եղան:

Անհամար զոհ ընելու ցանկացողներէն մին ալ մայրս էր, որ խոստանալով մէկտեղ՝ անմիջապէս զործի անցաւ մի քանի կանանց հետ, եւ կէս ժամ- ուան մէջ արդէն այնքան դրամ հաւաքուած էր որ կարելի եղաւ կով մը եւ ոչխար մը գնել մատաղ ընելու համար: Այս անսպասելի լուրէն աւելի շատ ոգեւորուած քչեցինք ձիերնիս. արդէն քաղաքն ենք. փողոցներու մէջ Պարսիկ մ'իսկ չերեւիր, ընդհակա- ոակը Հայ ու Ասորիներէ կաղմուած հսկայ թափօր մը փողոցներէն երգեր երգելով կը դիմէ հեւ ի հեւ՝ դէպի օդանաւին իջած կողմը: Գաղաքէն մինչեւ օդանաւ տարածուող կէս ժամէն աւելի տեւող տա- րածութիւնը հո՞՞մ բաղմութեամբ մը գրաւուած էր: Չայն տեսնելու հաճոյքը վայելելու համար շնչա- սպառ վազողներէն մին ձիէն վար իյնալով տեղն ու տեղը մեռաւ, իսկ ուրիշ մը նոյն փորձանքով ծան- րապէս վիրաւորուած էր:

Վերջապէս հասայ օդանաւին իջած վայրը, ուր փառայեղօրէն թեւերը պարզած նստած էր կանանչ մարգագեանի մը վրայ, իր վրայ նայող հազարա-ւոր աչքերուն զգացած հաճոյքէն ու հրճուանքէն մեծցած ու խորհրդաւորութիւն մը առած. աջ կող-

քին կախուած էր փոքրիկ զնդացիր մը: Չորս Ասորիներ հրացան ձեռքերնին օդանաւին պահապան լինելու փառքէն հրապուրուած անդադար կը շքրջէին այդ պաշտելի, այդ ազատարար օդանաւի շուքը, չթողնելով որ մօտենան հետաքրքիրները՝ որոնք աւելի մօտէն տեսնելու մարմաջէն բռնուած կը հըրմըշակէին զիրար եւ օդակը նեղցնելու կ'աշխատէին: Ինծ ընկերացողներէն մին՝ Կովկասահայ մը՝ չզիմանալով թաղիքեայ սրածայր գլխարկով Ասորիի մը ասպետական երթեւեկութեան, փորձեց զլարճանալ եւ հարցուց.

— Մըր պիտի նստի Մարչիմանը...:

Միամիտ Ասորին ցուցնելով օդանաւի կրկնակ թեւերու ճիշդ մէջ տեղը.

— Հո՛ս պիտի նստի, հոս... ըսաւ հպարտութեամբ:

Ուրախ արամազրութիւննիս որ արդէն առիթի կը սպասէր՝ շեշտուելով ծիծաղի փոխուեցաւ:

Կէս ժամուայ չափ ժողովրդեան հետ օդանաւը դիտելու հաճոյքով բաւականացած վերադարձանք դէպի Ուրմիա. մինչ ճանապարհը հետզհետէ անանցանելի կը դառնար նորեկներով: Օդանաւը դարձած էր պատմական ուխտատեղի մը՝ ուր կը դիմէին բոլորը:

Երկու օդանաւորներ քաղաք էին դացած՝ Տօքթ. Շէտի մօտ: Կ'ուզողութիւմ դաշտ՝ մերոնց մօտ, աչքովս օդանաւը տեսնելու բախտաւորութիւնը անոնց ալ պատմելու համար: Մեր դաշտային խրճիթը՝ զոր ուռիի ճիւղերով շինած էինք արեւի դէմ պատսպարուելու համար՝ թափուր կը գտնեմ. ո՞րք են դացած, չգիտեմ: Ձին առւոյտի մէջ կապելով եկեայ ու խրճիթի առաջ նստեցայ. քիչ վերջ տեսայ

որ մայրս մի քանի ուրիշ կանանց հետ կը վերադառնար. «Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ Աստու՛ած» կրկնելով: Եղբայրս չ'երեւիր, ո՞ւր է դացած շգիտեմ, կէս օրին միայն տեսայ քաղաքի ճանապարհով ձի մը նստած կուզայ առանց գլխարկի եւ առանց կօշիկի. այնքան ոգեւորուած է եղեր որ իմ մեկնելէս վերջ ձի կը նստի եւ կ'ուղղուի քաղաք՝ մոռնալով վերցնել կօշիկներն ու գլխարկը անդամ: «Փա՛ռք Աստուծոյ, փա՛ռք Աստուծոյ, ազատուած ենք այլեւս» կը կրկնէ ժողովուրդ անդադար մատաղի միսերը խարոյկներու վրայ խորովելով: Կատարեալ տօնական օրուայ մը երեւոյթ կայ ամէն դի. բոլորն ալ կ'երգեն, կ'ուրախանան, օյի կը խմեն, հրացան կը կրակեն, ճիարչաւ կ'ընեն:

* * *

Առաւօտ է. Յունիս 27ի արեւը դեռ իր ճառագայթները նոր էր սփռած տօնախմբութենէ խոնջած Ուրմիոյ տարաբախտ զաղթականութեան վրայ: Օդի մէջէն լսելի եղաւ ճամբայ ելնոյ օղանաւի աղմուկը: Կ'երթայ նա՛ իր հետ տանելով 60-80,000 ժողովրդեան յոյսն ու մխիթարութիւնը, օրհնանքն ու մաղթանքները: Օղանաւորդը հեռո՛ւ ամպերու մէջէն թեւը վար երկարած, կը շարժէ թաշկինակը, իբր մնաք բարեա՛ւի ողջոյն. իսկ լքուած ժողովուրդ աչքերը երկինք բարձրացուցած, թաշկինակներ ու գլխարկներ կը շարժէր օդի մէջ «Երթաս բարեա՛ւ, բարի ճանապարհ» բացազանջութիւններով: Մի քանի բոպէ եւս, եւ ահա հեռո՛ւն ամպերու մէջ երեւցող այդ փոքրիկ կէտը աննշմարելի կը դառնար այլեւս:

Օղանաւ՝ որ եկած էր Դավրէժի դժի վրայ դըտնուած Միանէ քաղաքէն, յայտնած էր որ Անդլիացիներ ի վիճակի չէին առ այժմ այս կողմեր զինւորական ոյժ ուղարկելու, բայց եթէ Հայ-Ասորական ոյժեր կարողանային Անդլիական բանակի հետ կապ հաստատել, կարող էին օգտուել ամէն կարգի ուղղամթերքներէն՝ ինչ չափով որ պէտք ունէին. ու ապա զինուած եւ անդէն կամ զէնք դործածելու ընդունակ մարդկանց թիւն եւ կարգ մը տեղեկութիւններ իր հետ առած ահա կը մեկնէր, թերեւս չփորձելով երկրորդ անգամ կտրել անցնիլ Միանայէն Ուրմիա երկարող հեռաւորութիւնը:

— Դէ'պի Անդլիական բանակ, դէ'պի Անդլիական բանակ. կը լսուէր չորս կողմէն:

Ահա ժողովրդեան ցանկութիւնը, որուն ընդառաջ դնալ չէին ուզեր օղանաւի դալէն վերջ մանաւանդ՝ իրենց տեղեր աւելի հաստատ նստող Ասորիներ: Բայց Վասպուրահանի Ձին. Մարմին արդէն սկսաւ դործնական քայլերու զիմել: Նա զինւորներ զրկելով պատուիրեց Ուրմիոյ եւ քաղաքի արեւմտեան կողմի դաշտեր գանուած իր ժողովուրդին որ քաշուին քաղաքի արեւելք՝ Հայտէրապատի ճամբու վրայ՝ ուրկէ լինելու էր դալթը. միեւնոյն ժամանակ այդ շրջանի զիւղերէն հացահատիկներ հաւաքելով ճամբու պաշար պատրաստեն: Մտածուած ու խիստ խելացի կարգադրութիւն մըն էր այս՝ որու արժէքը ժողովուրդ վերջէն հասկցաւ: Ու ըսկրտաւ իոխադրելու գործը: Շարժուելու հրաման այնքան մօտ էր ժողովուրդի սրտին որ, անոնք թէեւ նախ թերահաւատութեամբ բայց վերջապէս սկսեցին շարժուիլ եւ բնակիլ Պատարլուի գետի արեւմըտեան ափ գտնուած զիւղերու մէջ, եւ սկսեցին

ճամբու պաշար հաւաքել զաշտերէն, ուր հասած ցորենի անտէր (*) արտեր հնձող ձեռքերու կը սպասէին արգէն: Աշխատանքը սկսած էր. այր թէ կին, մեծ թէ փոքր, զիւզացի թէ քաղաքացի, բոլորը հասլ ճեպ ճամբու պատրաստութեամբ էին զբաղուած:

Մինչ Վասպուրականի Ձին. Մարմին այս կերպ պատրաստութեան մէջ էր եւ միւս կողմէն ալ կ'աշխատէր կարգի բերել իր զինուորական ոյժերը եւ հնար եղածին չափ շատ մարդ հաւաքել զօրանոցներու մէջ, որոնց ծախսը կը հողար Տօքթ. Շէտ՝ Ասորիներ տարբեր մտքերով տարուած էին. անոնք Ուրմիայէն մեկնելու մտադրութիւննին մէկ կողմ զբաժ կը խորհէին կապ հաստատել Ուրմիոյ եւ Միւսանէի միջեւ, եւ Անգլիացիներու օժանդակութեամբ պահպանել իրենց բնակավայրը: Ահա այդ նպատակաւ Յունիս 27ի երեկոյեան թռուցիկով մը կը յայտարարուէր Ասորի բնակչութեան որ Յունիս 28ին բոլոր զէնք ունեցող տղամարդիկ՝ հետեւնին վերցուցած տասը օրուան պաշար՝ հաւաքուին Ամերիկեան Միսիսիպիներու շէնքին մէջ: Տօքթ. Շէտ՝ որ Ասորիներու այս կարգի ձեռնարկներու հեղինակըն էր, ի զուր Ազա Պետրոսի եւ Ասորական մի քանի Մելիքներու հետ իրար ետեւէ կուլ կուտար պարսկական փոքրիկ բաժակներով մատուցուած սուրճը զինուորի սպասելով: Յայտարարութեան կարեւորութիւն տուող համարեայ թէ մէկը չէր զըտնուած, անոնք լաւ հասկցած էին այդ յայտարարութեան նպատակը, եւ իրենցմէ ոչ մին չէր ցանկար կուռի երթալ հեռուներ, Ուրմիոյ մէջ պատահակա-

(*) Պարսկական զիւղեր էին, որոնց բնակիչներ Ասորիներէն հալածուելով գաղթած էին Ուրմիա:

նութեանց թողնելով իրենց հարստութիւնն ու ընտանիքները, ընտանիքներ՝ որոնցմէ մանաւանդ ջէլօ (Տիար Տիուպի Ասորիներ) Ասորիներ 24 ժամով իսկ հեռանալ չէին կարող: Ու Շէտ եւ իր գործակիցներ կը մնային շուարած:

Մեր ընտանիք որ արդէն վաղո՛ւց զրկուած էր իր վերջին կոպէկէն, շարժուելու հրաման լսելէ յետոյ նուազ մտահոգուած չէր: Դաշտը՝ ուր մենք կը բնակէինք՝ քաղաքին մօտիկ լինելուն եւ գաղթականութեան հոծ բազմութիւն մը գտնուելուն համար մերկացած էր ոչ միայն հացահատիկներու արտերէն այլ եւ բուսականութենէ իսկ. ուստի մենք ալ ստիպուած էինք քիչ մը առաջ անցնիլ՝ հացահատիկ գտնուած գիւղի մը մէջ մեր զլխու ճարը տեսնելու համար: Ձին կը հեծնեմ ու կ'ուղղուիմ դէպի Ուրմիա, ուր ամբողջ հարստութիւննս եղող Քէրենակիի 40 բուրլինոց մը տալով 20 հատ կորեկէ հաց կը գնեմ: Պաշարովս միասին մերոնց քով վերադառնալով ժողովրդեան հետ կը շարժուինք յառաջ՝ Ուրմիայէն մօտ չորս ժամ հեռու Արտիշա անունով կէս Հայ կէս Պարսիկ Ասորի գիւղը երթալու, ուր ուտենիի ճիւղերով խրճիթ մը շինելով բաց դաշտի մէջ՝ ջրի եզերքին կը նստինք: Յողմած ենք ու անօթի. մէջ տեղ բերինք կորեկէ հացը ու սկսեցինք մի կերպ ուտել. խեղճ եղբայրս վիրաւոր եւ արիւնաքամ, հազիւ թէ մի քիչ առողջացած ու ախորժակ ստացած այս անգամ ալ հաց չունի, սքնունդ չունի...:

Հազիւ թէ տեղերնիս նստած էինք, երբ քաղաքէն նոր հասնողներ պատմեցին թէ զինուորներու կողմէ ձերբակալուած են եօթ Պարսիկներ, որոնք տաճկահայ Կուտչիի բանակին Հաց տանելէն կը վերա-

դառնային . ասոնց քով գտնուած է եղեր Թուրքերէն լեզուով գրուած կոչ մը Պարսիկներուն ուղղուած , որով ջիհառ կը յայտարարուէր քրիստոնէից դէմ՝ հրաւիրելով միանալ տաճկական իսլամ բանակին , օժանդակել կամաւորներով , ուտելիքներով , ուղեցոյցներով եւ սուրհանգակի պարտականութիւններով : Նոյն Պարսիկներ յայնաժամ էին թէ այս կոչին իրրեւ արդիւնք՝ Ասէրապատէն 150 Պարսիկներ կամաւոր մեկնած էին տաճկական բանակ , իսկ չըջակայ Պարսիկ զիւղեր միշտ հաց կը մատակարարէին Կուտչիի Թուրք զինուորներուն : Բռնուած էր նաեւ Ուրմիայէն Կուտչի մեկնող եւ վերադարձող մի Պարսիկ , որ ծեծի տակ խոստովանած էր թէ , ինք սուրհանգակ էր ուղարկուած եւ թէ Ուրմիոյ Պարսիկներ միշտ ալ կանոնաւոր յարարերութեան մէջ են եղեր Թուրքերու հետ : Այս վերջին պարագան ծանօթ էր Հայերուն եւ թէ Ասորիներուն , եւ նոյն իսկ այս յարարերութիւն պահող զլիսաւոր Պարսիկներն ալ կը ճանչցուէին , սակայն կ'աշխատէին քաղաքի ազդարնակչութեան չդպչիլ , աւելի մեծ անպատեհութիւններ յառաջ չբերելու համար : Արդէն ամէն անգամ իրենց յայտարարութիւններուն մէջ Թուրք ազդարնակչութեան չդպչիլ յանձնարարելով մէկտեղ՝ նշանակած էին նաեւ պահակազօրքեր , որոնք քաղաքին մէջ պտըտելով կը հսկէին որ Պարսիկներու նեղութիւն չտրուի :

Մինչդեռ Հայեր ճամբու պատրաստութեան մէջ էին ու օրը օրին կ'սպասէին շարժուելու հրամանին , անդին Ասորիներ այնքան ոգևորուած էին իրենց տուն ու տեղով , որ մի շարթուայ ընթացքին սպաննեցին երեք Վասպուրականցի անմեղ զիւղացիներ , որոնք Ասորիներու կողմէ գրաւուած թրքա-

կան ցորենի արտերու մէջէն որայ մը ցորեն քաղելու յանցանքը գործած էին: Երեւոյթը շատ տղեղ էր ու գրգռիչ, գործը այնտեղ հասաւ որ քիչ էր մնացեր Հայ-Ասորական ժողովրդային ընդհարումներ պատահէին: Ընչաքաղց Ասորիներ օդանաւի մը այցելութենէն ոգևորուած, ոչ միայն մեծ հոգատարութեամբ կը հսկէին իրենց արտերուն վրայ, այլ Պարսիկներու արտերն ալ իրենց մէջ բաժնած՝ ամէն արտի կեդրոնը դրօշակ մը տնկելով սեփականացուցած էին զանոնք: Ու երբ մենք «Ասորիներ, եզրայրներ, այս կերպ մի վերաբերուիք, վաղը այս բոլոր ձեր տունն ու տեղը, ձեր անբաւ հարստութեան հետ մէկտեղ Պարսիկներուն ու Թուրքերուն թողնելով փախչելու էք» կ'ըսէինք, միամիտները բարկացած, «Բարի ճանապարհ ձեզ. մենք մեր տեղէն շարժուելու միտք չունինք» կը պատասխանէին հեղնանքով:

Վասպուրականցիներ երբ սկսեցին տեղաւորուիլ Հայտերապատի գծին վրայ եւ իրենց ճամբի պաշար պատրաստելու ետեւէ եղան, Ասորիներու մէջ յառաջ եկաւ մեծ հոսանք մը: Անոնք «մեր տեղէն չենք շարժուիր» ըսելով մէկտեղ, սկսեցին թէ քաղաքարքնակներ եւ թէ գիւղերը գտնուողներ իրենց բոլոր գոյքեր քաղաք փոխադրել եւ իրենց ծանօթ Մաշատտիներուն յանձնել՝ պահելու համար: Ոմանք ստորագրութիւն կ'ստանային աւանդապահ Մաշատտիէն, իսկ ոմանք, այնքան վստահելի կը գտնէին զանոնք որ, այդ օրինականութիւնն իսկ աւելորդ կը սեպէին: Այժմ արդէն կարելի էր երեւակայել զերի Պարսիկներու հոգեկան դրութիւնն ու անոնց զգացած իրաւացի հրճուանքը: Այն Ասորիներ որ ամէն օր զիրենք կ'սպաննէին, կը կողոպտէին, այսօր իրենց սպրանք

ներ կը բերէին անոնց պահպանութեան կը յանձնէին: Ուրեմն պարզ էր որ Ասորիներ կամ կը վախճային եւ կամ պիտի նահանջէին: Ու ոգեւորուած Պարսիկներ խիստ զաղտնի, բայց տենդազին պատրաստութեան մէջ էին, առիթ ներկայանալուն պէս իրենց բարի դրացիներուն հաւատարմութիւննին ցուցնելու համար:

Ասորիներ, ինչպէս ամէն տեղ, հոս ալ (Արտիշայի մէջ) չէին թողուր որ զաղթականները զիւղի բազմաթիւ պարսկական արտերէն օգտուին, այդ խի պատճառաւ, ստիպուած էինք մեկնիլ աւելի հեռաւոր գիւղեր ցորեն քաղելու համար: Եղբայրս որ Ուրմիա հասնելէ յետոյ բաւական լաւացած էր՝ մաքուր օգի շնորհիւ, այսօր չնայած իմ պնդումներուն ընկերացաւ մեզ ու ձիեր նստած հնձելու գացինք:

Այրող արեւին տակ, օրեր շարունակ հնձելու աշխատանքը՝ ընդհանուր ոգեւորութեան մէջ՝ յիշատակի մը անուշութիւնը կ'առնէր: Գործիներու եւ միջոցներու պակասութեան պատճառաւ սակայն, նախամարդուն դժուարութիւններով միայն կը յաջողէինք եփել ու մէջտեղ բերել հացը: Բայց ո՛չ ոք կը գժգոհէր, չէ՞ որ ճամբու պաշարնիս էր որ կը պատրաստէինք:

Մինչ Վասպուրականի ամբողջ ժողովուրդ այս աշխատանքով էր զբաղուած, անդին Կուտչիի դժով յառաջացող տաճկական բանակի հրամանատար Ալի Իհսան փաշան զէնքի ոյժով այս մի քանի Հայերու հետ իր հաշիւը մաքրել չկարողանալով՝ տարբեր ծրագիրներ կը կազմէր: Յուլիս 4 ին Հայերուն ուղղուած դրութեան մը մէջ այսպէս կ'ըսէր ան. «Կովկասահայերուն անկախութիւն տրուած է արդէն,

դուք ալ յիսունական անձէ բաղկացեալ խումբերով եկէ՛ք, գէնքերնիդ յանձնեցէ՛ք, ձեզ ճամբայ կուտանք անցէք Կովկաս ձեր ցեղակիցներուն մօտ, թէեւ անոնք չպիտի ուզեն ձեզ նման խոտվարար տարր մը ընդունիլ իրենց մէջ, բայց մենք կը յարմարցընենք: Հակառակ պարագային, եթէ չհնազանդիք, հակառակ մարդկային խղճի ձեզ բոլորդ ալ պիտի կոտորենք:» Հրամանատարին նամակը ժողովրդեան կողմէ գառն քմծիծաղով մ'եւ հեղնանքով մը ընդունուեցաւ: «Միասին չը կարողացաւ կոտորել, հիմա խումբ խումբ կ'ուզէ կոտորել, յիմա՛ր, գոնէ բաց թող գրէիր թէ Ծոական եկէք յանձնուեցէք որ առանց նեղութեան կոտորեմ, գոնէ գրէիր թէ բահեր ու բրիչներ ալ բերէք որ ձեր գերեզմաններն ալ դուք փորէք...» ահա թէ ինչպէս կը մեկնուէր գրութիւնը: Իսկ Կովկասին ազատութիւն տալ արդէն այնքան անհաւանական կը թուէր, որ կ'ենթադրուէր թէ Կովկաս կամ քնաջնջուած եւ կամ դիւցազնական դիմադրութեան մէջ էր, այլապէս Թիւրքն ո՛ւր, ազատութիւն տալն ո՛ւր...:

Նշանները սակայն շարագուշակ էին. կը նշանակէր թէ Թիւրքեր ի գին ամէն զոհողութեան, կ'ուզէին մեզ իրենց ճանապարհի վրայէն մաքրել, փոփոխակի փորձելով իրենց գէնքի ու խորամանկութեան ոյժերը: Ալի Իհսան փաշան անտարակոյս օգնական ոյժերու կը սպասէր ցարդ գործնական քայլեր չառնելով. եւ երեւի մի ստակալի օր դարձեալ պիտի ենթարկուէինք այն գրութեան, որուն ենթարկուեցանք Սալմաստի մէջ:

Զինուորական Մարմին վերջապէս Ասորիներու հետ համաձայնութեան եկած էր, Հայտարարագատի գիծը պատուելով Անգլիացիներու հետ կապ հաստա-

տելու խնդրին շուրջ: Երկուստեք իրենց բանակներ կարգաւորելու գործով են զբաղուած, մինչ միւս կողմէն ժողովուրդին եւս լուր տրուած էր որ պատրաստ լինին անակնկալի չգալու համար:

Մինչ Հայ-Ասորական բանակներ տենդադին պատրաստութեան մէջ էին, Թիւրքերէն հասաւ երկրորդ նամակ մը՝ որով 15 օր ժամանակ կը տըրուէր խորհելու եւ անձնատուր լինելու համար, սպառնալով միաժամանակ պայմանաժամը լրանալէն ետք չյանձնուող Հայերը բնաջինջ ընել:

Իրերու այս դրութեան մէջ պատահամբ երեւան ելաւ դաւազրութիւն մը՝ Ասորի բանակներու հրամանատար Աղա Պետրոսին կողմէ սարքուած: Թիւրք բանակէն եկած նամակ մը բռնուեցաւ Աղա Պետրոսի հասցէով, որու բովանդակութենէն պարզուեցաւ որ բարեձաղիկ Աղա Պետրոս Հայերէն անջատ եւ դադանի բանակցութեան մէջ է Թիւրք բանակի հետ եւ անձնատուութեան պայմաններ կը մշակէ: Յայտնուած դաւաճանութիւնը այնքան բացորոշ, այնքան զարհուրելի էր՝ որ հանդուրժելը այլեւս անհնար կը դառնար: Ու Վասպուրականի Ձին. Մարմին առանց երկար բարակ խորհելու, առանց Ասորիներու կամք հարցնելու, զինուորներուն յայտարարեց որ վաղ առաւօտեան յարձակման դիմելու են: Ձինուորներ, որոնք ժողովուրդէն նուազ ձանձրացած չէին, եւ օրը օրին հրամանի կը սպասէին, մեծ ողբերութեան մէջ ինկան. «կամ մեռնինք, կամ ազատուինք այս անորոշ կացութենէն» կ'ըսէին բոլորը, եւ ամէն զինուոր մեծ հոգատարութեամբ սկսեց իր անձնական միջոցներով իր հազուատի, կօշիկի ծխախոտի եւ այս կարգի մանր մունր անհրաժեշտ պէտքերը հոգալ, եւ պատրաս-

տուել յարձակումի մը՝ որ յաջողուելու պարագային զնալու էին զէպի Անգլիական բանակ, սպառնալով ալեւս չվերադառնալ եթէ ժողովուրդը չհետեւէր իրենց :

Դ.

Վաստղերականի զինուորներ կազմ ու պատրաստ էին. գործի վրայ էին նաեւ Ռուսներ՝ որոնք ստանձնած էին յարձակումի ծրագրման եւ ղեկավարելու գործեր : Ազա Պետրոսը՝ որու դաւաճանական արարքը պարզուելէ յետոյ առիթ կը փնտռէր այդ տխուր տպաւորութիւնը փարատելու, բնականօրայ չէր կարող անտարբեր նստիլ եւ ստիպուած նա եւս կարգի բերաւ իր զինուորներ եւ Յուլիս 9-ին միացեալ բանակներ արդէն շարժուեցան զէպի Արեւելք՝ Հայտէրասպատի ուղղութեամբ :

Բանակը դասաւորուած էր այսպէս. — Աջ թեւէն Սօլուջ-Պուլաքի ուղղութեամբ կը յառաջանար Ազա Պետրոս իր Ասորի զինուորներով, անկէ վերջ կուգար Գարեգին Հացագործեանի վաշտ, կեդրոն կը դանուէր Սամուէլ իր վաշտով, իսկ ձախ թեւ կը դանուէին Մերոն եւ Ազատ իրենց վաշտերով. ասոնց հետ էին նաեւ Սալմաստի գումարտակը, Վանի Հայկական Ե. Գնդի 70 զինուորներ (Կովկասահայեր), Պողազքէսէնցի Աւագ եւ Ջանօեան Մերոսի իրենց ձիաւորներով՝ Մուրատի հրամանատարութեամբ. իսկ Ռուսներ ցրուած ամբողջ բանակի մէջ, մաս մը թնդանօթներով իսկ մաս մը բանակներ ղեկավարելով զբաղած էին, իսկ Կուտչիի եւ քաղաքի (թիկունքի) պահպանութեան գործը յանձնուած էր Ասորիներուն եւ Աւրմիոյ Հայկական գումարտակին :

* * *

Յուլիս 10ին կէսօրին արդէն լսելի եղան ուժեղ թնդանօթածղութեան ձայներ. պարզ էր որ կը որբեր սկսած էր: Ամբողջ ժողովուրդ ծունկի եկած կ'աղօթէր իր զինուորներուն զինուց յաջողութեան համար. բոլորն ալ լուրի կը սպասէին: Երեկոյեան թնդանօթները լոցին, գիշերուայ յաւարը հանգրստեան հրաւիրած էր երկուստեք մուկեղնօրէն կըրուող բանակները: Սպասուած սուրհանդակը վերջապէս հասաւ ու յայտնեց որ թշնամին կը գտնուէր Տաղաղլու անունով զիւզը՝ ուրկէ ստիպուած եղաւ յետոյ նահանջել: Թնդանօթը թշնամիին էր, զոր կը զործածէր մեծ վարպետութեամբ. հազիւ 3-400 զինուոր ունի եղեր, բայց իր թնդանօթներու եւ զնդացիներու ուժեղ կրակին պատճառաւ յառաջխաղացութիւն բաւական կը դժուարանար: Այսօրուայ կռուին մենք ունեցանք հինգ վիրաւոր եւ Հայկ. Ե. Գնդի 70 զինուորներու խմբապետ Ալիքսան ըստպանուած:

Թշնամիի ետ քաշուիլը լաւ նշան էր. ժողովուրդ ոգևորուած է, մանաւանդ որ կը լսուի թէ մեր զինուորներ վճռած են ի գին ամէն զոհողութեան թշնամու ճակատը ճեղքել:

Կռուէն ոչ մի լուր, սրտատրոփ ճակատէն լուրի կը սպասուի, մինչ ճակատը լուռ է: Ասոր փոխարէն Պարսիկներէն ստացանք լուր մը՝ որով կը յայտնուէր թէ Տաճկաց Սուլթան Րէշատը մեռած է: Կը պարզուէր ուրեմն թէ Պարսիկներ արդէն կը շարունակէին արտաքին աշխարհի հետ իրենց յարաբերութիւնները, չնայած մեր եւ Ասորիներու կողմէ ի զործ գրուած զգուշութիւններուն: Ձեռք անցուեցաւ նոյնպէս Տաճկական բանակի ծրագիրը՝ որ

նպատակ ունէր մեծ ուժով ճզմել մեզ՝ դիշերային յանկարծակի յարձակումով մը, վեց գծով ներս խուժել ու կոտորել, չխնայելով ոչ մէկին, առանց սեռի եւ տարիքի խարուժեան: Այս ծրագրով պարզ կ'երեւէր որ Թիւրքեր ոչ միայն կ'ուղէին Սալմաստ-Ուրմիա դիժն ունենալ՝ Անգլիական յառաջացման դէմ կենալու համար, այլ իրենց անհանդուրժելի դարձած այս մի բուռ կեալուրները վերջնականապէս մաքրել:

Բարերախաարար մերոնք աւելի շուտ շարժուեցան եւ տաճկական այս հրէշային ծրագիրը ահա ջուր կ'իյնար եւ այս մի բուռ կեալուրները արմատապէս քնաջնջելու փափաքնին իրենց սրտերնուն մէջ կը մնար: Ժողովուրդը հասկցաւ ծրագրի ուղին, լսեց եւ ծիծաղեց. երբ յուսահատութիւնը իր գերագոյն աստիճանին կը հասնի, վախին կը փոխարինէ հեզնող ժպիտը. եւ մեր ժողովուրդը յուսահատութեան այդ կէտին հասած էր:

* * *

Յուլիս 12ն է: Եզրայրս բաւական ոգեւորուած է մեր յարձակումովը եւ այնքան լաւատես է որ այսօր ինք սկսաւ ձիերուն խնամ տանել. ըսելով, «Մօտ օրէն ճամբայ պիտի ելլենք, անհրաժեշտ է ձիերուն լաւ նայիլ»:

Նորէն Թնդանօթի զոռոտոցներ լսելի եղան. կընիւրը կը շարունակուէր կատաղութեամբ, կերելի թշնամին քայլ առ քայլ միայն կը նահնաջէր, որովհետեւ Թնդանօթաձգութեան ձայները մօտիկէն կը լսուէին: Երեկոյեան կողմ լուր եկաւ թէ մերոնք Շէյթանաւայի մէջ պաշարած են Թիւրքերը, եւ ցարդ գերի վերցուցած են 13 գինուոր եւ մէկ սպայ:

Ժողովուրդ Ամենափոքրիկ յաջողութեան լուրով անգամ կ'ողբերուէր, միեւնոյն ատեն կազմու պատրաստ շարժուելու հրամանին սպասելով անհամբեր :

Յուլիս 13ի առաւօտն է : Կռիւը կը շարունակուի : Ամբողջ ժողովուրդը ահ ու դողի մէջ է . թըշնամիի անսպառ թնդանօթներու ոռւմբերուն պատասխանելու համար մերոնք ոռւմբ չունին . մեր կողմէ ձեռք բերուած ամենապղտիկ յաջողութիւններն իսկ պէտք եղածէն աւելի սուղի կը նստին մեզ, որովհետեւ դնդացիի եւ թնդանօթի դժոխսային կըրակին տակ մերոնք ստիպուած են միշտ հրացանային կռիւներով յարձակման դիմել : Երեկոյեան լուր եկաւ որ Սալմասացիները ունեցած են մէկ ըսպանուած 17 վիրաւար :

Տպաւորութիւնը խիստ ճնշիչ էր . արդէն սպառած բանակը իր այս յաճախակի կորուստներով օր մը պիտի չբանար ամբողջովին, առանց նոր բանակ մը կազմակերպելու համար ուժ ունենալու իր ետինն : Յուլիսի 14ն է . թնդանօթի ձայները շա՛տ խորէն կը լսուին . պարզ է որ թշնամին ետ է քաշուած . երեւոյթը ուրախակի է . բոլորի երեսը սկսեց շողալ ուրախութեան ժպիտով երբ լուր հասաւ թէ մերոնք դրաւած են Հայտէրապատը : Թշնամին չկարողանալով դիմադրել մեր անվախ դիմուորներու դրոհներուն, կը նահանջէ միշտ, իսկ մերոնք ողբերուած առանց դադարի կը հետասնդեն դայն շարունակ : Հայտէրապատի մէջ գրաւուած է թշնամիի հեռախօսը՝ որու շնորհիւ կը պարզուի որ Հայտէրապատի թշնամին սարսափահար օդնութիւն կը խնդրէ Կուտչիէն, մինչ անկէ կը սրտասխանուի թէ իրենք ալ բաւարար զօրք չունենալու համար չեն կարող օդնութեան

հասնիլ : Հեռախօսէն թշնամիի տկարութիւնը հաւկրնալով մերոնք սրտասպնդուած կը սկսին հալածել զայն :

Ժողովուրդ բանակի շարունակական յտաջխաղացութիւնը տեսնելով բաւական յուսադրուած է , արդէն բերնէ բերան կը շրջի թէ « թշնամին կը փախչի ետեւ նայելու հնարաւորութիւն իսկ չունենալով : Մեր բանակներ Սուլդուզ հասած են » : Ուրմիոյ բանտէն մօտալուտ ազատութիւնը , ու Անգլիական բանակին հասնելու հեռանկարը զինովցուցած են բուրն ալ :

Յուլիսի 17ին թնդանօթաձգութեանց ձայներ անխելի դարձած էին արդէն . կոխը այնքա՛ն հեռացած էր որ թնդանօթի ահռելի սրտաներու ձայնն անգամ չէր լսուեր :

— Ժամանակ չէ՞ յտաջ շարժուելու , կը հարցրնեն իրարու : Եւ ահա կը հասնէր արդէն զինուորներու լուրը՝ յտաջանալու համար :

— Մենք մեր պարտականութիւնը կատարեցինք , ճակատը պատռուած է , ճամբան բաց ու ապահով : Հետեւեցէք մեզի . մենք այլեւս չենք վերադառնար , չմեղադրէք մեզ . . . :

Զինուորներու ուղարկած լուրին արժէքը պարզ էր . ու ես պատրաստ էի հետեւելու զինուորներուն , եւ որպէս զի հնարաւորութիւն ունենամ տեղեկանալու թէ ժողովուրդ ե՞րբ շարժուելու է , պատրաստուեցայ մեկնիլ Պատարլու կամ իր շրջակայ ճամբի վրայի զիւղերէն մին . որովհետեւ Ատրիշան՝ ուր մենք կը գտնուէինք՝ ճանապարհէն կէս ժամէն աւելի հեռու էր , այնպէս որ եթէ լուր չբերէին , ամբողջ Ուրմիան եթէ պարպուէր մենք չպիտի իմանայինք : Այս պահուն վրայ հասան կարգ մը ծանօթներ

եւ ստիպեցին ինձ դիշեր մը եւս սպասել, խոստանալով առաւօտեան ընկերանալ մեզ: Հարկադրուած եղայ համաձայնիլ: Հազիւ թէ ձիերը իրենց տեղը կապած ու նստած էի, քաղաքէն լուր եկաւ թէ Ասորի զօրք Կուտչիի գծին՝ զոր իրեն յանձնուած էր՝ ուշադրութիւն չի դարձներ, թշնամին արդէն գրաւած է Քեարիմապատ գիւղը եւ քաղաքին կը սպառնայ: Լուրը սարսափելի էր եւ ճնշող:

Բոլորս ալ մասհոգուած, առանց խօսելու սիրտ ունենալու՝ նստած կը ծխէինք: Պահ մ'ետք Ասորիներ լուր բերին թէ լսուած լուրը սխալ է, Քեարիմապատի մօտեր միայն թշնամիի հետախոյզներն են եկած՝ անոնք ալ մերոնց կրակէն փախած են. բացի այդ 2000 Ասորական զօրք կայ եղեր այդ ճակատի վրայ...: Ասորիներու այս հերքմնալուրը անհաւատալի էր, մանաւանդ 2000 զինուորի պարագան: Յոռի տրամադրութեամբ քաշուեցանք քնանալու, հաստատապէս որոշելով առաւօտեան մարդ ուղարկել քաղաք՝ ստոյգ լուրեր իմանալու համար:

Մինչ մենք այս զրութեան մէջ էինք, քաղաքը բոլորովին տարբեր վիճակ մը կը պարզէր. հոն ժողովուրդ զինուորներու ուղարկած լուրէն ելեքտրականացած եւ միեւնոյն ժամանակ լսելով Քէրիմապատի անկման լուրը՝ առանց վայրկեան կորսնցընելու կը սկսի շարժուել յառաջ, չվստահելով Կուտչիի գիծը պահպանող Ասորիներու կորովին: Հայերու շարժումին կը հետեւին նաեւ 2510 Ասորիներ եւ այսպիսով դադթը զանգուածային կը դառնայ, եւ բոլորը կը սկսին յառաջ շարժուել բացի անոնցմէ՝ որոնք իրենց Մաշատիներու պաշտպանութեան ապաւինած տեղերնէն շարժուել չեն ուզեր: Ու Վասպուրականի ժողովրդեան միացած Սալմաստի եւ

Ուրմիոյ Հայեր եւ Ասորիներ, մօտ 70-80,000-նոց պատկառելի թափօր մը կազմած, ճամբայ կ'ելնէին դէպի Անգլիական բանակ, իրենց ետեւ ձգելով Հայրենիք մը՝ որու սիրոյն համար այնքա՞ն տառապեցան . . . :

* * *

Յուլիս 18ի առաւօտն էր, պարզ ու պայծառ առաւօտ մը: Աճապարանօք թէյերնիս կը խմենք ու միաժամանակ կը խորհինք թէ ո՞վ ուզարկելու ենք քաղաք լուր բերելու համար: Մեր այս խորհրդածութեան ժամանակ նկատեցինք որ ձիաւոր մը փոշու ամպին մէջ մշուշուած դէպի մեզ կը շտապէ: Բոլորս ալ հասկըցանք որ մի արտասովոր բամբեր էր, ու ոտքի ելած դիմաւորեցինք զինք:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, կ'ըսենք միարեւան:

— Թիւրքեր Ուրմիան զբաւեցին. ժողովուրդ խուճապի մէջ է . . .

— Վերջի վանկեր դեռ լրիւ չարտասանած ասպանդակեց ձին եւ գիւղ մտաւ: Տարօրինակ իրարանցումի մը մատնուեցանք. նախազգացումներս կ'իրականանային, եւ առանց ժամանակ կորսնցնելու տուն վազեցի եւ սկսեցի թամբել ձիերը: Նոյն միջոցին խոնուեցան տեղացի Ասորիներ եւ ապուշ ու անտարբեր կը դիտէին մեր իրարանցումն ու հապճեպ պատրաստութիւններ: Ի զուր անցան մեր խորհուրդներ՝ որ հետեւին մեր օրինակին ու ճամբայ ելնեն. անոնք միայն դիտելով կը բաւականանային ու կը կրկնէին. «Մենք շարժուելու միտք չունինք. ճամբան մեռնելու փոխարէն մեր գիւղի մէջ կը մեռնինք»: Տաս րոպէ վերջ մենք կազմ ու պատրաստ արդէն ճամբայ ինկեր էինք. չգիտեմ թէ այդ ողորմելիներ ի՞նչ վիճակի ենթարկուեցան:

Հազիւ թէ զիւղէն քառորդ ժամ հեռացած էինք զէպի Պապարլուի կամուրջ երբ հեռուէն տեսանելի եղաւ հսկայ թափօրը՝ որ աղմուկով կը յառաջանար փոշիի քօղով մը պարուրուած։ Արդէն ճանապարհի վրայ ենք, զէմերնիս փոքրիկ կամուրջ մը կայ կիսաքանդ վիճակի մէջ. ասոր վրայէն պիտի անցնի այս տասնեակ հազարաւոր ժողովուրդը, ամէն մարդ կ'աշխատի ինք առաջ անցնիլ. սկսած է սոսկալի մըրցում մը, ամէն մարդ հրելով առաջ կը նետուի ու կոխտելով ընկածներու վրայէն կ'անցնի։ Գութ, խիղճ, կարգապահութիւն, համբերութիւն անձանօթ զգացումներ են այս նահանջող ժողովուրդի համար։ Ահա էջ մը, բեռը կոնակին՝ մէկ ոտքը կամուրջի քանդուած մէկ տեղին մէջ խրուելով ինկած է, իր նոյնքան ողորմելի տէրը կուցած՝ արիւն քրտինքի մէջ կը ձգնի վեր հանել զայն, խնդրելով, պաղատելով որ օգնեն իրեն։ Ո՞վ է լսողը սակայն։ Ծիշդ նոյն վայրկեանին կառք մը կուգայ ու առանց նայելու կոխելով կ'անցնի՝ կենդանիին զիակը միայն ձգելով ճանապարհին վրայ։ Անցանք եւ մենք. չզիտեմ զոնէ անցքը բանալու համար եղա՞ւ մէկը որ այդ խեղճ անասունին զիակը մէկդի հրէր թէ ոչ։

Քիչ վերջ Պապարլուի ղետեղերքն ենք։ Ձուրը առատ է ու անանցելի. հոս ստիպուած ենք անցնիլ միակ միայնաշէն կամուրջէ մը՝ որու վրայ դարձեալ կը կրկնուի առջի տեսարանը։ Կէս ժամուայ սոսկալի քրտինքէ մը վերջ վերջապէս բախտ ունեցանք այս կամուրջէն ալ անցնելու։ Ժողովուրդ երեկոյեան ճամբայ էր ելած, մինչ մենք մօտաւորապէս 15 ժամ ուշ ենք մնացած. ուրեմն աշխատելու էր այսօր հնար եղածին չափ շատ ճամբայ կտրել՝ անոնց հասնելու համար. փորձով համոզուած էինք որ կարաւանի

վերջին ծայրը միշտ ալ ենթակայ է պատահարներու եւ յարձակմանց : Ու առանց արեւին, փոշիին, յողնածուլեան եւ անօթութեան ուշադրութիւն դարձրնելու կը քալենք անդադար :

* * *

Գիշեր է, լուռ ու խորհրդաւոր գիշեր մը : Այնքան յոգնած են մեր ձիերը որ հազիւ կը շարժուին : Ճանապարհնիս կը բարձրանայ հիմա փոքրիկ բլրակէ մը վեր, որու կողերուն ցիր ու ցան փոռած կարաւանը կը բարձրանայ յոգնած ու յամբաքայլ : Բլրակը բարձրանալով կ'իջնենք նոյնքան փոքրիկ ձորակ մը, ուր ժողովուրդ իր հազարաւոր փոքրիկ ու պլպլացող խարոյկներով կ'իմացնէ թէ հող իջեւանած է : Չնայած հսկայ բազմութեան, կը տիրէ խորհրդաւոր լուսիւն մը. մարդիկ յոգնածութենէն, վըշտէն ու սարսափէն սահմուկած, տրամադրութիւն չունին նոյնիսկ խօսելու : Մենք ալ կը յառաջանանք ձորի մէջ տեղ մը նստելու, բայց ահա ձորակի կողքին ճերմակ տարածութիւն մը ուշադրութիւննիս կը դրաւէ : Գարիի արտ մըն է, ո'չ ոք գաղեր է հոն. ուրախութիւննիս կատարեալ է այլեւս. վերջապէս ձիերն ալ կը բախտաւորուէին :

Ուրմիոյ Պարսիկներ քնած չէին, անոնք ամենայն վարպետութեամբ Հայ-Ասորական բոլոր գործողութիւններ լրտեսելով օր օրին կը տեղեկացնէին իրենց հաւատակից, ազատարար Տաճկական բանակին, միւս կողմէն պատրաստուելով մեծ օրուայ մեծ յողթանակին : Ու ահա բարերար Ալլահը իրենց կ'ուղարկէր ցանկալի օրեր : Ժողովուրդ Ուրմիայէն շարժուելուն պէս, լուր կը զրկեն թիւրքերուն որոնք բանակի քաղաքէն հեռանալու պատահութենէն խրա-

խուսուած Կուտչիի զծով կը ձեռնարկեն ուժեղ յարձակման մը, զի՞ծ մը՝ որ յանձնուած էր Ասորիներուն եւ Ուրմիոյ Հայ գումարտակին՝ հրամանատարութեամբ Վանի Հայկ. Ե. Գնդի սպաներէն Տիգրան Ժամհարեանի: Ասորիներ՝ որոնք ժողովրդեան քաշուելով խելքերնին կորսնցուցած՝ առիթ կը փնտռէին թողուլ բանակը եւ խառնուիլ ժողովուրդին. այս կատաղի յարձակումէն շմորած կը լքեն ղերքերնին եւ կը փախչին զէպի քաղաք, առանց խորհելու որ՝ թշնամին զիրենք հետապնդելով քաղաք պիտի մըտնէր, զիրենք ալ իրենց ժողովրդի հետ կոտորելու համար: Ուրմիոյ Հայ գումարտակը սակայն իր պարտականութեան գիտակից, Ասորիներու ճակատը լքելէն վերջ մանաւանդ աւելի զայրացած, կուրծք կուտայ թշնամիի գրոհին մինչեւ Յուլիս 18ի կէսօր՝ երբ դիմադրել այլեւս անհնար կը լինի եւ կ'ստիպուի ետ քաշուիլ: Սակայն մինչ այդ, Պարսիկներ իրենց զերի մէջ էին արդէն, Յուլիս 18ի կէսօրէն վերջ երբ Հայկական Շտապն եւս մեկնած էր, ամբողջ քաղաքի ազգարնակչութիւն զինուած ամեն կարգի զէնքերով՝ դուրս կը թափուի փողոցներ եւ կ'սկսի սոսկալի ջարդը: Չսպուած վրէժը մոլեղնութեան էր փոխուած, անոնք կը ջարդէին անխնայ, մեծ թէ փոքր, կին թէ երեխայ. ի զո՛ւր ողորմելի Ասորիներ ծնկաչոք կ'աղաչէին իրենց սիրելի մազատտիններուն խնայել իրենց: Ահա այսպիսի տեսարանի մը ականատես կը լինի Ուրմիոյ գումարտաջը քաղաք մտած ատեն, ուրկէ փոքր թիւ մը միայն կը յաջողի ազատուիլ միայն: Կատաղած Պարսիկներ քաղաքի մէջ մնացող Հայ թէ Ասորիներ ջարդելով չբաւականանալով, կ'աճապարեն Պապարլուի կամուրջը եւ զբաւելով զայն ետ կը զարձնեն սարսափած ժողո-

վուրդը եւ կը տանին կոտորելու : Հոս, այս կամուրջի վրայ եւս դումարտակը կատաղի ընդհարում մը կ'ունենայ թշնամիի հետ, տալով բաւական թիւով սպաննուածներ եւ զերիներ :

Պարսիկներ հասած էին իրենց մուրազին. այժմ արդէն իրենց ձեռք կը գտնուէր ժողովրդեան հոծ բազմութիւն մը՝ որուն արիւնը եւ հարստութիւնը պիտի բաւարարութիւն տային իրենց դազանային բաղձանքներուն . . . :

Մինչ դիշերուայ ժամը 12ն էր. ուղիղ երեք ժամ հանդստանալէ վերջ ստիպուած էինք շարժուել, ժողովուրդ արդէն ճամբայ ելած էր՝ հակառակ դեռ տիրող խաւարին :

Արշալոյսը մօտ է, մութը դալարարար կ'անօտրանայ, յաղթական արշալոյսը առաւօտեան մեղմանոյշ զեփիւռի համբոյրէն գինուլցած իր վարդակարմիր գլուխը կը ցուցադրէ :

Հայտէրապատ հասեր ենք : Կիսախաւարի մէջէն խորհրդաւոր լուսթեամբ մը ցաքուցրիւ շարուած են Ռուսական կայսրութեան փառքը յիշեցնող քարաշէն սիրուն տուններ՝ ուր ամիսներ առաջ մեղուաջան գործունէութիւն մը կար. ներկայիս լուռ են անոնք. մինա'կ, լքուած, անտէր ու սղաւո՛ր . . . : Ահա դէպի ծովափ երկարող հանրակառքի գիծը՝ որու վրայ դեռ կառքեր են մնացեր շարժուելու, աշխատելու պատրաստ. անոնք մի ժամանակ նաւահանգստէն տենդաղին գործունէութեամբ պաշար կը փոխադրէին Ռուսական յաղթական բանակներուն, իսկ, այժմ անգործ են ու լքուած. արեւէն ու անձրեւէն ժանգոտած են իրենց անիւները :

Փոքրիկ վայրէջք մը, եւ ահա՛ առջեւնիս է Սուլտուղի բարերեր դաշտը՝ իր փոքրիկ սիրունիկ գիւ-

դերով: Տանջուած կարաւանը կը խուժէ հանդիպած առաջին զիւղը աներկիւղ, առանց մտածելու թէ տէրերը կրնան թշնամի ըլլալ: Բիչ մը հանգստանալ, ձիերը կշտացնել եւ ապա շարժուել: Ահա՛ մեր որոշումը, ու զիւղէն դուրս, բաց դաշտի մէջ կ'իջեւանենք:

Պէտք էր մեր մասին ալ մտածել: Բաղդերնիս յաջող էր. գիւղացիներու խումբ մը՝ նստած մեզմէ քիչ հեռու, կովեր կը կըթեն կաթսաներու մէջ: Ճերմակ ու փրփրուն կաթը ախորժակնիս սրեց, մօտեցայ անոնց, պարսկական 5 դրան (2½ ռուբլի) վճարեցի, ազաչելով որ ձեռքիս տմանը լեցնեն: Դիմումս յաջողուեցաւ ու ես կաթը առած վերադարձայ ուրախ՝ ուրախ: Ուտելու տարբեր բան չունենալով, սկսեցինք հացը կրծել եւ ամանէն ումպ, ումպ խմել, ու այսպէս տասն եւ հինգ վայրկեան շարունակ շրջան կազմած, կաթով լիք ամանը ձեռքէ ձեռք կը պտտցնէինք, մինչեւ որ կաթի վերջաւորութեան հետ միատեղ ստամոքսնիս ալ լեցուեցաւ:

Ժամէ մը իվեր էր որ խոտերու վրայ հանդրստանալէ ետք ստիպուած էինք ճամբայ ելլել, բայց այնքան յողնած ենք որ այլեւս քալելու մասին ոչ ոք չ'ուզեր խօսք ընել: Ահա՛ սակայն կ'անցնի բժշկական գնացքը իր հինգ վիրաւորներու փոքրիկ կառքերով, որոնց առջեւինին վրայ կը ծածանի Կարմիր Խաչի դրօշակը. ուրեմն հարկ էր շարժուել:

Ժամ մը վերջ գետի մը կը հանդիպինք, որու վրայէն իր ծերունի գլուխը ցոյց կուտայ Պարսկական հին բաւական խոշոր կամուրջ մը: Կ'անցնինք միւս ափը, դէս ու դէն լեցուած են ցորենով եւ ալիւրով լիքը պարկեր, անկողիններ, պղնձեղէններ,

եւ այս կարգի հազար ու մի իրեղէններ : Խեղճ ժողովուրդ , մինչեւ հոս բերելէ յետոյ ճանապարհի երկարութենէն եւ հաւանարար կենդանիներու յոգնածութենէն յուսահատ ձգած է , հող թափած է նոյն խակ ալիւրը , իր սնունդը , վստահ չը լինելով թէ երկու օր վերջ պատառ մը հաց պիտի կարողանա՞յ ճարել . բայց մի ժամուան համար ապրելու յոյս չունեցողը բնականարար երկու օրուան հացի մասին ալ այնքան չի մտածեր . . . :

Կէս օր է : Յուլիսեան տաքը քրտինքի մէջ խեղճած է բոլորն ալ : Բլրակներով շրջապատուած ընդարձակ կանանչ դաշտի մը մէջէն կը քայլէ զաղթականը : Ո՞ւր գնալ , ո՞ր ճամբով , ո՞չ ոք գիտէ . ուղեցոյց չկայ , բոլորը գիտեն միայն որ «Սէյնի-Գալէ» պէտք է երթան , ուր կը գտնուին Անգլիացիներ . բայց ո՞ւր է այդ Սէյնի Գալէ ըսուած տեղը , ո՞ր ճամբան կ'առաջնորդէ այդ կողմը , ո՞չ ոք գիտէ . ու անգլուիս իր բախտին ձգուած , յոգնած ու յուսահատ ժողովուրդ մի քանի մասերու բաժնուած , տարբեր ուղղութիւններով սկսան յառաջանալ : Ծուարած կանգնած ենք , ո՞ր խումբին հետեւինք , որո՞ւ բռնած ճամբան ուղիղ է , չգիտենք . սպասելն ալ իզուր էր : Տատամսումներէ ետք ձախ թելով մեկնող խումբին ճանապարհը ձեռք առինք , որ մեր կարծիքով ամենաճիշդը լինելու էր՝ աշխարհացոյցի ուղղութիւն աչքերնուս առջևը բերելով :

Երեկոյ է , կամաց՝ կամաց խաւարը կը նստի , ծովը դարձեալ ձախ կողմերնիս կը մնայ . այժմ մենք կը գտնուինք Հայտէրապատի գիմաց՝ ծովի միւս ափը : Հեռուէն գիւղ մը կ'երեւի՝ ուր հասած գաղթականութիւնը բազմաթիւ խարոյկներ է վառած . կ'աճապարենք անոնց միանալ : Վերջապէս կը հաս-

նինք. կզըլ-կալէ անուշով մի գիւղ է, այժմ անմար-
դարնակ. ո՞ւր են դացած բնակիչներ. ինչո՞ւ են զա-
ցած. չգիտենք. եւ ուղիւն ասած այնքան ալ չենք
հետաքրքրուիր անոնցմով. այնքան սոսկալի յոգնած
ենք որ ձիեր արածելու ձգելով ալ մենք կը պառկինք
քնելու:

Յուլիս 20ի արշալոյսը ծագած էր: Ժողովուրդը
ուտքի վրայ էր, բայց ճամբան ոչ ոք զիտէր, բոլորը
չուարքի մէջ էին, զինուորական ոյժ մը կազմելու
մեր առաջարկին ունկնդրող չ'եղաւ. ստիպուած ե-
ղանք այդ մաքէն ալ հրաժարելով բազդին եւ կոյր
գիպուածին թողուլ ամէն բան:

Ու այսպէսով հոս տեղի զաղթականներն ալ եր-
կու ճիւղի բաժնուած ճամբայ կ'իյնան: Ասորիներու
մեծ մասը առաջին խումբին մաս կը կազմէ, մինչ
մենք կը հետեւինք երկրորդին՝ որ աւելի բազմա-
մարդ է եւ Հայերէ կը բաղկանայ: Ճանապարհը
կ'անցնէր ընդարձակ եղեգնուտներու մէջջն: Բոլորս
ահ ու զոզի մէջ ենք: Յանկարծ նկատեցինք որ ժո-
ղովուրդը կանդ առաւ. մենք ալ կանդ առինք. վախ
մը պատեց մեզ. ի՞նչ եղաւ. ինչո՞ւ կանգնեցան:
Յետոյ տեսանք որ ժողովուրդ սկսաւ ետ դառնալ.
Երեւի ճանապարհը սխալ է մտածեցինք մենք. քիչ
վերջ քովերնիս եկան Սարի-Պէկի ձիւորներէն եր-
կուքը եւ յայտնեցին որ «Մենք զիշերս այստեղէն
անցանք, բայց այս ճամբան սխալ է, բացի այդ՝
կամուրջներն ալ բոլորովին քանդուած են, եւ ճանա-
պարհը անանցանելի է, ետ դարձէք մենք ձեզ կ'ա-
ռաջնորդենք»:

Մոլորեալ ոչխարի նման, անծանօթ դաշտերու
մէջ գեղերոյ ժողովուրդը հետեւեց այս երկու երի-
տասարդներուն:

Այժմ ճանապարհը՝ ուրկէ կ'անցնի մեր կարաւանը՝ կ'երկարի ուղիղ եւ ընդարձակ դաշտի մը մէջէն, որու աջ ու ձախ կողմեր փոռուած են բազմաթիւ գիւղեր: Արդէն հեռուէն կը նշմարուին աշխատող գիւղացիներ, ու մենք կը նախանձինք անոնց բախտին ու երջանկութեան...:

Կէսօր է. արեգական այրող ճառագայթներու եւ բարձրացած փոշիի թանձր ամպի մէջ կիսահեղձ վիճակով, կը շարժի մեր կարաւանը գէպի Միանտապ կոչուած Պարսկական քաղաքը՝ որ հեռուն իր բազմաթիւ այգիներու զով գրկին մէջ կը հանգչի: Պահ մ'ետք կը հասնինք արդէն Միանտապ, ընդարձակ հրասարակի վրայ կը բարձրանան դարբի ու ցորենի շեղջեր, ցաք ու ցրիւ ինկած կամփելու զործիքներ, որոնցմէ կը յայտնուի թէ զեռ նոր դադար առած է աշխատանքէ: Վար կ'իջնենք ձիերէն ու ծառերուն շուքին տակ կը նստինք, հոս են նաեւ Հայկական Ս. Գնդի զինուորները: Ուրախ ենք անոնց հանդիպելնուս համար, որովհետեւ այս անձանօթ ճանապարհին, առանց զինուորական ոյժի յառաջանալը խելացութիւն չէ:

Հագիւ թէ ժամուան մը չափ հանդստացած էինք երբ խեցինք որ չրջակայ Քիւրտ պէկերէն(*) մին՝ խելով որ գողթականներու կարաւանը անցնելու է այս ճանապարհով, իր 200 մարդոցմով՝ եկած համոզած է եզեր քաղաքիս Պարսիկներ՝ որ իրեն օժան-

(*) Վերջէն հաստատուեցաւ որ այդ չարագործը Ուրմիացի մի Պարսիկ էր, Մէնիտ Սուլթանէ անունով եւ քաղաքի յայտնի հաճուածներէն: Ասորիներ

դակեն այս յողնած կարաւանը ջարդելու եւ կողոպտելու համար: Սակայն Պարսիկներ իրենց անդորրութեան վրդովումէն վախեցած՝ խնդրած են եղեբոր իրենց չըջանի մէջ նման գործի մը չը ձեռնարկուի, եւ թէ իրենք համամիտ չեն նման ձեռնարկի մը: Լուրը տխուր է եւ ծանր. ի՞նչ պիտի լինի ժողովրդեան վիճակ եթէ իրաւ այդ կարգի դաւադրութեանց պատահինք, երբ մանաւանդ կազմակերպուած վաշտ մըն անդամ չունինք այժմ մեր հետ:

Քանի մը ժամ հանգստանալէ վերջ Հայկական Ն. Գնդի զինուորներու հետ ճամբայ կ'եննենք: Քաղաքէն զուրս՝ զետի վրայ Ռուսներէն շինուած է մեծ ու երկար փայտաշէն կամուրջ մը, ռւրկէ կ'անցնինք հոսանքի միւս կողմը: Ճանապարհը հոս երկուքի կը բաժանուի. բարեբախտարար Պարսիկ մը եկաւ ու Ալլահի անունով երդուելով իր ցուցուցած ճամբի ճշդութեան մասին՝ ցոյց տուաւ ճանապարհը՝ պատուիրելով ուղիղ յառաջանալ միշտ դէպի աջ: Երբ մենք քիչ մը տատամսեցանք ու կասկածեցանք Պարսիկի ուղղամտութեան վրայ, նա ձեռք իր ճերմակ

այրած էին իր տունը, երբ այդ լուրը իրեն կը հասնի, (որովհետեւ ինձ Ռւրմիայէն փախած էր) Քիւրտերէն եւ Պարսիկներէն 200 հոգիւնոց խումբ մը կը կազմէ եւ կը սկսի գաղթականները հետապնդել, իբրեւ ըսելով. «Ես Հայերու եւ Ասորիներու գանկերէն Ռւրմիոյ մէջ աւելի մեծ տուն մը պիտի շինեմ ինձ համար»: Կ'ենք-աղբուի որ նամբի վրայ յարձակողներու գլխաւոր ղեկավարը այս Մէնիտ-Սուլթանէն էր:

մօրուքին տանելով ըսաւ. «Այս տարիքիս մէջ, երբ մէկ ստաքս գերեզմանի մէջն է ու միւսը դուրս, ինչո՞ւ պիտի այսքան ժողովրդեան մեղքը քաջեմ ու սխալ ճանապարհ գոյց տամ»: Ծերուկի արտայայտութեան մէջ զգացինք որ բարի մարդու մը յատուկ անկեղծութիւնը կը յայտնուէր, ու բռնեցինք իր ցոյց տուած ճանապարհը: Այս անգամ գրեթէ կարաւանի առաջնորդներն էինք: Առջեւնիս է Կարավերան անունով Պարսկական խոշոր գիւղ մը. տակաւին արեւ կայ. չարժէ նստիլ, մանաւանդ որ Յուլիոսեան եզանակին տւելի նախընտրելի է երեկոյեան ճամբորդութիւն: Կամաց, կամաց խաւարը կը թանձրանայ. Պարսիկներ չկան ճամբաներու մասին հարցուփորձ ընելու համար՝ որպէս զի անգամ մը եւս ճանապարհներս կորսնցնելու վտանգին չենթարկուինք, ու ստիպուած եզանք գիշերել բաց դաշտի մը մէջ:

Գիշերը ուշ ատեն նորէն տխուր լուր մը կը հասնի. «Թշնամին Ուրմիոյ մէջ մնացած եւ Պատարլուի կամուրջէն վերադարձուցած իր զոհերու արիւնով շրաւականացած, մանաւանդ ընդդիմադիր սյժի մը չհանդիպելէն սրտապնդուած հասած է մինչեւ Հայտէրապատ՝ ուր դիժը կտրելով արեան հեղեղներու մէջ խեղդած է իր մնացող փախտական խեղճեր. . .»: Տպաւորութիւնը յոռի է, կազմակերպուած բանակ չկայ, իսկ եթէ քաջալերուած թշնամին շարունակ հետեւելով ժողովրդեան այսպէս կտրէ կարաւանի գիծը, հաւանաբար ոչ ոք պիտի յաջողի ողջամբ Անգլիացիներուն հասնիլ: Ի՞նչ ընել սակայն: Իրականութիւն էր եւ տխուր իրականութիւն. Վանէն մինչեւ հոս բախտին յանձնուած, սեւաւոր կարաւանը շարունակելու էր կրկին իր ճանապարհը:

Առաւօտ է: Դաշտային աշխատանքներու ամենազեղեցիկ պահը. ահա դէմերնիս կ'ելլեն խումբ մը Պարսիկներ՝ մանկազը ձեռքերնին, եզերը առջեւնին ձգած. կ'երեւի հնձելու կ'երթան: Կը հարցնենք, մատով ցոյց կուտան ճանապարհը՝ չմոռնալով յայտնել որ, այսօր զեռ արեւմայր չմած հասնելու ենք Սային կալէ: Այ տառապանքնիս պիտի վերջանայ, 8—10 ժամուան ճանապարհ միայն ունինք, ազատութիւնը մօտ է:

Ճանապարհնիս կ'անցնի բազմաթիւ Պարսկաբընակ դիւղերէ: Հոս սակայն տրամադրութիւններ բոլորովին տարբեր են. մինչեւ այժմ ճանապարհին հանդիպած բոլոր դիւղերու ազգարնակչութիւնը կարծես կարեկցական վերաբերմունք մը ցոյց կուտար այս տանջուած ժողովրդեան, մինչ ասոնք զըսպուած կատաղութիւն մը, զզուանք մը կը ցուցնեն, նոյն խակ պուտ մը ջուր տալու կը զլանան. միւս կողմէ կը ջանան հրացաններ գնել իւրաքանչիւրի համար խոստանալով 20—30 ոսկի գումար մը. բայց ո՞վ համարձակի իր հրացանը ծախել, ո՞վ կ'ուղէ պարապ ձեռքով անցնիլ այս արիւնարբու ժողովրդեան մէջէն: Ու կը յառաջանանք ճնշուած եւ մտախոհ:

Կէս օր է. յուզած ենք, ձիերը անօթի են, ընդարձակ առուոյտնոցի մը մէջ կը նստինք հանդստանալու: Հոս են նաեւ Ե. Գնդի տղայք, որոնք կանչել տալով մօտակայ դիւղէն նալարան եւ գունման նըլադել կուտան ու կը պարեն. ի՞նչ հաճոյք, ըսել է այլեւս ուրախանալու իրաւունք ունինք ու առիթ: Փամ մը հանդստանալէ յետոյ ճամբանիս կը շարունակենք:

Մահմատջուղ անունով փոքրիկ քաղաքն ենք.

Ճանապարհը շուկայէն կ'անցնի, բոլոր խանութներու մէջ արձակ համարձակ կախուած են զանազան տեսակի հրացաններ. բնակչութիւն հետ արտա-
յայտութիւն մը ունի, կարծես պատրաստուած են կռուելու եւ առիթի կը սպասեն: Կրած տպաւորու-
թիւննիս վատ է: Չորս կողմէն կը շրջապատեն մեզ եւ կը հարցընեն թէ ծախու գէնք չո՞ւնինք. բացա-
սական պատասխան ստանալէ վերջ մոմռալով կը հեռանան: Տրամադրութիւննիս աւելի վատացաւ մանաւանդ երբ տեղացի Պարսիկներէն լուր առինք թէ Սայինկալէ Անդլիացի չկայ, այլ անոնք կը զըտ-
նուին Թիֆլիս-Թէփէ ըսուած տեղը, Սային Կալէէն երկու օրուան ճամբայ անդին: Աստուած իմ, ի՞նչ դժբախտութիւն է այս: Ի՞նչպէս ազատելու է այս արիւնարբուններու ձեռքէն մեր յոգնած ժողովուրդը: Ու ընկճուած կը յառաջանանք: Կէս ժամ վերջ Սային Կալէ պիտի մանենք, ի՞նչ ընդունելութիւն պիտի գտնենք տեղւոյն բնակչութենէն...:

Մինչ մենք այս կերպ ընկճուած տրամադրու-
թեամբ կը յառաջանայինք՝ յանկարծ գէմերնիս ե-
լաւ 14 տարեկան Պարսիկ տղայ մը, որ մեզ տեսնե-
լուն պէս.

— Ինկլիզ կէլտի, Ինկլիզ կէլտի... կրկնեց իրար ետեւէ: Մենք կարծեցինք թէ այդ փոքրիկն ալ կը հեզնէր մեզ, ու առանց մտածելու խիստ կոպիտ լեզուով մը պատասխանեցինք իրեն: Սեղծ տղան որ երեւի ուրախութեան բացազանչութիւններ լսել կ'ենթադրէր, մեր կոպիտ վերարբերմունքէն վախե-
ցած, զլուխը առաջ ծոկեց ու կամաց մը ճամբէն դուրս ելաւ... Հազիւ քսան քայլ յառաջացած էինք, ահա հասան մի քանի ձիաւորներ մեր զինուորներէն որոնք ողելորութեամբ. «Աւետի՛ս, աւետի՛ս, Անդ-

լիացին եկաւ» կը պոռային ոգեւորութիւն մը յառաջ բերելով ժողովրդեան մէջ: Այլ ուրախութեանս չափ չկար. կը մտրակենք ձիերը ու կը մտնենք Սային Կայէ ճիշդ այն բոպէին՝ երբ միւս կողմէն ալ Անդլիացիներ կը հասնէին: Ծուկայի ճիշդ մէջտեղ տեղւոյն Պարսիկներ սարսափով նկատեցին այս ինքնակոչ հիւրերը, որոնք առաջին իսկ հանդիպումով՝ գլխարկներն հանած, սիրալիք կը բարեւէին զիրար: Զորիներ հեծած, մաքուր հաղուստներով ու գլխարկներով այս զինուորները իրենց ներկայութեամբ այնքան ոգեւորեցին տառապանքի կարաւանը՝ որ աշխարհի ոչ մի գանձ պիտի կրնար այդքան ուրախացնել զիրենք: Այլ ապահով որ վերջապէս ազատուեցանք մահուան մղձաւանջէն, կ'ուզողուինք քաղաքի արեւելեան կողմ ու այգիի մը ծառերու շուքին տակ կը նստինք:

Եղբայրս որ Սալմաստէն մեկնելէն ի վեր առհասարակ սակաւախօս ու մտախոհ էր, այսօր բըրբիւլ դարձած, մեծ ոգեւորութեամբ կը պատմէ, կը խնդայ ու կը զուարճանայ: Հեռզհեռէ ժողովուրդ եկաւ ու լեցուեցաւ իր հետ բերելով նոր նոր առխուր լուրեր: Անոնք պատմեցին թէ Ուրմիայէն յառաջացող թշնամին չըջակայքի Պարսիկներու հետ միացած՝ դաղթականներու ճամբան կտրելով ջարդեր է կատարեր Միանտասպի եւ Սուլթուզի կամուրջներու մօտ: Թշնամին զործածած է նաեւ Թնդանօթ. որով կը հասկցուի թէ Տաճիկ կառավարական զօրքեր ալ զործածեր են:

Սակայն, ո՞վ մեռած, ո՞վ կ'ապրի, ո՞րքան ժողովուրդ ճամբաներու այս յարձակմանց միջոցին կոտորուեցաւ, ու գերի տարուեցաւ, ոչ ոք զիտէ: Բոլոր յարձակումներու վայրերն ալ ժողովուրդ ինք-

նարերարար դիմած է ինքնապաշտպանութեան՝ մը-
ղելով յուսահատի կատաղի կռիւ եւ ազատուողներ
մեծ մասամբ իրենց կեանքը կը պարտին իրենց իսկ
սեփական ոյժին ու իրենց հրացաններուն . . . :

Միակ ժողովրդեան մարդը եղաւ Կ. Համբար-
ձումեան, որ մինակը շարունակ կարաւանի վերջին
մասին մէջ կը կենար եւ վտանգի պահուն ժողո-
վրդի զինուորներէն ոյժ կազմակերպելով վտան-
գը կը հեռացնէր ու ժողովուրդը կ'ազատէր :

Սային Կալէ պարտէզի մէջ նստած ենք, ապա-
հով որ այլեւս վտանգ չկայ : Այժմ ամբողջ ուշադ-
րութիւննիս դարձած է սնունդի վրայ . բաւական
ժամանակէ ի վեր կանոնաւոր սնունդ չենք ստա-
ցած :

Ի՞նչ պէտք է ընել, դրամ չունինք . միւս կող-
մէն անօթութիւն անտանելի կը դառնայ : Սալմաս-
տէն դուրս ելնելէն վերջ մեր փոխադրութեան մի-
ջոցները կը կազմէին երեք ձի եւ մի էշ, այժմ ու-
րիշ հնարաւորութենէ զուրկ լինելնուս՝ ստիպուած
եղանք մեր էջը ծախել, բայց վաթսուն Պարսկական
դրանով (մէկ դրան Ռուսական մէկ ռուբլի արժողու-
թեամբ կը ծախսուէր, մինչ պատերազմէն առաջ
երկուք ու կէս Օսմ. դուրուշ էր) ծախուած էջը մեր
փոխադրութեան դորձը ղժուարացնելէ զատ՝ օգուտ
մը չունեցաւ գրեթէ, ի՞նչ արժէք ունի վաթսուն դը-
րանը : Անհրաժեշտ էր դրամ ունենալու ուրիշ ճար մը
խորհիլ, ու ծախելու ուրիշ յարմար բան մը չու-
նենալով ստիպուած եղայ իմ այնքա՞ն սիրած մալ-
գէր ատրճանակս ծախել Սարի-Բէկլի զինուորներէն
միոյն որ տասը Օսմ. ոսկի կուտար : Տատամսելու
կարիք չկար, տասը ոսկին բաւական լաւ գումար
մըն էր, ու բաւական երկար ժամանակի մը համար

կ'ապահովէր մեր սնունդը. հապա ձին, օ՛հ դա արդէն հիանալի էր, ալ առանց երկար բարակ մտածելու փոխանակութիւնը կատարեցինք. կէս ժամ վերջ արդէն բաւական առատ պաշար ունէինք:

Անդլիացիներ որոնք յիսնեակով մը եւ քանի մը զնդացիրներով միայն եկած էին հոս, այն ալ ժողովուրդը ղիմաւորելու համար միայն, մեզ յայտնեցին որ ժողովուրդը տակաւին պէտք է յառաջանայ Համատան, իսկ Թիքէն-Թէփէ հասնելուն սընունդի եւ հանգստեան վերարեւել պէտք եղածներ կը արուին:

Յուլիս 24-ի առաւօտն է. մայրիկս զբաղուած է կերակուր պատրաստելով, իսկ հարսը ճերմակեղէններ կը լուայ: Յանկարծ Սային Կալէէն լսելի կ'ըլլան հրացանի որոտներ. բոլորս իրար անցանք, ի՞նչ է այս, ի՞նչ պատահեցաւ: Մէկէն կայծակի արագութեամբ լուր տարածուեցաւ թէ թէնամին եկած է Մահմատջուղ զիւղ ու սկսած է կոտորած...: Պարզուեցաւ դարձեալ զժոխային տեսարան մը, աղմուկ, իրարանցում, խուճա՛պ... կը փախչին բոլորն ալ: Մենք ալ անմիջապէս վերցուցինք թաց ճերմակեղէնները, իսկ կերակուր նոյնութեամբ կըրակի վրայ ձգելով անոնց միացանք: Անդլիացիներ իրենց զնդացիրներով ղիմեցին կոռւի վայրը, մինչ ժողովուրդ յուսահատ բռնեց Թիքէն Թէփէի ճանապարհը:

Այս ընդհանուր շփոթութեան մէջ երբ ամէն մարդ քայլ մը աւելի յառաջ անցնելու մտադրութեամբ կը ձգէր իր ունեցածները, կը հանդիպիմ Վաղարշակ Շիրվանեանին՝ որ իր մի քանի ձիաւոր-

ներով 200-250) Թիւրք գերիները (*) առջեւ ձգած կ'երթար, չորս կողմէն երիտասարդներ կ'առաջարկէին իրենց յանձնել այս անպիտանները ջարդելու գործը, բայց նա կ'ընդդիմանար: Մօտեցայ իրեն.

— Ինչո՞ւ Վաղարշակ ջան, ըսի դառնութեամբ, ինչո՞ւ այդքան հողատար էք, արժանի՞ են ատոնք այդ հողատարութեան: Վաղարշը կարծես զարմացած, ինծի նայեցաւ ու ըսաւ.

— Արժանի են որովհետեւ գերի են. Հայկական մեծամեծութեան, Հայկական խղճին ու հասկցողութեան դէմ է գերիներու հետ այլ կերպ վերաբերուիլ:

Հայ զինուորի բերնէն ելած այս յանդիմանականը մուրճի մը նման իջաւ գլխուս. ցեղին վեհանձն հողին էր որ կը յայտնուէր, ու ես պահ մը հպարտ գգացի ինքզինքս, զաւակը այդ մեծ ցեղին՝ որ տառապանքի մէջ անզամ կրցեր էր մնալ իր բարձրութեան վրայ:

Եղբորս դէմքը նորէն մռայլած է, նորէն սահաւախօս է դարձած: Տանջուած կարաւանի հազուադիւր բախտաւորներէն ենք մենք, չորս անձէ կը բաղկանայ մեր ընտանիքը, ու չորսս ալ մէյ մէկ ձի ունինք: Ճանապարհը ուրկէ կ'անցնինք հիմա՝ բլրային է. մերթ կ'իջնանք ձորեր, մերթ կը բաձրանանք բլուրներ, որոնք այնքան ուղղաձիղ են որ յաճախ ձիու վրայ նստիլ կարելի չլինելով ստիպուած ենք

(*) Տաճկական բանակէն Հայերու եւ Ասորիներու կողմէ բռնուած Թիւրք զինուորներ էին, որոնցմէ նահանջի օրը հազիւ այսքան բերել յաջողած էին: Նախապէս 500-էն աւելի էր անոնց թիւը:

իջնել ու քալել: Կամաց՝ կամաց խաւարը կը թանձ-
րանայ, այլեւս ճանապարհ շարունակել անհնար է.
72 ժամ է ի վեր անընդհատ կը քալինք առանց ա-
մենափոքրիկ հանգիստ մը իսկ տալու ճիերուն: Ո՞վ
սիրտ ունէր հանդատանալու մասին խորհիլ երբ ա-
մէն մի վայրկեան մէն մի բլուրի կատարէն կը սպաս-
ուէր թշնամիի համազարկերուն...:

Բայց այլեւս շարժուիլ անհնար է, խաւարը մէկ
կողմէն, յոգնածութիւն միւս կողմէն կը հարկադրեն
հանդատանալու մասին խորհիլ, ու ձորամէջ գիշե-
բելու համարձակութիւն չունենալով բարձր բլու-
րի մը զազաթ մեր կարաւան կանգ առաւ: Ո՞չ մի
լոյս, ոչ մի կրակ կայ այս գիշեր, սիկար ծխողներն
անգամ զգուշութեամբ կը ծխեն՝ կրակը հեռուէն
տեսանելի չդարձնելու համար: Անծանօթ շրջան է,
անվերջ քարքարոտ բլրակներու մի տողանցք. չորս
կողմերնիս Պարսիկներ են՝ որոնց վստահիլ խելա-
ցութիւն չէ:

Մարաւ ենք, ջուր չկայ...: Կամաց՝ կամաց ե-
տեւէն հասնողներ արդէն հետերնին կը բերեն սեւ
լուրերու շարանները. որքա՞ն ահաւոր են անոնք,
եւ որքա՞ն կը համապատասխանեն գիշերուայ այս
խաւարին: Թշնամիի հեծելազօրքը Մարաշայի գծով
կը հասնի Մամատջուզ փոքրիկ քաղաքը, որու ա-
րիւնկզակ Պարսիկները արդէն ջարդելու պատ-
րաստ էին եւ առիթի կը սպասէին...: Կոտորածէն
ճողոպրողները լուր կը բերեն Սէյնկալէ՝ Կոստի
Համբարձումեանին որ հազիւ ժամ մը առաջ հասած՝
կը պատրաստուէր սափրուելու որպէսզի Անգլիա-
ցիներուն այցի երթայ. մինչ ան դանաղան խօսքե-
րով կը ջանայ միտիթարել այդ ազատուածները, ա-
հա լուր կը հասնի թէ թշնամին արդէն Մամատջուզ

է մտեր եւ սկսեր իր բարբարոսութեանց: «Ժողովուրդի հետ եւ ժողովուրդի համար» վեհ զազաւարտով տարուած՝ Համբարձումեանը յանկարծակիի եկած այս լուրէն, չնայած իր զինուորական շլինելու հանգամանքին, կը հեծնէ իր ձին եւ շուրջ դռնուած քանի մը ձիաւորներուն «Դէ՛հ, քալենք տղաներ» ըսելով յառաջ կ'անցնի: Տասը վայրկեանէն իր ձիաւորներով արդէն Մամատջուզ քաղաքը կը հասնի, ուր կը հանդիպի Անգլիական տարազով՝ մաքուր հագուած յիսնեակի մը, կը մօտենայ ու կը բարեւէ Անգլիերէնով. նոյն լեզուով կը պատասխանէ իրեն յիսնեակի սպաներէն մին՝ որ գերմանացի մը եւ զինուորներու հրամանատար լինելը կ'ենթադրուի: Յետոյ թշնամիի խումբէն մէկը Թիւրքերէն լեզուով Համբարձումեանին ընկերացող զինուորներէն միոյն կը հարցնէ թէ «որո՞նք են ձեր զլխաւորներ»: Չինուորներ իրենց դիմացիները Անգլիացի կը կարծեն, եւ միամտարար ցոյց կուտան Համբարձումեանը եւ Մուրատ Տիրօեանը: Յանկարծ հրամանատարը «վուրուն վաթան ուշախլարը» (զարկէք հայրենիքի զաւակներ) հրամանը որոտալէ վերջ, ձեռքին պատրաստ բռնած սուրը կ'իջեցնէ Համբարձումեանի վրդին, մինչ զինուորներ կը յարձակին Մուրատի վրայ: Համբարձումեան առաջին իսկ հարուածէն ծանր վիրաւորուած կ'իյնայ «Մուրա՛տ, Մուրա՛տ ի սէր Աստուծոյ, ազատի՛ր ինձ...» բացազանչելով: Իսկ Մուրատ ատրճանակով հրաման ընող սպան սպաննելէ վերջ՝ վեց թեթեւ վէրքեր ստանալով փախուստի կը դիմէ: Դէպքը այնքան արագ եւ այնքան անակնկալ կը պատահի որ երկուստեք շփոթուած փախուստի կը դիմեն: Մերոնք մինչեւ ինքզինքնին գտնելով նորէն կը վերադառնան՝ 3-4 ժամ անցած

կ'ըլլայ արդէն: Գերի են ինկած Պիթլիսցի Քերոբ
 եւ Շատախցի Արմենակ, սպաննուած կը գտնեն Շա-
 տախցի Պօղոս Տօնօեան: Երբ Համբարձումեանի կը
 մօտենան՝ ան կը բանայ աչքերը, կը նայի ու կար-
 ծես գիրենք ճանչնալով կ'ըսէ. «Ես պարտականու-
 թիւնս կատարեցի... գիտ մի թո...» ու վերջին վան-
 կերը կը սատին շրթունքին:

Կոստին այլևս չկար, նա ընկած էր պարտակա-
 նութեան ճամբուն վրայ, ազատութեան դրան սե-
 մին առջեւ...: Յարգա՞նք իր յիշատակին: Իր մար-
 մինը Պօղոսի գիւղին հետ կ'ամփոփեն Սային Կալէ՝
 ճանապարհի եզերքին փորուած գերեզմանի մը մէջ:

«Չորս կողմ փոռուած էին արիւնաթեաթախ գի-
 ակներ», կը պատմէին ահանատեսները, բայց ո՞ր-
 քան եւ ո՞րոնք էին՝ ոչ ոք գիտէր:

Համբարձումեանի մահուան լուրը խոր սուգով
 մը համակեց մեզ. ժողովուրդ այժմ կատարելապէս
 անդլուխ կը մնար: Անգլիական բանակը հասնելէ
 յետոյ մանաւանդ Համբարձումեան անհրաժեշտու-
 թիւն մըն էր. այժմ չկար նա. կորուստը մեծ էր եւ
 անփոխարինելի:

Դեռ չուսցած ժողովուրդը ոտքի վրայ է ար-
 դէն. ո՞վ է քնած, ո՞վ է հանգստացած, վտանգը
 հեռացած կարելի չէ համարել, մինչեւ չը հասնինք
 տեղ մը՝ ուր Անգլիական ուժեղ բանակ մը լինի: Ու
 կը քալենք հապճեպ:

Կէս օրը կ'անցնէր երբ հասանք Թիքէն Թէփէ:
 Հոս ժողովուրդ դարձեալ մտահոգութեան մէջ է.
 10 Անգլիացիներ միայն կան, իսկ տեղացի Պարսիկ-
 ներ եւ Քիւրտեր ձիերնին նստած ժողովրդեան մէջ
 կը պտտին մեծ ողբերութեամբ դնումներ կատա-
 րելու: Խեղճ ժողովուրդ, կը ծախէ իր հազուստ-

ները, եւ ինչ որ մնացած էր իր անցեալի փառքէն, որպէսզի մի քիչ ռատիլիք զնելու եւ անօթութենէն ըստընովին ուժասպառ չլինելու, հնարաւորութիւն ունենար :

Գիւղէն դուրս գէպի արեւելք՝ բաց դաշտի մը մէջ կը նստինք Անգլիացիներու վրաններուն մօտ :

Անգլիացի սպաներ յայտնեցին թէ. «Աճապարեցէ՛ք դուրս ելնել այս տեղէն, Պիջար կարող էք հանդիստ շունչ առնել, ճամբան ձեր առջեւ կը գրտնուին 13 Քրդական զիւղեր՝ որոնց բնակիչներ մեր բարեկամներն են, եւ սակայն դուք զգոյշ լինելու էք եւ իրենց բարկութիւնը գրգռելու չէք, այլապէս յտաջ եկած անպատեհութեան պատասխանատու չենք» : Ասով մէկ տեղ կ'աւելցնէին թէ « դժբախտաբար աւելորդ զօրք շունինք որ ձեզ առաջնորդեն, բայց Պարսիկ ուղեցոյց մը պիտի ընկերանայ ձեզ...» Ընտանիքով մտախոհ ու լուռ նստած ենք, ծանօթներէս մին այլայլած դէմքով մը ինձ կը մօտենայ ու խիտտ զոչութեամբ ականջիս կը փսիսայ. «Տեղացի Պարսիկներ միացած չըջակայ 300 Քիւրտերուն մեր ճամբան պիտի կտրեն. ես այսպէս լսեցի» : Խեղճ մարդ, ահաւոր լուրը զաղտնի կը յայտնէր ինձ, որ համախորհուրդ մի ճար մտածենք : Ահա այդ բոպէին կը հասնի Վանի Ձին. Կոմիտար Գրիգոր Պուլկարացին՝ վիրաւորուած Մուրատի եւ խումբ մը ձիաւորներու հետ : Ուրիշ միջոց եթէ չունիմ գոնէ առած լուրս ասոր հաղորդեմ, կարող է պատահել որ ինք միջոց մը կ'ստեղծէ, այսպէս մտածեցի ես ու Գրիգորին երթալով պատմեցի լսածս : Ձին. Կոմիտար բարկութեամբ ունկնդրեց ու չուղեց կարելորութիւն տալ, բայց իմ պնդումներէն ճանճրացած կանչել տուաւ Կղզեցի վաշտապետ Մերուն եւ յանձ-

նարարեց իր վաշտի տղաներէն քիչ մը հաւաքել առաւօտեան յառաջապահի դեր կատարելու համար: Ու վաղուայ մեծ փորձանքը՝ եթէ պատահէր՝ դիմադրաւելու անպատրաստ ժողովուրդը իրար վրայ լեցուած դիշերեց, մինչ միւս կողմէն անվերջ կարաւանը կուգար ու կը խառնուէր...:

Եղբայրս, որ մինչ այս լուռ էր միշտ, նկատելով որ տնեցիները քնած են իսկ ես կը ծխեմ եւ մտածումներով տարուած եմ, տեղէն ելաւ մօտեցաւ ինձ ու կամացուկ մը ըսաւ. «Մութ է, բայց վնաս չունի, մտածելու փոխարէն հրացանդ մաքրէ՛, ես ալ իմս կը մաքրեմ, փա՛ռք Աստուծոյ այժմ այնքան լաւ եմ որ առաջուայ նման հրացան զործածել կարող եմ. չորս հողի ենք, չորսս ալ ձիաւոր, եթէ վտանգ պատահի մենք կարող ենք կռուիլ, իսկ ժողովուրդ հիանալի կը կռուի, մանաւանդ երբ յուսահատական յինի այդ կռիւր»: Ու առանց այլեւայլի սկսեց իր հրացանը մաքրել: Ես ալ առանց դիտողութեան իր օրինակին հետեւեցայ: Եղբօրս ողեւորութիւն այնքան լաւ տպաւորութիւն մը ձգեց իմ վրայ որ ես ենթադրեցի թէ վտանգը անցած է արդէն: Իմ մտահոգութեանս առարկան դիխաւորաբար ինքն էր. երբ նա այժմ կուգայ սրտասլնդելու, ալ ի՞նչ մտածում կը մնար: Ու համատարած խաւարի եւ լուսթեան մէջ լսելի էր երկու հրացաններու փողերի մէջ վեր ու վար շարժուող բարակ երկաթի հանած աղմուկը միայն...:

Երկու ժամ կայ լուսնալուն, բայց ժողովուրդ ոտքի վրայ է արդէն: Ծերուն քառասունի չափ ձիաւորներով յառաջապահի պաշտօնով ճամբայ ելած է Անդլիացիներու տուած ուղեցոյցի առաջնորդութեամբ: Գաղթականներ սկսան շարժուիլ, շարժուե-

ցանք եւ մենք: Մէկ ժամ վերջ բլրակներով շրջապատուած փոքրիկ ձորակներու տողանցքի մը մէջն ենք, հոս ճանապարհը երկուքի կը բաժնուի, ո՞րն է ուղիղը չգիտենք, ո՞ւսկէ անցած է յառաջապահ գունդը՝ յայտնի չէ. շուարքի մէջ ենք բոլորս ալ, Պարսիկ մ'անդամ չկայ հարց ու փորձ ընելու համար: Նախ բռնեցինք ձախակողմեան ճամբան ու բարձրացանք շարք մը բլուրներ:

— Սխա՛լ է, սխա՛լ է այս ճամբան, լսելի եղաւ ժողովրդեան մէջէն: Ու կարաւանը դուռի դարձուց իջաւ իր բարձրացած բլուրներէն, այս անգամ բռնեց աջակողմեան ճամբան, դարձեալ բլրակներու մի շարքն ի վեր բարձրացանք յոգնած ու քրտինքի մէջ շաղախուած .

— Սխա՛լ է, դէպի ձախ դարձէ՛ք...» լսելի եղաւ ուրիշ ձայն մը: Ստիպուած նորէն վար իջանք բայց այս անգամ ժողովուրդ արդէն չափազանց յողնած, ցրուած ամբողջ բլուրներու, ձորերու երկայնքին կը յառաջանար խստն ի խուռն, առանց գիտնալու թէ ո՞րն է ուղիղ ճանապարհը, մինչեւ որ լուսացաւ եւ դաշտային աշխատանքի մեկնող Պարսիկներէն կարելի եղաւ հասկնալ ուղղութիւնը: Մի ժամ վերջ արդէն յառաջապահներու հետքը զբտած էինք: Ճանապարհի աջ ու ձախ կը նշմարուին գիւքեր, որոնք անտարբեր մեր կարաւանին անցքէն, որու մասին երեւի նախապէս լսած էին, զրադուած են իրենց դաշտային աշխատանքներով:

Արեւը կամաց՝ կամաց կը բարձրանայ: Մենք բնտանիքով կարաւանի առջեւէն կը քալենք. յանկարծ լսուեցաւ հրացանի պայթումի մը ձայնը. շուտով լուր բերին թէ Պարսիկ մը սպաննած են: Բոլոր դէմքեր թթուեցան, ի՞նչու, ի՞նչ կարիք կար

ատոր, չէ՞ որ Անգլիացիներ պատուիրեցին ճամբին գտնուած դիւղացիներու բարկութիւնը շարժելու առիթ չտալ, միթէ՞ չեն խորհիր այս հազարաւոր ժողովրդեան մասին՝ որ սարն ու քար ինկած կը յառաջանայ համարեայ թէ անօդնական ու անպաշտպան: Հազիւ թէ քսան քայլ յառաջացած էինք, ահա հրացանի մի ուրիշ պայթում կը լսուի, դարձեալ կանգ կ'առնենք, նորէն բերնէ բերան լուրը մեզի կը հասնի. «Պարսիկը սպաննողը մեր կողմէն սպաննուեցաւ՝ որպէս զի խրատ լինի ուրիշներուն, հանդարտ մնան եւ ժողովրդեան գոյութեան հետ չխաղան»:

— Պատիժը դտաւ, մրմնջեցին ոմանք:

— Խեղճ տղայ պէտք չէր սպաննէին, ըսին ուրիշներ:

Իրիկուան դէմ կիրճի մ'առջեւ հասեր էինք: Զորը կազմող երկու սարերուն միոյն կողին ձգուած արահետը այնքան նեղ էր որ՝ մէկ հոգիի անցքն անդամ դժուարանայի կը դառնար: Պզտիկ անզգուշութիւնով մը գլորումը անխուսափելի էր՝ դէպի ձորի յատակը: Ժամեր տեւեցին մինչեւ որ խեղճուկ կարաւանը կտրեց անցաւ այդ վտանգաւոր անցքը, տալով միեւնոյն ատեն քանի մը զոհեր ալ...:

* * *

Մութը նստեր է այլեւս, բայց ժողովուրդը կը յառաջանայ անհանդիստ քայլերով: Զորի աջ կողմի բլրակի մը քղանցքին նկատելի կ'ըլլան բազմաթիւ խարոյկներ. պարզ էր որ ժողովուրդը հոն դիչերած էր, մենք ալ ուղղուեցանք դէպի լոյսեր: Փոքրիկ բլրակի կողերուն քով քովի նստած էին բազմաթիւ ուղտեր, որոնց շուրջ սուիմները հրացանին դարկած կը հսկէին քանի մը Անգլիացի զինուորներ:

Փա՛ռք Աստուծոյ, Անգլիացի կայ հոս, ուրեմն կարելի է այսքան յոգնութենէ վերջ հանգիստ գիշերել. ու կը բարձրանանք փոքրիկ բլուրի մը գլխին շինուած Պինջա անունով Պարսկական գիւղը:

Յուլիս 27-ի արշալոյսին մեր կարաւանը սկսաւ յառաջ շարժուիլ. ամէն քայլափոխի կը հանդիպինք Անգլիացիներու, որոնք մըջիւնի կարաւանի նման կ'երթեւեկեն անվերջ. ալ վտանգը բոլորովին հեռացած կարելի է համարել: Կէս օրին հասանք Պինջար փոքրիկ բայց սիրուն այգիներով չըջապատուած Պարսկական քաղաք մը: Չորս կողմ կը տեսնուին Անգլիական բազմաթիւ վրաններ. ժողովուրդը լեցուած է իր հանդիպած առաջին այգիներու մէջն իսկ: Մենք մի քանի ընտանիքներով յառաջացանք բանակի կողմ եւ առանձին այգիի մը մէջ՝ այգետիրոջ թոյլտուութեամբ իջեւանեցինք: Ուրմիայէն դուրս ելնելնէս ի վեր առաջին անգամն էր որ այս տեսակ աղուոր եւ կանանչ տեղ մը, օրը ցերեկով հանգիստ սրտով հանգչելու բախտին կ'արժանանայինք, որքա՛ն քաղցր, որքա՛ն անուշ էր տաժանելի ճամբորդութենէ վերջ մեզ համար երազային համարուած սա հանգստութիւնը՝ ծառերու այս զով շուքին տակ: Ահա եկան Անգլիացի զինուորներ, որոնք կարեկցական եւ զարմացական ակնարկներով մը սկըսեցին զիտել մեզ ու մեր զէնքերը: Մենք, մեր հագուստներ, մեր զէնքեր նորութիւններ էին անշուշտ իրենց համար: Հարցումներ ալ բրին ամէն գիշ. սակայն ի վիճակի չէինք պատասխանելու՝ լեզուն չգիտնալնուս պատճառաւ: Պարսիկներ սարսափահար, ապուշի պէ՛ս կը նայէին՝ ոտքէն մինչեւ գլուխ զինուած այս դազթականներու՝ որոնց մասին ա-

ուսուցելներ լսած էին իրենք, ինչպէս քիչ վերջ յայտնի պիտի ընէր :

Մինչ ես հազիւ երկնցած խոտերուն վրայ, կը դիտէի դիւտուս վերեւ հիանալիօրէն ամպհովանի կազմող կանանչ ծառի տերեւները, Պարսիկ մը յարգանքով մօտեցաւ ինձ եւ յայտնեց որ քիչ անդին ինձ հետ տեսնուիլ կ'ուզեն : Զարմանքով վեր ելայ եւ հետեւեցի Պարսիկին : Կանանչ այգիի մը մէջ փոքրիկ արուեստական ազրիւրի մը վճիտ ափին, փրոուած էր սիրուն մեծ գորգ մը՝ որու վրայ ծալապատիկ նստած էին 6-7 բարձրաստիճան Պարսիկներ (հագուստներու մաքրութենէն զուտ եւ այդպէս ենթադրեցի) : Վերի դուռնի նստած էր տարիքը առած հօճա մը ճերմակ փաթաթոցը դիւտին . անոր աջ կողմ հազիւ 30-ը լմնցուցած աշխոյժ կանանչ փաթթոցաւոր մը . մէկ կողմ կ'եռար փոքրիկ դեղին հեշտանո մը : Քիչ անդին խնամքով եւ արագ արագ թէյի բաժակները կը մաքրէր ու սակառէն խնձոր, ծիրան եւ սալոր հանելով քովի պնակներու մէջ կը շարէր մեծ խնամքով կոկիկ հաքուած պատանի մը, որուն շարժումներէն յայտնի էր որ հապճեպով մէկը հիւրասիրելու պատրաստութեան մէջ էին : Եւ ի՞նչ զարմանք այդ մէկը եւ էի, անճանաչ, փախստական Հայ մը : Անմիջապէս մտքէս անցաւ որ հարցումներով ոմբակոծելու են զիս . ու վայրկենապէս մտքիս մէջ դասաւորեցի իրենց տալիք հաւանական հարցումները եւ իմ պատշաճի պատասխանները : Բաւական երկար մօրուքով, ոտքէս մինչեւ դուռնիս փոշիի մէջ թաթախուած, կուրծքս պատրոնկալներով զարդարուած, բաւական կասկածելի երևույթ մը ունէի իրապէս : Ահա այս տեսքով՝ սիկարը չրթներուս մօտեցայ իրենց աշխատելով հնար

եղածին չափ պատկառելի երեւոյթ մը առնել: Իսկական սօսֆիշօդի դերի մէջն էի եւ այդ բոլէին: Հասնելուս բոլորը մէկէն ոտքի ելան, յարգանքով դլուխ տուին, բարեւս ընդունեցին, ու վերը երկու փաթթոցաւորներու մէջտեղ հրամցուցին նստելու: Առանց այլեւայլի իշխանական քայլերով յառաջացայ եւ ցոյց տրուած տեղը բազմեցայ: Նստելէս ետք իրենք ալ նստեցան, շփոնալով բոլորը առանձին՝ առանձին բարի դալուստ մաղթել ինձ: Հը՛, մտածեցի եւ, երեւի մօրուքէս ու արտաքինէս դատելով զիս մեծ մը կարծեր են մանաւանդ որ ժողովրդէն հեռու՝ առանձին նստելուս պարագան կը յարմարէր ալ այդ բանին... 'ողորմելի' մարդիկ: Բարի եկաքի սովորական ձեւերէ վերջ սիկար մը հրամցուցին. յետոյ մէջ տեղ բերին թէյն ու պտուղները եւ սկսեցինք վաչելել: Ճերմակ փաթթոցաւորը Թիւրքերէն լաւ չէր հասկնար, որով կանանչ փաթթոցաւորը թարգմանի պաշտօն կը կատարէր: Մեր գաղթի շարժառիթներուն վերաբերեալ հարցերուն պատասխանելով ըսի թէ Անգլիական կառավարութեան կարգադրութեամբ եւ հրամանաւ եղած է մեր տեղափոխութիւնը, այլապէս մենք ի վիճակի էինք կուուելու. Անգլիացիք մեզքցան մեզ նկատելով որ կուուի ընթացքին կոտորուելով, կոտորուելով փրճանալու վտանդը կար, համոզելով որ՝ «Դուք ետ քաշուեցէք, Թիւրքի հետ հաշիւնիս կը մաքրենք...» Տարակոյսէ վեր էր որ խօսքերս եւս ուժեղ ապաւորութիւն կը գործէին.

— Եղբայ՛ր, կ'ըսէին անոնք, ասոր Անգլիացի կ'ըսեն, անոնց խելքն ու ոյժը ո՞վ ունի, անոնց հետ կատակ ընել չ'ըլլար...:

— Իրաւ ի՞նչու ձեր ժողովուրդ իր անցած դիւզերն ու քաղաքները կը հրդեհէ եւ բնակիչներ, բարեկամ թէ թշնամի կը կոտորէ . . . :

Հարցուց ուրիշ մը զարմանքով : Սոսկումը պատած էր դիրենք :

— Ձէ՛ր քարեկամներս, պատասխանեցի ես իշխանավայել դիրք մը առած, մենք վայրենիներ չենք, քաղաքավարի կը վարուինք անոնց հետ՝ որոնք նոյնպէս կը վարուին մեզ հետ եւ բարեկանալու առիթ չեն տար . բայց կը փոշիացնենք, օդը կը հանենք, քար քարի վրայ չենք թողուր այն գիւղեր ու քաղաքներ՝ եթէ մեզ ընդդիմանալու անխելքութիւն ընեն : Տիլիման, Քէօհնէ-Շէհէր, Ուրմին եւ իրենց շրջանակներ համոզուեցան ատոր : Բոլորն ալ երկիւզած մտիկ կ'ընէին, ես ողեւորուած ձգած սպաւորութենէս շարունակեցի .

— Օրինակ Պիջար գիւղը եթէ չի դրդուէ մեր բարկութիւնը, մենք ին՞նթ կնք որ այս խաղաղ բռնակշութիւնը ջարդենք : Մենք կը ջարդենք զանոնք որոնք մեզ ատելի կը հանդիսանան կամ թշնամութիւն կը յարուցանեն, ոչ թէ բարեկամ բնակչութիւնն :

Լուռ էին բոլորը ու մտածկոտ . կարծես կը վախնային խօսելէ, կարծես կը զգուշանային այլեւս հարցեր աւել . ու ես դիրենք այս անյարմար դրութենէն վայրկեան մը առաջ ազատելու համար, ոտքի ելայ, ներողութիւն խնդրելով որ յոգնած եմ եւ չեմ կրնար երկար նստիլ : Նորէն բոլորը ոտքի ելան յարգանքնրով բարեւս առին, ու ինձ ճամբու գրին :

Յուլիս 28-ի արշալոյսն է : Այսօր ժողովուրդ չարժուելու չէ, աճապարելու կարիք չկայ, այսուհետեւ ճանապարհը ապահով է, բացի այդ ասկից

յետոյ առանց կառավարութեան հաւանութեան ու արտօնութեան քայլ մը իսկ առնել անկարելի է : Հանդիստ ընելու հրամանը բոլորիս ալ սրտին մօտ է , ու մենք հաճոյքով ընդունելով այդ հրամանը տեղերնիս կը նստինք :

Ինչպէս Թիբէն-Թէիէ՛ նոյնպէս եւ հոս Անգլիական բանակի հրամանատար մեր Զին . Մարմնէն զինուոր պահանջած էր , բայց մերոնք մերժած էին ըսելով որ ոչ ոք ունին , բոլորն ալ ցրուած են իրենց ընտանիքներու մէջ , ու մանաւանդ յոգնած էին այլ-եւս եւ անտրամազիր կրկին զինուոր լինելու :

* * *

Յուլիս 29-ին արեւածագին երկու Անգլիացիի եւ տուս Պարսիկներու (Անգլիական բանակին ծառայողներէն) առաջնորդութեամբ մեր կարաւանը յառաջ շարժուեցաւ դէպի Համատան :

Կէսօրին հասանք Աւստաշանի անունով Պարսկարնակ գիւղը : Հոս Անգլիացիներ հաց պատրաստել տուած էին ժողովրդեան համար : Ժամուան մը չափ հանգստանալէ վերջ նորէն շարժուեցանք ու երեկոյեան գիշերեցինք Սրմաթավա գիւղը : Որքա՛ն երջանիկ էր ժողովուրդը : Անգլիական խնամքին տակ , ապահով ու հանգիստ կը քայլէր նա վերյիշելով այն առջի սոսկալի ճամբորդութիւնը , սրու ընթացքին գերմադկային ճիզեր ի զործ դրած էր քայլ մը աւելի առաջ անցնելու , ժամ մը շուտ ճանապարհ կըտրելու մտազրութեամբ եւ այսպէս անվերջ՝ գիշեր թէ ցորեկ :

Յուլիս 30-ի արեւծագին կարաւանը ճամբայ կ'ընէ ութը ժամեայ հանգստութենէ մը վերջ Համատան երթալու , որ այնքան ալ հեռու չէր : Բոլորը

մօտալուտ եւ երկարատեւ հանգստեան պատրան-
քով օրօրուած կը քալեն լուռ ու անտրտունջ, օրհ-
նելով Ազատարար Անգլիացին: Կէսօրին նստեցինք
Կօխօրդ գիւղը հանգստանալու. հոս դարձեալ հաց
բաժնեցին գաղթականներուն: Երեկոյեան գիշերե-
ցինք Քէյթէ գիւղը: Որքա՛ն կարճ, որքա՛ն գիւրին
է այս կերպ ճամբորդութիւնը:

Յուլիս 31-ի ճամբորդութիւնն եւս եղաւ առաջի
երկու օրերու նման հանգարտ, երեկոյեան գիշերե-
ցինք Սօչապ անունով Պարսկարնակ գիւղը:

Օդոստոս 1-ը ոգեւորութեան օր մը եղաւ տան-
ջուած կարաւանին համար. վերջապէս Համատան
պիտի հասնէինք: Համատան կարծես երկնային մի
գրախտ լինէր՝ որուն շուտով արժանանալու հա-
ճոյքը բոլոր խորշմած այտերուն ոգեւորութիւն եւ
ժպիտ բերած էր. այդ ցանկալի քաղաքը լինելու էր
մեր վերջին կայանը, տառապանքի ճանապարհի եր-
ջանկարեր հանգրուանը:

Ահա արդէն կ'երեւի իր կանանչ այգիներու զով
գրկին մէջ ամփոփուած. ու մենք կ'երգենք քայ-
լերգնիս: Յանկարծ Անգլիացի զինուորներ կարաւա-
նի գնացքը կտրելով կը հրամայեն նստիլ Պէհար գիւ-
ղէն դուրս՝ դէպի Համատան տանող ճանապարհի
եզերքին: Երեւի ժողովուրդը հաւաքելու համար
է. մտածեցինք մենք ու նստեցանք: Տաս բոպէ վերջ
կայժակի արագութեամբ տարածուեցաւ լուր մը.
«Համատան մտնել արգիլուած է, ժողովուրդը պիտի
տանին երեք ժամ անդին՝ Պաղտատի գծին վրայ՝
ուր երկու օր հանգստանալէ վերջ պիտի ուղարկեն
Պաղտատ»: Տրամադրութիւններ վատացան. երջան-

կարեր Համատանին յաջորդած էր մինչև Պաղտատ գնալու սարսափը: Մինչև Պաղտատ, ոյժ կա՞յ վրանիս. բոլորս յողնածութենէ ու հիւանդութենէ կոտորուելու ենք ճանապարհին...»: Մաքսապեա-
եան Արմենակ որ խնդրած էր մեզ առաջնորդող ըս-
պայէն որպէսզի գոնէ ժողովուրդ հոն սպասեցնեն
և ուրիշ տեղ շտանեն մինչև բոլորը հաւաքուին,
ինքնաշարժով քաղաք տարուած էր՝ ուրկէ այլևս
չվերադարձաւ...: Մէկ ժամ վերջ քաղաքէն հա-
սան յիսուն ձիաւորներ և հրամայեցին ժողովրդ-
եան շարժուիլ դէպի արեւմուտք՝ Պաղտատի դիժը:
Լուռ ու հնազանդ առանց բառ մը իսկ արտասանե-
լու համարձակութիւն ունենալու, ոտքի ելանք ու
քալեցինք...

Երեք ժամուան ճամբորդութենէ մը ետք հա-
սանք Թէզէ-Քէնտ անունով աւերակ դիւղ մը: Հոս
հաւաքեցին մեր բոլոր զէնքերը:

Օգոստոս 2-ի առաւօտն է: Արեւի կիզիչ ճառա-
գայթններ կը հասնին ահա այս մոխիրներու վրայ
նստող ժողովուրդին տառապանքը կրկնապատկելու.
րեոան կենդանիները գլխահակ ու անօթի կանգնած
են, կարճես անոնք ալ կ'զգան մեր անկարողութիւ-
նը: Համատան տանող ճանապարհը փոշիի ամպերով
ծածկուած է. հետուէն կը նշմարուին վեց մեծ օթօ-
մոպիլներ, որոնք սրարշաւ կը յառաջանային. վեր-
ջապէս մեզ մօտ կանգ առին: Խոտով ու փայտով
բեռցուած են անոնք,

— Խո՛տ, խո՛տ ազադակեցին միարեբան, կեն-
դանիներու անօթութենէն խղճահար դալթականնե-
ները. ու մինչ Անգլիացիներ խոտը վար առին և
բաժնել փորձեցին՝ բարձրացաւ ժխոր մը չորս կող-

մէն սկսեցին քաշքշել խոտը: Երեւոյթը տղեղ էր, թէև բոլորած ըլլար ստիպողական կարիքէ մը: Անդ- լիացիներ ստիպուած եղան ժողովրդեան հետ այլ կերպ վարուիլ: Անմիջապէս յիսնեակ մը ղինուոր- ներ շրջապատեցին խոտն ու փայտը, ու ապա կար- զի շարելով գաղթականները սկսան բաժնել:

Այս տղեղ միջադէպին ատեն աչքիս հանդիպե- ցաւ Վանի վաղանցուկ կառավարութեան առողջա- սրտահական կոմիտար եւ Կ. Համբարձումեանի բացա- կայութեան ատեն փոխ նահանգապետ՝ բժիշկ Տէր Թովմասեան՝ իր քառակուսի, թիզ ու կէս հասա- կով, որ անտարրեր կեցած անամօթարար կը ծիծա- ղէր: Չկրցի ալլելս համբերել. — Ծիծաղելու փո- խարէն լաւ չըլլա՞ր որ կոմիտարի հանգամանքովդ ներկայանաս Անդլիացիներուն եւ խնդրես որ քեզ արտօնեն ժողովուրդը կարգի դնել, որպէս զի մը- թերքներու բաժանման ատեն նման դէպքեր չկրկ- նուին. ամօթ է: Յանկարծ մեր բարեծաղիկ քառա- կուսին, իր հասակէն աւելի երկար մօրուքը շոյ- լով պատասխանեց. — Մենք Ռուսահայերս*, մեր մասին կը մտածենք, իսկ դուք Տաճկահայերդ ալ ձեր մասին մտածեցէք...: Իր արտայայտութիւնը այնքան տղեղ, այնքան զգուելի էր, որքան ինք. բարկութիւնս իր ծայր աստիճանին հասաւ, յիշե- ցուցի Վանի մէջ իր անցուցած օրերը, երբ ինքզինք մեր ճակատագրի տէր համարելով ապուշ սրտում- ներ կուտար: Թերեւս այս վէճը բաւական սուր կեր- պարանք ստէր, եթէ Բարեկործականի Պարսկաս-

(*) Ռուսահայեր միատեղ հաւաքուած որպէս մի

առանձին հատուած, ներկայացած էին Անդլիացի- ներուն, եւ չէին ուզեր խառնուիլ մեր ժողովուրդին:

տանի լիազօր Պ. Բուզտան Եիւզրաշեանը չմիջամը-
տէր ըսելով, «Գնա՛ սիրելիս, այժմ հաշուեյարդա-
շութեան ատեն չէ»: Խեղճ ժողովուրդ, ոտճիկի ու
կողոպուտի շրջանին անոնք քու տէրն ու իշխանն են,
իսկ վտանգի ու դժբախտութեան ժամանակ, քու
մասին խօսելն իսկ անպատուութիւն կը համարեն
իրենց . . . :

Անգլիացիներ բաժնեցին նաեւ ալիւր եւ փայտ :
Տակաւին մի քանի օր հոս պիտի մնանք, ի՞նչ է լի-
նելու վերջը, չգիտենք :

* * *

Օգոստ. 5-ի արշալոյսին Անգլիացի զինուորներ
ընկած ժողովուրդին մէջ, Հայերը Ասորիներէն զա-
տել սկսան. 2,000 Հայ ուզարկելու էին Սուլթանա-
պատ. մեր ընտանիքն ալ հանեցին եւ խառնեցին ա-
նոնց հետ, եւ սակայն Սուլթանապատ երթալէն ա-
ւելի, իմ կարծիքովս, Պաղտատ մեկնիլը աւելի լաւ
էր, որովհետեւ անկէ կարելի էր Եգիպտոս անցնիլ :
Ու այդ մտադրութեամբ տարուած, մինչ Անգլիա-
ցիներ մէկ կողմ քաշուեցան ժողովուրդ ոտքի հա-
նելու՝ ես ընտանիքով ծածուկ ու զազտագողի դուրս
ելայ բազմութեան մէջէն ու խառնուեցայ նոր հաս-
նող խումբին :

Օգոստ. 6-ին լուր արուեցաւ թէ ժողովրդեան
մնացեալ մասը պիտի ուզարկէին Պաղտատ. ան-
միջապէս ոտքի ելայ՝ առաջին իսկ պատահութենէն
օգտուելու մտադրութեամբ : Մինչեւ իմ հասնելս
կառավարիչներ նշանակուած էին արդէն, որոնցմէ
մէկը ես էի : Անմիջապէս իւրաքանչիւր կառավարիչ
վերցուց երեսուն հոգի եւ ճամբի միւս կողմը քաշ-
ուեցաւ սպասելով օքօսօպիլներուն՝ որոնց յապաղ-

ման պատճառով ստիպուեցանք դիչեր մը եւս սպասել :

Օգոստ. 7-ին օթօւօպիլներ պատրաստ էին : Իւրաքանչիւր տասնապետի մօտին հրացան մը տըռուին , մենք լեցուեցանք օթօւօպիլներու մէջ եւ յառաջ շարժուեցանք , մնաք բարեաւ ըսելով հոն մընացողներուն , որոնց այրերը արդէն ստքով ճամբայ հանեցին դէպի Պաղտատ , իսկ կանայք եւ երախաներ Թէգէքէնա թողուցին՝ օթօւօպիլներով ուղարկելու համար : 22 օթօւօպիլներ 550 հողի առած սկսեցին սուրալ դէպի յառաջ : Պաղտատ մեկնող Վասպուրականցիներու առաջին խումբն էր այս :

Օթօւօպիլային ճամբորդութեան երկրորդ օրն է : Կայարաններու մէջ մեզ ցոյց տրուած խնամքը այնքան հիանալի է որ՝ ժողովուրդ կը դժուարանայ իր շնորհակալութիւնը յայտնելու բառեր գըտնել :

* * *

Կէս դիչեր էր . Օգոստ. 12-ի գիշերը : Բաց դաշտի մը մէջ Անգլիական մեծ բանակի մը կողքին փրուուած՝ իր գիշերային հանգիստը կ'ընէր մեր կարաւանը : Ես ալ խորունկ քունի մէջ էի , երբ յանկարծ սրտաճմլիկ «վո՛ւյ , վո՛ւյ» մը կ'արթնցնէ զիս : Ինձմէ քանի մը քայլ անդին մեռած էր դաղթական մը , անտէր թողնելով 17 տարեկան աղջիկ մը եւ կին մը : Ահա այդ դժբախտ աղջիկն էր որ կ'ողբար իր որբութիւնը , բայց այնպիսի ձայնով եւ այնպիսի եղանակով մը՝ որ քարերն անգամ իրեն հետ կ'ողբային : Մեր կողմէ եղած բոլոր մխիթարական խօսքերը ամոքելու փոխարէն , աւելի կը խոցոտէին այդ դժբախտներու արիւնտատած սրտերը :

Կամաց, կամաց կը լուսանար: Անգլիացիներն անզամ շիոթած այս արտասովոր թախծոտ ելեւէջներէն՝ կը փութային եղածը հասկնալու: Քիչ վերջ իրենց ցուցմունքին համաձայն, աղօթարանի առաջին շողերուն հետ փոքրիկ բլրակի մը գլխին, ես ու եզրայրս գերեզման մը կը փորէինք մեր ան դժբախտ հայրենակցին համար: Թէզէ-Քէնտէն ճամբայ ելնելէս ի վեր եօթներորդ դիակն էր որ հողին կը յանձնէինք:

* * *

Շարժուելու ժամն էր. վերջին մնաք բարեաւն բսելով օտար հողի վրայ բարձրացած հողակոյտին՝ ինքնաշարժներու մէջ կը նստինք ու կը յառաջանանք:

Կրկրյապատն ենք, գէպի Պաղտատ տանող երկաթուղիի առաջին կայարանը: Մնացեալ ճանապարհը երկաթուղիով պիտի կատարէինք:

Այստեղ կը հաւաքեն մեր բոլոր գոյքերն ու հազուտաները՝ հականեխելու համար: Ժամերով մերկ կ'սպասենք զիչերուան ցուրտ օդին, մինչեւ որ ուշ ատեն՝ ահագին ազմուկի եւ ժիտրի մէջ կը յաջողինք կրկին ձեռք ձգել մեր լաթեր...: Արդէն կը հասնին Անգլիացի զինուորներն ալ ու մեզ վակոններուն մէջ կը լեցնեն՝ ոչխարներու պէս: Կառախումբը կը սուրայ:

Գիշեր է. մութ ու խաւար գիշեր մը: Վերաբերուիս մէջ կծկուած՝ անթարթ աչքերով կը դիտեմ ճանապարհի երկու եզերքը, աշխատելով բան մը նշմարել:

* * *

Օգոստ. 13-ի արեւածագն է: Շողեկառքը աւալի դաշտերու մէջէն սրարշաւ կը յառաջանայ դէ-

սլի «հազար ու մէկ զիշերներ» ու աշխարհը. զէսլի Ամիրասպետներու սրբազան, կախարդական աթոռանիստ Պաղտատը, որ մտախուզի մէջէն, հետուէն հազիւ կը նշմարուի: Կամաց, կամաց կը մօտենանք. ահա գործարանի մը երկնաբերձ ծխներ յղը, որ կը մըխա՛յ: Ահա՛ եւ հոյակապ բազմաթիւ միմարէներ, որոնք արմաւենիներու սաղարթներու մէջէն գլուխներին ցցած կը նային: Տեսարանը խորհրդաւոր է ու հմայող:

Պաղտատի կայարանն ենք. տեղացի բնակչութիւն մեր վրայ կը նայի: Կ'արհամարհեն թէ կ'արդահատին...: Անդլիացի ոստիկաններու առաջնորդութեամբ կ'անցնինք քաղաքի արեւմտեան կողմ՝ գետեզերքին մօտիկ Իւմըլատամ* կոչուած տեղը՝ ուր սլարապ վրաններ մեզի կ'սպասէին: Քիչ վերջ արդէն գետեզուած էինք իւրաքանչիւր վրանի տակ 25-35 հոգիով:

Ու այս օրէն կ'սկսի մեր վրանային կեանքը, մեր Նահանջ Բիւրոսի Բ. Արարուածը:

* Ժողովուրդ վերջէն այս տեղէն փոխադրուեցաւ Պաղուպա կոչուած գիւղաքաղաքի մօտ՝ բաց դաշտի մը մէջ, ուր վրաններու տակ կ'ապրի մինչեւ հիմա:

Վ Ե Ր Ջ



Հրատարակութեան եւ քարգիտանութեան
Իրաւունքները վերապահուած են

ԳԻՆ

Սուրբոյ և Լիբանանի համար 100 Ս. Դ.
Արտասահման՝ Մէկ Տօլար

Դիմել՝

Zakaria Bizdikian
Caracol Abed
Beyrouth
(Liban)

